

Ա. Կ. Զ Ո Չ Ո Յ Ա Ն

ՄԱՅՄՈՆ-ՆՈՎԱՅԻ
ՀԱՅԵՐԵՆ ԽԱՂԵՐԻ
ԲԱՌԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆ

1900

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԼԵԶԿԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ա. Կ. ԶՈՉՈՅԱՆ

ՍԱՅԱԹՆՈՎԱՅԻ
ՆԱՅԵՐԵՆ ԽԱՂԵՐԻ
ԲԱՌԱՐԱՆ



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ—1963

ԼԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԾՆՆԴՅԱՆ
250-ԱՄՅԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄԲ
ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ԳՐԸԵՐԸ

Խ. Սարգսյան—Սայաթ-Նովա

Ա. Ջոշոյան—Սայաթ-Նովայի խաղերի բա-
ռարան

Հովհ. Թումանյան—Սայաթ-Նովա (ճառեր
և հոդվածներ)

Ա. Ղանալանյան—Սայաթ-Նովայի ստեղ-
ծագործության ժողովրդական ակունք-
ները

Պ. Մուրադյան—Սայաթ-Նովան ըստ վրա-
ցական աղբյուրների

Սայաթ-Նովա— Խաղեր (նմանահանու-
թյուն)

Ի. Բոգոմոլով—Հայաստանը Յակով Պո-
լոնսկու ստեղծագործության մեջ

**Սայաթ-Նովան Վ. Յա. Բրյուսովի թարգ-
մանությամբ:**

ԱՇՈՏ ԿԱՐԱՊԵՏԻ ԶՈՂՈՅԱՆ
АШОТ КАРАПЕТОВАԿ ԿՕՉՕՐԱԿ

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՑԻ ՀԱՅԵՐԵՆ ԽԱՂԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ,

Տպագրվում է Հայկական ՍՍՌ ԳԱ լեզվի ինստիտուտի
գիտական խորհրդի հանձնարարությամբ

Պատ. խմբագիր՝ Մ. Ս. Հասրաթյան
Հրատ. խմբագիր՝ Ռ. Խ. Մանոյան
Նկարչական ձևավորումը՝ Ան. Գասպարյանի
Տեխ. խմբագիր՝ Խ. Ե. Սամվելյան
Սրբագրիչներ՝ Լ. Ս. Սարաֆյան և Ս. Կ. Զաքարյան

ՎՖ 07189 Պատվեր 56 ԽՀԽ 854 Հրատ. 2299 Տիրած 1000

Հանձնված է արտադրության 1/VI 1963 թ.:
Ստորագրված է տպագրության 29/VIII 1963 թ.:
Տպագր. 12,5 մամ., հրատ. 11,64 մամ., թուղթ 84×108¹/₃₂
Գինը կազմով 55 կոպ.:

ՀՍՍՌ ԳԱ հրատարակչության Էջմիածնի տպարան

Ս Ա Յ Ա Թ - Ն Ո Վ Ա Յ Ի
Ծ Ն Ն Դ Յ Ա Ն 250-ԱՄՅԱԿԻ
Ա Ռ Թ Ի Վ

Սայաթ-Նովայի հայերեն խաղերի ամբողջական բառարանում
ընդգրկված են ոչ միայն անհասկանալի բառեր, այլև Սայաթ-Նո-
վայի հայերեն խաղերի (թվով 68) ամբողջ բառապաշարը, ոճե-
րը, դարձվածքները, բառակապակցությունները և այլն: Բառա-
րանում յուրաքանչյուր բառի, բառիմաստների համար Սայաթ-
Նովայի խաղերից բերված են մեջբերումներ:

Ե Ր Կ ՈՒ Խ Ո Ս Ա Ք

Կազմել մի գրողի կամ բանաստեղծի հեղինակային բառարան, նշանակում է այդ բառարանում ընդգրկել հեղինակի գործածած բոլոր բառերը, բառակազմակերպությունները, արտահայտությունները, ոճերն ու դարձվածքները, բառերի կոնկրետ նշանակությունները խոսքի մեջ, գլխաբառերի քերականական որոշ անհրաժեշտ նշումներ և այլն, մի խոսքով՝ ցույց տալ այն լեզվական ու ոճական հարստությունը, որ յուրահատուկ է տվյալ գրողին: Բառարանում յուրաքանչյուր բառիմաստի ու նշանակության համար հեղինակից բերվում են համապատասխան բնորոշ ու տիպական օրինակներ՝ էջերի նշումներով:

Հեղինակային բառարանի շնորհիվ կարելի է ո՛չ միայն լրիվ պատկերացում կազմել մի գրողի բառապաշարի մասին, այլև ուսումնասիրել նրա լեզուն և ոճը:

Նալաթ-Նովան, որպես XVIII դարի հայ տաղերգության հանճարեղ ներկայացուցիչ, արժանի է այս տեսակետից, հատուկ ուշադրության: Նրա ծննդյան 250-ամյա տարելիցին հարկ է, որ մենք ունենանք նրա հայերեն խաղերի հեղինակային բառարանը:

Սալաթ-Նովայի խաղերի վերաբերյալ շատ ուսումնասիրություններ, մեկնություններ են գրվել: Նրա խաղերի հրատարակությունների վերջում որպես հավելված կցվել են համառոտ բառարաններ: Սակայն մինչև այժմ Սալաթ-Նովայի խաղերի հրատարակություններին կցված բառարանները սահմանափակվել են միայն անծանոթ և դժվար հասկանալի բառերի բացատրություններով ու մեկնություններով: Դրանց մեջ առանձնահատուկ և արժեքավոր աշխատություններ են պրոֆ. Ռ. Աբրահամյանի «Սալաթ-Նովայի տաղերը» (Թեհրան, 1943) և Մ. Հասրաթյանի «Սալաթ-Նովայի հայերեն, վրացերեն և ադրբեջաներեն խաղերի ժողովածուն» (1959): Ռ. Աբրահամյանի գրքին կից կա ներածական հոդված, Սալաթ-Նովայի լեզվի ուսումնասիրություն և այլ հոդվածներ ու դիտողություններ: Գրքի վերջում կա բառարան, որն ընդգրկում է 886

բառ, մեծ մասամբ արաբերեն, պարսկերեն և թուրքերեն բառերի բացատրություններով ու մեկնություններով:

Մ. Հասրաթյանի կազմած Սալաթ-Նովայի հայերեն, վրացերեն և ադրբեջաներեն խաղերի 1959 թվականին լույս տեսած ժողովածուն 1945 թվականի վերահրատարակությունն է, բայց ավելի ճշտված ու լրացված մի բանի նոր հայերեն խաղերով: Մ. Հասրաթյանը երկար տարիների ընթացքում կբաղվելով Սալաթ-Նովայի խաղերի գիտական մանրագիտի խորը ուսումնասիրությամբ, հրատարակված խաղերի և Սալաթ-Նովայի բուն բնագրերի համեմատությամբ՝ կատարել է բազմաթիվ նոր ստուգաբանություններ ու մեկնություններ, ամեն մի խաղին տվել է ընդարձակ ծանոթագրություններ, վերծանել է Սալաթ-Նովայի շատ բառախաղեր և վերջապես կազմել է Սալաթ-Նովայի հայերեն խաղերի առաջին յրիվ ժողովածուն, դրան կցելով ընդարձակ բառարան: Ահա թե ինչու մենք Սալաթ-Նովայի հայերեն խաղերի հեղինակային բառարան կազմելու համար ընտրեցինք Մ. Հասրաթյանի 1959 թվականի հրատարակված ժողովածուն: Նրա կազմած Սալաթ-Նովայի հայերեն, վրացերեն և ադրբեջաներեն խաղերի ժողովածուին կցված բառարանը պարունակում է 1241 բառ: Այս 1241 բառի մեջ մտնում են նաև վրացերենից ու ադրբեջաներենից նրա իարգմանած խաղերում հանդիպող անծանոթ բառերը: Մեր կազմած հեղինակային բառարանը պարունակում է Սալաթ-Նովայի հայերեն 68 խաղերի մեջ գործածված բոլոր բառերը (2020 բառ): Բառարանը կազմելիս հիմնականում օգտագործել ենք Մ. Հասրաթյանի Սալաթ-Նովայի խաղերի ժողովածուին կից եղած բառարանը (1959):

Բառարանը կազմված է հետևյալ սկզբունքներով.

Բառարանում որպես գլխաբառ տրվում է բառի ուղիղ ձևը (գոյականների համար): Բայերը տրվում են անորոշ ձևով: Այն բայական բառերը, որոնք թրքիլիսի բարբառում և Սալաթ-Նովայի տաղերում խոնարհվում են իլ խոնարհիչով, այդպիսի բառերը որպես գլխաբառ տրվում են անորոշ իլ վերջավորությամբ: Օրինակ՝ «Քաղից արգիլված խրեծուրըն խափից Աթան կախահորը» (64): Այս տողերի ջ ա ղ ի ց, խ ա փ ի ց, ա ր գ ի լ վ ա ծ և սրանց նման խոնարհվող բոլոր բայերը բառարանում բերվում են ջ ա ղ ի լ, խ ա փ ի լ, ա ր գ ի լ վ ի լ անորոշ ձևով: Գլխաբառից հետո գոյականի համար տրվում է նրա թեքված ձևը սեռ. հոլովով (բառի նշանակությունների մեջ բերվում են այնպիսի օրինակներ, որտեղ երևա բառի թեքված ձևը): Բայերի համար բերվում են նրանց սեռերը՝ ներգործական սեռի բայ (ն բ.) չեզոք (չ բ.), բայի անց. կատ. ձևը, անկանոն բայերի հրամայականը: Բերականական նշումներից հետո տրվում է գլխաբառի խոսքի մասային նշումը, որից հետո բացատրվում է բառը: Բացատրությունից հետո բերվում է հեղինակային 1—2 օրինակ՝ փակագծում նշելով, թե այդ օրինակը որ խաղիցն է, միաժամանակ թվարկելով այն էջերը, որտեղ տվյալ բառը գործածվել է: Եթե բառը ունի մի քանի նշանակություն, էջերը նշվում են յուրաքանչյուր նշանակությունից՝ հետո: Այն բառերը, որոնք գործածված են փոխաբերական իմաստով կամ ունեն

նակ այդ նշանակությունը՝ մտքը դրվում է փխբ. նշանը: Սայաթ-Նովայի խուզերում շատ բառեր են գործածված փոխաբերական խմաստով և մենք աշխատույն ենք հանդիպած տեղում անկապման նշել փխբ. նշանակությունը:

Բառիմաստները բխեցված են կոնստեբստից: Եթե որևէ նշանակության համար չկա համապատասխան օրինակ, այդպիսի նշանակությունը չի բերվում:

Գլխաբառի հետ կապված բոլոր ոճերը, դարձվածքները, կապակցությունները բերվում են վերջում ☉ նշանով՝ դարձյալ հեղինակային օրինակներով՝ յուրաքանչյուր ոճի կամ դարձվածքի համար առանձին էջերի նշումներով:

Օտար բառերի համար տրվում է բառի ծագումը:

Հայերեն բառերի համար կիրառված են հետևյալ ոճական նշումները. — բարբառային բառերի դիմաց փակագծում գրվում է (բբբ.), օրինակ՝ ախլեք, անգաս, գրծար և այլն: Եթե բառը իր հնչյունափոխությամբ համապատասխանում է թբբիլիսի բարբառին՝ փակագծում նշում ենք (թբբ.), օրինակ՝ հոուդ, յիս, յիրգիսք և այլն: Միայն թբբիլիսի բարբառին յուրահատուկ բառերի համար բառի առաջ դնում ենք աստղանիշ (օրինակ՝ բրոյի բյուր, գամ—անգամ, գեթ—վեստ, իժուս—հետո և այլն): Գրաբարյան բառերի դիմաց (որոնց թիվը շատ է)՝ դնում ենք (գբբ.): Իսկ այն բառերը, որոնք նույնությամբ կան նաև մեր այսօրվա գրական լեզվում, ոչ մի նշում չունեն: Սայաթ-Նովայի հայերեն 1274 բառերի մեջ մեծ մասը այս կարգի բառեր են: Ոճական այս նշումները կատարում ենք էլեկտրով այսօրվա մեր լեզվական հասկացողությունից:

Մի շարք բառեր, գլխավորապես անձնական դերանուններ, Սայաթ-Նովան գործածում է կ' գրական ձևով, կ' բարբառային: Եթե գրական ձևը բարբառային համեմատությամբ սակավադեպ է, առաջինը հղում ենք վերջինին: Օրինակ՝ Ես տե՛ս Յիս, Գոու տե՛ս Գուն և այլն:

* * *

Սայաթ-Նովայի հայերեն խաղերի բառերի բացատրությունների համար, որպես հիմնական աղբյուր, օգտագործվել են հետևյալ աշխատությունները.

1. Գ. Ախվերդյան, Սայաթ-Նովայ, Մոսկվա, 1852:
2. Ռ. Աբրահամյան, Սայաթ-Նովայի տաղերը, Թեհրան, 1943:
3. Մ. Հասարայան, Սայաթ-Նովայի հայերեն, վրացերեն և ադրբեյսաներեն խաղերի ժողովածու, Հայպետհրատ, Երևան, 1959:
4. Գ. Լևոնյան, Սայաթ-Նովա, Հայերեն խաղերի լիակատար ժողովածու, Պետհրատ, Երևան, 1935:
5. Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, 1—4-րդ հատորներ, Հայպետհրատ, Երևան, 1944—1945:
6. Հոսեֆ. Թուսանյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Հայպետհրատ, Երևան, 1951:
7. Հանդէսամսօրեայ, Վիեննա, 1924, թիւ 5—6, 7—8:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

աժ	.	.	աժական
գ	.	.	գոյական
դ	.	.	դերանուն
թ	.	.	թվական
կ	.	.	կապ
ձ	.	.	ձայնարկություն
մ	.	.	մակբայ
նք	.	.	ներգործ. սեռի բայ
նխոյր	.	.	նախդիր
շ	.	.	շաղկապ
չբ	.	.	չեզոք սեռի բայ
կրոն	.	.	կրոնական
սնուտ	.	.	սնուտիապաշտական
փխբ	.	.	փոխաբերական նշանակություն
ադրբ	.	.	ադրբեջաներեն
ասոր	.	.	ասորերեն
արաբ	.	.	արաբերեն
բրբ	.	.	բարբառային
գրաբ	.	.	գրաբար
թիբ	.	.	Պեխիսիի հայերի բառ
հուն	.	.	հունարեն
պարսկ	.	.	պարսկերեն
ռուս	.	.	ռուսերեն
վրաց	.	.	վրացերեն

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Սայաթ-Նովան XVIII դարի հայ տաղերգության ամենապայծառ և անմար դեմքն է: Նա Անդրլուվկասի եղբայրական ժողովուրդների հանճարեղ երգիչն է: Սայաթ-Նովան հավասարապես երգել է այդ ժողովուրդների լեզուներով, արտահայտել նրանց խոհերն ու զգացմունքները և ընդմիջտ դրոշմվել այդ երեք ժողովուրդների սերունդների սրտերում: 250 տարի է անցել նրա ծննդյան օրից, բայց դեռ այսօր էլ նրա երգերը այնպիսի հոգեպարար ջերմությամբ է երգում ժողովուրդը, այնպիսի զմայլանքով են ունկնդրում մարդիկ նրա իմաստախոհ տաղերին, որ ասես դարերի խորքից վերակենդանանում է մեծ երգիչը: Որքան հնանում է Սայաթ-Նովան, որքան ժամանակներ են անցնում նրա վրալով, այնքան պայծառ ու թովիչ է դառնում նա, այնքան քաղցր ու հոգեզմայլ են հնչում նրա երգերը:

Իր ոգեշունչ երգերով Սայաթ-Նովան սոցիալական բողոքի հուժկու ձայնն է բարձրացրել ժամանակի անարդար կարգերի դեմ. «Զորն անվորին կերիլ է, մարթկանց վրա ջան չը մնաց»: Անհուն ատելությամբ ու վայրույթով է լցվել հարուստ դասի մարդկանց նկատմամբ, որոնք «Ում հաքին հին շալ ին տեսնում, էլ չին ասում թե էս ով ա»: Իր խոհերով ու մտքերով, իր ողջ էությամբ Սայաթ-Նովան իրեն կապված է զգացել աշխատավոր ու չարքաշ ժողովրդի հետ. «Փիքը ու խիալս հարգահ աշխըրքի ցավի մասին է, Խիղճի, նաչարի, տընանգի, բարու ու լավի մասին է»: Եվ Սայաթ-Նովան իր ողջ կյանքի նպատակն է համարել որպես «նոքար» ծառայել աշխատավոր ժողովրդին, իր հոգեզմայլ երգերով գեթ որոշ չափով սպեղանի դնել նրա անթիվ վերքերին. «Արի համով ղուլուղ արա, խալխի նոքար Սայաթ-Նովա»:

Սայաթ-Նովան ամուր թելերով իրեն կապել է շատ սերունդների հետ: Բոլոր ժամանակների մարդիկ ոչ միայն ունկնդրում են նրա տաղերին, այլև ուսումնասիրության նյութ են դարձնում նրա երգերը: Շատ անվանի գրողներ, գիտնականներ զբաղվել ու զբաղվում են նրա երգերի այս կամ այն հատվածի

մեկնություններով, բառերի բացատրություններով: Նրա երգերի ժողովածուներին կից հրատարակվում են ծանոթագրություններ, անծանոթ և դժվար հասկանալի բառերի մեկնություններ: Հայերեն և օտար լեզուներով ստեղծվել է հարուստ գրականություն Սայաթ-Նովայի տաղերի շուրջը:

Սայաթ-Նովայի հայերեն տաղերի մանրալինին ու խորը գիտական ուսումնասիրության առաջին պատիվը պատկանում է Գևորգ Ախվերդյանին: Մասնագիտությամբ նա բժիշկ էր և աշխատում էր Պետերբուրգում: Սակայն սերը դեպի իր ժողովուրդը, նրա անցյալի հարուստ պատմությունը, գրականությունն ու մշակույթը և իր հարավատ ժողովրդին ծառայելու անհուն փափագը նրան ձգում են դեպի իր հայրենիքը: Նա թողնում է Պետերբուրգը, վերադառնում է Կովկաս, Թբիլիսի և ամբողջապես նվիրվում է հայ ժողովրդական անգիր բանահյուսության և մասնավորապես աշուղական երգերի հավաքման ու ուսումնասիրության գործին: Գևորգ Ախվերդյանի բարեկամներից մեկը հայտնում է նրան, որ մի քանակաչի մոտ պահպանվում է տետրակ աշուղական խաղերով: Այդ քանական Սայաթ-Նովայի թոռն էր— Տեր Մովսես Սայադյան, որը իմանալով Գևորգ Ախվերդյանի ակնիվ նպատակը՝ տետրակը հանձնում է նրան: Տետրակը Սայաթ-Նովայի սեփական ձեռքով գրված դավթարն էր, որտեղ նա գրել էր իր աղբյուրներն, հայերեն և վրացերեն խաղերը: Ըստ որում աղբյուրեջաններն խաղերը գրել է և հայկական (բոլորագիր) և վրացական տառերով, իսկ հայերեն երգերը՝ վրաց և հայկական տառերով: Այդ դավթարը այժմ պահվում է Երևանում՝ գիտությունների ակադեմիայի արվեստի և գրականության թանգարանում:

Գևորգ Ախվերդյանը երկար, քրոնաջան աշխատանքով, գիտնականի հետությամբ ու բարեխղճությամբ այդ դավթարի հայերեն 46 խաղերը առանձին գրքով լույս է բնծայում Մոսկվայում, 1852 թվականին, Լմինյան ակադեմիայի հրատարակչությամբ: Գրքում յուրաքանչյուր խաղի տակ Գևորգ Ախվերդյանը տվել է անմասկանալի բառերի, նույնիսկ դժվար հասկանալի սողերի մեկնություններ ու բացատրություններ: Գրքին կցված է ընդարձակ առաջաբան աշուղական խաղերի ծագման, բնույթի, Թբիլիսիի հայ բարբառի ծագման, պատմության և նկարագրության, Սայաթ-Նովայի կյանքի և այլ խնդիրների մասին: Գրքում վետեղված Թբիլիսիի բարբառի նկարագրությունը առաջին անգամ բարբառագիտական ուսումնասիրությունն է մեր հայ բարբառագիտության պատմության մեջ: Գևորգ Ախվերդյանը Սայաթ-Նովայի հայերեն խաղերի հրատարակությամբ և ուսումնասիրությամբ հիմք է դնում սայաթնովագիտության: Նրանից հետո Սայաթ-Նովայի հայերեն, վրացերեն, աղբյուրեջաներն և ռուսերենի թարգմանված խաղերի ուսումնասիրությամբ հանդես են գալիս գիտության ու գրականության մեջ ճանաչված այնպիսի խոշոր դեմքեր, ինչպիսիք են Յա. Պոլոնսկի, Մ. Էմին, Ն. Մառ, Գ. Ասատուր, Հ. Թումանյան, Վ. Բրյուսով, Ի. Գրիշաշվիլի, Գ. Լևոնյան, Գ. Լեոնիձե, Մելիքսեթ-Բեկ, Ռ. Աբրահամյան, Մ. Հասարթյան և ուրիշներ:

Սայաթ-Նովայի ձեռքով գրված տետրակից բացի, որին Սայաթ-Նովան «դավթար» անունն է տվել, պահպանվել է նաև Սայաթ-Նովայի որդու՝ Օհանի ձեռքով գրված աշուղական խաղերի տետրը, որի մեջ Օհանը Պետերբուրգում եղած ժամանակ վրաց արքայալև Քեյմուրազի հանձնարարությամբ, գրի է առել իր հոր խաղերից 80 հատ և այսպես կազմվել է մի երկրորդ դավթար, որն այժմ պահվում է Լենինգրադում: Այդ երկրորդ դավթարում Օհանը վրացերեն տառերով գրի է առել հայերեն 26 երգ (որից 18-ը հայտնի են Ախվերդյանի հրատարակությունից), վրացերեն 26, ադրբեջաներեն 26 (23-ը կա հեղինակի դավթարում) և 2-ը հոր դավթարում եղած երկլեզվյա և քառալեզվյա: Սայաթ-Նովան իր հայերեն խաղերը գրել է Քբիլխսի բարբառով: Այդ բարբառը գերպահնգապես հին Քբիլխսիի և նրա մոտակա շրջակայքի հայերի խոսակցական լեզուն է եղել և նրանց կողմից կոչվել է ուղղակի «Ջաղկի լիվու», այսինքն՝ կիլիս քաղաքի լեզու:

Քբիլխսիում վրացերենից բացի իշխող է եղել նաև հայերենը, մասամբ ադրբեջաներենը, անձանթ չի եղել և պարսկերենը: Հին դարերից ի վեր վրաց մայրաքաղաքը պատսպարել է իր սահմաններում այլևայլ բարբառներով խոսող հայ հատվածների: «Այդ հատվածները Քբիլխսիում կազմել էին երկու նիսնական շերտավորում, որոնցից մեկը՝ համեմատաբար հինը Տայքից (VII—IX դարեր), Մերձկասպյան Փայտակարանից (IX—X դարեր) և Շիրակից եկած նուսնքներից բաղկացած խմբավորումն էր, որը հիմնականում կենտրոնացավ հին Քբիլխսիի Ջարափի թաղում և կից գտնվող Կուլ թաղում, և որի խոսակցական լեզուն այն «Ջաղկի լիվու» էր, որով ստեղծագործում էին Սայաթ-Նովայի նախորդները, ինքը Սայաթ-Նովան, նրա հետնորդները, որոնց թվում Շամի-Մւլբոն, ապա Գ. Սունդուկյանը և նրա նախորդ, ժամանակակից և նևտույո թատերագիր-արձակագիրները, իսկ մյուս շերտը կազմվել է XIX դարի վերջերից սկսած, Շամխորից, Երևանյան խառնությունից, մասնավորապես Լյօմիսանի շրջակայքից եկած հատվածներից, որոնք հաստատվել էին Քբիլխսիի Հալլարար կոչված թաղամասում և որոնց նկատմամբ առաջին հին շերտի ներկայացուցիչները մի տեսակ հեզմանքով էին վերաբերվում և արհամարհանքով մկրտում էին այնպիսի անվաններ, ինչպիսիք են մըլթոնի, շան ճրագ, խաչագոյ, սոթուու (վրացերեն նշանակում է «թրև եկած») և այլն»¹:

Քբիլխսիի բարբառը այժմ հասարակում է մեռած բարբառ: Սակայն ժամանակին այն շատ աշխույժ բարբառ է եղել: Գտնվելով բուն Քբիլխսիում, որը արևելամայրախառն կուլտուրայի կենտրոնն էր, հայ գրական լեզվին համընթաց այդ բարբառով գրվել ու տպագրվել են բազմաթիվ գեղարվեստական և այլ բնույթի գրքեր: Ոչ մի հայ բարբառով այնքան գործեր չեն տպագրվել, որքան

¹ Լ. Մ Ե Լ Ի Բ Ս Ե Թ - Բ Ե Կ, գրախոսություն Ա. Ջոշոյանի «Քբիլխսիի բարբառի կառուցվածքային առանձնահատկությունների արտացոլումը Գ. Սունդուկյանի երկերում» քեկնածուական դիսերտացիայի մասին, Հայկական ՄԱՄ ԳԱ լեզվի ինստիտուտ, Երևան, 1958:

Թբիլիսիի բարբառով: Այս բարբառով կան 400-անունից ավելի տպագրված գեղարվեստական, թատերական, երգիծական, ազգագրական, աշուղական և այլ ժանրի աշխատություններ: Թբիլիսիի բարբառով լույս են տեսել երգիծաբանական և այլ բնույթի շաբաթաթերթեր, «Մաթաբալա», «Հայելի», «Մախլաս», «Զարկ» և այլն: Հայ դասական գրողներից Բաֆֆին, Մուրացանը և Նար-Ղուր իրենց ստեղծագործություններում նույնպես որոշ տեղ են տվել Թբիլիսիի բարբառին:

Թբիլիսիի բարբառը հարատևեց մինչև 1920-ական թվականները, երբ արդեն դպրոցների լայն ցանցի ստեղծմամբ գրական լեզվի ու մամուլի աննախընթաց տարածման պայմաններում արագ թափով սկսեց մահանալ: Այժմ այդ մեռած բարբառի մասին մենք տեղյակ ենք դառնում Թբիլիսիի բարբառով լույս տեսած բավմաթիվ գործերի շնորհիվ, որոնց թագն ու պսակն են կազմում Սայաթ-Նովայի և Գ. Սունդուկյանի անմահ ստեղծագործությունները:

Կարդալով կամ ունկնդրելով Սայաթ-Նովայի հայերեն խաղերը, նկատում ենք, որ նրա լեզուն միատարր չէ. նրա բանաստեղծական լեզվի գերակշռող մասը, անշուշտ, բաղկացած է հայերեն բառերից, որոնք կազմում են նրա ողջ բառապաշարի 63 տոկոսը: Բայց նրա երգերում հանդիպում ենք նաև բավմաթիվ օտար փոխառությունների (արաբերեն, պարսկերեն, աղբբեջաներեն, վրացերեն և այլն), որոնք կազմում են նրա լեզվի բառապաշարի 37 տոկոսը: Սայաթ-Նովան իր հայերեն 68 խաղերի մեջ գործ է ածել ընդամենը 2020 բառ, որի քանակությունը, ինքնին ապացուցում է Սայաթ-Նովայի բառապաշարի հարստությունը: Եթե այս 2020 բառային կազմը վերածենք լեզվական խմբերի՝ կստացվի հետևյալ պատկերը:

Հայերեն բառեր 1274, որից 672-ը գրական տիպի բառեր են (օրինակ՝ անապատ, անարատ, անգին, անպոր, անիրավ, իմաստուն, մանուկ, մանուշակ, քար, սար, սիրտ և այլն), 280 ընդհանուր բարբառային բառեր (օրինակ՝ ախպեր, հեր, մեր, հերիք, հենց, ճիտ (վիլ), մատաղ, սիպտակ, վիթիլ (թափել) և այլն), ըստ Թբիլիսիի բարբառի հնչյունափոխված բառեր՝ 277 (օրինակ՝ ղունգ-եղունգ, ննգիր-ընկեր, ղուրթ-ճիշտ, հիշտ-հեշտ, հիռու-հեռու և այլն), միայն Թբիլիսիի բարբառին յուրահատուկ բառեր՝ 24, գրաբարյան բառեր՝ 24:

Արաբերեն 298 բառ, պարսկերեն 253 բառ, աղբբեջաներեն 97 բառ, պարսկ. արաբ. 21 բառ, պարսկ. աղբբ. 6 բառ, արաբ. աղբբ. 6 բառ, վրացերեն 23 բառ, հունարենից հայերեն 4 բառ, ասորերենից հայերեն 2 բառ, ռուսերենից պարսկերեն 1 բառ.

Օտար և հայերեն խառն պարսկ. հայ. 14 բառ, արաբ. հայ. 11 բառ, աղբբ. հայ. 9 բառ:

Ինչպես տեսնում ենք Սայաթ-Նովայի լեզուն միատարր չէ: Այն գերակշռող մասով կազմված է հայերեն, ապա արաբերեն, պարսկերեն, աղբբեջաներեն, վրացերեն և մի քանի՝ հունարենից, ասորերենից անցած բառերից:

Հայերենի համընդհանուր բառերի մի մասը Թբիլիսիի բարբառում ենթարկվելով այդ բարբառի հնչյունաբանական և ձևաբանական օրենքներին բնորոշ

ձևափոխություն է կրել (օրինակ՝ ես-լիս, մենք-մինք, ոտք-վուտ, լեզու-լիզու, երկիր- յիրգիր և այլն): Թբիլիսիի բարբառում և Սայաթ-Նովայի տաղերում կան նաև հայերեն բարբառային այլափոխ բառեր, որոնք միայն հատուկ են նրան և չկան ուրիշ բարբառներում: Օրինակ՝ բրոյի-բյուր, (բրոյի-բրոյի կրկնությունիւք բյուրավոր) գամ-անգամ, դիփ, դիփունանք-բողորը, իծոււ-հետո, ինչրու-մինչև, հեստի-այլափոխ, նուրմեկ, նուրմեկանց-դարձյալ և այլն:

Սայաթ-Նովայի հայերեն խաղերում բավական շատ են մեր ժամանակակից գրական լեզվին հատուկ բառերը: Սայաթ-Նովայի ժամանակ դեռ աշխարհաբար գրական լեզու չկար: Սակայն աշխարհաբար խոսակցական լեզվի վարզացումը ընթանում էր այն ուղիով, որ իր մեջ մերելով գրաբարից ու բարբառներից եկած բառերը, այն պետք է աստիճանաբար դարձնէր բազում բարբառներով խոսող հայության համար ընդհանուր և մատչելի լեզու: Սայաթ-Նովայի տաղերում հանդիպում ենք արդի լեզվին հարապատ հետևյալ բառերի.

«Գլխիս ծառա օխտը նորահարս ունիմ» (59), «Հիմքըտ վերստին նուրեցին» (62), «Դաշտի ծաղիկ հովտաց շուշան իս ինձ ամա» (24), «Թանկ հախով գնած չբրաղ իմ» (8), «Բարկ էրես» (3), «Անուշահամ գինով լիքն» (8) և այլն: Ոտանավորի հանգավորումն ու չափը պահպանելու համար հաճախ խուսափում է բառի շեղված բարբառային ձևից և տալիս է բառի արդի գրական ձևը: Օրինակ, գրում է *քեզանից, լավանալ, ցամաքել*, փոխանակ *քիզնից, լավ-նալ, ցամբիլ* և այլն: Բառակերտման, բառերի օգտագործման հարցում անգամ Սայաթ-Նովան շատ հաճախ հնարավորին չափով ջանում է խուսափել անտեղի օտար բառեր գործածելուց և հարապատ մնալ հայերենի ոգուն: Օրինակ՝ Սայաթ-Նովան գրում է *անհաշիվ, թշնամի, լար, սանձ, ջանալ* և այլն, երբ բարբառում նույն բառերի համար կան օտար հոմանիշ բառեր, ինչպես՝ *անհեսաբ, դուշման, մավթուլ, լկամ, չալիշ գալ* և այլն:

Սայաթ-Նովան գիտակ է եղել նաև գրաբար լեզվին: Այդ է վկայում 61-րդ միակ գրաբար խաղը, որի տողերի կեսը գրաբարով է գրված եղել, իսկ կեսը թուրքերեն (ոտանավորը մեկ ոճով ամբողջացնելու համար բանասեր Մ. Հասրաթյանը մյուս կեսը ևս (թուրքերենը) թարգմանել է հեղինակի գրաբարով: Ասում ենք հեղինակի գրաբարով, որովհետև Սայաթ-Նովան այդ խաղի մեջ գրաբարը չի ներկայացրել իր դասական ձևով, այլ հարմարեցրել է Թբիլիսիի բարբառի լեզվամտածողության ոգուն, ստեղծելով մի տեսակ գրաբարախառն բարբառ: Ահա մի քանի նմուշներ այդ խաղի կիսատողերից. *Անապատեն բարբառեցար... փորս ամենայն յուր հավաքյաց... վասն աշխարհին աղոթեցիր, գլուխ վարթապիտ ճշմարտության, թագ ու պարծան իս կուսանանց, մասունքդ ամեն տիղ ծավալի* և այլն:

Սայաթ-Նովայի գրաբար լեզվին լավատեղյակ լինելու մի փաստ ևս կարող էր ձևայել քահանա եղած ժամանակ նրա ձեռքով վարժ ու գեղեցիկ բոլորա-

¹ Փակագծերում եղած թվերը Սայաթ-Նովայի հայերեն խաղերի համարակալություններն են (1959 թ. հրատարակություն):

գրով ընդօրինակված եկեղեցական ժողովածուի վերջում իր մասին գրած հիշատակարանը: Բերենք այդ հիշատակարանից վերջին տողերը. «Ով ընթերցող, յիշեալ զգծող գրոյս մեղապարտ Ստեփանոս քահանայս, որ Սաեաղ Նովայ կոչեն, և հայրն իմ մահտեսի Կարապետն և մայրն իմ Մատայ և դուք յիշեալ յինք յառաջի Այ ամէն»¹:

Բացի վերևում հիշատակած 61-րդ խաղի մեջ եղած գրաբարյան բառերից Սայաթ-Նովան իր այլ խաղերում նույնպէս գործ է ածել գրաբար բառեր: Օրինակ՝ տեսանիլ (16), մեռանիմ (16), մտոր (միտք բառի գրաբար հոգն. գործ. հոլ.) (34): Բարբառային լեզուն խառն է գրաբարյան բառերով: Օրինակ՝ թեզուլ մտոր ճարտար ըլի, դիփունին կու ախտիս, գուլալ (34), կերան ու դառան մերկանդամ (64), սանդարամիսն զորոք սարսյալ (61) և այլն:

Սայաթ-Նովան ճաշակով ստեղծել է մի շարք բառեր (6-րդ խաղում), որոնք շատ գեղեցիկ կերպով իմաստավորում և ամբողջացնում են բանաստեղծի այն մտալզացումը, որ նա ցանկացել է տալ մի րանի տողերում: Ահա 6-րդ խաղի այդ հատվածը.

Դուլ իս կոկոր տերիվակալ.

Չիս թառամի արիվակալ.

Թարավուր իս բարիվակալ

բարով տամ թիլ

Մտիկ տու միլ

Չէ թէ ամտով — օրիվակալ:²

Միևնույն վանկով վերջացող այդ նույնահանգ բառերի իրար հաջորդումը արտամայտում է, որքանի զգացում և երաժշտականություն:

Սայաթ-Նովան զգալի չափով գործ է ածել օտար բառեր: Նրա լեզվի 37 տառնից ավելին այդ բնույթի բառեր են: Օտար բառերի զերակշռող մասը արաբերեն, պարսկերեն և աղբրեջաներեն բառեր են, մեծ մասամբ մտած թուրքերենի մեջ: Արաբերենն ու պարսկերենը Թբիլիսիի բարբառում միջնորդաբար անցել են աղբրեջաներեն լեզվի միջոցով: Հայերն ու աղբրեջանցիները որպէս մերձակից պրացի ժողովուրդներ շարունակ շփման մեջ են եղել իրար նկատ: Երկարատև շփման հետևանքով հայ բարբառներում, ի թիվս նաև Թբիլիսիի բարբառում, թուրք-աղբրեջաներեն բառերի հետ միասին մուտք են գործել նաև արաբերեն ու պարսկերեն բազմաթիվ բառեր, որոնք աղբրեջաներեն լեզվի բառամթերքների բիմնական տարրն են կազմում: Օտար բառերից Սայաթ-Նովայի տաղերում ամենից շատ արաբերեն բառերն են: Դրանց թիվը հասնում է 298-ի: Այս բառերն իրենց բնույթով շատ բազմապատ են: Բացի կոնկրետ առարկաներ կամ երևույթներ արտահայտող բառերից, կան նաև մշակույթի, արհեստների, առևտրի, բժշկության, պետական պաշտոններության և այլ բնագավառ

¹ Մ. Հ ա ս ր ս թ յ ա ն. Սայաթ-Նովայի խաղերի ժողովածու, 1959, էջ 305:

² Ընդգծվածները Սայաթ-Նովայի նորաստեղծ բառերն են:

ցուց տվող արաբերեն բառեր: Այսպես, օրինակ, արհեստների մշակույթի վերաբերյալ բառերից են առլաս, ղումաշ, դաբադ, ղալամբար (արևելյան տեսակի ընտիր չիթ) և այլն, մշակույթի վերաբերյալ բառեր՝ ղալամ, ղավթար, ղապալի, բժշկության, դեղորայքի և բույսերի վերաբերյալ բառեր՝ հեքիմ, միլամ, կափոանգ, ղարանփիլ և այլն, պետական վարչական պաշտոնետության կարգի բառեր՝ մեշլիս, նապիր, վեպիր, վեքիլ, սուլթան և այլն:

Արաբերեն բազմաթիվ բառեր ու չթեքվող խոսքի մասեր նույնությամբ անփոփոխ կիրառվում են բարբառում: Այդպիսի չթեքվող (այսինքն հուլովման ու խոնարհման չենթարկվող) բառեր են *ախր-ընդդիմախոսական շաղկապ, ամա-բայց, սակայն, բապի-ոմն մի, ղափիլ-մ*. անսպասելի, հանկարծ, *ահլի-ա ծ*. շնորհալի, արծանավոր, *այան-ա ծ*. հայտնի, պարզ և այլն:

Բարբառում արաբերեն բառի և հայերեն բայական վերջավորությամբ կամ *անիլ, ըլիլ* բայերով կազմվում են բազմաթիվ հարադիր բայեր և բայական դարձվածքներ: Օրինակ՝ *թամամ-լրիվ, թամամիլ-ամբողջանալ, խեթ-օգուտ, խեթիլ-օգուտ տեսնել, խեթվիլ-օգտվել, խիալ-կասկած, խիալ տանիլ* կամ *խիալ անիլ-կասկածել, ղաբուլ-համաձայն, համեմատ, ղաբուլ անիլ-համաձայնել, մալում-հայտնի, որոշ, մալում անիլ-ճանաչվել, իմացվել* և այլն:

Հայերեն *ան* նախածանցով և արաբերեն բառով կազմվել են նոր բառեր, որոնց հանդիպում ենք Սայաթ-Նովայի խաղերում: Օրինակ՝ *անղամ-անհոգ, անվիշտ, անղալիղ-առանց նավակի* («էշխն լող կուտա անղալիղ»), *անքանար-անեպր, անափ, անխաբ-անծախս, անղալամ-անվրձին, վրձին չտեսած* («անղալամ բաշած օսկու պես է փայլում ունքըտ-առանց նկարչի վրձինի բնականից գեղեցիկ են ունքերդ») և այլն:

Սայաթ-Նովայի խաղերի բառային կազմում մյուս մեծ խումբը պարսկերեն բառերն են: Պարսկերեն շատ գոյական անուններ և ածականներ համարյա նույնությամբ մտել են բարբառի մեջ, միայն երբեմն ենթարկվելով որոշ հնչյունափոխության: Օրինակ՝ *ագուր-աղյուս, բունիաթ-հիմք, գուլբաղ-վարդաստան, ղաստուր-թուլլատրելի, ղարդ, ղարդիման- կարեկցող* և այլն: Ընդունված գոհար, նուբար (երախայրիք-առաջին պտուղը), ուստա բառերի փոխարեն նա գործածում է գրական պարսկերեն ձևերը՝ գովհար, նուգբար, ուստադ և այլն:

Թբիլիսիի բարբառում և Սայաթ-Նովայի տաղերում պարսկերեն բառերով և հայերեն օժանդակ բայի միջոցով կազմվում են բազմաթիվ հարադիր բայեր: Օրինակ՝ *բնղամաղ անիլ-վիրավորել, ղաստուր տալ-թուլլատրել, բհամ գալ-ծագել, սերել, ղարդ անիլ-մտածել, վշտի մեջ լինել* և այլն: Նույնիսկ պարսկերեն բայական կազմությամբ բառը բարբառում չի գիտակցվում որպես բայ և հանդես է գալիս անպայման հայերենի միջնորդությամբ: Օրինակ՝ *ռաստ-հանդիպել, բայց կիրառվում է միայն օժանդակ բայի օգնությամբ ղաստ գալ ձևով:*

Պարսկերենի չթեքվող խոսքի մասերը՝ կապերը, շաղկապները, մակբայական բառերը նույնությամբ կիրառվում են բարբառում և Սայաթ-Նովայի տաղերում: Օրինակ՝ *անջաղ* հավիվ, *աշկարա* ակնհայտ, *բարբաթ* կարգին, *բարեբար*-հավասար, *չունրի-որովհետև* և այլն:

Արաբերեն և պարսկերեն բառերի զգալի քանակը Սայաթ-Նովայի տաղերում ցույց է տալիս, որ նա հմուտ է եղել պարսկերեն լեզվին: Էլ չենք խոսում վրացերենի և աղբբջաներենի մասին, որոնցով նա գրել է բազմաթիվ խաղեր:

Սայաթ-Նովայի տաղերում աղբբջաներեն (թուրքերեն) բառերը նույնպես զգալի տոկոս են կազմում և չնչին հնչյունափոխությամբ նույնությամբ գործածվում են բարբառում. օրինակ՝ *ալ-կարմիր, ավչի-որսորդ, արաղ-օղի, արխ-առու, արք-իրավունք, բալքամ-գուցե, բաշ-գլուխ, գլխավոր, բեչու-հայտնի, բլքամ-գուցե, թերևս, թաք-միայն, սաղ-սաղ-ողջ-ողջ* և այլն:

Սայաթ-Նովայի տաղերում աղբբջաներեն (ինչպես և ուրիշ օտար) բառերով բայեր կազմվում են հետևյալ կերպ.

1) Աղբբջաներեն բայական ձևին ավելանում է հայերեն անորոշ բայի *իլ* վերջավորությունը (ըստ որում աղբբջաներեն արմատական բառի ծայնավորը երբեմն սղվում է), օրինակ՝ *բեզար-բեզարիլ* կամ *բեզրիլ, բարիշ-հաշտ, բարիշիլ-հաշտվել* և այլն:

2) Հարադիր ձևով՝ աղբբջաներեն գոյական անունների ու ածականների և հայերեն գործողություն ցույց տվող որևէ բառի կամ վերջավորության միջոցով: Օրինակ՝ *բեդամաղ անիլ-վիրավորել, դիմիշ անիլ-չխնայել, ափսոսալ. ղուուղ անիլ-ծառայել* և այլն:

Վրացերեն բառերը Սայաթ-Նովայի տաղերում թեպետ փոքրաթիվ են (ընդամենը 22 բառ), բայց Թբիլիսիի բարբառում դրանք բավական մեծ թիվ են կազմում և բարբառի ամենաբնորոշ և ինքնատիպ կողմն են հանդիսանում: Հայ գրականության մեջ Թբիլիսիի բարբառով գրված շատ հարուստ գեղարվեստական գրականություն գոյություն ունի: Այդ գործերում առավել կամ նվազ չափով հանդիպում ենք շատ վրացական փոխառությունների: Այսպես, օրինակ՝ մեծ դրամատուրգ Գ. Սունդուկյանի կատակերգություններում և արծակ գործերում («Վարինկի վեջեր», «Համալի և Հադիդի մատահաթևիրը») վրացերեն փոխառյալ բառերի թիվը հասնում է 300-ի:

Վրացերեն փոխառյալ բառերը Թբիլիսիի բարբառում և Սայաթ-Նովայի տաղերում կարելի է բաժանել երկու խմբի.

ա) բառեր, որոնք նույնությամբ, առանց փոփոխության օգտագործվում են Թբիլիսիի բարբառում. օրինակ՝ *պուճպուճա-կակաչ, ջիղջիղա-թիթեղ, մաթլաբա-խոր ափսե, կավի-քունքից իջնող ոլորուն մալ* և այլն: Այս կարգին են պատկանում նաև չթեքվող խոսքի մի շարք վրացերեն բառեր, օրինակ՝ *գանամիթե, արդյոք, խան-մերթ, երբեմն, միթամ* կամ *միթում-իբր թե, ջեր-դեռ* և այլն:

բ) բառեր, որոնք հայկական երանգով են օգտագործվում լեզվի մեջ, ինչպես՝ *ալամ-դրոշակ, թավադ-իշխան, կոկոր-կոկոն, դիլ-կոճակ, փոթուլ-տերև* և այլն: Այս բառերը թեև վրացերեն են, բայց զրկվել են վրացերենին հատուկ ի վերջավորությունից: Վրացերենում ասվում է *ալամի, թավադի, կոկորի, դիլի, փոթուլի* և այլն: Հետևաբար կարելի է ասել, որ այդ բառերին թբիլիսահայերը հայկական երանգ են տվել: Այս կարգի շատ բառեր կարելի է հանդիպել Թբիլիսիի բարբառով գրի առնված բազմաթիվ ստեղծագործություններում:

Ռուսերենից կա մեկ փոխառյալ *չար-ցար* բառը, «Աչկ ու ունքըս վիր իս թողի, հուքմըտ մէ լուս չարի բաբաթ» (47) (այսինքն խիստ են կամ հպարտ գոռուկ են և կամքը՝ հրամանդ է ռուս ցարի նման): Թուրքական-պարսկական արտասանությամբ *չար* ձևը բանասեր Մ. Հասրաթյանը իր կազմած ժողովածուում հասկանալիության տեսակետից դարձրել է *ցար*:

Սալաթ-Նովայի տաղերում ռուսերեն այդ մեկ բառի առկայությունը հասկանալի է, որովհետև այդ ժամանակ Անդրկովկասը որպես վարչական միավոր դեռ չէր մտել ռուսական կայսրության մեջ: 1801 թվականից Վրաստանը, իսկ 1828 թվականից Արևելյան Հայաստանը դառնում են Ռուսաստանի անբաժանելի մասեր: Այդ ժամանակվանից սկսած Արևելյան Հայաստանի հայ բարբառները և Թբիլիսիի բարբառը թե՛ առօրյա խոսակցական լեզվում և թե՛ գեղարվեստական գրականության մեջ փոխ են առնում բազմաթիվ ռուսերեն բառեր: Օրինակ, Սունդուկյանի երկերում առկա է մոտ 400 ռուսերեն բառ:

Արաբերեն, պարսկերեն, աղբբեջաներեն, վրացերեն բոլոր այս օտար բառերը բարբառում ենթարկվում են հայերենի քերականական օրենքներին, հիղովում ու խոնարհվում են ինչպես հայերեն բառեր, ստանում են որոշիչ ու ստացական հոդեր, *իր, նիր, էք* և այլ հոգնակի մասնիկներ ու բառակերտական ածանցներ:

Սալաթ-Նովայի տաղերում մենք հանդիպում ենք նաև հատուկ անունների (մարդկանց անուններ և աշխարհագրական տեղանուններ): Տաղերում եղած մի շարք անունները ցույց են տալիս, որ Սալաթ-Նովան ծանոթ է եղել պարսկական գրականությանը, հատկապես Շահնամեին—Շիրին—Ֆահրադի, Լեյլի և Մեջնունի վեպերին: Հիշում է պատմական կամ Արևելքում տարածված այնպիսի անուններ, ինչպես Սկանդար Ջուլդար (Ալեքսանդր Մակեդոնացին), Լոդման Հեթիմ (Արևելքում հռչակված բժիշկ և իմաստուն), Խոսրով Փաչա (Սասանյան Պարսկաստանի թագավոր VI դարում), Շահ-Աբբաս 1-ին (Իրանի միապետ XVI—XVII դարերի առաջին քառորդին, որը Արևելյան Հայաստանից մեծ ազգաբնակչություն գաղթեցրեց Իրանի խորքերը), Աշուղ-Ղարիբ և այլն:

Աշխարհագրական վայրերից նա հիշատակում է Հնդստան, Արաբստան, Հաբաշ (Հաբեշտան կամ Եթովպիա), Ուրումեյ (վրացերեն լեզվով Բյուլանդիա), Փռանգստուն, Ղրիմ, Դաղստան, Չինումաչին (Հյուսիսային և Հարավային Չինաստանը), Իրանի քաղաքներից ու վայրերից՝ Շիրապ, Խորասան, Բադեշխան և այլն:

Այս իրողությունները ցույց են տալիս, որ Սալաթ-Նովան ժամանակի ամենալարագացած և լայն մտահորիզոնի տեր անձնավորություն է եղել: Իր մայրենի լեզվին՝ Թբիլիսիի հայ բարբառին, վրացերենին և աղբբեջաներենին տիրապետելուց բացի նա քաջ տեղյակ է եղել նաև պարսկական լեզվին ու գրականությանը:

Իյոսելով Սալաթ-Նովայի լեզվի բառային կազմի մասին, անհրաժեշտ է մի երկու խոսք ասել նաև հարադրական բարդությունների կամ հարադրությունների. դարձվածքային կապակցությունների և ոճերի մասին:

Հարադրական բարդությունները կամ հարադրությունները բառային կազմի լրացուցիչ աղբյուր են հանդիսանում և լայն կիրառում ունեն բարբառում և գրական լեզվում: Սրանք հաստատուն կապակցություններ են և թեպետ մի բառի նշանակություն ունեն, բայց մեկ չեն համարվում (օրինակ՝ շուռ տալ-թափել): Ժողովրդի կազմած հարադրությունները բանավոր խոսքից թափանցելով գրավոր խոսքի մեջ, աստիճանաբար գրականանում են և մտնում են գրական լեզվի բառային ֆոնդի մեջ:

Բարբառում, ինչպես նաև Սայաթ-Նովայի տաղերում, հարադրությունները կազմվում են հայերեն բառերով և խառը (օտար և հայերեն):

Հայերեն բառերով հարադրություններ են դիմ *անիլ*-բուծել, *անգաջ անիլ*-լսել «Անգաջ արա մատաղ իմ քիպ»: *Չիռք քաշիլ*-հրաժարվել: *Տիս գալ*-այցելել: «Յիփ միռա, իժում տիս էկար»: *Յիրգիր պաքիլ*-երկրպագել և այլն:

Աղբբեջաներեն—հայերեն՝ *դիմիշ անիլ*-վոհաբերել, չափսոսալ, *դուլուղ անիլ*-ծառայել: «Արի համով դուլուղ արա»: *Յարալու անիլ*-վիրավորել, խոցել: *Չաղ անիլ*-թեժացնել: «Հտ կրակն չաղ մի անի»:

Պարսկերեն-հայերեն՝ *սապ անիլ*—նվագել, երգել: «Բարակ ձենով սապ իս անում»: *Սապ գալ*—պատշաճել, ներդաշնակել: «Քի սապ գու քա ալ դումաշը»: *Նապ անիլ*—կոտրատվել: «Նապ մի անի, նապտ ինձ կու սպանե»:

Արաբերեն-հայերեն՝ *դուրբան ըլիլ*—վոհաբերվել: «Քանի վուր ջան իմ, յար քի դուրբան իմ»: *Խարաբ անիլ*—քանդել, փշացնել: «Սելավի պես առանց ցամքիլ, դուն շուտով խարաբ մի անի»: *Հեյրան անիլ*—պարմացնել: «Շուղկըտ արեգագի նման է, տեսնողին հեյրան իս անում»: *Ղալամ քաշիլ*—նկարել: «Հերեւրտ խասա մուրասա, ղալամ քաշիլըն ինչ կոնե» և այլն:

Ջուտ օտար բառերով բարդություններ.—*Չալիր-չիման* (աղբբ. պարսկ.) մարգագետին: *Հուրիպաղա* (արաբ. պարսկ.) գեղեցկուհի, հավերժահարս: «Թեգուլ հուրիպաղա ըլի, դիփունին կու ախտիս, գոպալ»: *Հուքմի-հեքիմ* (արաբ.) իշխանավոր, դատավոր: «Չըկա քիպ պես հուքմի-հեքիմ, դուն Ռոստոմի Ջալ թագավոր» և այլն:

Լեզուն հարստացնելու միջոց են նաև բառական կրկնությունները, որոնք հարադրության մի տեսակն են: Սրանք իրենց բնույթով ինչքան ժողովրդական են, նույնքան էլ գրական են և լայն կիրառում ունեն խոսքի մեջ:

Բառական կրկնությունները կազմվում են հետևյալ եղանակներով.

ա) նույն արմատի կրկնությամբ. օրինակ՝ *մեմեկ-մեմեկ*—մեկ-մեկ, մեկական»: «Մեմեկ-մեմեկ էլ չի ասվի»: Քիպի-քիպ—ինքը քեզ: «Քիպի-քիպ մտիկ արա»: *Բրո:ի-բրո:ի*—բյուրավոր, բազում: «Թեգուլ քու քաշըն մարք:իսու տան բրոյի-բրոյի, չիմ հիռացնի քիպ քու յարեմեն», *Սարսարի*—մոլորված, թափառական: «Կուռըտ շիմշատ... արավ ինձ սարսարի»:

Օտար բառերով՝ *ջուրա-ջուրա* (աղբբ.) «Մե նըմանըտ ռաշի նըման, մե նըմանըտ ջուրա-ջուրա»: *Փարա-փարա* (պարսկ.) կտոր-կտոր, մաս-մաս: «Գևա թե խիլք ունիս զըլխիտ ճար արա, թե չէ անիլ կուտամ քիպ փարա-

փարա»։ *Ռանգե-ռանգ*—գույնզգույն, երփներանգ։ «Թափրը ռանգե-ռանգ իս անում» (տեսքտ երփներանգ ես անում) և այլն։

Բառերի, բառային կապմի հետ սերտորեն առնչվում են նաև դարձվածքները։ Դարձվածքային կապակցությունը սովորական բառից տարբերվում է իր կապմության բարդությամբ, իմաստի ու ձևի ընդարձակությամբ, արտահայտչական հարստությամբ։ Երբ իմաստային և ձևական գործոնները միևնույն կապակցության մեջ միասնաբար են հանդես գալիս, ստացվում է մի կուռ դարձվածքային ամբողջություն։¹ Դարձվածքներն իրենց էությամբ ծնունդ են առնում ժողովրդի ընդերքից և կրում են ժողովրդական ստեղծագործության խոր կնիքը։ Դարձվածքային կապակցությունը դարերով ձուլված-լողված մի համաձուլյ միացություն է։ Սայաթ-Նովայի տաղերում գործածված դարձվածքները հենց այդ բնույթի են։ Դարձվածքներն իրենց արտաքին ֆիզիկական դրսևորմամբ անբուծանելիորեն կապված են մարդու վերջավորությունների՝ ձեռքի ու ոտքի և ամենակարևոր ու կենսական օրգանների՝ սրտի, աչքի, գլխի, բերանի, լեզվի, ականջի և մարդու այլ օրգանների հետ, այնուհետև ֆիզիկական մարմինների՝ հողի, ջրի, երկրի և բնության երևույթների հետ։ Այսպես, օրինակ՝ *սիրտ բառից ստեղծվել են այսպիսի դարձվածքներ։ Սիրտ բանալ*—ասել, պատմել, արտահայտվել (67)։ *Սիրտը էրվիլ*—սիրտ զգացմունքից տառապել (22)։ *Սիրտս ընգավ ծովացավ*—սիրտս ծով ցավի մեջ ընկավ (51)։ *Սիրտը կես անիլ*—մեռցնել (55)։ *Սիրտըդ պարզ արա*—սիրտդ, միտքդ պարզացրու, հստակ դարձրու (56)։ *Սրտի մեջ արին մնալ*—վիշտ կրել։ «Էնդուր աճկըս չէ ցամբում, սրտիս մչըն արին մնաց» (33)։ *Սրտով սիրած*—հավանած, ընտրալը։ «Սըրտով սիրածս դուն իս» (66)։ Օտար բառերի հետ *սիրտ*-ը նույնպես կապվում է բազմաթիվ կապակցություններ։ Օրինակ՝ *Սիրտը դաղ անիլ*—խիստ վիրավորել, վշտացնել (6)։ *Սիրտը վայ անիլ*—տրամադրությունը փչացնել (11)։ *Սիրտը յարալու շինիլ*—խոր վիշտ պատճառել (65)։ *Սրտի մուրապ*—նվիրական իղձ՝ փափագ, ամենացանկալի բանը (59) և այլն։

Չեռ բառով՝ Չիռ բաշիլ—հրաժարվել (46)։ *Մեկի ձեռնեմեն*—մեկի պատճառով (67)։ *Չեռնեմեն ձիռն գցիլ*—չպահել (23)։ *Չեռնեմեն վեր ածիլ*—կտրելով թափել։ «Առանց քիզ ի՛նչ կոնիմ սոյբաթն ու սազը, ձեռնեմես վեր կոծիմ չանգիրն մեմեկ» (21)։

Աչք բառով՝ Աչկը արին լալ—ծանր վշտի մեջ լինել (22)։ *Աչկը ճանապարհն մնալ*—ակընդետ սպասել մեկին կամ մի բանին (33)։ *Աչկի լուս*—ամենասիրելի, ամենաթանկագին և այլն։

Գլուխ բառով՝ Գլուխ դնիլ—ուշադիր հետևել մի բանի (4)։ *Գլուխը պահիլ*—ապրել (53)։ *Գլխին ճար անիլ*—փրկության միջոց մտածել (26)։ *Էն գլխեն, էս գլխեն*—սկզբից (10)։

¹ Տե՛ս Վ. Առաքելյան, Ավետիք Խահակյանի պոեզիայի բառապաշարի ռճաբանական առանձնահատկությունները, Երևան, 1954, էջ 110։

Լեզու բառով՝ Լիզվի տեր—ճարտար խոսող, Բաղցր լիզու—հաճելի խոսող և այլն: Աշխարհ բառով՝ Աշխար բռնիլ—ընդգրկել, տարածվել բոլոր կողմերը: Աշխարի մալ—գանձ, հարստություն: Հոգի բառով՝ Հոքին հանիլ—շատ նեղել, չարչարել: Հոքին տալ—անչափ սիրել, մեռնելու չափ սիրել (28): Հրբու փաթիր—անձի սիրո համար, ի սեր անձի և այլն:

Բնության երևույթներից ջուր բառով՝ Ջրի տարած—խեղճ, անօգնական, ջուրը տանիլ—խեղճ, անօգ վիճակում լինել: Մութ բռնիլ—խավարել: «Մութ բռնից աշխարք» (64) և այլն:

Դարձվածքների մեջ մտնում են նաև առածներն ու ասացվածքները, որոնք գեղարվեստական խոսքի ամենահարուստ տեսակն են և որոնց մեջ ձևի ու բովանդակության միասնությունը հասնում է կատարելության: Առածների ու ասացվածքների բովանդակությունը խտացված ձևով արտահայտում է ժողովրդի դարավոր կենսափորձը իր խոր երակացություններով ու բնորոշումներով, վշտի և ուրախության դրսևորումներով, սոցիալական անարդարության մերկացումներով: Սայաթ-Նովայի 44-րդ խաղի յուրաքանչյուր տողը խորը իմաստավորված և դարավոր կենսափորձից բխեցրած խրատական բնույթի ասացվածքային արտահայտություններ են: Օրինակ՝ «Ում հաքին հին շալ ին տեսնում, էլ չին ասում թե էս ով ա» (բողոք սոցիալական անհավասարության դեմ): «Պատանքին մե ռանգն է հերիք, չալ անիլըն ինչին է շահ» (վուր անիմաստ աշխատանքի, գործ դրած ջանքի մասին): «Սիվ արաբի ճակտի վրա խալ անիլըն ինչին է շահ»: «Աշխարըս միլ մնալու չէ, մալը անիլըն ինչին է շահ»: «Ջարեքըն դիղըտ չին գիդի, փալ անիլըն ինչին է շահ» (այսինքն՝ բժիշկները քեզ առողջացնելու միջոցը չգիտեն, բախտ՝ վիճակ բաց անելն ինչ օգուտ): «Ջանի գուլեք քամին տանե ծովունեն ավազ չի պակսի» (10) (աշխարհս մըջ տընջենական է):

Առածների և ասացվածքների հետ հիշատակության արժանի են նաև անեծքներն ու օրհնանքները, որոնք դիպուկ դարձվածքային ամբողջություն են կալմում: Դրանք օժտված են արտահայտչական մեծ լիցքով, արտահայտում են խոսողի հուլական ողջ աշխարհը, սերը, կարոտը, ցասումը, վրեժը և այլն: Օրինակ՝ «Արի բըլբուկ, խոսի բարըն, օխնըվի քու էկած սարըն» (9): «Լուսըն քու ծնողին ըլի» (35): «Ով քիլ խայան մոտիկ տա, դառնա էրկու աչկով կուր» (13): «Ովոր ինձ շինից դիվանա, Սուրբ Կարապետն խիվանա, վադի էրեարն սիվանա» (67): (Ով ինձ խելացնոր դարձրեց՝ Սուրբ Կարապետից խնեթանա, վատի երեսն սևանա): «Հում կաթնակիր Աթամի վաթ, նալաթ քու էթիբարին» (22): (Անպակաս լուրերի Ադամի ցեղ, նպովք քո վստահության, հավատ ընծայելուն):

Ամփոփ կերպով տալով Սայաթ-Նովայի բառային կապի նկարագրությունը, անհրաժեշտ է մի երկու խոսք ասել նաև ձայնարկությունների և շաղկապների մասին, որոնք խոսքի մեջ սպասարկող դեր կատարելով հանդերձ, մեծ դեր են խաղում գեղարվեստական խոսքի մեջ:

Ձայնարկություններն արտահայտում են բանաստեղծի ողջ հուլական աշխարհը, տրամադրությունը, կարոտը, սերը, փսոսանքը, բարկությունը ուրախությունը և այլն: Ձայնարկությունները բավերանգ են: Նայած թե խոսքի մեջ հուլական ո՛ր կողմն է գերակշռում, ըստ դրան էլ կիրառվում է ձայնարկության այս կամ այն եղանակը:

Սայաթ-Նովայի մոտ գործածական են հետևյալ ձայնարկությունները.

Ա՛խ, 1) վշտի, փսոսանքի բացականչություն: «Կանչողըն դարդակ է գնում, ա՛խ, Սայաթ-Նովա ին ասում» (40): 2) Հռոպանքի արտահայտություն «Աշխարումըս ա՛խ չիմ քաշի, քանի վուր ջան իս ինձ ամա» (24): 3) Ողբի, սգի արտահայտություն [«Մեջլումըն չոլիրում մընաց, Լեյլու համա ա՛խ կանչելով»] (54): 4) Կարոտի բացականչություն: «Աչկեմես ջուհարըն գնաց յարին կարոտ ա՛խ անեւեն» (54): 5) Տենչանք, երանի տալը, մի բանի հասնելու ցանկություն: «Ակոավը բըլբուլ չի դառնա, քանի գուլե վուր ա՛խ անե» (54):

Ա՛հ (հռոպանք), «Թեգուլ հավար դարդ ունենամ, յիս սըրտումըս ա՛հ չիմ ասի (31):

Է՛, կոչական բացականչություն: «Է՛յ նալանի, ռահըմ արա» (66): (Ո՛վ սիրելիս, գթա ինձ):

Հեյ վա՛խ (փսոսանք, թախիծ, վիշտ արտահայտող) «Հեյ վա՛խ, էլ ձեռիս քամանչա չըկա» (67):

Վա՛յ 1) Վիշտ, կարեկցանք արտահայտող: «Ով տեսնում է, էս է ասում, վա՛յ քու դարին, Սայաթ-Նովա» (57): 2) Ափսոսանք, ցավակցություն: «Ծընգան տալով վա՛յ ին ասում» 3) Արտահայտում է չարիք, աղետ: «Շատըն սատանեն է տանում վիրչըն մընում է վա՛յ տալու» (44): 4) Արտահայտում է ողբ, լաց, հռոպանք: «Հա լաց էլա, վա՛յ կանչեցի անհաշիվ» (63):

Վա՛շ, վա՛շ—հիացմունքի բացականչություն: «Էնդու համա քու տեսնողըն ասում է վա՛շ, վա՛շ նալանի» (35):

Ձայնարկության դեր են կատարում նաև մեկ-երկու բառեր օրինակ՝ *ափսուս* (ցավակցության բացականչություն) «Ափսուս վուր շուտով միռիլ է, լուսը քու ծընողին ըլի» (35): «Ափսուսալու հավար փսուս, յիս էս դադա դար ունենամ» (57): *Ապրիս, ապրի*—բաջալերանքի կամ օրհնության բացականչություն: «Խալիխին էս իլթիմալըն արա՝ ասին, ապրի քու ածողըն» (1) (Մարդկանց այս խնդիրքն արա սսեն՝ օրհնվի քո նվագողը):

Սայաթ-Նովայի տաղերում համադասական շաղկապներից ամենից շատ գործածական է ու շաղկապը, որը միմյանց է կապում բառերն ու նախադասության անդամները, բայց շատ հաճախ ու-ի շաղկապող ֆունկցիան մթագնվում է, երբ իմաստի տեսակետից երկու գույգ բառերը միմյանց շատ մոտ են, որոնք ամբողջության մեջ կորցնում են իրենց առանձին նշանակությունը և հանդես են գալիս որպես բառի առանձին բաղադրիչներ:՝ Օրինակ՝ «Մապիր ունիս սիմ

¹ Տե՛ս Վ. Ա. Ու ա թ է լ յ ա ն, Ավետիք Իսահակյանի պոեզիայի բառապաշարի ռեբանական առանձնահատկությունները, Երևան, 1954, էջ 185:

ու շարքաբ» (3) (Այստեղ սիմ, շարքաբ բառերը երկուսն էլ թելի գաղափար են արտահայտում) : «Լալ ու ալմաո իս, քամանչա» (այսինքն թանկագին քարերից ես, քամանչա) : «Ծուցիտ մեչըն վարթ, մանիշակ, սըմբուլ ու սուսան իս շինի» (2) : Երբեմն սմբուլ ու սուսան բառակապակցությունը արտահայտվում է առանց ու շաղկապի : Օրինակ՝ «Սուսան սըմբուլ դաստա մալըտ էրե-սիտ խափանգ իս արի» (65) կամ «Դաստամալըտ նըման սըմբուլ սուսանի» (11) :

Սայաթ-Նովայի տաղերում, և ընդհանրապես Թբիլիսիի բարբառում, ու շաղկապը գերիշխող է : Բազմաթիվ բարդ բառեր, թե՛ հայերեն, թե՛ օտար և կամ խառն՝ կազմվել են երկու համադաս բառերից ու շաղկապի միջոցով : Օրինակ՝ նիտվանիդ—նետ ու աղեղ (որտեղ ու-ն ա ծայնավորից առաջ դարձել է վ) : Բարուկիր «Բուսիաթըս ալալ չիմանաս, քարափ է, քարուկրեն է» (10) : Ու շաղկապով կազմվում են նաև հարադիր բարդություններ, որոնք երբեմն միտում ունեն միանալու : Օրինակ՝ աղ ու հաց : «Մտիկ արա աղ ու հացին» (15) Աղ ու հաց (փ ի բ. հավատարմություն, աննենգ բարեկամություն) : «Գիշիր ու ցերեկ լալիս իմ» (47) :

Խառը հարադրություններ՝ «Նուղլ ու շաքար իս ինձ համա» (նուղլ պրսկ. «շաքարով նուշ») :

Ու շաղկապով են կազմվում նմանապես բազմաթիվ օտար հարադրություններ : Օրինակ՝ ջան ու ջիգար (պարսկ. բառերով)—հոգիս, սիրելիս, սրտակից : «Դարդ մի՛ անի, ջան ու ջիգար» (5) : «Թռռամիլ է սըրտիս վարթը, սափա, վող ու դամ չկա» (67) (Զող պարսկ. «խրախճանք», դամ պարսկ. «ուրախություն») :

Հարադրությունների մեջ երբեմն ու շաղկապի անհրաժեշտությունը բոլորովին վերանում է : Նման դեպքում ու շաղկապի փոխարեն բառերը միասին են գծիկով : Օրինակ՝ «Գիշեր-ցերեկ յարու խաթրու ջիգարըս էրած գիղենաք» (57) :

Սայաթ-Նովայի 68 տաղերում ու շաղկապը գործածվել է 138 անգամ :

Եվ շաղկապը Սայաթ-Նովան գործածել է միայն երկու անգամ. 23-րդ խաղի տողատակի ծանոթագրությունում և 50-րդ խաղի մեջ :

Ստորադասական շաղկապներից ավելի տարածված ու գործածական է որ շաղկապը, որը Թբիլիսիի բարբառում արտասանվում է վուր ձևով : Սայաթ-Նովայի տաղերում վուր շաղկապը հանդես է գալիս մի շարք ֆունկցիաներով :

1) Որպես նպատակի շաղկապ : «Չարըտ ռաշի կուղեն պիտի, վուր դուն խոսիս քաղցըր հանգով» (1) : 2) Պայմանակյան շաղկապ : «Թե գուլիս վուր դադաստան չը տեսնիս՝ վանք սիրե, անապատ սիրե» (16) : 3) Բացատրականի շաղկապ : «Գիղիմ վուր յար, դուն ինձ լալիդ չիս անի» (11) : 4) Հարկադրանքի շաղկապ : «Պիտի վուր պաս պահիս, հալար փըշըրվիս» (59) : 5) Անորոշ դերանունի հետ կցվելով ցույց է տալիս անհայտ անորոշ լինելը : «Սախաթ կուլի, ովոր խոսի հում» (49) : 6) Որպես հարցական դերանուն : «Վո՛ւր մե դարդըս կու հասկանան» : 7) «Եթե» շաղկապի ֆունկցիայի դերում «Կու տես-

նիք մինձ վարար, վուր առիլ իք էս պըսուլի համ» (64) : 8) «Թե» շաղկապի հետ միանալով դարձյալ փոխարինում է «եթե» շաղկապին: «Ինչ կուլի մեկ հիղըս խոսիս, թե վուր Սայաթ-Նովու յար իս» (24) :

Թե շաղկապը նույնպես ընդարձակ կիրառում ունի Սայաթ-Նովայի տաղերում: Հանդես է գալիս դարձյալ մի շարք ֆունկցիաներով: 1) Կապում է գլխավոր նախադասությունը երկրորդականի հետ: 2) Կատարում է «եթե» շաղկապի ֆունկցիա: «Զիմ լաց ըլի թե ճար ունենամ» (8) : 3) «Որ» շաղկապի դերում: «Զէթող թե մուրապին հասնին» (52) : 4) Ցույց է տալիս նախկինում ասածի կամ գործի հակառակ վիճակը, չէ որ: «Թէ դուն ասիր յսդ յար չունիմ» (45) (Զէ որ դու ասացիր ուրիշ յար չունեմ) : 5) «Թե» հաճախ գործածվում է իբրև բաժանական շաղկապ և դրվելով յուրաքանչյուր անդամից առաջ ուժեղացնում է խոսքը: «Թե իսմ հաքնիս, թե վար հաքնիս, կու շինիս դումեսը, նապանի (35) : 6) «Թե» շաղկապը գործ է ածվում «որ» շաղկապի հետ արտահայտելով «եթե» շաղկապի իմաստ: Օրինակ՝ «Թե վուր չը գամ ու չը տեսնիմ, հապար բաբաթ բան կոսիս» (5) :

Շաղկապների գործածությունից նույնպես պարզ ու ակնհայտի երևում է, թե Սայաթ-Նովայի լեզուն իր հիմքով ինչքան ժողովրդական է, կենդանի ու անկաշկանդ և զերծ որևէ պայմանականությունից:

Սայաթ-Նովան իր բանաստեղծական պատկերները կամ միտքը երբեմն ավելի ուժեղացնելու և արտահայտիչ դարձնելու համար կողք-կողքի միևնույն նշանակություն ունեցող վույզ բառեր է գործածում որպես հոմանիշներ (կամ հայերեն բառերով կամ խառը—հայերեն և օտար բառերով և կամ միայն օտար բառերով) : Օրինակ, հայերեն հոմանիշներով «Անարատ, մարուր իս, ախպեր» (13) : Խառը ձևով (հայ և օտար) «Ամեն մէ մըտիկ տալով տարար խիլըսս, բամալըս» (66) : Այստեղ խիլը—միտք բառին հոմանիշ է արաբերեն բամալ բառը: Օտար բառերով՝ «Վունց դոբա ունե, վունց չափար, յիս էնեյց բաղըն ինչ կոնիմ» (36) : «Ցանկապատ» նշանակությունը գործածել է վրացերեն դոբա և պարսկերեն չափար բառերով: Վրացերեն բառերով՝ «Ջար ու վարբաբ դոռշա ման իս գալի ալամի պես» (39) : (Դոռշա և ալամի բառերը երկուսն էլ «դոռշակ» նշանակություն ունեն) :

Սայաթ-Նովան իր խաղերը ընթերցողին և ունկնդրողին է հաղորդում վառ գունազեղ պատկերներով: Նրա խաղերի յուրաքանչյուր տողը մի արտահայտիչ պատկեր է, որ ընդմիշտ դրոշմվում է մարդու ուղեղում: Նրա խաղերի գեղարվեստական վերլուծումը ուսումնասիրության առանձին թեմա է՝ շատ արժեքավոր և ուսանելի՝ վեր հանելու նրա բանաստեղծական խոսքի ու վարպետության բազմապան հնարները:

* *

*

Սայաթ-Նովան XVIII դարի հայ տաղերգության, աշուղական պոեզիայի լեզուն հասցրեց գեղարվեստական բարձր մշակման ու վարդազման: Նա բա-

նաստեղծական լեզուն մոտեցրեց բուն իսկ ժողովրդական լեզվի ակունքներին, ապատ ու անկաշկանդ կերպով օգտագործեց իր ժողովրդի հարուստ ու կենդանի խոսակցական լեզվի ողջ հարստությունն ու հմայքը և իր բանաստեղծական լեզուն հարստացրեց ժողովրդական կենսայից դարձվածքներով, ոճերով ու պատկերներով:

Բանաստեղծությունների հիմքում ունենալով մայրենի լեզվի հիմնական ատաղձը, Սայաթ-Նովան միաժամանակ համարձակորեն դիմեց ժողովրդի մեջ լայն տարածում գտած և մի տեսակ արդեն հարապատացած արաբերեն, պարսկերեն, վրացերեն և թուրքերեն բառերի օգտագործմանը:

Իր լեզվի ժողովրդայնությամբ, լեզվի հեշտ ու դյուրալիր ընկալմամբ, ինքնաբոլոս ու ապատ արտահայտչական միջոցների ու կենդանի ոճական պատկերավորումների գեղարվեստական յուրահատկությամբ Սայաթ-Նովան XVIII դարի աշուղական պոեզիայի լեզուն բարձրացրեց մի նոր, շատ ավելի բարձր աստիճանի:

Սայաթ-Նովան իր խաղերը գրեց Թբիլիսահայ բարբառով, որը նրա մայրենի լեզուն էր: Այդ լեզուն համեմատած մյուս բարբառների հետ, հետագայում գրական լեզվի կապավորմամբ, ավելի մոտ էր կանգնած աշխարհաբար գրական լեզվին և այդ իսկ տեսակետից հասկանալի էր ու մատչելի տարբեր բարբառներով խոսող բոլոր հայերի համար:

Սայաթ-Նովան լեզուն, բանաստեղծական խոսքը դարձրեց ժողովուրդների եղբայրության և համերաշխության փառաբանման և բարձր, վսեմ գաղափարների տարածման հզոր պենք: Նա ջերմ ու անկեղծ սիրով և ոգևորությամբ երգեց Անդրկովկասյան երեք ժողովուրդների լեզուներով: Նրա համամարդկային ավնիվ մտքերը լայն արձագանք գտան նաև մյուս ժողովուրդների առաջավոր ներկայացուցիչների սրտերում, որոնք նրա խաղերը թարգմանեցին ռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն, անգլերեն և այլ լեզուներով և, այսպիսով, համաշխարհային ճանաչում տվեցին Սայաթ-Նովային:

ՀԵՂԻՆԱԿ

Ա

Ա¹ (բրբ.), Էական բայի սահմանական ներկա եզ. երրորդ դեմքը Է-ի փոխարեն*։ *Կանգնած իմ տալիս իմ դովա, Իմ սիրտըն քիզնից սով ա (13) : Թե ռուխսաթ տան, սիրտըս բանամ, կու տեսնիք դարդիրըս ծով ա, Դովրաննես դուս ին գրցի, իմ տիղըս բըռնողըն ով ա, ասում ին—տարիքըտ թամամից, լաց ու ողփա, Սայաթ-Նովա (67) : Էջ 25, 27, 27, 27, 27, 27, 27, 55, 55, 55, 61, 61, 63, 63, 89, 89 :*

Ա², ձ. Մեկին դիմելու կոչական բացականչություն, ա՛յ, է՛յ : *Հանգ իս արի, յա՛ր, ա՛ յար (65) : Էջ 86, 86, 86, 87 :*

ԱԲԱ, ձ. Ապա, հապա : *Աբա խաթըրըտ ջամ իս անում (6) : Տես նաև էջ 34, 44 :*

ԱԲԻՇՈՒՄ (պարսկ.), ի, գ. Մետաքս : *փխք. Մետաքսի նմանություն տալը, մետաքսանման լինելը, նուրբ՝ փայլուն լինելը : Դաստամազըտ դառավ սիմ ու աբրեշում (11) : Ջարով-աբրեշումով հուսած մազիրըտ՝ շաղին կարոտ է (30) : Տե՛ս նաև էջ 72 :*

ԱԳՈՒԻ (պարսկ.), ի, գ. Թրծած աղյուս : *Պատիրըտ կարմիր ազուրով, սը-նիրըտ տաշ մարմար քարով (62) :*

ԱԴԱԲ (արաբ.), ի, գ. Համեստություն, քաղաքավարություն, բարեկրթություն : *Հայա սիրե, ադաբ սիրե, ար սիրե (16) : Տե՛ս նաև էջ 29 : ☉ Ադաբը կըտրիլ—անբարեկիրթ լինել, համեստությունը կորցնել : Կըտրեցիր ադաբըտ, կըտրեցիր ահըտ (26) :*

ԱԴԱԼԱԹ (արաբ.), ի, գ. Արդարություն, արդարադատություն, օրենք : *Հեթիմ ու դադաստան չը կա, մե դրուստ ադալաթ չը կա (33) : Տե՛ս նաև էջ 16, 89 :*

* Է-ի փոխարեն *ա* գործածելը, որ հատուկ չէ Թբիլիսիի բարբառին, Սայաթ-Նովան տեղ-տեղ գործ է ածել հանգավորման համար :

ԱԶԱ (արաբ.), ի, գ. Տանջանք, չարչարանք: Ճնշում, կտտանք: *Դիվանա Փահլուզ կու շինիս տեսնողին՝ ա՛յա իս, ա՛յիզ (40):*

ԱԶԱՏԻԼ, ն բ. Ապատել, փրկել: *Աստված սիրողըն ինձ ապատե՛ յարբս մու- նաթ չր բաշե (15): Նոյին գեւիին ապատից (65):* Տե՛ս նաև էջ 33, 49:

ԱԶԻԶ (արաբ.), ա ծ. Սիրելի, թանկագին: *Չիս տեսնի ինձի պես ապիզ (23):* Տե՛ս նաև էջ 56:

ԱԹԱՄՈՐԹԻ (բբբ.), թու, գ. ա. Մարդ, մահկանացու, աղամորդի: *Աթա- մորթու սըրտի մուրապըն յիս իմ (59):*

ԱԼ¹ (աղբբ.), ա, գ. Կարմիր, ծիրանի: *Հաթիտ վարըն ալ է, գոպալ (6):* *Քի սազ գուբա ալ դումաշըն, նապանի (11):* Տե՛ս նաև էջ 32, 38, 49, 57, 61, 63, 65, 69, 72, 75: ☉ *Ալ անիլ—կարմրով ներկել: Հաթիտ վարըն ալ իս արի (3):* Տե՛ս նաև էջ 61:

ԱԼ², տե՛ս Էլ 1 նշան: *Նըրանից ձիռըտ բաշիլըն՝ շատ ա էտ ալ* արմա- նալու (46):*

ԱԼԱԼ (ի), (վրաց.), ի, գ. (կենդբ.): Փոքրիկ գիշատիչ թռչուն: *Յիս բըլ- բուլ իմ, վարթոս փակից ալալըն (63):*

ԱԼԱՄ (արաբ.), ի, գ. Դրոշակ, դրոշ: *Ման իս գալի ալամի պես (39):*

ԱԼԻ, լու, գ. Ալիբ: *Յիփ դու բաղչեն սեյրան կեհաս՝ ծովի նըման գուբա ալիտ (7):*

ԱԼՄԱԶ, ԱԼՄԱՍ (պարսկ.), գ. Աղամանդ: *Թեգուզ բու բաշըն ալմազ տան... չիմ հիռացնի քիզ բու յարեմեն (42):* *Լալ ու ալմաս իս, բամանչա (1):* Տե՛ս նաև էջ 23, 37, 53, 75, 63, 71:

ԱԽ, ձ. Վշտի, ափսոսանքի, հառաչանքի բացականչություն: *Կանչողըն դարդակ է գընում, «Ա՛խ, Սայաթ-Նովա» ին ասում (40):* ☉ *Ախ անիլ, ախ կանչիլ, ախ բաշիլ — 1) հառաչել, ողբալ: Աչկեմեն ջուհարըն գընաց յարին կարոտ ախ անելեն (57): Մեջլումըն չղերումըն մընաց, Լեյլու համա ախ կան- չելով (54): Աշխարումըս ախ չիմ բաշի, բանի վուր ջան իս ինձ ամա (24):* Տե՛ս նաև էջ 31, 75, 68: 2) Տենչալ, երանի տալ՝ մի բանի հասնելու: *Ակոավը բըլբուլ չի դառնա, բանի գուպե վուր ախ անե (54):* Տե՛ս նաև էջ 38:

ԱԽԳԵՐ (բբբ.), ախպոր, գ. 1. Եղբայր: *Ասի՛ թե յիս բու ախպեր, բու մերըն ինձի մեր անին (11):* 2. Սիրով՝ բարեկամությամբ իրար հետ կապված անձեր, մտերիմ ընկերներ: *Ախպոր ճաւփին կինըրս մատաղ ըլի թող (63):* 3. Իբրև կոչական բառ, որը գործ է ածվում մեկին դիմելիս: *Օսկե փարջումըն լըցըցած անմահական ջուր իս, ա՛խպեր (13):* *Գեւըն ասավ. «բարով տեհա, չորան ախպեր» (58):* Տե՛ս նաև էջ 24 (7 անգամ), 25, 25, 25, 73:

* 46-րդ խաղի նախորդ տների վերջին տողերի նախավերջին բառերի հան- գավորումից ելնելով այստեղ «էլ» բառը փոխարինված է Ղարաբաղի բարբառի (ավելի հավանականը՝ արևմտահայ լեզվի) ալ ձևով: Տե՛ս Մ. Հասարթյան, Սա- յաթ-Նովայի խաղերի ժողովածու, 1959, 46-րդ խաղի ծանոթ.:

ԱԽՊՈՒՐ (բբբ.). ի. գ. Աղբյուր: *փխբ.* օգտակար՝ շնորհալի հատկություններով օժտված անձ, որից կարելի է օգտվել: *Դուն կաթնն արխուր իս, ա՛յնպէր* (13):

ԱԽՏԻԼ (բբբ.), ն բ. Հաղթել: *Դիփունին կու ախտիս, զոզալ* (34):

ԱԽՐ (բբբ.), շ. Կապական բան, որ գործ է ածվում ընդդիմախոսական խոսքի սկզբում մի բան ապացուցելու համար, ի վերջո, վերջապես, ախար, չէ՞ որ: *Սալբի ախիմ՝ ախըր մին օր կու տաշվի* (19):

ԱԽՐԱԹ (արբբ.), ի. գ. Հանդերձյալ կյանք, այն աշխարհը: *Ըս կամանի զոզալներուն արխար ու իման չը մնաց* (68):

ԱԾԻԼԷ, ն բ. (*հր մ. ա՛ծա, ա՛ծի, ս ա հ մ. և պ ա յ մ. ն եր կ ա՛* կոծիմ, կոծիս, կոծե): 1. Լցնել: *Ածա, խըմինք օսկե թասով* (25): Տե՛ս նաև էջ 54: 2. Դատարկել մի տեղ: *Ինձ մաթլաբեն կոծին, քիկ կոծին ջամը* (59): 3. Թափել: *Մի՛ ածի խուկի առչվըն լալ ու զովհար* (37): 4. Շաղ տալ: *Յա՛ր, գաս իմ գերեզմանին,— Ածիս խուղըն վըրես ափով* (17): 5. Նետել, զցել, բանտարկել, արգելել: *Կու վիկալնիմ ծիկ մութըն տիղըն կոծիմ, կողպեքըն կու դընիմ ծիր ապակն լիս իմ* (59): ☉ *Գուման ածիլ—ենբադրել: Մե՛ կաղ չը կա գուման ածիմ, ախիմ են նըման է գունըլտ* (30): *Ման ածիլ — խաբելով ման տալ: Բըլբուկին լալով ման կոծիս գիշեր-ցերեկ* (25): *Միտըն ածիլ — հիշել: Յիփ բըլբուլըն միտըն ածավ ռեհնով կապած թալիզուլին* (33): *Վեր ածիլ—* 1) հորդել, թափել: *Կըրակ իս վեր ածում բերնեմես* (6): 2) Կտրելով թափել: *Չեռնեմես վեր կոծիմ չանգիրըն մեմել* (21):

ԱԾԻԼԷ, ն բ. (*հր մ. ա՛ծա, ա՛ծի, ս ա հ մ. և պ ա յ մ. ն եր կ ա՛* կոծիմ, կոծիս, կոծե): Նվագել: *Ածողիտ էրկու կու շինիս* (1): *Խալխին էս իլթիմապն արա՛ ասին. «ապրի բու ածողն»... քամանչա* (1):

ԱԿ(Ն), ական, (*հո գ ն. ակնիր*), գ.: Թանկագին քար, զոհար: *Անգին ակըն վըրես շարած* (34): *Ղիմեթ ունիս անգին ական* (6): *Անտակ ծովի միջեն հանած ակնիր ունիմ* (15): Տե՛ս նաև էջ 82:

ԱԿՆԱԿԱՊ, ա ծ. Վրան թանկագին քարեր շարած, ականակուռ, ականապարդ: *Աչքիրըտ ականկապ թաս է* (24):

ԱԿՈԱ (բբբ.), ոի. գ. (*հո գ ն. ակեք կամ ակոքնիր*): Ատամ: *Ակոքըտ օսկեմեն շարած* (2): *Ակոքընիրըտ լալ ու մարբրիտ* (22): Տե՛ս նաև էջ 23, 37, 55, 76, 88:

ԱԿՈԱՎ (բբբ.), ռըվի, գ. (կենդբ.): Ազոավ: *Վարթըն ակոքվին մի՛ շանց տա* (54): *Ակոավը բըլբուլ չի դառնա* (54):

ԱՀԻ, ի, գ. 1. Ակնածություն, պատժի երկրուլ: *Կըրտեցիր ադաբըդ, կըրտեցիր ահըտ* (26): 2. Վախ, սարսափ: *Հուջրես լիքն է անգին լալով, ջավահիրչոնն ահ իմ բերի* (15): Տե՛ս նաև էջ 59:

ԱՀԷ, ձ.: Վշտի, ցավի բացականչություն: *Թեզուլ հապար դարդ ունենամ, լիս սըրտումըս ահ չիմ ասի* (31):

ԱՀԻՂ, ա ծ. Ահալոր, ահարկու, ահեղ: *Կու լինի դատաստան ահիղ* (64):

ԱՀԼԻ (արաբ.), *ա ծ.*: Շնորհալի, արժանավոր, երևելի: ☉ Ահլի շար— արժանավոր օրենք, արդարադատություն: *Կաց իղրարին, ահլի շարին* (6) :

ԱՀՈՒԶԱՐ (բրբ.), *ի, գ.*: Հառաչանք, հեծեծանք, ախ ու վախ (կապմված հալ. *աի*—*ախ* և *պարսկ. պար*—*ողբ*, հեծեծանք բառերից) : *Իղրար անխ հոգիս հանխ, պլրոծնիմ ահուպարենեն* (6) : ☉ *Ահուպար քաշիլ*—հառաչել, հեծեծալ, ախ ու վախ անել: *Ահուպար իմ քաշում, ա՛ման* (6) : էջ 15: *Էլ յիս կու քաշիմ էս ղուսեն՝ թուղ լի ահուպար ունենամ* (8) :

ԱՂ, *ի, գ.* (փխբ.) : Նշան հավատարմության, աննենգ բարեկամության: Տուկ-նամագ—աղ իմացի (14) : ☉ *Աղ ու հաց*—նույնը: *Մըտիկ արա աղ ու հացին* (15) : *Հալալ մըտիկ արա հացի ու աղի* (16) : Տե՛ս նաև էջ 36:

ԱՂԱ (աղբբ.), *աղի, գ.* (*հո գ ն.*—աղեք) : Տեր, աարոն: *Մե նոքարըն երկու աղին ինչ անե* (21) : *Քրսանը մե ղուլ չին պահում*,—աղերուսեն բեզարիլ իմ (53) (աղաներից ծանծրացել եմ) :

ԱՂԱԶԵԼ, ԱՂԱԶԻԼ, էցի, *ն բ.* Խոնարհ ու թախանձագին խնդրով դիմել մեկին, աղերսագին խնդրել: *Աղաշում է երեսն անկյալ* (61) : *Աղաշիմ փըրիկչն հուսամ* (64) :

ԱՂԿԱՏ (բրբ.), *աղկըտի, գ. ա ծ.*: Աղքատ, չքավոր: *Աղկատ սիրե, ղոնաղ սիրե, տար սիրե* (16) :

ԱՂՈԹԵԼ, *չ բ.*: Աղաչանքով աստծուն դիմել, աղոթք անել: *Վասըն աշխարհին աղոթեցիր* (61) :

ԱՂԶԻԿ, *զկա, գ.*: Եխպոր աղչիկըն չը խաղաց (61) :

ԱՂՈՒ (աղբբ.), *ի, գ.*: Թույլ: *Խըմզըրեցիր անմիղ տիղըն էս աղուի թասն ինծի* (67) :

ԱՄԱ¹ (արաբ.), *չ.*: Բայց, սակայն: *Գըլուխ ղըրի ամենան խաղին, ամա... տորվեցա քամանչեն, ու չոնգուրըն ու ամբուրեն* (4) :

ԱՄԱ², (բրբ.), *ն յո դ ո.*: Համար: *Խաղի դավթար իմ թիզ ամա* (23) : Տե՛ս նաև էջ 36 (8 անգամ), էջ 37 (7 անգամ), 78:

ԱՄԱԳ (աղբբ.), *ի, գ.*: Երախտիք, աշխատանք, հոգս (մեկի համար) : *Իղրար ու ամագ չունեցող յարի ձեռնենեն դադ կոնիմ* (68) :

ԱՄԱՆ (աղբբ.), *ձ.*: Գուժ՝ խղճահարություն հայցող բացականչություն: *Էրվում իմ, կանչում իմ ամա՛ն* (27) : Տե՛ս նաև էջ 13, 13, 14, 15, 16, 39, 7ձ:

ԱՄԱՆԶԻԼ (բրբ.), էցի, *չ բ.*: Ամաչել: *Մերկացան ու ամանչեցին* (64) :

ԱՄԱՌ, *ամռան*: *Ամառըն ու ձըմիռն ծաղկած գուլբաղ ու բաղաթըն դուն յս* (38) :

ԱՄԱՐ (բրբ.), *ն յո դ ո.*: Համար (տե՛ս նաև Ամա²) : *Ջանըս դուս գուլբաթիզ ամար* (3) :

ԱՄԱՐԱԹ (արաբ.), *ի, գ.*: Տուն, ապարանք, դղյակ: *Քոշք ու ամարաթըն դուն յս* (38) :

ԱՄԲ (բրբ.), *ի, գ.*: Անպ: *Ծովը նընգած ամբի նըման դոշըս ու յախեսս քաց է անում* (57) :

ԱՄԲԱՐ (արաբ.), ի. գ.: Մոմանման թանկարժեք և անուշահոտ նյութ, որն ստացվում է վիշապածկան մարսողության մնացորդներից և օգտագործվում է օծանելիքների արտադրության մեջ (տե՛ս նաև Մուշկ): *Հուտ ունե մուշկ ու ամբարի* (30):

ԱՄԲՈՒԻՐԱ (կովկասյան), թի. գ.: Երածշտական գործիք: *Սովյեցա քամանչեն ու չոնգուրըն ու ամբուրեն* (4-ի ծանոթություն):

ԱՄԵՆՂ, ա ծ. 1. Բոլոր, համայն, որքան որ կա (մինևուլյն կարգին պատկանող իրերի կամ անհատների մասին): *Ամեն սապի մեչըն գոված դուն թամամ տասն իս, քամանչա* (1): 2. Յուրաքանչյուր: *Էտ քու ամեն մարիփաթով դիփունին կու ախտիս, գո՛ւպլ* (34): *Ամեն մարթ չի կանա խըմի, իմ ջուրըն ուրիշ ջըրեն է* (10): Տե՛ս նաև էջ 20, 45, 53, 63, 71, 76, 80, 80 82, 85, 89: ☉ *Ամեն մե*—յուրաքանչյուր, ամեն մի: *Ամեն մե մըտիկ տալով տարար խիլըս* (66): *Ամեն մեկը*—յուրաքանչյուր որ, ամեն որ: *Ամեն մեկըն ասում ին՝ մապըն իս իմ* (59):

ԱՄԵՆՂ, մ.: Խոսքի սկզբում իբրև նշան ասելիքի հաստատության, ստուգապես, արդարև, իսկը: *Ամեն աստված, իս՝ մղղսու վուրթի Արութինս...* գլուխ դրի ամենան խաղին (4):

ԱՄԵՆԱՆ, ԱՄԵՆԱՅՆ (բբբ.), (գրբ.) Նույնն է՝ ԱմենՂ: Տե՛ս նաև էջ 10, 64, 85: *Ջորս ամենայն յուր հավաքյաց* (61): ☉ *Ամենան վախտ*—Հարատև: *Վարթըն մե ամիս ումբր ունե՝ դուն ամենան վախտ իս, գուպլ* (34):

ԱՄԻՍ, ամսվան, գ.: *Տարին-տասնէրկու ամիս մապիրըտ հուած կուլի* (14): *Վարթըն մե ամիս ումբր ունե* (34): Տե՛ս նաև էջ 14, 26, 65:

ԱՄՊ, ի. գ.: *Գեւըն ասավ. «Վուր ամպը գա ծըմակին, Ակռըբըս կու գըցիմ դոչի դըմակին* (58):

ԱՅ, ծ.: Խնդրելու, աղաչելու կամ մեկին դիմելու բացականչություն: *Արի ինծ անգաջ կ:սլ, ա՛յ դիվանա սիրտ* (16):

ԱՅԱՆ (արաբ.), ա ծ.: Հայտնի, ակնհայտ, պարզ: *Ով քիպի այան մըտիկ տա, Աբելին՝ Կայ:սն մըտիկ տա* (32):

ԱՅԱՐ (պարսկ.), կ ա պ.: Եթե: *Գըլուխըս մատաղ կոնիմ՝ դ:սբուլ անիս, յար, այար* (65):

ԱՅԲ, գ.: Հայերեն այբուբենի «Ա» տառի անունը: *Այբ աստված սիրիս* (50):

ԱՅԲԲԵՆԱԿԱՆ, ա ծ.: Այբուբենի կարգով դասավորված: *Էս այբբեն:ական դարահեջա է* (50-ի ծանոթ.):

ԱՅԲԲԻՄ (բբբ.), ի. գ.: Այբուբեն: *Այբբիմըն կարթացիլ իմ դասեդաս* (51):

ԱՅԻԲ, տե՛ս Այբ: *սիրտըս էլավ քե ու այիբ, էրկու բեն** (49): *Էնդուր չե*

* Սիրտըս էլավ քե ու այիբ, էրկու բեն—Սիրտս եղավ քաբաբ (խորոված): Տե՛ս Մ. Հասրաթյան, Սայաթ-Նովայի խաղերի ժողովածու, 1959, (49-րդ խաղ):

պակտամ երկու աչքիս երկու աչիբ, երկու բեն* (49) : Տե՛ս նաև էջ 21, 22, 66 (4 անգամ), 67 (4 անգամ), 86, 86, 86 :

ԱՅՆԱԲԱՆՆԴ (պարսկ.), ի. գ. ա ծ. : Հայելապարդ, հայելապատ (սրահ, դահլիճ) : Այնաբանդ իս խաթաբանդով. Չամ-հալիլա, լալ ու թիլա (6) էջ 13 :

ԱՅՆՈՒՄ (արաբ. այն—աչք և հայ. ում ն ե ր գ. հ ո լ. վերջավորությունից), միայն այնուժը գալ արտահայտության մեջ—ուշադրության առնել, արժեք՝ կարևորություն տալ : Ոչով այնուժըտ չե գալիս (34) :

ԱՅՎԱՆ (պարսկ. էյվան), ի. գ. : Պատշգամբ սրահ : Կու մեծրվիս այվընու-մըն (1) :

ԱՆԱՆՏԻԼԻ (բբբ.), ա ծ. : Անհաղթելի : Ծեծով չի խրատվի խիվըն՝ ինչու անձընեն չը դուս էհա անախտիլի... դիվըն (37) :

ԱՆԱՆՑ, ա ծ. : Հարատև, մշտջենական : Պսակ լուտ աշիր անանց (61) :

ԱՆԱՊԱԿԱՆ (գրաբ.), ա ծ. : Անարատ, մաքուր, անեղծ : Հուր իս, սիրով սիրեկան... Սուրփ գինի անապական (13) : Տե՛ս նաև էջ 73 :

ԱՆԱՊԱՏ, ի. գ. : 1. Անբնակելի տեղ, ջրից ու բուսականությունից զուրկ վայր, վաճառուտ : Անապատեն բարբառեցար (61) : 2. Մարդկային բնակությունից հեռու կառուցված վանք, միայնակացարան կրոնավորների համար, ճգնաբան : Վանք սիրե, անապատ սիրե, քար սիրե (66) :

ԱՆԱՐԱՏ, ա ծ. Մաքուր, անխարդախ, արդար : Անարատ մաքուր իս, ա՛խպեր (13) :

ԱՆԲԱՆ, ա ծ. մ. Անխոս. անառարկելի, առանց այլևայլության** : Անգին ակըն վըրետ շարած, անբան ոսկու ռախտ իս, գո՛վաւ : (34) :

ԱՆԲԱՐԻ, ա ծ. Չար, ոչ բարի : Անբարի գուրծըն կորած է, կարթա Հարանց վարքըն սիրուն (37) :

ԱՆԿՍԼ, ա ծ. գ. 1. Անազնիվ, ստոր (անձ), անզործ, ծուլ, ծրիակեր : Անգալին աստված սըպանե (47) : Անգալի խոսկին մի՛ ավտա (32) : 2. Ախույան : Սիրտըս փուրու՛մըս թուլացավ անգալներու պախ անելեն (57) :

ԱՆԳԱՃ (բբբ.), զըճի, գ. 1. Ականջ : Աչկ խավրի, անգաճ խուլանա (5) : 2. Լսողություն : Անգաճըտ խաղին կարոտ է (30) : 3. Ն մ ա ն. (մանգ) երաժըշտական գործիքի լարակոթ : Անգաճըտ էրծաթեն պիտի, զըլուխըտ ջավաճիր քարած... քամանչա (1) : ☉ Անգաճ անիլ—լսել, ունկնդրել : Անգաճ արա, մատաղ իմ քիլ (39) : Տե՛ս նաև էջ 12, 26, 46 : Անգաճ կալիլ—1) լսել, ականջ դնել, ականջը սրել՝ լսելու համար : Անգաճ կալա, չիմացա ինչ հասաս է (51) : 2) Լսել, հնազանդել, հետևել : Արի ինձ անգաճ կալ, ա՛յ դիվանա սիրտ, հայա սիրե, ադաթ սիրե, ար սիրե (16) :

* Երկու ա՛իբ երկու բեն (աբ-աբ)-կրկնություն պարսկ. աբ—ջուր բառի, փ ի բ. արցունք : Տե՛ս նույնը, (49-րդ խաղը) :

** Կարող է նշանակել նաև՝ չգործածված, չբանեցրած, ձեռք չտված, բոլորովին նոր :

ԱՆԳԱՄ, մ. Նույնիսկ, այն աստիճան որ: *Ուրախ սիրտ անգամ չը կա, չէ (67):*

ԱՆԳԻՆ, ա ծ. 1. Գին չունեցող, շատ թանկագին: *Անգին յաղութ, անգին արևատ, բողբոջտ ջազահիր շարած (46):* Տե՛ս նաև էջ 15, 17, 27, 50, 55, 63, 71, 78, 80, 82: 2. Փխբ. Շատ սիրելի, անփոխարինելի, հազվագյուտ: *Մարիփաթով բաղջըր լիպուն դիփունի վրա անգին ա (15):* Տե՛ս նաև էջ 17, 37, 24:

⊙ *Անգին բար* մարգարիտ: *Չիս չոզվո:մ անգին բարեմեն (6):*

ԱՆԳՈՐԶԻԼ (բբբ.), ա ծ. Չգործված, անձեռագործ, անձեռակերտ, հրաշալի: *Անգործիլ ... մանգիլի վար իմ քիվ ամա (23):*

ԱՆԳՐԾԱԿԻ (թբբ.), մ. Հանկարծ, հանկարծակի, անակնկալ: *Անգրծակի մե ծեն եկավ դասեդաս (51):*

ԱՆԴԱՄ, ի. գ. Մարմնի որևէ մասը: *...Ամեն անդամըտ դարարի, կուռըտ շիմշատ, մատնիրըտ մում (30):*

ԱՆԴԱՆԱԿ, միայն *անդանակ ըլիլ* արտահայտության մեջ—մեռնել, դանակով մորթվելու չհասնել: *Փխբ. Տանջվել, չարչարվել: Էշխեմետ անդանակ էլա, եկ մորթե՛ ջալլաթըն դուն իս (38):*

ԱՆԴԵՐ (բբբ.) ա ծ. 1. Տեր չունեցող: Գիղիս անդեր մա՛լ ունիմ (58): 2. Արհամարհանքի, դժգոհության, անեծքի արտահայտություն: *Վունց քու խերը գուպիմ, վունց քու շառըն, անդեր (58):*

ԱՆԵՂ (թբբ.), անդի, գ. Աղեղ: *Անդի լարը կըտովիլ է (36):*

ԱՆԶԱՐՆԻՇ (հայ. պարսկ.) ա ծ. Առանց ոսկե դրվագի, առանց ոսկե նախշի: *Անդալամ, անպարնիշ բաշած ոսկու պես է փայլում ունքըտ (30):*

ԱՆԶՈՐ, ա ծ, Ջրություն չունեցող, թույլ, տկար, խեղճ, անօգնական: *Ջորըն անպորին կերիլ է, մարթկանց վրա ջան չը մընաց (68):*

ԱՆԻԼ, ն բ. (արի, արավ, կամ արից. *Քր մ. արա, արեք, մի՛ անի, մի՛ արեք, ս ա թ մ. և պ ա յ մ. ն եր կ ա՝* կոնիմ, կոնիս, կոնե, կոնիք, կոնիք, կոնին): 1. Որևէ բան կատարել, գործել: *Հենց բան արա՛ մարթ վրետ չը ծիծաղի (16): Աթամ վուր էս շարթն արա՛վ, նաթիջում դըծուխք գընաց ջամ (64): Մե բան արեք... քարասպան արեք (20):* Տե՛ս նաև էջ 17, 17, 28, 28, 28, 28, 28, 32, 33, 33, 33, 33, 33, 37, 37, 37, 62, 63, 71, 83, 84, 84, 85, 87, 88: 2. Վերածել, դարձնել, շինել: *Ջանս արավ դավար-դավար (60): Ղունգըտ արավ ինձ սարսարի (60): Թարիփըտ դավթար իմ արի, փիլ պիտի, վուր գիրքըն տանն (7):* Տե՛ս նաև էջ 5, 5, 5, 7, 7, 22, 67, 88: 3. Փորձանքի ենթարկել, վնաս հասցնել, վնասել: *Ըս ի՛նչ բան էր վուր դուն արիր, (3): Զեթող թե մուրապին հասնին, տես ինչ արավ բավթար դարին (52): Յա՛ր, քիվ ի՛նչ գեթ իմ արի (43):* Տե՛ս նաև էջ 46, 46, 46, 46, 53, 53, 53, 63, 64: 4. Բայարմատների կամ նրանց նման նշանակություն ունեցող բառերի հետ գործածվելով կապում է բազմաթիվ բաղադրյալ բայեր, և կան յբրև օժանդակ բայ հանդես է գալիս բազմաթիվ դարձվածքներում: *Ալ անիլ—կարմրացնել: Ռանգըն վուր սևադեն նընգնի՛ ալ անիլըն ինչի՛ն է շահ (44):* Տե՛ս նաև էջ 8: *Ա՛խ անիլ—հառաչել: Աչկեմես ջու-*

Բարըն գընաց յարին կարոտ ա՛յս անելեն (57) : Անգաճ անիւ—լսել, ունկնդրել :
 Մե խոսկ ունիմ իլթիմազով, անգաճ արա, ո՛վ աչկի լուս (31) : Տե՛ս նաև էջ
 26) : Բան անիւ—գործել, անել, հորինել, ստեղծել : Հենց բան արա՛ մարթ
 վըրետ չը ծիծաղի (16) : Տե՛ս նաև էջ 12 : Բաց անիւ—1) բացել : Գուպիմ բե-
 րանըս բաց անիմ, գովքըտ ասիմ թարիփի պես (31) : 2) չբ. բացվել, ծաղկել :
 Մանուշակ բաց արած հովին... Շատ մի լացնի Սալաթ-Նոպին (27) : Գալ
 անիւ—այցելել : Մարթ վուր բու խոսկով մեռանի՛ գալ անիւըն ինչի՛ն է շահ
 (44) : Դադ անիւ—այրել, վառել խոցել : Յարի սիրտըն դադ մի անի (16) :
 Դադ անիւ—դատ՝ դատաստան կանչել, բողբոջել : Մարթուս էհտիբար չը մնաց,
 դարի ձեռնեմեն դադ կոնիմ (68) : Էջ 90 (6 անգամ) : Դուս անիւ—վռնդել : Դե
 վիզըտ ծուռ, գընա, տանեն դուս արած (63) : Տե՛ս նաև նույն խաղի յուրաքան-
 չուր տան 4-րդ տողը : Թադ անիւ—կամար կապել : Յիրգնուց լուսըն վըրետ կա-
 մար-թադ արին, Մողնու սուրփ Գևուրք (62) : Լալ անիւ—1) լալ. լացել, լաց
 լինել : Դոստիրըս հիռու կանգնին, յադիրըն գան լալ անին (11) : 2) համրաց-
 նել, լալացնել : Բեդասլին վուր խոսեցնիս, լալ անիւըն ինչի՛ն է շահ (44) :
 Բըբուլ լիզուս լալ անին (11) : Լուս անիւ—լուսավորել : Վունց արեգագըն
 շուղկը տա, վունց լուսինը լուս անե (5) : Խադ անիւ—1) խաղալ. 2) Երգել, երգ
 ասել, տաղերգել : Գընա, հիրըն խաղ մի՛ անի, Յարի սիրտըն դադ մի՛ անի (6) :
 Կալ անիւ—կալսել : Կալ անիւըն ինչի՛ն է շահ (44) : Կես անիւ—կիսել : Վախում
 իմ, թե սեղըտ սիրտըս կես անի (11) : Հանգ անիւ— ձայնակցել, ներդաշնակել :
 Իըլբուլի հիդ հանգ իս անում (2) : Ծաղ անիւ—տե՛ս ճաղ : Ծար անիւ—ապատ-
 վելու՝ փրկվելու միջոց փնտրել : Թեգուլ նընգնիմ ծովի մեջըն՝ հովնալու ճար
 չիս անի (4) : Գնա թե խիլք ունիս՝ գըլխիտ ճար արա (26) : Մաս անիւ—մաս-
 նատել : Յիս կանչում իմ մասանին, Սե ու ալիբ մաս անին (11) : Մտիկ անիւ—
 նայել, հետևել, հսկել, ուշադիր լինել : Է՛լ բու բաղին մըտիկ արա (23), մըտիկ
 արա աղ ու հացի (6) : Տե՛ս նաև էջ 26, 28, 52, 88 : Դազ անիւ—կոտրատվել,
 չեմուչում անել : Եազ մի՛ անի, նազըտ ինձ կու սըպս նե (22) : Տե՛ս նաև նույն
 խաղի յուրաքանչյուր տան վերջին տողը : Շաղ անիւ շաղախել : Բար ու կիրըտ
 օխչարի կաթ շաղ արին, Մողնու սուրփ Գևուրք (62) : Չալ անիւ—գույնզգույն
 ներկել, գունազարդել : Պատանքին մե ռանգըն է հերիք, չալ անիւն ինչի՛ն է
 շահ (44) : Չաղ անիւ—1) թծացնել, բորբոջել : Էդ կըրակըն չաղ մի՛ անի
 (6) : 2) Հաստաբեստ դարձնել, հաստացնել : Հիւբըտ վըրըստին նուրեցին,
 չաղ արին, Մողնու սուրփ Գևուրք (62) : Պատիվ անիւ—պատվել : Պատիվ
 անիմ բանի ջան իմ, Չուն աշխարըս է Պանդողական (6) : Պարզ անիւ—պար-
 վել, ջինջ դարձնել, փխբ. ուրախ լինել : Պըխտուր սիրտըտ պարզ արա (56) :
 Վար անիւ—վարել : Թե վուր քաղաք տիղ հանդիբիս, կու քանդիս—վար չիս
 անի (4) : Վիր անիւ—բարձրացնել, հնչեցնել : Յիփ քաղցըր ձայնըտ վիր կոնիս՝
 բաց կուլի հիղըտ խաղողըն (1) : Վնաս անիւ—վնասել : Խըմողին վընաս չի անի՝
 ձեռիտ բըռնածըն շարբաթ է (33) : Տալ անիւ—կտրել, գլխատել : Թե էսենց էլ
 սուչ ունենամ գըլուխըս արա տալ, թաքավուր (10) : Տաղ անիւ—երգաձայն

կարդալ, երգել: Միաբանքստ բառցլոր ձայնով տաղ արին, Մողնու սուրփ Գե-
վուրք (62): 5. Ստարազգի բառերի հետ գործածվելով կապմուն է հարադիր
բայեր: Արզ անիլ—տե՛ս Արզ: Բաբ անիլ—տե՛ս Բաբ: Բանդ անիլ—տե՛ս Բանդ:
Բեդամաղ անիլ—տե՛ս Բեդամաղ: Բեհուբազար անիլ—տե՛ս Բեհուբազար:
Բիրյան անիլ—տե՛ս Բիրյան: Դիվանա-դաբանգ անիլ—տե՛ս Դիվանա-Դա-
բանգ: Դամ անիլ—տե՛ս Դամ, Դամ: Դարդ անիլ—տե՛ս Դարդ: Դիվան անիլ—
տե՛ս Դիվան: Դոստ անիլ—տե՛ս Դոստ: Զախ անիլ—տե՛ս Զախ: Զայ անիլ—
տե՛ս Զայ: Զարդ անիլ—տե՛ս Զարդ: Էլթիբար անիլ—տե՛ս Էլթիբար: Թարիփ
անիլ—տե՛ս Թարիփ: Իլթիմազ անիլ—տե՛ս Իլթիմազ: Իղրար անիլ—տե՛ս Իղ-
րար: Լայիղ անիլ—տե՛ս Լայիղ: Լանգ անիլ—տե՛ս Լանգ: Խար անիլ—տե՛ս
Խար: Խարաբ անիլ—տե՛ս Խարաբ: Խափանգ անիլ—տե՛ս Խափանգ: Խիալ
անիլ—տե՛ս Խիալ: Հազ անիլ—տե՛ս Հազ: Համ անիլ—տե՛ս Համ: Հեյրան
անիլ—տե՛ս Հեյրան: Հեսաբ անիլ—տե՛ս Հեսաբ: Ղաբուլ անիլ—տե՛ս Ղաբուլ:
Ղազաբ անիլ—տե՛ս Ղազաբ: Ղալ անիլ—տե՛ս Ղալ: Ղաստ անիլ—տե՛ս Ղաստ:
Ղիմիշ անիլ—տե՛ս Ղիմիշ: Ղուլուղ անիլ—տե՛ս Ղուլուղ: Մալ անիլ—տե՛ս Մալ:
Մալում անիլ—տե՛ս Մալում: Մեհման անիլ—տե՛ս Մեհման: Յար անիլ—տե՛ս
Յար: Յարալու անիլ—տե՛ս Յարալու: Նազ անիլ—տե՛ս Նազ: Նամ անիլ—
տե՛ս Նամ: Նարդ անիլ—տե՛ս Նարդ: Շաբանգ անիլ—տե՛ս Շաբանգ: Չանգ
անիլ—տե՛ս Չանգ: Ջունուն անիլ—տե՛ս Ջունուն: Ռադ անիլ— տե՛ս Ռադ:
Ռահմ անիլ—տե՛ս Ռահմ: Սազ անիլ—տե՛ս Սազ: Սան անիլ—տե՛ս Սան:
Սեյր անիլ—տե՛ս Սեյր: Փալ անիլ—տե՛ս Փալ: Փայի անիլ—տե՛ս Փայ: Փարա
անիլ—տե՛ս Փարա: Փարզ անիլ—տե՛ս Փարզ: Փուլ ու փանդ անիլ—տե՛ս
Փուլ: Բաբաբ անիլ—տե՛ս Բաբաբ: Բար անիլ—տե՛ս Բար: ☉ Անիլ տալ—1)
ստիպել անելու: Ինչ ախի կոնիլ տա, սերըն է անըսկամ (18): 2) Դարծնել,
վերածել: Գընա թե խիլք ունիս՝ գըլխիտ ճար արա, թե չե՛ անիլ կու տամ քիզ
փարա-փարա (26): Գլուխը մատաղ անիլ—իր կյանքը մեկի համար վտանգել,
վոհաբերել: Գըլուխըս մատաղ կոնիմ դաբուլ անիս, յա՛ր, այար (61): Ի՛նչ
անիմ—ինքն իրեն խորհրդածելու ձև, ի՛նչ հնարքի դիմեմ: Բանի վուր ջան իմ,
յար, քի դուրբան իմ, աբա ի՛նչ անիմ (29): Ի՛նչ կոնե—օգուտ չունի, անտեղի
է, ավելորդ է, չարժե: Էրեսըտ խասա մուրասա—դալամ բաշիլըն ի՛նչ կոնե (46):
Տե՛ս նաև էջ 63, 63, 63, 76: Ի՛նչ կոնիմ—ինձ պետք չէ, չեմ ուզում, հարկավոր
չէ: Առանց քիզ ի՛նչ կոնիմ աշխարիս մալըն (21): Առանց քիզ ի՛նչ կոնիմ
սոյբաթըն ու սազըն (21): Տե՛ս նաև էջ 7, 7, 39, 52, 52:

ԱՆԻՐԱՎ, *ա ծ*. Արդարության դեմ գործող, անարդար: Սայաթ-Նովու
խոսկըն իրավ ու անիրավի մասին է (68):

ԱՆՆԱՐՁ (հայ. արաբ.), *ա ծ*. Անծախս, առանց ծախքի, ծախս չպահան-
ջող: Անգործիլ անխարջ... վար իմ քիզ ամա (23):

ԱՆԿԱՆԻԼ (գրբ.), *ն բ*. Ընկնել: Աղաչում է երեսըն անկյալ (61):

ԱՆՀԱՆԳՉԻԼԻ (բրբ.), *ա ծ*. Չհանգչող, չմարող, անմար: Անհանգչիլի
հուր իս, ա՛խպեր (13):

ԱՆՀԱՇԻՎ, *ա ծ. մ.* Շատ, անշափ, հաշվի չենթարկվող: Հա լաց էլա, վայ կանչեցի անհաշիվ (63):

ԱՆՀՆԱՆԱԼՈՒ, *ա ծ.* Չհնացող, անհնանալի, միշտ նոր մնացող: Անհնա- նալու գանձ կենամ (6): էջ 15:

ԱՆՁ (ն), *ի, գ.* Մարդ, անհատ, հոգի: Ծեծով չի խըրատվի խիվըն, ինչու անձնեն չը դուս էհա... չար դիվը (37):

ԱՆՂԱԼԱՄ (հայ. արաբ.), *ա ծ. մ.* Նկարչի վրձին չտեսած, անվրձին: Անղալամ, անպարնիշ քաշած օսկու պես է փալում ունըրտ (30) (առանց նկարչի վրձինի բնականից գեղեցիկ է ունըր):

ԱՆՂԱՄ (հայ. արաբ.), *ա ծ.* Անհոգ, անվիշտ: Անղամ, առանց սախտ իս, գոպալ (34):

ԱՆՂԱՅԻՂ (հայ. արաբ.), *ա ծ.* Առանց նավակի: Էշխըս լող կուտա ան- վալիղ (65):

ԱՆՂԻ, տե՛ս Անեղ: Անղի լարը կըտրվի է (36):

ԱՆՄԱՀ, *ա ծ.* (կրոն): Հավերժ ապրող, դրախտաբնակ: Թե վուր լալով պղծում անխ անմահացըն մասըն կու տան (37):

ԱՆՄԱՀԱԿԱՆ, *ա ծ.* Անմահություն բերող, անմահացնող: Փ խ բ. կենսա- բեր, կենսարար: Անմահական ջըրով լիքըն օսկե փընջան իս ինձ ամա (24): Տե՛ս նաև էջ 7, 24:

ԱՆՄԱՀՈՒԹԻՆ (թիբ.), *գ.* Անմահություն: Թեգուլ անմահութին ուլխս՝ սիրով կու ճարիմ քիլ ամա (23):

ԱՆՄԱՍ, *ա ծ. մ.* (կրոն.): Անհաղորդ, հաղորդություն չընդունած, չճառա- կած: ☉ Անմաս անիլ—առանց հաղորդության, անօրեն կերպով սպանել, նա- հատակել: Յիս քիվնից չիմ հիռանա, գուլե ինձ անմաս անին (11):

ԱՆՄԻՂ (թիբ.), *ա ծ. մ.:* Չնչին, հասարակ, դատարկ: Յարին բեղամաղ մի՛ անի, Չը հիռանա անմիղ բանից (6): ☉ Անմիղ տիղը—վուր տեղ, իվուր, աննպատակ: Խըմըրեցիր անմիղ տիղըն էս աղուի թասըն ինձի (67):

ԱՆՆՄԱՆ, *ա ծ.* Իր նմանը չունեցող, անօրինակ, շատ գեղեցիկ: Բիլ նման, քիլ նման, դուն իս աննման (3): Տե՛ս նույն տաղի ամեն տան վերջին տողը:

ԱՆՊԱՏՄԵԼԻ, *ա ծ.* Լեզվով չպատմվող, հրաշալի: Նուր գովելի, անպատ- մելի, վարթի մեչըն շուռ իս գալի (6): էջ 14:

ԱՆՋԱՂ (պարսկ.) *մ.* Հափիվ, հափիվ թե: Անջաղ զըցին էշխի մեչըն (4):

ԱՆՍԿԱՄ (բրբ.), *ա ծ.* Բարու զգացում չունեցող, անզգամ, չար, անխիղճ, անզուր: Ինչ ասիս կոնիլ տա՝ սերըն է անըսկամ (18):

ԱՆՏԱԿ, *ա ծ.* Անհատակ, շատ խորը: Անտակ ծովի միչեն հանած անզին գովհար իս (7): Տե՛ս նաև էջ 27:

ԱՆՑ, չ բ. Անցած, լրացած (ժամանակի մասին): Հապար տարի անց տերըն էկավ աշխար (64):

ԱՆՅԿԱՑԱԾ, *ա ծ.* Անցած, անցյալ: Անցկացած օրըն չիմ տեսնում (31):

ԱՆՑ ԿԱՑՆԻԼ, չ բ. Մի բանով տարվել, կբաղվել, անցնել: Գուպիմ ումբըրս հենց անց կացնիմ օրսս մունաթ չը բաշե (15):

ԱՆՑ ԿԵՆԱԼ, ԱՆՑԿԵՆԱԼ, չ բ. 1. Գնալ, անցնել: Օրսս էսպես անց է կացի դարերով, դարերով (41): Տե՛ս նաև էջ 38, 60, 69: 2. Ընթանալ, հեռանալ: Անց կաց փիանդապի նման (18): 3. Արժեք՝ նշանակություն ունենալ: Չունքի խոսկրտ անց է կենում (8): 4. Մի բանի միջով անցնել՝ դուրս գալ: Թամին մեչըն անց է կենում (2): 5. Դրժել, հրաժարվել (խոստումը, համովմուսքը): Իդրար իմանեն չանցկենամ (6): Անց մի կենա թե հալալ իս, մի մոր ծծած, մի մոր դալ իս (6): Տե՛ս նաև էջ 14, 35:

ԱՆՑՆԻԼ, չ բ. Նույնն է՝ Անցկենալ: Գլխովն անցնիլ—տեղի ունենալ, պատահել, վրա գալ: Էսպես լավ բարիթավուր է, որ ինչ որ Աշուղ-Օղլանի գըլխովն անցնելու է (6): (Էջ 16-ի ծանոթ.):

ԱՆՑՈՂԱԿԱՆ, ա ծ. Ոչ հարատև, անցավոր: Պատիվ անիմ բանի ջան իմ, Չուն աշխարսս է անցողական (6), էջ 15:

ԱՆՈՒՆ, ի, գ. Օխտըն անուն հիշատակեցին (61): Սայաթ-Նովեն իմ, սայաթ, Անունըս հաշվիր՝ սայ-ադ (65):

ԱՆՈՒՇԱՀԱՄ, ա ծ. Անուշ համ ունեցող, քաղցրահամ: Անուշահամ գինով լիքըն դուն օսկե թաս իս, քամանչա (1):

ԱՆՋԱՆԱՐ (հայ. արաբ.), ա ծ. Ափից՝ եպերքից հեռու, անափ: Անքանար ջուրըն իս գըցի, բուրբըս տալդա, ջըրհիդիդ (65):

ԱՇԽԱՐ (բրբ.), ի գ. 1. Աշխարհ, երկիր, երկրագունդ: Աշխարսս ո՛ւմն է մնացի, վուր ինձ ու քիզ մընա (30): Թամամ աշխար պըտուտ էկա (35): տե՛ս նաև էջ 11, 13, 15, 15, 17, 20, 23, 24, 34, 36, 37, 37, 37, 37, 41, 46, 54, 61, 62, 67, 68, 69, 70, 85, 89: 2. Բավություն, բուրբ մարդիկ, ամենքը: Տասնմետ մեկըն չին ասի, թեգուզ աշխարսս քիզ գովին (2): Տե՛ս նաև էջ 24, 46, 80: 3. Ամբողջ շրջապատը, շուրջը: Հուտըտ աշխարսս բըռնիլ է՝ բալասանի ծառ բացարած (39, 11, 25, 55): Գ Աշխար բըռնիլ, աշխար կավթիլ—չորս կողմը բռնել, ընդգրկել, տարածվել: Հուտըտ աշխար բըռնից (11): Հուտըտ աշխար է կավթի (13): Աշխարի մալ—գանձ, հարստություն, ունեցվածք: Առանց քիզ ի՛նչ կոնիմ աշխարիս մալըն (21):

ԱՇԽԱՐԶ (բրբ.), իրքի, գ. Նույնն է՝ Աշխար: Աշխարքըն ծով, դուն մեչըն նավ (2, 13): Տե՛ս նաև էջ 25, 28, 70, 85, 90:

ԱՇԿԱՐԱ (պարսկ.), մ. Պարզ, ակնհայտ, հայտնի, բացարձակ կերպով. Իմ ու քու սըրտի բանն դիփ աշկարա մի՛ անի (66):

ԱՇՏԱՆԱԿ, ի, գ. Մոմակալ, մոմկալ, շամդան: Աշտանակ իս ամեն վանանց (61):

ԱՇՈՒՂ, ի, գ. (պարսկ. աշըղ-սիրահար): Ժողովրդական բանաստեղծ-երգիչ, գուսան: Աշուղի լիզուն բըլբուկ է (33): Տե՛ս նաև էջ 5, 10:

ԱՇՈՒՆՔ (բրբ.), նքվա, գ. Աշուն, աշնան ժամանակ: Անց կացավ աշունքվա վախտըն (43):

ԱԶ (բրբ.), ի, գ. ա ծ. Աջ (ծախի հակառակ կողմը) : Այ ու ծախ կախեցին՝ բրոզե ճաղ արին, Մողնու սուրփ Գևուրք (62) :

ԱԶԿ (բրբ.) ի, գ. (հոգն.—իր) : Աչք, տեսողության օրգան : Ով քիչ խա-
յան մըտիկ տա՝ դառնա էրկու աչկով կուր (13) : Էջ 11, 16, 21, 23, 24, 26, 29,
31, 32, 37, 41, 41, 47, 47, 49, 51, 58, 64, 66, 67, 68, 68, 72, 73, 74,
74, 75, 75, 75, 78, 86, 88 : ☉ Աչկը արին լալ—ծանր վշտի մեջ լինել : Սա-
յաթ-Նոզեն ասաց. վալում, աչկըս լալիս է արին (22, 27, 56) : Աչկը ճանա-
պարհն մնալ—ալընդետ սպասել մի բանի կամ մեկին : Էշխեմեն հիվանդ պառ-
կեցա, աչկըս ճանապարհն մնաց (33) : Տե՛ս նաև էջ 88 : Աչկի լուս—1) ամենա-
սիրելի, թանկագին : Անգաճ արա, ո՛վ աչկի լուս (31) : Տե՛ս նաև էջ 46, 46, 46,
46, 46, 46. 2) որպես կոչական բառ : Տե՛ս էջ 47, 47, 47, 47, 48, 48 : Աչկ ու
ունքը վիր թողնիլ—1) Խիստ՝ անողոր լինել. 2) զոռով՝ հպարտ լինել : Աչկ ու
ունքըս վիր իս թողի՝ հուքմըս մե րուս ցարի բարաթ* (47) :

ԱԶԿ-ԱՆԳԱԶ (բրբ.), գ. Տեսողությունն ու լսողությունը միասին, ուշա-
դրություն, աշարլություն : Հենց գիդիս դուրթ քուն ո՛նիմ, Մե աչկրս-անգաճըս
քու կընտումըն ունիմ (58) :

ԱՊՐԻԼ¹, եցի, եցա, չբ. Ապրել, կյանք ունենալ : Ապրիլ էր, մեկ էլ էր բերի
քեկի պես (35) : Էլ ապրելու ումիկ չունիմ (57) : ☉ Ապրիս, ապրի—բաջալե-
րանքի կամ օրհնության բացականություն, կյանքը երկար տևել : Խալխին ։;ս
իլթիմապըն արա՝ ասին. «ապրի քու աժողըն» (1) :

ԱՊՐԻԼ², ի, գ. Ապրիլ ամիսը : Անցկացավ ապրիլ մայիսըն, մեկ օր չը
հարցըրիր յարին (52) : Տե՛ս նաև էջ 36, 43, 70 :

ԱԶԱԲ (արաբ.), մ. Արդյոք : Աջա՛ք դուն էլ դարդ իս արի (13) : Աջաբ
միպիդ ի՛նչ իս կամում (13) : Տե՛ս նաև էջ 21, 25, 32, 38, 46, 60, 64 :

ԱԶԱԼ (արաբ.) ի, գ. Օրհաս, վախճան, կյանքի վերջ, մահ : Դուն մի՛ դառ-
նա աջալըս (66) : Տե՛ս նաև էջ 61 :

ԱԶԱՅԻԲ (արաբ.) մ. ա ծ. 1. Զարմանալի : Շատ աջայիբ մեհմանդար իս
(25) : Յա՛ր, մըտիլ իս բաղի մեչըն, աջայիբ սելրան իս անում (8) : 2. Աննուան,
չնաշխարհիկ, հրաշալի : Աջայիբ սուրաթի տեր իս, ռանգըս է գուլգապի նրման
(8) :

ԱՌԱԿ, ի, գ. 1. Փոքրիկ պատմվածք (չափածո կամ արձակ, այլաբանա-
կան ձևով և բարոյական իմաստով) : Կարթացի իմաստնասիրաց առակըն (43) :
2. Դժգոհիմաց՝ մեկնության կարոտ այլաբանություն, հանելուկ : Խոսկըս
առակով իմացի (47) : ☉ Առակաց—առակներից կազմված, առակավոր : Խոսկ
իմ ասում առակաց (13) : Տե՛ս նաև էջ 73 :

ԱՌԱԿԱՎՈՒՐ (թիբ.), ա ծ. Առակի բնույթ ունեցող, առակով ասված :
Խոսկ իս ասում առակավուր-մաուալով (20) :

* Այսինքն՝ խիստ ես, անողոր ես (կամ հպարտ՝ զոռով ես) և կամքը՝
հրամանող է ռուս ցարի նման :

ԱՌԱՆՑ, ն խ դ թ. Ցույց է տալիս բացակայություն, չգոյություն այն առարկայի կամ գործողության, որ դրվում է նրա մոտ իբրև խնդիր: Առանց բիւ հիւն կոնիոն սոյթաթրն ու սապրն (21): Դաստամազրտ նամ չի ուպի, առանց հուսիլ կու օլրպի (2): Տե՛ս նաև էջ 15, 20, 33, 50, 55, 60, 68:

ԱՌԱՁ (բբբ.) մ. Առաջ, նախ, սկզբում: Ածողիտ էրկու կու շինիս, առաջ չայի, դափա գուպիս (1) (առաջ թեյ կուպես, հետո՝ սուրճ):

ԱՌԱՎՈՏՈՒՑ (բբբ.), մ. Առավոտ կանուխ, վաղ առավոտյան: Առավոտուց պանգակի պես քաղցրը ձեն տալուն մնում է (52):

ԱՌԱՐՅԱԼ (գրբ.). ա ծ. Առաքված, ուղարկված: ... Ավետիս համայն առաքյալ (61):

ԱՌՆԻԼ, ն բ. (առա, առ, առեք): 1. Վերցնել, առնել, ստանալ: Մեռնողըն քիզեն կու առնե անմահական դիղ (2): Տե՛ս նաև էջ 11, 18, 61, 80, 85: 2. Ամուսնանալ: Էրնեկ քու առնողին (35): 3. Գնել: Մե քիռքս Չինումաչինին կու առնե թամամ (15): 4. Իր վրա վերցնել, կրել (ցավ, հիվանդություն): Հենչանք ըի՛ ուրախ կենաս. Սայթ-Նովեն առնե դադեն (7): Տե՛ս նաև էջ 31:

⊙ Համ առնիլ—տե՛ս Համի՛:

ԱՌՁԻՎ (թհբ.), ի, գ. Առջև, առաջ: Մի՛ ածի խուպի առչիվըն լալ ու գովհար (37):

ԱՌՈՒՏՎԱՆ (թհբ.) ա ծ. մ. Առավոտյան, վաղորդյան: Էրեստ առուտվան արիվ քանի կեհա կու պարգանա (40):

ԱՌՈՒՏԵՀԱՆ (թհբ.), մ. Առավոտ շուտ: Առուտեհան խերն ու շառը շանց կու տամ (58): էջ 76, 76:

ԱՌՈՒՏԵՄԵՆ (թհբ.), Առավոտվանից, առավոտից սկսած: Ո՛վ կուտե թե յիս կու ապրիմ առուտեմեն ինչրու մուտըն (53):

ԱՍԱԾ, գ. ա ծ. 1. Ինչ որ մեկը ասել է, պատմածը, հաղորդածը: Բու ասածըն ուրիշ դիղ է, ուրիշ դիղ (26): Տե՛ս նաև էջ 64: 2. Մեկի կողմից երգածը: Լսպես Արութինի ասած քրոնիկոնի 446-ին (30): էջ 10, 10, 18, 20, 22, 23, 25, 26, 27, 28, 29, 30, 31, 33, 35, 36, 37, 37, 38, 40, 43, 44, 45, 46, 48, 49, 50, 51, 52, 53, 54, 55, 56, 60, 70, 75, 79:

ԱՍԻԼ (ա ն ց. կ ա տ. եցի, ացի, ասավ: Ս ա հ մ. ն եր կ ա ն նաև կոսիմ, կոսիս, կոսե, կոսինք, կոսիք, կոսին), ն բ. 1. Ասել: Խալխին էն իլթիմազն արա՛ւսին... ապրի քու ածողըն (1): Գե՛լն ասավ. «Բարով ... չորան ախպեր» (58): Տե՛ս նաև էջ 7, 11, 15, 18, 31 (10 անգամ), 32, 32, 32, 33, 34, 45, 46, 46, 47 (9 անգամ), 48 (8 անգամ), 49, 49, 49, 51, 51, 51, 57, 62, 65, 66, 66, 69, 69, 69, 73, 73, 75, 76 (5 անգամ), 77 (6 անգամ), 81, 84, 85, 85, 87, 89: 2. Պատմել: Դարդըս ասիմ՝ գուլան սարիիր (3): Տե՛ս նաև էջ 29, 36, 75: 3. Առարկել: Թե մանիշակ ասիմ՝ սարեմեն կոսին (19): Թե ջավահիր ասիմ՝ քարեմեն կոսին, թե որ լուսին ասիմ՝ տարեմեն կոսին (19): 4. Երգել: Վաղըն գու քամ, նըստիմ ու լամ, Ասիմ քարիթավուր խաղըն (6): Տե՛ս նաև էջ 42, 42, 46: 5. Պատվիրել, թելադրել, կարգադրել: Տերն ասաց չուտիր էս բար (64):

Դուն իս ասի՝ նլնախ տիւլ յարի սիրտըն վայ անին (11) : Տե՛ս նաև էջ 73, 84 :
 6. Հրամայել : Հիդ բաշվի, սար իմ ասում (28) : Հիդ բաշվի, խար իմ ասում
 (28), 7. Խնդրել : Ասի՛ թե յիս բու ախպեր, բու մերոյն ինծի մեր անին (11) :
 Զուր իմ ասում, տուր թասեմեն (32) : Աշկի լուս, ջուր իմ ասի (32) : Տե՛ս նաև
 էջ 42 : 8. Հարցնել, իմանալ, հետաքրքրվել : Իսկի չիս գալի, չիս ասում. «Աջաբ
 ինչ է, բանդա, հալըտ» (13) : Ում հաքին հին շալ ին տեսնում, էլ չին ասում, թե
 էս ով ա (44) : Տե՛ս նաև էջ 25, 56, 62, 88 : 9. Հայտնել : Սուչըս ի՛նչ է, ասա
 ինծի (67) : 10. Պատասխանել : Թե բեմուրվաթ յարի հալըն հարցընիս՝ Ասում է
 թե «սուլթան գու բամ, խան գու բամ (18) : Տե՛ս նաև էջ 39, 69, 69, 76 :
 11. Համարել, ընդունել : Յիս էն մահին մահ չիմ ասի՝ Հենչանք ըլի՛ դուն վըրես
 լաս մազըտ շաղ տալով, աշկի լուս (31) : 12. Ճանաչել, սրտին մոտ ընդունել :
 Իմ հուրմի-հեքիմըն դուն իս, յիս էլ ուրիշ Շահ չիմ ասի (31) : 13. Երաշխավո-
 րել, երաշխիք տալ, հավաստիացնել : Ո՛վ կոսե թե յիս կու ապրիմ առուտեմեն
 ինչրու մուտըն (53) : 14. Կարծել : Շատ մարթ էստունը կու իմանա, կոսե. «Բալ-
 բաթ սա վանգին ա» (15) : Տե՛ս նաև էջ 30 : 15. Գուշակել : Ի՛նչ է ասում էտ
 բու փալըտ (13) : ☉ Ահ ասիլ - հառաչել : Թեգուլ հազար դարդ ունենամ, յիս
 սըրտումըս ահ չիմ ասի (31) : Գովք ասիլ - գովերգել : Գուկիմ բերանըս բաց
 անիմ, գովքըտ ասիմ թարիփի պես (31) : Վայ ասիլ - ցավակցել : Հեքիմսիրըս
 ափսոսում ին՝ ծընգան տալով վա՛յ ին ասում (40) : Ի՛նչ ասիս - շատ բան.
 չնախատեսած շատ բաներ : Ինչ ասիս կոնիլ տա՛ սերն է անըսկամ (18) :
 Կոսե - իբրև միջանկյալ հիշեցնող բառ գործ է ածվում, երբ մեկը մեջ է բերում
 ուրիշի խոսքերը : Շատ մարդ կոսե՛ յիս յարի հիդ ման գու բամ (18, 20) : Չա-
 սիս - դու մի ասա, բանից երևում է, պարզվում է : Էշխիտ ջուրըն... մանում է
 յարսուն կարմունջըն՝ չասիս թե մե՛ գիդ է, պա՛լում (39) :

ԱՍԼ (արաբ.) ա ծ. Կիրթ, բարեկիրթ. ապնիվ (հ կ ո կ. բեդաս) : Բեդասլըն
 ասըլ չի դառնա (37, 47) :

ԱՍԼՁԱԴԱԼ (արաբ.), ա ծ. գ. Զաջատոհմիկ : Թեգուլ վար վարբաբ հաբ-
 ցընիս, վուր չըլի ասըլչադեմեն (44) :

ԱՍԿ (թիբ.), ի. գ. 1. Ալգ, տոհմ. ցեղ : Ասկըտ ասկերումըն գոված՝ համդ
 ունիս գովալ թագավուր : 2. Բարեկամ. ալգական : Էհթիբարր վիրացիլ է, ասկ
 ու բարեկամ չը կա (67) :

ԱՍՄԱՎՈՒԻՐ (թիբ.), ու. գ. Հայսմավուրբ. եկեղեցական գիրք. որի մեջ
 նկարագրված է սրբերի շարքը դասված կրոնական և ազգային ժողովրդական
 գործիչների վարքը (կենսագրությունը) : Խոսկիրրտ անգին ջավահիր՝ Ասմա-
 վուրու ճառ իս էլի (13) : Թրխստիրրտ օսկե վարաղոմ (Ասմավուր իս՝ ճառ բա-
 ցարած (39) :

ԱՍՈՂ. ի. գ. Երգող, երգասաց աշուղ : Շախաթայի ասողին խար չիս
 անի (4) :

ԱՍՎԻԼ, չ բ. Ասվել : Խոսկիրրտ մեմեկ չի ասվի (36) : Տե՛ս նաև էջ 50 :

ԱՍՏՂ. ի. գ. (< ո գ ու. ս է ո. աստղերու) : Վարթ երեսիտ իսլ իս դրի -

աստղի նւան հավասար (60) : Թեզուզ ... գիտենաս աստղերու համբարքըն, Ամբարի գուրծըն կորած է (37) :

ԱՍՏՎԱԾ, աստծու, գ. (կրոն.) Աստծու սերըն կանչողի պես դռնեմես ջուղբ մի՛ անի (10) : Տե՛ս նակ էջ 10, 20, 50, 64 : ☉ Աստված կու սիրիս— խնդրում եմ, աղաչում եմ : Աստված կու սիրիս, զար մի՛ հարնի, զարեն էրված իմ (48) : Տե՛ս նակ էջ 65, 65, 65, 67 :

ԱՍՏՎԱԶ (բրբ.), աստղծու, գ. Նույնն է՝ Աստված : Աստծու ծիռնույնըն հիշտ է մարթու աշխարք ելումուտըն (53) : Տե՛ս նակ էջ 24, 28, 28, 34, 34, 36, 46, 47, 50 : ☉ Աստված վկա—աստծու անունով երդում, մի բան հաստատելու համար աստծուն վկա կանչելը : Աստված վկա, սիրտըս էրից ջեյրանի նըման ման գալրտ (13) : էջ 24, 34, 36, 46, 60 : Աստծուն փառք—գոհ լինելու արտահայտություն, լավ է : Աստծուն փառք Բաղկումն իս (56) : Տե՛ս նակ էջ 25, 27 :

ԱՍՏՈՒԶ (թբբ.), աստուծու, գ. Նույնն է՝ Աստված : Աստուծ խիալ արից (64) : Աստուծու բերնեմեն առնիս մխթարիչ սուրփ հոքին (5) : Ըն բանն արա, վուր աստուծու շարքումն է (16) : Տե՛ս նակ էջ 73, 84 :

ԱՎԱԶ, ավպի, գ. Բանի գուլե բամին տանե՛ ծովեմեն ավպզ չի պակսի (10) : Բունիաթըս ավնպ չիմանաս՝ քարափ է, քարուկրեն է (10) : Յիս էն Սայաթ-Նովասին չիմ, վուր ավպի վրա հիմնանամ (35) :

ԱՎԱԼ (արաբ.), մ. Նախ, նախ և առաջ : Ավալ բու տեսնողըն միռնի (5) :

ԱՎԱՐԱ (պարսկ.), ռի, ա ծ. մ. Անբան, անգործ, պարապ-սարապ թափառող : Զու պատվական գըլուխըտ դուն ավարա մի՛ անի (66) :

ԱՎԵԼ, 1. Ն իս դ ռ. Ավելի, բացի, ի բաց առյալ, բացառությամբ : Աշխարումըս յիս քիզ ավել յար չունիմ : 2. մ. Ավելի մեծ չափով, շատ : Թե՛ն քիզ ավել յադ յար սիրիմ, ումբրես չանիմ խեր (45) : Տե՛ս նակ էջ 62, 62, 62, 62 :

ԱՎԵԼԻ, ա ծ. մ. Սահմանված չափից շատ, առավել : Բոյեմես չուրս մատըն ավելի լըցվի է դոշըտ ու թիկունքրտ (30) : Տե՛ս նակ էջ 63 :

ԱՎԵԼՅՆԻԼ (բրբ.), ցրի, ցրու կամ ցու, ն բ. Ավելացնել : ...Կամով ավելցրար սըրտի ցավըտ (50) :

ԱՎԵՏԱՐԱՆ, ի. գ. (կրոն.) Զրիստոսի վարդապետությունը և նրա կյանքը նկարագրող եկեղեցական գիրք, չորս ավետարանիչների Նոր կտակարանի մասը : Ավետարանն կու տա խոնար մարթուն երանին (11) :

ԱՎԵՏԻՍ, ի. գ. Ուրախալի լուր : Ավետիս համայն առաքյալ, դրախտի հրիշտակըն իս դու (61) :

ԱՎԻՏԱՐԱՆ (թբբ.), ի. գ. Նույնն է՝ Ավետարան : Ավիտարանի խոսկիչըն մարքարիտ է (37) :

ԱՎԻՐԻԼ (թբբ.), ն բ. Ավերել, քանդել, փչացնել, խառնակել : Դիփ խառնակիչ ու ավիրող, չարի ձեռնեմեն դադ կոնիմ (68) :

ԱՎԶԻ (աղբբ.), չու, գ. ա ծ. Որսորդ : Յարալու ջեյրան իս դառի, յիս բու էղնեմես՝ ավչի—սայադ (65) :

ԱՎԶԻ-ՍԱՅԱԴ, տե՛ս Ավչի և Սայադ :

ԱՎՏԱԼ (բրբ.), ացի, ավտա. չ բ. Հավատալ, հավատ ընծայել: *Յադի խոսկրն ավտալու չէ* (10): *Անգալի խոսկին մի՛ ավտա* (32):

ԱՏԻԼ, եցի, ն բ. Ատել, չհամակրել, գարշել, զվզել, նողկալ: *Յիս քիպանից չիմ հիռանա, թեգուզ սիրիս, թեգուզ ատիս* (13): Տե՛ս նաև էջ 60:

ԱՏԼԱՍ (արաբ.), ի, գ. 1. Մետաքսյա կտոր փայլուն ողորկ երեսով, կերպաս, սնդուս, սատին: *Հաքիլ իս ատլաս* (48): *Մե բիռըս Փըռանգի ատլաս է* (15): Տե՛ս նաև էջ 27, 36, 44, 53, 57, 65: 2. Փ խ բ.: Կերպասագույն, մետաքսագույն, հաճելի գույն ունեցող: *Ռանգըտ Փըռանգի ատլաս է* (12), էջ 23, 37:

ԱՐ (արաբ.), ի, գ. Ինքնասիրություն, ամոթ: *Հայա սիրե, ադաբ սիրե, ար սիրե* (16): *Հայալու իս՝ ադաբ ունիս, ար ունիս* (17): Տե՛ս նաև էջ 27, 28:

ԱՐԱՔԻ, ի, գ. Արաբիայի բնիկ, բնակիչ: *Փ խ բ. Թխամոթ մարդ: Սիվ արաբի ճակտի վրա խալ անիլըն ինչի՛ն է շահ* (44):

ԱՐԱՔԶ, ԱՐԱՔՍԱՆ, (բրբ.), ի, գ. Արաբիա, Արաբիա երկիրը: *Սայթ-Նովու գերեզմանըն Հինդ, Հաբաշ, Արաբ մի՛ անի* (10): Տե՛ս նաև էջ 38: *Հինդ ու Հաբաշ, Արաբըստան, Խորասանու Քալաթըն դուն իս* (38):

ԱՐԱՋ (բրբ.), ի, գ. Արաքս, Երասխ (գետ): *Ծոպի պես ուրդան իմ տալիս, գծվիլ իմ Արապի նման* (8):

ԱՐԱՂ (աղբբ.), ի, գ. Օղի: *...Չեռիտ արաղին կարոտ է* (30):

ԱՐԱՅԻՇ (պարսկ.), ի, գ. Հարդարումն, պարդարումն, հավասարումն (կտրելով): **⊙** *Արայիշ տալ*—հարդարել, պարդարել, հավասարել (կտրելով, մալերի մասին): *Խուճուճ-խուճուճ կավերուտ տուր արայիշ* (11): Տե՛ս նաև էջ 72, 86:

ԱՐԱՐԻՉ, ի, գ. (Կրոն): Աստված, արարչագործ, ստեղծագործ: **⊙** *Արարիչ-ստիղծող*—նույնն է՝ Արարիչ: *Սրան դաբուլ իմ, արարիչ-ստիղծող* (63):

ԱՐԱՐՄՈՒՆՐՍ (բրբ.), ի, գ. Գործ, վարմունք, արարք (պախարակելի գործի մասին): *Էդ բու արարմունքըն քիպի չի մընա* (26):

ԱՐԲԱՐ՝ (պարսկ.), 1. ա ծ. Չեռնհաս, ճարտար: *Քանի կուպե արբաբ րլի դուլըն աղին դավ տալու չէ* (10): 2. գ. Պատիժ, փորձանք: *Սիրունութինըտ էլավ արբաբ* (3):

ԱՐԲԱՐ՝ (պարսկ. հարբաբ), ա ծ. Բավմատեսալ: *Սայթ-Նովեն իմ, էնդուր գուլամ, դարդիրըս արբաբ* (48):

ԱՐԵՂԱԳ (բրբ.), ի, գ. 1. Արեգակ, արև: *Վունց արեգագըն շուղըր տա, վունց լուսինը լուս անե* (5): Տե՛ս նաև էջ 31, 37, 50: 2. Փ խ բ. Փայլուն՝ շող-շողուն լինելը: *Շուղըրտ արեգագի նըման է, տխնողին հեյրան իս անում* (18): 3. Արեգակի արծակած ջերմությունը գետնի վրա. արևոտ տեղ, արևի տակ: *Չիմ թողնի արեգագումըն, բաղչի աշաբ իմ քիպ ամա* (23):

ԱՐՋ (արաբ.), ի, գ. Խնդիրք, գանգատ, աղերսագիր: **⊙** *Արզ անիլ*—աղերսանքով հայտնել, խնդիրք հայտնել: *Դարդըտ խանին արզ արա* (13): Տե՛ս նաև էջ 29, 73, 74:

ԱՐԹԱՐ (բրբ.), ա ծ. Արդար, մաքուր, անարատ: Իմ էն արթար կաթիս արուն խառնեցի (63):

ԱՐԻՆ (թճբ.), արնի, գ. 1. Արյուն: 2. Փխբ. Խոր վիշտ, կսկիծ, ցավ: Ընդդու աչկրս չէ ցամաքում սըրտիս մեչըն արին մընաց: Ծ Աչկը արին լալ, աչկեմեն արին կաթիլ—մեծ վիշտ ունենալ: Աչկըն լալիս է արին (22): Աչկեմես կաթում է արին (12): Արնի պես աչկըս է լալի (27): Տե՛ս նաև էջ 32, 41, 49:

ԱՐԻՎ (թճբ.), ի. գ. 1. Արև: Էրեսըտ առուտվան արիվ, քանի կեճա կու պարգանա (40): 2. Սրևի արծակած ճառագայթները՝ լույսը: Չնի տակեն նուր դուս էկած, արիվ դիբած սնբուլի պես (40): 3. Փխբ. Կյանք: Ծ Զու արիվըն կու սիրիս—1) Զու կյանքի համար, եթե սիրում ես կյանքը: Ուրոր գնաս, ինձ էլ հիղըտ տար, քու արիվըն կու սիրիս (54): 2) Խնդրում եմ, աղաչում եմ: Թարավոր իս, դիվանըս արա, շար, քու արիվըն կու սիրիս (54): Տե՛ս նաև էջ 56, 71, 71, 71, 71, 71, 71, 71.:

ԱՐԻՎԱԿԱԼ (թճբ.), մ. ա ծ. Արև առած: Գուլ իս կոկոր տերիվակալ, Չիս թառամի, արիվակալ* (6) էջ 14:

ԱՐԻՎԻԼԸ (թճբ.), ի. գ. Արևելք: Արիվիլք, արիվմուտ, հարավ ու հյուսիս Չը կա քիլի նման (17):

ԱՐԻՎՄՈՒՏ (թճբ.), ի. գ. Արևմուտք: Արիվիլք, արիվմուտ, հարավ ու հյուսիս Չը կա քիլի նման (17):

ԱՐԻՍ (ադրբ.), ի. գ. Առու: Վարթըն էյվնումըն կուլի, նամ-նամ արխին սալ ըլիլով (54):

ԱՐՄԱՆԱԼ, ագա, չբ. 1. Ջարմանալ: Սըրտով սիրածըս դուն իս, էլ ինչի՞ իս արմանում (66): Տե՛ս նաև էջ 63: 2. Հիանալ, սքանչանալ: Կարմիր ու կանաչ ու ճերմակ, սարիսար ալ արմանալու (46): Տե՛ս նաև էջ 63 (7 անգամ), 88:

ԱՐՆԱՐԱՄ, ա ծ. մ. Արյունաքամ: Հալվեցա արնաքամ էլա՞ յարես ի՞նչ արած գիտենար (57):

ԱՐՏԱՍՈՒՆՐ, ի. գ. Արտասուք, արցունք: Արտասունք անիմ, շատ հոգոց հանիմ (29): Տե՛ս նաև էջ 16, 32, 32:

ԱՐՏԱՍԻՆՐ (բրբ.), ի. գ. Նույնն է՝ Արտասունք: Ծ Արտասունքը արուն շինիլ—Փխբ. Ծանր վիշտ պատճառել: Արտասունքըս արուն շինեցիր (24):

ԱՐՈՒՆ (բրբ.), արնի, գ. 1. Արյուն: Մե ձիզըտ ջուր, մե ձիզըտ արուն (40): Արտասունքըս արուն շինեցիր (24): Արնի պես աչկըս է լալի (27): Տե՛ս նաև էջ 41, 41, 75: 2. Սպանություն, արյունահեղություն: Յիս մե միղք իմ արի՞ նշտար քաշեցի, իմ էն արթար կաթիս արուն խառնեցի (63):

ԱՐՈՒՆՈՒՏ (թճբ.), ա ծ. Արյունոտ: Տեսա արունուտ ջեյրանըն (43):

ԱՐՐ (թուրք. թաթար.), ի. գ. Իրավունք, իշխանություն: Յա՛ր, քիլ վրոեն արք ունենամ (8):

* Սալթա-Նովայի նորաստեղծ բառ (Ա. Հասարթյան):

ԱՓ. ի. գ. Ձեռքի ներսի կողմը, բուռ: Հենչաք ըլի, յա՛ր, գաս իմ գերեզմանին, ածիս խողըն վրդես ափով, նազանի (17):

ԱՓՍՈՍԱԼ, ացի, չբ. Ցավ արտահայտել: Հեքիմնիրս ափսոսում ին, ծընգան տալով վա՛յ ին ասում (40):

ԱՓՍՈՒՍ (թիբ.), ձ. Ցավակցության բացականչություն, ափսո՛ս: Ափսոսա վուր շուտ մեռիլ է (35): ☉ Հազար ափսուս—շատ ափսոս: Ափսուսալու հազար ափսուս (57):

ԱՓՍՈՒՍԱԼ (թիբ.), ացի, չբ. Նույնն է՝ Ափսոսալ: Ափսուսալու հազար ափսուս, յիս էս դադա դար ունենամ (57):

Բ

ԲԱԲ (պարսկ.), ա ծ. մ. Համեմատ, համապատասխան: ☉ Բաբ անիլ— համեմատել: Խիլըրտ հիմարին բաբ մի՛ անի (10):

ԲԱԲԱԹ (պարսկ.), ա ծ. մ. Տեսակ, կերպ, ձև: Հազար բաբաթ բան կոսիս (5): Խոսում իս դուն չարի բաբաթ (47): Տե՛ս նաև էջ 24, 27, 30, 49, 68 (8 անգամ):

ԲԱԴԵՇԽԱՆ, Միջին Ասիայում Հիևդուքուշ լեռներում գտնվող շրջաններից մեկը, որտեղ գտնվում է լավագույն սուտակը: Փ իս բ. գանձ, հարստութիւն: Պատվական անգին ջավայիր, լալ Բադեշխան իս ինձ ամա (24): Տե՛ս նաև էջ 21, 37, 83:

ԲԱԶԱ, պի. գ. (կենդբ.), Բազե: Դուն ինձ շուտով մի թըռցնի՛ շավարդանբազա իս, ապիլ (40):

ԲԱԶԱՐ (պարսկ.), ի. գ. Ծուկա: Տարենրն մե գամ բաց կուլիս մաթան շահրադել բազարի (38):

ԲԱԶԻ (արաբ.): Ոմն, ոմանք, մի քանի, որոշ: Բազի մարդ չէ բաշի, էշխեմեն է իսամ (18):

ԲԱԺԱՆՎԻԼ, վեցի. չբ. Զատվել, իրարից հեռաւալ: Մեր ու մանուկ բաժանվեցան (44):

ԲԱԼԱՍԱՆ (արաբ.), ի. գ. Անուշահոտ բալլամ խեժ արտադրող ծառ: Հուտըրտ աշխարհս է պավթի՛ բալասանի ծառ իս էլի (13): Տե՛ս նաև էջ 55:

ԲԱԼԼԱ, ԲԱԼԼԱՄ (թուրք.), մ. Գուցե, թերևս: Բալլա մեկ էլ դեդեն բերե նրժան բարեբարիտ էրնեկ (25): Վի կենա Լողման հեքիմըն, բալլամ դարդիս անե չարա (36):

ԲԱԼԼ (պարսկ.), ի. գ. 1. Ալգի: Մե բաղմանչին էրկու բաղին ի՛նչ անե (21): Տե՛ս նաև էջ 41, 42: 2. Պարտեպ, բուրաստան, ծաղկանոց: Թառամեցավ կարմիր վարթըն, բաղըն բըրբուլ չէ գալի (22): Տե՛ս նաև էջ 7, 16, 64, 69, 70, 71: 3. Բոստան, բանջարանոց: Շամամնիրըտ թաղի մեչըն, ման իս գալի բաղի մեչըն (58):

ԲԱՂԱԹ (արաբ.), ի. գ. Այգեստան: *Բըլբուլըն վարթին, վարթը բաղարին, սելրանի վախտըն է* (29):

ԲԱՂՄԱՆ. տե՛ս Բաղմանչի: *Բաղ կու սիրիմ, յիս բաղման չիմ՝ բաղի տիրուչըն ճանանչիմ* (28):

ԲԱՂՄԱՆԶԻ (պարսկ. աղբբ.), մնչու, գ. 1. Այգեպան: *Մե բաղմանչին երկու բաղին ի՛նչ անե* (21): 2. Պարտիպան: *Ի՛նչ օգուտ է թու բաղմընչո՛ր՝ դարիբ բըլբուլըն լաց կուլի* (14):

ԲԱՂՉԱ, չի գ.: 1. Տնամերձ այգի, փոքր այգի: *Մուտ բաղչեն նապով, քիզ գովիմ սապով* (29): Տե՛ս նաև էջ 17, 18, 36, 36, 44, 44, 44, 44: 2. Ծաղկանոց, վարդանոց, պարտեպ: *Բաղչի մեչըն բոլորքըտ վարթով չափարած* (24): *Բաց կուլիս կարմիր վարթի պես՝ բաղչուըն շնուք կու տաս* (14): Տե՛ս նաև էջ 14, 22, 36, 37:

ԲԱՅԱԹԻ (պարսկ.), թու, գ. Արևելյան երածշտական տխուր եղանակ (էջ 22 ծանոթ.):

ԲԱՅՑ, շ. Սակայն: *Թուրքերեն էլ ուզում էի հետը խառնել, բայց չխառնեցի* (57-ի ծանոթ.):

ԲԱՆ, ի. գ. 1. Գործ, աշխատանք, վբաղմունք: *Չեռնիրըս թըլացավ, չե՛ շինում բանըս* (26): *Գըծված ման իմ գալի բանեն դուս արած* (63): Նաև էջ 28, 12, 12, 60: 2. Գործի՝ աշխատանքի արդյունքը՝ հետևանքը: *Էս ի՛նչ բան էր, վուր դուն արիր* (3): Նաև էջ 46: 3. Արաքք, վարմունք, վերաբերմունք: *Յարին բեղամաղ մի՛ անի, Չը հիռանա անմիղ բանից* (6): *Իմ թալնիլը թու բանն էր, չասացիր ինչ իմ անում* (66): Նաև էջ 28: 4. Անցուդարձ, իրադարձություն, հանգամանքներ: *Բանի սաղ է Սայաթ-Նովեն, շատ բան կու տեսնիս, քամանչա* (1): 5. Միջոց, ճար, հնար: *Յա ինձ կորցրեք, յա մե բան արեք* (20): 6. Խոսք, արտահայտություն: *Հապար բաբաթ բան կոսիս* (5): 7. Բանաստեղծություն, գովաասանական խոսք: *Յա՛ր, քիզ ինչո՞վ թարիփ անիմ, աշխարումըս բան չը մընաց* (24): 8. Միտք, գաղափար, խորհուրդ: *Իմ ու թու սրրտի բանըն դիփ աշկարա մի՛ անի* (66): Նաև էջ 26: 9. Իբրև անորոշ դերանուն, ինչ, ինչոր: *Տերըն էկավ աշխար, Ապատից հոքիքը, բան չը թողից քամ* (64):

ԲԱՆԱԼ, բացի, բաց, ն բ. Բաց անել: *Թե սիրտըս բանամ, կու տեսնիք դարդիրըս ծով ա* (67):

ԲԱՆԳ (պարսկ.), ի. գ. Նարկոտիկի մի տեսակը, թմրեցնող դեղ, հաշիշ: *Ուշկ ու միտկըս կու քընեցնե՛ բանգ ունե* (18): *Շատին կու քընեցնիս բանգով* (1): Տե՛ս նաև էջ 36, 56:

ԲԱՆԴ (պարսկ.), ի. գ. Կապ. հանգույց: *Թ Բանդ անիլ—կապել, կաշլանդեյ: Զաղջըր լիզվով շատ ինձպիսին բանդ իս արի* (14): Տե՛ս նաև էջ 12:

ԲԱՆԴԱ (պարսկ.), դի. գ. Ստրուկ, ծառա, || Գերի: *Իսկի չիս գալի, չիս ասում. «աջաբ ի՛նչ է, բանդա, հալըտ»* (13):

ԲԱՆԶ (գրբ.). *Քո գ ն. բան բառի. ի. գ. Խոսք, ասույթ, ասացվածք, խոսքեր* (տե՛ս նաև Բան 6 նշան): *Խոսկիրըս մեմեկ չի ասվի՛ իմաստներու բան-*

քի նման (36) : Կանց յոթըն իմաստնասիրացըն շատ է էս քու Սայաթ-Նովու բանքիրըն մենեկ (21) :

ԲԱՇ (ադրբ.), ի. գ. ա. Գլխավոր, բարձր, գերազանց : Ի Գլուխ : Չը տեսա քու դիդարի պես՝ դուն դիփունեն բաշ, նազանի (35) :

ԲԱՌ, ի. գ. Խոսք : Բիպիդ բաս ո՞վ կանա բռնի՝ հազար բաբաթ բառ իս էլի (13) : Վունցոր Սայաթ Նովու լիզուն յոթանասուն բառ բացարած (39) :

ԲԱՌՆԱԼ (գրբ.) բարձի, բարձ, ն բ. Բարձել, իր վրա վերցնել, կրել, տանել (ներդություն, ծանրություն) : Կամավ սովդեն մըտա դարդըն բառնալու (49) :

ԲԱՍ¹ (բրբ.), մ. Ապա, հապա : Բաս քու էշխին վու՞նց դիմանամ (2) : Բաս աշուղըն վու՞նց դիմանա էտ քու տըված կեծակուն (4) : Տե՛ս նաև էջ 31, 49, 83 :

ԲԱՍ² (արաբ.), ի. գ. 1. Ջրույց, խոսակցություն : Արի նըստի Սայաթ-Նովա, խոսկըտ սաս լամվ ու բասով (23) : Խըմեցուր ձեռիտ թասենեն, Համաշա էշխիտ բասենեն էրվում իմ, ճար իմ ասում (28) : 2. Ջույգ, համապատասխանող ընկեր : Բիզ ինձնից ո՞վ կանա խըլի, աշուղի բանն իս, բամանշա : 3. Վեճ, վիճաբանություն : ☉ Բաս բռնիլ—վիճել : Բիպիդ բաս ո՞վ կարա բռնի՝ հազար բաբաթ բառ իս էլի (13) :

ԲԱՐ (պարսկ.), ի. գ. 1. Պտուղ (ծառի) : Տերն ասաց—չուտիք էս բար, թե չէ կու տեսնիք մինձ պարար (64) : 2. Նորատունկ ծառի առաջին պտուղը, երախայրիք. փ իս բ. Բողբոջած սեր, սրտում նոր բացված սեր : Արի բըլբուլ խոսի բարըն ... քի վարթըն էրից, ինձ իմ յարըն (9) :

ԲԱՐԱԿ, ա ծ, 1. Նուրբ, բարեձև, ճկուն : Բարակ դամաթիտ խիստ սազ գու քա դիբա ու վարբաբ (48) : Բարակ միշկըտ սեյրան արիր (6) : Բարակ միշկիտ թիրման շալըն նըման է օսկե բամարին (35) : Տե՛ս նաև էջ 14, 55, 65 : 2. Զնքուշ, դյուրալուր, ախորժալուր : Բարակ ձենով սազ իս անում (6) էջ 13 :

ԲԱՐԲԱՌԻԼ (գրբ.), եցի, չ բ. Խոսել, մի բան ասել : Անապատեն բարբառեցար (61) :

ԲԱՐԳ (բրբ.), ա ծ. Բարկ, վառ, թեժ : Կարմիր : Բարգ էրեսիտ խալ իս անում (8) :

ԲԱՐԳԱՆԱԼ (բրբ.), ացա, չ բ. Բարկանալ, վարանալ, չարանալ : Նահախ մի՛ բարգանա (40) :

ԲԱՐԵԲԱՐ (պարսկ.), ա ծ. մ. Հավասար : Հիդ աշխարիս բարեբար իս (6) : Տե՛ս նաև էջ 13, 38, 59, 59 59.:

ԲԱՐԵԿԱՄ, ի. գ. ա ծ. Ասկ ու բարեկամ չը կա (67) : Թող դըռանըտ նընգած ըլիմ օտար բարեկամի նըման (47) :

ԲԱՐԻ, ռու. 1. գ. Բարի՝ ավնիվ գործ, բարություն : Ղաստ անիմ, բարու հանդիպիմ՝ չարըս մունաթ չը բաշե (15) : Տե՛ս նաև էջ 90 : 2. ա ծ. Արդար, անմեղ, առաքինի : Լավ մարթըն էն է՝ սիրով անե բարի հըրիշտակներու կամքըն (44) : Տե՛ս նաև էջ 67 :

ԲԱՐԻԹԱՎՈՒՐ (արաբ. հայ.), ի. գ. Արևելյան գրականության մեջ երկար

ոտանավորի ձև (բառացի՝ ծովանման, ալիքան) : Ասիմ բարիթավոր խաղըն (6) : Տե՛ս նաև էջ 16, 16, 16 :

ԲԱՐԻՇԵԼ (աղբ., բրբ), եցի չ բ. Համաձայնվել, համաձայնության գալ : Հաշտվել : Մեր խալվաթ օթախումըն բարիշելու վախտըն է (66) :

ԲԱՐԻՎԱԿԱԼ, ա ծ. Բարև ընդունող, բարև առնող : Թաքավոր իս՝ բարիվակալ* (6) . էջ 14 :

ԲԱՐԿ, ա ծ. Վառ, թեժ, բորբոք : Բարկ էրեսըտ՝ կըրակ նընգած օսկու նըման ջիռանում է (38) : Տե՛ս նաև էջ 9 :

ԲԱՐՈՎ, ս. ծ. Ողջուկի և բարեմաղթության խոսք : Բարովին բարով չիս ասի (39) : Բարով տեսա, իմ սիրեկան (41) : Տե՛ս նաև էջ 46, 57, 57, 57, 57, 57, 57, 76 : ☉ Բարով տալ—ողջունել, բարևել : Բարով տամ քիզ, մըտիկ տու միզ (6) : Տե՛ս նաև էջ 14, 18 :

ԲԱՐՈՒՐ, ի. գ. Երեխայի խանձարուրի շորեր, բալուլ : Կըշտիս ունիս յսկե բարուր (25) :

ԲԱՅ, ա ծ. 1. Ազատ, արծակ, անկաշկանդ : Հենց ձեռովըտ կապեցիր, էնպես բաց էր իղբալըս (66) : Անիլ, ըլիլ բառերի հետ կապում է բայեր : Բաց անիլ—1) հիմնել, ձեռնարկել : Հեստի տիղ դուբան բաց անիմ (15) : 2) Բացել, խորացնել, բորբոքել (վերջի մասին) : Բանի վուր մըհլամ իմ դընում, դուգունըս էլ խիստ բաց է անում (57) : Տե՛ս նաև էջ 75 : Բացարած—1) Բացված, ծաղկած : Մճնուշակ բաց արած հովին (27) : Հուտըտ աշխարըս բըռնիլ է, բալասանի ծառ բացարած (39) : Տե՛ս նաև էջ 7, 31, 55 (8 անգամ) : 2) Ջրպարտած, անբաստանած : Յա՛ր, քիզ իսկի դճվալ չըլի՝ քու դուշմընին շառ բացարած (39) : 3) Ընթերցած : Ասմավուր իս՝ ճառ բացարած (35) : 4) Փայլուն, ճաճանշափալլ : Լուսնաստղ պչոծառ բացարած (39) : 5) Առիթ ստեղծած : Մըտնողըն էլ չի դուռ էհա՝ դուռ մահու պատճառ բացարած (39) : 6) Թեժացրած, բորբոքած : Լուրըն տիղըն լուս իս տալի առանց կըրակ՝ վառ բացարած (39) : 7) Հանդիսավոր մտած : Տեսնողըն էնպես կիմանա՝ Շահ իս գալի, ջառ բացարած (39) : 8) Ճոխացած, հարուստ (լեզվի մասին) : Վունցոր Սալաթ-Նովու լիվուն՝ յթանասուն բառ բացարած (39) : ☉ Բերանը բաց անիլ—խոսել՝ մի բան ասել ուզենալ : Գուլիմ բերանըս բաց անիմ, գովըրտ ասիմ թարիփի պես (34) : Բաց ըլիլ—1) տե՛ս բացվիլ : Վարթի նըման բաց իս էլի (3) : Տե՛ս նաև էջ 14, 26, 26, 54, 57, 64, 65, 71 : 2) Հիմնադրել, գործունեության սկիզբ դնել : Տարեըն մե գամ բաց կուլիս մաթա շահրադել բազարի (38) : 3) Ուրախանալ, վզարճաճալ, սիրտը բացվել : Յիփ բաղըր ծայնըտ վիր կոնիս, բաց կուլի հիղըտ խաղողըն (1) :

ԲԱՅԱՐԱԾ, տե՛ս Բաց : Բալասանի ծառ բացարած (39) :

ԲԱՅՎԻԼ, չ բ. Բացվել, ծաղկել, փթթել : Բացվիլ իս կարմիր վարթի պես (2) : Վարթըն բացվիլ է (29) : Տե՛ս նաև էջ 38, 64, 70 :

* Բարիվակալ—Սալաթ-Նովայի նորաստեղծ բառ : Տե՛ս Մ. Հասրաթյան, Սալաթ-Նովայի խաղերի ժողովածու, 1959 :

ԲԱՏՐԱՆԱԼ (բրբ.), ացա, չբ. Բարծրանալ: *Ճուխկընիրըն բացրացիլ է* (52):

ԲԱՓԱ (արաբ), փի, գ. Հավատարմություն, խոստումի պահպանումն: *Շատ ջանք դրի, մե բափա չը տեսա հում կաթնակիրի: Հենչանք ըլի՝ կենաս բափով* (17): Տե՛ս նաև էջ 70:

ԲԵՂԱՄԱՂ (պարսկ. աղբբ.), ա ծ. Անտրամաղիր, սրտամնա, նեղացած. սիրտը կտրած: *Աջաբ բու սիրտըն ո՛վ շինից՝ խոնարից, հիվանից բեղամաղ* (43): էջ 60, 60, 60, 60, 60, 60, 60, 60: ☉ *Բեղամաղ անիլ*—վիրավորել, նեղացնել: *Յարին բեղամաղ մի՛ անի* (6): *Բեղամաղ ըլիլ*—տխրել, նեղանալ, վիրավորվել: *Բեղամաղ չըլի միկանից* (6): Տե՛ս նաև էջ 36, 53:

ԲԵՂԱՍԱԼ (պարսկ. արաբ.), ա ծ. գ. Վատթարազգի ծագումով, անկիրթ. անակնիվ: *Բեղասլըն ասըլ չի դառնա* (37): *Բեղասլին վուր խոսեցնիս, Լ՛ւլ անիլըն ինչի՞ն է շահ* (44):

ԲԵԶԱՐԻԼ, ԲԵԶՐԻԼ (պարսկ. հայ. իլ վերջավորությամբ), եցի, չբ. Ձանձրանալ: *Աշխարեմեն բեզարիլ իմ, էլ բերնումըս համ չը կա* (67): Տե՛ս նաև էջ 20, 54, 70, 70, 70, 70, 70, 70, 70, 70: *Սայաթ-Նովեն վուր բեզրիլ է, շատին էրից խաղ կանչելով* (54):

ԲԵԻՂՐԱՐ (պարսկ. արաբ.), ա ծ. Ուրացող, ուխտազանց: *Բեմուրվաթին, բեիղրարին չիմ տեսի* (20): Տե՛ս նաև էջ 49:

ԲԵԻՆՍԱՓ (պարսկ. արաբ.), ա ծ. Անգութ, անխիղճ: *Յոխսուլին պրգող, բեինսափ, վարի ձեռնեմեն դադ կոնիմ* (68):

ԲԵԼԻՐ ՂԱՓԻ, Արևելյան երածջու. եղանակի անուն: *Էսպես բելիր դափի-ի հանգու:մ* (3-րդ խաղի ծանոթ.):

ԲԵԼԼՈՒ (աղբբ.), ա ծ. Հայտնի, նշանավոր: *Չունքի խոսկըտ անց է կենում բելլու շահանդապի նըման* (8): Տե՛ս նաև էջ 64:

ԲԵՀԵԶ (հուն., սառթ.), ի, գ. Ընտիր և նուրբ բամբակե գործվածք: *Հաթիլ իս բեհեզ ծիրանին* (33):

ԲԵՀՈՒԲԱԶԱՐ (աղբբ. պարսկ.), ի, գ. Սակարկություն, առևտուր: ☉ *Բեհուբազար անիլ*—սակարկել: *Դուն ինքնակալ թաքավուր իս՝ բեհուբազար չիս անի* (4):

ԲԵՄՈՒՐՎԱԹ (պարսկ.), ա ծ. 1. Անողորմ, անգութ, անխիղճ: *Բեմուրվաթ յար, խիլըս գրլխես մի՛ տանի* (11): Տե՛ս նաև էջ 22, 26, 30, 41, 72: 2. Տվարդի, փոքրոգի: *Ջադուբարին չիմ տեսի, բեմուրվաթին, բեիղրարին չիմ տեսի* (20): Տե՛ս նաև էջ 23:

ԲԵՆ, ի. գ. Հայերեն այբուբենի «Բ» տառի անունը: *Սիրտըս էլավ բե ու ալիբ, էրկու բեն** (49): Տե՛ս նաև էջ 66, 66, 66, 66, 67:

ԲԵՐԱՆ, բերնի կամ բիրնի (հո գ ն. բերնիր): 1. Ուտելու, ճաշակելու օրգան: *Աչկըս թաց, բերանըս ցամաք, լիկուս հիդքերած գիդենաք* (57): *Յիփ*

* Բե ու ալիբ էրկու բեն = Զաբաբ: *Սիրտս էլավ բաբաբ*—սիրտս սիրուց յոռոգրվեց: *Մ. Հասարթյան, Սայաթ-Նովայի խաղերի ժողովածու, 1959, էջ 66:*

խաղում իս՝ վրաՎըռում իս օցի բերնի հուլի նըման (39) : Էլ բիրնումըս համ չը կա (89) : Էջ 11, 13, 38, 63 : 2. Խոսելու օրգան : Գուպիմ բերանըս բաց անիմ, գովըրտ աիմ թարիփի պես (31) : 3. Ամանի կամ պարկի վերևի չփակված մասը, որտեղից բան են օցնում : Բերնիորն վըրա չէ գալիս, հակնիորս է սիլա-սիլա (15) : ☉ Բերանը տընդըղիլ—ուշադիր հետևել մեկին (մի բան սովորելու նպատակով) : Մարթ պիտի համաշա բերանըտ տընդըղե՝ խոսկ իս ասում առակավուր մասալով (20) : Բերնեմեն կըրակ վեր ածիլ—շատ ճարտար խոսել : Բաղցըր խոսկով կրակ իս վեր ածում բերնեմեն (6) : Բերնումը սանձ դընիլ—հնապանդվել : Բերնումըս դընիմ սանձ՝ կենամ (6) էջ 15 :

ԲԵՐԻԼ, բերի, հիմ, բիր, անց, վաղակ, բերի : Նբ. 1. Բերել : Մե հետտի քարգան իմ բերի (15) : Խիլքի պարար շահ իմ բերի (15) : Տե՛ս նաև էջ 27, 27, 27 : 2. Ջավակ ծնել : Բալքա մեկ էլ դեղեն բերե՝ նըման բարեբարիտ էրնեկ (25) : ...Լուսըն բու ծընողին ըլի, Ապրիլ էր, մեկ էլ էր բերի բիպի պես նաղաշ, նա՛կանի (35) : 3. Ծնվել : Ինձ ու իմ սիրեկան յարին մե տարի բերած գիղենաք (57) : ☉ Տանիլ ու բերիլ—շարժել : Կավիրըտ օլոր տար ու բիր (65) :

ԲԵՐԱՐԱ (պարսկ.), ած. Անօգուտ, անպետք, անորակ : Կամ թե գուրծավուր իմ, բեքարա խայար (65) :

ԲԻՄ (հուն.), ի, գ. Բեմ : Բիմըտ ու խաչկալըտ դրախտի բալ արին, Մողնու սուրփ Գևուրք (62) :

ԲԻՆԱ (թուրք.), նի, գ. Յայլաներում վրանաբնակ տեղ, որտեղ և արածում են ոչխարները : Գեղըն ասավ. ուսուլով ման գուքամ, բինետ կու գըթնի՛մ (58) :

ԲԻՌ (թիբ.), բիռան, գ. Բեռ, ծանրություն, հակ (շալակելու յապրանք) : Մե բիռըս փըռանգի ատլաս և... Մե բիռըն վար-դալամքարի (15) էջ 27, 27, 27, 27, 27, 27, 27 :

ԲԻՐՅԱՆ (պարսկ.), գ. Խորով, խորովյալ : Գործ է ածվում անիլ բայի հետ : Բիրյան անիլ—խորովել, տապակել : Էտ կըրակով բիրյան արիր (6) : Տե՛ս նաև էջ 18 :

ԲԼԲՈՒԼ (պարսկ.), ի, գ. (կենդ.) : Սոխակ : Բըլբուլի հիդ հանգ իս անում (2) : Ուստի՛ գու բաս, դարիբ բըլբուլ, դու մի՛ լաց լի, իս իմ լալու (9) : Տե՛ս նաև էջ 8, 8, 14, 19, 19, 19, 21, 21, 25, 26, 26, 32, 34, 34, 36, 37, 38, 39, 41, 42, 43, 44, 44, 44, 45, 49, 49, 49, 49, 49, 49, 50, 56, 60, 64, 64, 65, 69, 69, 69, 69, 69, 69, 70, 70, 71, 71, 72, 73, 74, 74, 83, 90 :

ԲԼՋԱՄ (ադրբ.), մ. Գուցե, թերև : Բըլքամ մե մարթ ռաստ գա (21) :

ԲԽԵՑՆԻԼ, ցրի, ցրեցի, ցրու, նբ. Բխեցնել : Կու բխեցնե կաթնեախպուր (60) :

ԲՀԱՄ (պարսկ.), գործ է ածվում հայերեն բայական բառերի հետ : Բհամ գալ—ծագել, սերել, առաջ գալ : Աճել : Շիմշատի ծառ բըհամ էկած (46) :

ԲՄԲՈՒԼ (բրբ.), ի, գ. Փետուր : Տեսնողըն նախշտ կու տընդըղե փարշևանգի բըմբուլի պես (40) :

ԲՈՋԱ (աղբբ.), պի. գ. Թունն խմիչք (կորեկից) : Փխբ. նա՛ որ հարբեց-
նում է: Դուն բանգ ու բուպա իս, ապիպ (40) :

ԲՈԼԸՐԿԻԼ (բբբ.), վեցի, վեցա, չբ. Բոլորածն դառնալ, կլոր ձև ստա-
նալ: Էրեստտ նուր լուանի նրման բանի կեհա, կու բոլորվի (2) :

ԲՈԼՈՐ, ա ծ. Ամբողջ: Բոլորը սրբա մեչ է գրած (6) : Էջ 16, 8:

ԲՈԼՈՐԲ, գ. մ. 1. Շուրջը, չորս կողմը: 2. Շքապատը, բոլորտիքը: Բոլոր-
քըս դամբաշ ին դառի՛ ուրախ սիրտ անգամ չը կա (67) : ☉ Չուրս բոլորք—
չորս կողմ, բոլոր կողմերից: Չուրս բոլորքն ծաղիկնիր ին (54) :

ԲՈՅ (աղբբ.), ի. գ. Հասակի բարձրություն: Բոյրտ սարվի ունիս, մեչկըտ
է դամիշ (55) : Բոյեմետ չուրս մատըն ավելի լըցվի է դոշրտ ու թիկունքըտ
(30) :

ԲՈՎ, տե՛ս Բոյ: Հաքիլ իս ատլաս, թուլու վար ու խաս՝ սալբու դալ
բովուն* (29) :

ԲՈՐՈՏ, ի, ա ծ. գ. Բոր ունեցող, բորով հիվանդ, քոտտ: Ամեն բորտըն
կու սորվի, քիպի գու բա ով փափաքով (62) :

ԲՈՆԻԼ, եցի, բանի, ն բ. 1. Բանել, վերցնել: Չիռքըտ բըռնե օսկեջրած մըկ-
րատըն (11) : Տե՛ս նաև էջ 38, 49, 60, 72: 2. Ուժով ճանկը գցել՝ բաց չթողնել:
Բըռնածին չի թողնի, դալիմ չանգ ունե (30) : 3. Իր մեջն առնել, ընդգրկել,
տարածվել: Հուտըտ աշխարքս բըռնիլ է՝ բերնուժըտ ունիս վանջափիլըն (25) :
Մուք բանից աշխարք (64) : Տե՛ս նաև էջ 22, 37, 55: 4. Գրավել: Իմ տիղըս
բըռնողըն ո՛վ ա (67) : Տե՛ս նաև էջ 72: 5. Փստրել, որոնել (պատճառ, առիթ) :
Էլ ո՛ւմ բըռնիմ սե ու ալիբ էրկու բեն** (49) : Բաս բընիլ—տե՛ս Բաս²: Մուք
բընիլ—տե՛ս Մուք:

ԲՐՈԼ (հուև., վրաց.-ից). ի.գ. Բյուրեղ. բյուրեղյա աման: Չեռիտ բըռնածըն
բրոլ է, ածա,--խըմինք օսկե թասով (25) : Տե՛ս նաև էջ 26:

ԲՐՈԼԵ (հուև., վրաց.-ից). ա ծ. Բյուրեղյա: Մատնիրըտ մում բրոլե ճաղին
կարտտ է (30) : Տե՛ս նաև էջ 63, 82:

*ԲՐՈՅԻ-ԲՐՈՅԻ (թբբ.), ա ծ. Բյուրավոր, շատ, անչափ: Թեգուլ քու քա-
շըն մարբըրիտ տան բրոյի-բրոյի... չիմ հիռացնի քիպ քու յարեմեն (42) : Տե՛ս
նաև էջ 59, 59, 59, 59, 59:

ԲՐԻԹԱ (պարսկ.), ա ծ. Սիրած. կուրք: Բուրա Շահսանամըս դուն իս,
ԷՍ (բրբ.), դ. Այս: Էս ի՛նչ բան էր, վուր դուն արիր (3): Խալխին էս իլթիմազըն արա՛ սահն. «ապրի բու ածողըն» (1): Տե՛ս նակ էջ 6, 7, 9, 10, 15, 17, 18, 18, 21, 26, 26, 26, 28, 30, 31, 32, 33, 33, 36, 37, 38, 43, 46, 46, 46, 46, 49, 50, 51, 53, 54, 55, 61, 61, 67, 68, 75, 75, 74, 79, 83, 84, 84, 84, 88, 89, 90: ☉ Էս գրխեն—նախօրոք, վաղօրոք, առաջուց, սկզբից: Յիս էլ ուրիշ յար չունիմ, էս գրխեն վաղ իմացի (14): Էս դադա—այս չափ, շատ: Ափսուսալու հապար ափսուս, յիս էս դադա դար ունենամ (57):

ԷՍԱՆՑ (բրբ.), կ. Սրանից բացի, բացի սրանից, սրանից ավելի: Թե էսանց էլ սուչ ունենամ, գրլուխըս արա տալ, թաքավուր (10):

ԷՍՉԱՓ (բրբ.), ա ծ. Այսչափ: Վո՛ւնց դիմանամ էսչափ չարին (12):

ԷՍՊԵՍ (բրբ.), ա ծ. մ. Այսպես, այս կերպ: Օրոս էսպես անց է կացի դարերով, դարերով (41): Տե՛ս նակ էջ 6, 9, ինչպես նակ հետևյալ տողատակերի ծանոթագրություններում՝ էջ 11, 16, 16, 20, 25, 26, 30, 31, 32, 35, 35, 37, 37, 40, 40, 44, 45, 48, 52, 53, 56, 57, 58, 62, 70:

ԷՍՈՒ (բրբ.), դ. Այս բանի, սրա: Էշխըն էստու պես է, ջանըմ (6): Թե գուզ էստու համա քարասպան արեթ՝ Զի՛մ կըշտանում գոզալի հիդ խոսալով (20):

ԷՍՈՒՆՔ (բրբ.), դ. գ. Սրանք, այս բոլորը: Շատ մարթ էստունք կու իմանա, կոսե. «հալբաթ սա պանգին ա» (15):

ԷՍՕՐ (բրբ.), մ. գ. Այսօր: Էրեգ լավ էր կանց վուր էսօր,—վաղերումն բեզարիլ իմ (53): Էսօր իմ յարին տեսա բաղչի մեչըն ման գալով (14):

ԷՏ (բրբ.), դ. Այդ: Յարի սիրտըն դաղ մի՛ անի, էս կրոակըն չաղ մի՛ անի (6): Տե՛ս նակ էջ 10, 12, 12, 13, 13, 13, 14, 17, 17, 17, 18, 24, 25, 26, 38, 38, 39, 39, 49, 50, 62, 63, 69, 70, 85:

ԷՏԵՆՑ (բրբ.), մ. Այդպես: Մե փուրրի էտենց դիմացի, շուտով Հընդըստան մի՛ էհա (23):

ԷՐԱԶ (բրբ.), ի. գ. Երազ: Ումբրոս էրազի պես գընաց (57): Էրազումն տեսածի հիդ միզի մե հեսաբ մի՛ անի (10):

ԷՐԱՆԻ (բրբ.), ձ. Երանի, երնեկ: Գարունքվան վախտըն լըցվիլ է.— էրանի ծիզ, ծաղկած վարիր (33):

ԷՐԵԳ (բրբ.), վա. գ. Անցած օրը, երեկ: Էրեգ լավ էր կանց վուր էսօր (53):

ԷՐԵՆԱ (բրբ.), խի. գ. Երեխա: Չուրս տարեկան էրեխի պես՝ յարըս խըրատիլ է ուլում (43):

ԷՐԵՍ (բրբ.), ի. գ. 1. Երես, դեմք: Էրեսըտ նուր լուսնի նըման քանի՞ կեհա, կու բոլորվի (2): Բարկ էրեսիտ խալ իս արի (3): Տե՛ս նակ էջ 7, 7, 7, 8.

9, 11, 18, 27, 34, 51, 54, 55, 56, 63, 63, 67, 86, 86: 2. Գրքի կամ տետրակի էջ: *Էսպես ասել է մեկ հավատարիմ սիրեկան, և մյուս էրեսին Սալաթ-Նովեն. Ապրիլի 1-ին, քրոնիկոնի 442-ին (23-րդ խաղի ծանոթ.):* ☉ *Էրեսը հայալու պահիլ—*Համեստ՝ պարկեշտ լինել: *Էրեսըս հայալու պահիմ՝ արըս մունաթ չը քաշե (15): Էրեսը սիվնալ—*ամոթով մնալ: *Ովոր ինձ շինից դիվանա՝ ... վաղի էրեսըն սիվանա (32): Էրեսին ասիլ—*ներկալությամբ ասել: *Էս, Արուսիքը և իր սիրեկանը որ խոսել էին, էն է. սիրեկանըն ասիլ է ուղղալի:՝ Սալաթ-Նովալի էրեսին (23-րդ խաղի տողատակի ծանոթ.):*

ԷՐԹԱԼ (բրբ.), չ բ. 1. Գնալ, մեկնել: *Կերթամ ու ման գու քամ վանքիրըն մենեկ (21):* 2. Ջնջվել, ոչնչանալ, վերանալ, հետքը չմնալ: *Էշխըն հեստի կըրակ ունի, վունց կու էրվի, վունց կերթա (4): Դովլաթը էլթիբար չունե, լիփոր կերթա ուրուչ—քարով (53):*

ԷՐԻԼ (բբբ.), եցի, հր մ. էրի: 1. ն բ. Այրել, վառել: *Վախում իմ թե՛ ինձ էլ էրիս՝ անհանգչլի հուր իս, ա՛խպեր (13):* 2. փ խ բ. Տոչորել (սիրուց): *Քի վարթըն էրից, ինձ իմ յարթն (9):* 3. փ խ բ. Ոգևորել, ջերմացնել (խոսքով): *Շատ մարթիք քիպտ կու էրիս, էտ լիվի տեր վուր իս, ա՛խպեր (13):* Տե՛ս նաև էջ 25, 71: 4. Կսկծացնել: *Էրում է մըհլամըն, չե լավնում յարե՛ն (26):* 5. չ բ. փ խ բ. Այրվել, վառվել, տոչորվել: *Էրած, խորոված ման իմ գալի (57):* *Յիս խոմ էն գըլխեն էրած իմ, նուրմեկանց քաբաբ մի՛ անի (10):* Տե՛ս նաև էջ 24, 52, 74, 75:

ԷՐԻՏ (թհբ.) («Տալ» բալի *ան ց. կ ատ.* գրաբարյան ձևը) Տվեց: *Աստ-վսծ դիփունանցըն մին հոքի էրիտ (16):* Տե՛ս նաև էջ 28, 61:

ԷՐԾԱԹ (բբբ.), ի, կամ ծըթի, գ. 1. Արծաթ: *Անգածըտ էրծաթեն պիտի, գըլուկըտ ջավահիր քարած... քամանչա (1):* Տե՛ս նաև էջ 59: 2. փ խ բ. Շատ սիրելի, թանկագին: *Իմ սիրմա էրծաթ ախպեր (13, 56):*

ԷՐԾԱԹԵ (բբբ.), ա ծ. Արծաթե, արծաթյա: *Էրծաթե կողպերով կոխպած, դուն օսկե ռապա իս (40):* *Գըլխիս էրծաթե թաջ չունիմ (45):*

ԷՐԿԱԹ (բբբ.), ի, կամ կրթի, գ. Երկաթ: *Սիմրտ օսկեն քաշած պիտի, երկաթրտ փանջարա արած (1):*

ԷՐԿԸԹԵ (բբբ.), ա ծ. Երկաթյա, երկաթե: *Ճըտիտ համա էրկըթե կըրկալ ունիմ (58):*

ԷՐԿՈՒ (բբբ.), թ. Երկու: *Ով թիվ խալան մըտիկ տա՝ դառնա էրկու աչկով կուր (13):* ☉ *Էրկու շինիլ—*երկու տարբեր դրուսյան մեջ դնել: *Ածողիտ էրկու կու շինիս*.* առաջ չալի, դափա գուպիս, կու մեծորվիս այվնումուն, պարապ վախտի րափա գուպիս (1):

* Սալաթ-Նովան դիմելով քամանչային՝ ասում է Նվագողիդ երկու դրուսյան մեջ ես դնում, նախ սրահում նվագողը հյուրասիրվում է թելով, հետո սուրճով, որպես հանգստություն, ապա (տե՛ս երգի հաջորդ տողերում) մտնելով խնջուլքի մեջ՝ ուրախ ժամանց է անցկացնում և գեղեցկուհիներով շրջապատված՝ խնջուլքի կեսն է կալմում (այսինքն խնջուլքի հմայքի կեսը քաման-

ԷՐԿՈՒՍ (բբբ.), կըսի, նույնն է՝ Էրկու: Գուպիբ էրկսիտ մետի մեաշ սը-
ղոցիմ (59):

ԷՐՆԵԿ, տե՛ս Էրանի: Սայաթ-Նովա, էրնեկ քիզ (16):

ԷՐՎԻԼ, վեցի, հրմ. էրվի, չբ. 1. փխբ. Այրվել (սիրուց), տոչորվել: Մո-
ղըտ նըստողըն կու էրվի (34): Էշխըն վառ կըրակ է, էրվելով գու քա (18):
Տե՛ս նաև էջ 10, 18, 19, 34, 41, 41, 42, 42, 50, 65 (11 անգամ): 2. Ցավից
մորմոքվել: Սիրտըս յարալու շինեցիր, էրվում իմ մորմոնջալի (22): Տե՛ս նաև
էջ 39, 41:

Ը

ԸԼԻԼ (բբբ.) (ա ն ց. կ ա տ. էլա, էլավ, վ ա ղ ա կ. էլի, պ ա յ մ. կուլիմ, կու-
լիս, կուլի հոգն. կուլիք, կուլին), չբ. 1. Գուլություն ունենալ, լինել:
Թեգուզ ըլիմ, թեգուզ չըլիմ, մեջլիսներուն սազ չի պակսի (10): 2. Պատահել,
տեղի ունենալ (որևէ բան): Էս ի՛նչ էլավ ինձ հիր (63): Վուր տիղ հարսնիք,
վուր տիղըն սուք, վուր տիղ սոյբաթ խաղ է ըլում (37): Տե՛ս նաև էջ 25, 26,
37, 53: 3. Գտնվել որևէ վայրում՝ տեղում: Ինչ տիղ կուլիս՝ շնուք կու տաս՝
մեջլիսի մազա իս, ա՛վիզ (40): Վարթըն էյվընումըն կուլի (54): 4. Գտնվել
որևէ դրության մեջ: Լեյլի-Մեջլումըն էլ չի էլի էս հալով (20): Տե՛ս նաև էջ
34, 34, 64, 66, 66: 5. Ստեղծված լինել: Թեգուզ վար վարբար հաքընիս, վուր
չըլի ասըլջադեմեն (61): 6. Պատկանել: Աշխարքըս բունըն ըլի, ի՛նչ պիտիս
տանի (16): Դուն պատվական ջավահիր իս, էրնեկ բու առնողին ըլի (35):
Տե՛ս նաև էջ 51, 51: 7. Դառնալ մի բան, վերածվել մի բանի: Աչկերուտ ունքի-
րըտ էլավ մուհաջար (11, 15): Խաղ իս էլի Սայաթ-Նովա, դաղ իս էլի Սայաթ-
Նովա, բաղ իս էլի Սայաթ-Նովա (6): 2ուրս բոլորքըն ծաղիկնիր ին, ճամփին
փիանդազ ըլիով (54): Տե՛ս նաև էջ 16, 24, 24, 24, 25, 66: 8. Որևէ հատկա-
նիշ կամ հատկություն ունենալ: Թեգուզ մըտոք ճարտար ըլի, կանց Սողմոն
դադա ըլի... թեգուզ սադափ սադա ըլի... դիփունին կու ախտիս, գո՛վալ (34):
Տե՛ս նաև էջ 71: 9. Որակ ունենալ: Մազեն մե սահաթ չավ կուլի, դուն համան
թազա իս, գո՛վալ (40): 10. Հաջողվել, գլուխ գալ, հարմարվել: Ինչո՞վ չէլա՛:
չըռաստ էկար, մե չավ յարի Սայաթ-Նովա (57): 11. Վիճակված լինել. ելթու-
կա լինել: Էս իմ դարդից թուղ վուր օշով չը քաշի, Օշով չըլի սիրեկանեն դուս
արած (63): 12. Լրանալ, ամբողջանալ: Սայաթ-Նովա, տարիտ էլավ քարասուն
(51): 13. Կազմում է բայի հարակատար ժամանակը: Թող դըռանըտ նընգած
ըլիմ օտար բարեկամի նըման (47): Տարին տասներկու ամիս մապիրըտ հուսած
կուլի (14): 14. Կազմում է բաղադրյալ բայեր ու դարձվածքներ գոյական և
ածական անունների հետ: Բաց ըլիլ—բացվել, ծաղկել, փթթել: Վարթի հիր բաց
իս էլի (3): Տե՛ս նաև էջ 14, 26, 54, 71: Թաց ըլիլ—թրջվել, թացվել, ցողվել:

չան է): Տե՛ս Մ. Հ ա ս ր ա թ յ ա ն, Սայաթ-Նովայի խաղերի ժողովածու,
1959 թ., հայերեն առաջին խաղի ծանոթագրություն, էջ 215. վերջին պարբե-
րություն:

Վարթաշիրով թաց իս էլի (3) : Տե՛ս նաև էջ 26, 27 : Լաց ըլիլ—լալ : Հա՛ լաց էլա, վա՛յ կանչեցի անհաշիվ (63) : Բըլթուլի հիդ լաց իս էլի (3) : Տե՛ս նաև էջ 26, 57, 60 : Կես ըլիլ—կիսվել : Հալբաթ սերըն կես է էլի, վուր միպի ատիլ է ուզում (43) : Նման ըլիլ—նմանվել : Բու պաթըն բու նըման կուլի (25) : 15. Օտար բառերի հետ նույնպես կապմում է բաղադրյալ բալիբ : Արբաբ ըլիլ—ճարտար՝ ձեռնհաս լինել : Բանի գուլե արբաբ ըլի՝ դուլըն աղին դավ տալու չե (10) : Բեդամաղ ըլիլ—նեղանալ, սրտնեղել : (Յարը) Բեդամաղ չըլի միպսնից (6) : Տե՛ս նաև էջ 36, 53 : Չավալ ըլիլ—վնասվել, դժբախտանալ : Յա ր, բիզ իսկի կավալ չըլի (39) : Ղուրբան ըլիլ—մատաղ լինել, զոհաբերվել : Ղուրբան ըլիմ մուրվաթունըն (17) : Նալաթ ըլիլ—անհծվել, նպովվել : Հուս կաթնակիր—Աթամի կաթ, նալաթ ըլի էտ բու բափին (53) : Չաղ ըլիլ—ուրախ լինել : Յիս բու խոսկեն չիմ անց կենա, թաբ բու դամաղըն չաղ ըլի (23) : Չունուն շիլ—ցնորվել (սիրուց) : Էշխեմետ ջունուն իմ էլի, ման իմ գալի յանա-յանա (31) : Տե՛ս նաև էջ 60 : Սազ ըլիլ—հարմարվել, պատշաճել : Վարթըն էյվընունըն կու՛ի, նամ-նամ արխին սազ ըլիլով (54) : Սաղ ըլիլ—ողջ-առողջ լինել : Թաբ յիս միռ-նիմ՝ դուն սաղ ըլիս, էշխրտ իմ գիրիվման է (22) : Տե՛ս նաև էջ 34 (5 անգամ) : Թ Անդանակ ըլիլ—անդանակ մորթվել, փ ի բ. տանջվել, չարչարվել : Էշխեմետ անդանակ էլա, եկ մորթե՛ ջալաթըն դուն իս (38) : Էրնեկ ըլիլ—երանի է : Էրնեկ ըլի բու տիրուչըն՝ մըտիկ տալեն չի բեզարի (38) : Ի՛նչ կուլի—խնդրելու՝ աղաչելու ձև : Ի՛նչ կուլի մեկ հիդըս խոսիս, թե վուր Սայաթ-Նովու յադ յու (24) : Տե՛ս նաև էջ 62 : Հենչաբ ըլիլ—այնքան որ, միայն թե : Ղաբուլ ունիմ բու խաթուր ինծ սըպանին, Հենչաբ ըլի, յար, գաս իմ գերեզմանին (17) : Յիս էն մահին մահ չիմ ասի, Հենչաբ ըլի դուն վըրես լաս մազըտ շաղ տալով (31) : Մատաղ ըլիլ—զոհաբերվել, կյանքը զոհաբերել մեկի համար : Ախպոր ճամփին կինըջս մատաղ ըլի թող (63) : Տե՛ս նաև էջ 36 : Մեկ չըլիլ—միևնույնը՝ նույնը չլինել, փոխվել : Մարթ համաշա մեկ չի՝ ըլի,—խաղերումեն բեզարի իմ (53) :

ԸՆԳՆԻԼ (բրբ.), ընգա, չբ. հասակվել, տարվել մի բանով : Էշխըն ընգ-նիլ—սիրով լցվել, սիրահարվել : Ինծ սիրեցիր էշխըն ընգար, խաղի դավթուր իմ բիզ ամա (23) :

ԸՍԿԸՍԳԻՆԱԿԱՆ (բրբ.), ա ծ. Սկզբնական, սկզբի : Յիս կանչում իմ մե-րանին, ըսկըսպնական մերանին (11) :

ԸՏ, հայերեն այբուբենի «Ը» տառի անունը, ըթ : Ը, ըտ, Էրեսիտ դի թո ու ալիբ թո (50) (Երեսիդ դիր թաթ—համեստ եղիր, ամոթխած եղիր) :

Թ

ԹԱԲԱՂ¹ (ադրբ.), ի, գ. Մեծ մատուցարան : Հասիլ է ծուցիտ շամամըն՝ օսկե թաբաղին կարոտ է (30) :

ԹԱԲԱՂ² (արաբ.), ի, գ. Կաշեգործ : Շահի զուրիաթ թաբաղըն Չի հար-ցընի դուգուն դաղըն* (6) :

* Շահի արքայական կաշեգործը խարանում՝ դաղում է մաշկը՝ հաշվի չառ-

ԹԱԲԻԲ (արաբ.), ի. գ. Բժիշկ: Սըրտի դարդըս յիդ անում իս, Յիդ արա, տի՛ս Թե թաբիբ իս (6): էջ 14:

ԹԱԳ, ի. գ. Գլխի վարդարուն ծածկոց, որ կրում էին թագավորները՝ ի նշան իրենց իշխանության: Թարապուրի թագի լա;իդ բարն իմ (26): Տե՛ս նաև էջ 40, 80, 82: Թագ ու պարծան—որևէ բանի կամ տեղի հպարտությունը, փառքը, պարծանքը: Թագ ու պարծան իս կուսանանց (61):

ԹԱԶԱ (պարսկ.), ա ծ. Նոր, թարմ: Թազա նուգբար իս, գովելի (7):

ԹԱՆԻԼ (բրբ.), եցի, հրմ. թալնի, ն բ. Թալանել, կողոպտել: Իմ թալ-նիլը բու բանըն էր (66):

ԹԱՀԱՐ, ԹԱՀՐ (արաբ.), ա ծ. գ. 1. Կերպ, գործածության եղանակ: Տես-նողըն թահրըն չի գիդի՝ մե հեստի քարգահ իմ բերի (15): 2. Տեսակ: Ուրիշ թահար իս, գո՛վելի (7): 3. Կերպարանք, տեսք: Ով բու սուրաթըն տեսնում է, ասում է թահարիտ էրենկ (25): Թահարըտ ռանգե ռանգ իս անում (2): Տե՛ս նաև էջ 54: Թահր ունենալ—տեսք ունենալ, տեսքով գրավել: Ծիպուտըտ վարաղնած պիտի, թահրը ունենա հապար ռանգով (1): Տե՛ս նաև էջ 54:

ԹԱՂՂ, ի. գ. 1. Պատուհանի կամ դռան կամարածև շարված մասը, կամար, թաղակապ, դուռ՝ պատուհան: Աշխարր՝ մե փանջարա է,—թաղերումեն բեզա-րիլ իմ (53): 2. Ն մ ան, կամարածև լուսապակ: Յիդգնուց լուսըն վըրեստ կամար-թաղ արին, Մոդնու սուրփ Գևուրք (62):

ԹԱՂՔ, ԹԱՂԱ, ի. գ. Գետնատարած բույսի ճյուղերը և նրա թուփը: Շա-մամնիրըտ թաղի մեչըն, ման իս գալի բաղի մեչըն (41):

ԹԱՂՁԱ (արաբ., պարսկ.), չի գ. Պատի մեջ փորված կամարակապ դա-րակ՝ ամաններ, մրգեր դնելու համար: Մըշկով լիթըն բրոլի պես, թաղշումըն շնուք կու տաս (14):

ԹԱՄԱՄ (արաբ.) 1. ա ծ. Բովանդակ, ողջ, ամբողջ: Թամամ աշխար պտուտ էկա (35): Տե՛ս նաև էջ 11: 2. մ. Լրիվ, ամբողջական, ամբողջապես: (Տերը) Բըշից դըրախտեն, բանի վուր պատվիրբը չը պահին թամամ (64): Տե՛ս նաև էջ 27, 34: 3. Կատարյալ, կատարելապես: Ամեն սապի մեչըն գոված դուն թամամ տասըն իս, բամանչա (1): 4. Համակ, համատարած: Թամամ մուք բըռնից աշխարք (64):

ԹԱՄԱՄԻԼ (բրբ.), եցի, չ բ. Լրանալ, ամբողջանալ: Ասում ին—տարիքըտ թամամից, լաց ու ողփա, Սալաթ-Նովա (67): Տե՛ս նաև էջ 34, 34:

ԹԱՄԱՇԱ (պարսկ.), չի, գ. Տեսարան, տեսնելու՝ նայելու արժանի բան: Առուտեհան թիվ թամաշան շանց կու տամ (58): Թամաշա իս, վարթի ռանգ իս (6):

ԹԱՄԲ, ի. գ. Թամբ: Չուրս գրխսմի ռաշի վրենն աջալըն դըրիլ է թամ-բըն (44):

ԹԱՅԳՈՒԼ, ԹԱՅԻԳՈՒԼ (պարսկ.), ի. գ. Ծաղկեփունջ: Սուփրի մեչըն

նեկով վերքերը: Տես Մ. Հ ա ս ր ա թ յ ա ն, Սալաթ-Նովայի խաղերի ժողովածու, 1959, Թաբաղ 1-ին:

թախուցի պես... բաց իս էլի դուն գուլի պես (6), էջ 14: Բըլբուլըն միտըն ածալ
աեհնոլ կապած թախուցին (33): Տե՛ս նաև էջ 14, 55:

ԹԱՆԱՔ, թանքի, գ. Ղալամըն գիրըս չէ գըրում մե չուրացած թանքի
նըման (36):

ԹԱՆԳ, ա ծ. Թանկ: Թանգ հախով գընած չըրաղ իմ (8): Տե՛ս նաև
էջ 61:

ԹԱՌԱՄԻԼ, եցի, չբ. Թոշնել, թառամել: Թառամեցալ կարմիր վարթըն,
բաղըն բըլբուլ չէ գալի (22): Տե՛ս նաև էջ 14:

ԹԱՋ (արաբ.), ի, գ. Թագ: Գըլխիս էրծաթե թաջ չունիմ (45): Թաքավու-
րի թաջի ջիղա (46):

ԹԱՍ (արաբ.), ի, գ. Լայնաբերան և տափակ աման՝ արծաթից, ոսկուց
կամ կավից, ըսպանակ: Ածա, խըմինք օսկե թասով (25): Անուշահամ գինով
լիքըն դուն օսկե թասն իս, բամանչա (1): Խըմեցուր ձեռիտ թասեմեն (32):
Տե՛ս նաև էջ 36, 37, 42, 89:

ԹԱՍԼԻԲ (պարսկ.), ի, գ. Ոտանավորի ձև, որի տների վերջին ոտքերը
կրկնվում են կամ շատ նման են հնչում, երբեմն էլ կրկնեթգի ձևով: Թա-
լիք օսմանցոց մուղամ: Էջ 9, 23, 35, 48, 58 տողատակերի ծանոթագրություն-
ներում:

ԹԱՍԼԻԲ-ՄՈՒՂԱԼԻԲ (պարսկ.) Ոտանավորի ձև կամ երգի անուն: Ըս-
պես թասլիք-մուղալիփի հանգում (22-րդ խաղի տողատակի ծանոթ.):

ԹԱՎԱՋԱ (արաբ.), պի, գ. Հրամցնելը, հյուրասիրում, մատուցում: Լավա-
շում փաթաթած թավապեն իս իմ (59):

ԹԱՎՈՒՐ (արաբ.), ա ծ. Տեսակ: Էտ ի՛նչ թավուր բան իս անում (6):

ԹԱՐԳԱՆԱԼ (պարսկ. հայ.), չբ. Լքել, հրաժարվել: Էրեսըտ... բանի կեհա
կու կարգանա... ծառըն ծառին չի թարգանա (40): (հանգի համար հարմա-
րեցրած բառ):

ԹԱՐԻԲ (արաբ.), ի, գ. Գուլք, մեծարանք: Գուլքըտ ասիմ թարիփի պես
(31): Տե՛ս նաև էջ 22, 50: ☉ Թարիփ անիլ—գովել, մեծարել: Թարիփըտ
դավթար իմ արի (7): Տե՛ս նաև էջ 31, 37, 46:

ԹԱՅ, գ. ա ծ. 1. Թրջված: Աչկ խավրի, անգած խուլանա՝ էրեսըտ թաց
չը տեսնե (5): Աչկըս թաց, բերանըս ցամաք (57): ☉ Թաց անիլ—թրջել:
Դոշըս ու լախես թաց է անում (57): Թաց ըլիլ—թրջվել: Վարթաջըրով թաց իս
էլի (3): Տե՛ս նաև էջ 8, 26, 64:

ԹԱՅԻԼ, եցի, չբ. ն բ. Թրջել, թացացնել: Աչկիրըս արնով թացիլ իմ (27):

ԹԱՅՎԻԼ, չբ. Թրջվել: Յիրգնային նամով թուփըն թացվիլ է (29):

ԹԱՔ (աղբբ.), կ. Միայն, միայն թե: Թաք իս միռնիմ, դուն սաղ բէս
(22): Տե՛ս նաև էջ 14, 15, 34, 34, 34, 36, 36, 36, 38, 42, 44, 50, 52, 56, 68:

ԹԱՔԱՎՈՒՐ (թիբ.), ի, գ. Թագավոր, միապետ, արքա: Դուն ինքնակալ
թաքավուր իս (4): Թաքավորի թագի լալիղ բար իմ (26): Տե՛ս նաև էջ 10,
14, 40, 45, 54, 55, 56, 63, 68: 2. ա ծ. Ուժեղ, հզոր: Չը կա քիզ պես հուլմի-
հեքիմ՝ դուն Ռոստոմի Ջալ թաքավուր (10): Տե՛ս նաև էջ 64: 3. փ ի բ. Տեր,

հրամայող, ինքնիշխան, իշխանավոր: *Թաքավոր իս, դիվանըս արա* (54):
Դուն մե թաքավոր իս, յիս մե խիղճ դավրիշ (55):

ԹԱԲԱՎՈՒՐ², Բառախաղ. կազմված բրբ. *թաք* «ով» և *ավոր* (գրբ. «օր» բառի ս ե ո հ ո լ.) բառերից: *Հազար տարին մարթու աչկին թաքավոր*^{*} (51):

ԹԵ, 2. 1. Կապում է գլխավոր նախադասությունը երկրորդական նախադասության հետ, որն արտահայտում է գլխավոր նախադասության ենթակայի խոսքերը կամ միտքը՝ նպատակը: *Ասի թե «էշխենտ չիմ հանգչում տանըս»* (26): *Ասի՛ թե յիս բու ախպեր, բու մեր ինձի մեր անին* (11): *Անց մի՛ կենա թե հալալ իս* (6): *Յիս քիզանից չիմ հիռանա, թե չը հասնի մահիս վաղեն* (7): *Տե՛ս նակ էջ 10, 17, 17, 18, 20, 20, 20, 22, 24, 25, 28, 30, 30, 37, 39* (6 անգամ), 45, 57, 60, 61, 62, 64, 69, 70, 72, 73, 84, 86, 89: 2. Եթե: *Չիմ լաց լի՛ թե ճար ունենամ* (8): *Թե քիզ ավել յադ յար սիրիմ, ումբրես չանիմ խեր, նա՛զանի* (56): *Թե մանիշակ ասիմ՝ սարեմեն կոսին* (19): *Տե՛ս նակ էջ 7, 28, 31, 31, 49, 53, 53, 56*: 3. Որ: *Չէ թող թե մուրապին հասնին, էս ի՛նչ արավ բավթար դարին* (52): *Գուպիմ թե համաշա դըռանըտ գամ ուլստ* (19): *Տե՛ս նակ էջ 27, 29*: 4. Էլ: *Վունց միռնում իմ, վունց թե սաղ իմ* (8): 5. Յուլց է տալիս նախկինում ասածի կամ գործի հակառակ վիճակը, չէ՛ որ: *Թե դուն ասիր յադ յար չունիմ, իղարբըտ էտ էր, նազանի* (45): *Թե-թե*—կապում է երկու կամ ավելի միտք՝ միացնելով, գումարելով, մեկն էլ, մյուսն էլ, այս էլ, այն էլ: *Թե խամ հաքնիս, թե վար հաքնիս, կու շինիս դումաշ, նազանի* (35): *Թե չէ*—այլապես, եթե ոչ, հակառակ դեպքում: *Գընա թե խիլք ունիս՝ գըլիխտ ճար արա, թե չէ անիլ կու տամ քիզ փարա-փարա* (26): *Տերն ասաց չուտիք էս բար, թե չէ կու տեսնիք մինձ վարար* (64): *Տե՛ս նակ էջ 56, 84, 85*: *Թե վուր կամ թե որ*—եթե: *Թե վուր սարերուն հանդիբիս, կու հալիս մումի նըման* (4): *Թե որ չիմանաս՝ հարցրու* (8-րդ խաղի տողատակի ծանոթ.): *Տե՛ս նակ էջ 10, 11*:

ԹԵԳՈՒԻԶ, **ԹԵՎՈՒԻԶ** (բրբ.), մ. Թեկուպ, նուլինսկ, եթե: *Թեգուպ ըլիմ, թեգուպ չըլիմ՝ մեջլիսներուն սապ չի պակսի* (10): *Թեգուպ նընգնիմ ծովի մեջըն՝ հովնալու ճար չիս անի* (4): *Տե՛ս նակ էջ 7, 15, 20, 24, 24, 24, 27, 32, 36, 36, 45, 45, 46, 50, 50, 50, 50, 50, 53, 53, 59, 59, 59, 59, 59, 60, 61, 64, 64, 64, 75*: *Թեկուպ սաղափ սաղա ըլի... դիփունին կու ախտիս, գո՛վալ* (34): Էջ 50:

ԹԵԶՆԻՍ (արաբ). ի, գ. Բառախաղով կազմված ոտանավոր, աշուղական տաղաչափության մի ձև: *Յիս կանչում իմ յարանին, թեջնիս, վարսաղ, յարանին* (11):

ԹԵՐԹԵՐՈՒԿ (բրբ.), ի, գ. Աչքի արտևանուցի (կուպերի) ծայրերին բուսած կարճ ու կարճ մազերի շարք, թարթիչ. արտևանուց: *Թերթերուկըտ նիտ ու նաշտար* (35): *Տե՛ս նակ էջ 21, 55, 72, 78*:

* *Թաքավոր* = թաք ավոր: *Հազար տարին մարթու աչկին թաքավոր* (51) — այսինքն՝ հազար տարին մարդու համար մեկ օր է թվում: *Տե՛ս Մ. Հ ա ս ա թ յ ա ն*, Սայաթ-Նովայի խաղերի ժողովածու. 1959, էջ 68:

ԹԹՎԻԼ, չբ. Թթվել: Փխբ. անբավական լինել, տրտում լինել: *Դասնացավ, թթվեցավ կինքըս ծովացավ* (51):

ԹԻԼ (թիբ.), ի, գ. Թել: *Շաղ տու վրենս դաստամապի թիլի շաղեն* (7): *Օսկե թիլըտ շաղմաղում իս* (46): Տե՛ս նաև էջ 51, 63, 66:

ԹԻԼԱ (արաբ.), լի, գ. Ոսկի: *Ակնիր ունիմ լալ ու թիլա* (15): *Ջամ-հալի-լա, լալ ու թիլա* (6): էջ 13:

ԹԻԿՈՒՆՔ, ի, գ. Ուտեր: *Լըցվի է դոշտ ու թիկունքըտ* (30):

ԹԻՂ (թիբ.) ի, գ. Նետի սուր ծայրը, սլաք: *Նիտըս քարումըն կոտրեցի, թիղի համա իմ լալի* (36):

ԹԻՐՄԱՆ (պարսկ.), միայն թիրման շալ կապակցությամբ: Ձեռագործ թանկագին շալ, Բիշմիրի շալ: *Բարակ միչկիտ թիրման շալըն նըման է օսկե քամարին* (35): Տե՛ս նաև էջ 65:

ԹԼԱՆԱԼ (բբբ.) ացա, չբ. Թուլանալ, ուժասպառ լինել: *Չիռնիրըս թըլուցավ, չէ շինում՝բանըս* (26):

ԹՇՆԱՄԻ, մու, գ. (հո գ ն.—իք): *Թուղ դոստիրըս շատանան, թըշնանիրըս մեռանին* (11):

ԹՈ, գ. Հալերեն այբուբենի «Թ» տառի անունը: *Է ըտ էրեսիտ դի թո ու ալիբ թո** (50): էջ 67 (6 անգամ):

ԹՈԼԱ (թիբ.). լի գ. Կտավը մաքրելու՝ սպիտակեցնելու կալաքարի ջուր: *Թոլով չի սիպտակի սիվըն* (3):

ԹՈՂ (հո ր. և դ. «թողնել» բայի), երանի թե, կուլեի որ (իղձ՝ արտահայտելու բացականչություն): *Թող դըռանըտ նընգած ըլիմ* (47):

ԹՈՂՆԻԼ (թողի, հո ր. թող, ա ր գ. մի՛ թողնի): ն բ. 1. Թուլլ տալ, թողնել, չարգելել: *Բաշվի է վարթըն մող չի թողնում, խարեն էրված իմ* (48): Տե՛ս նաև էջ 26, 47: *Մի՛ թողնի ճուխկըտ քաղելու* (54): 2. Անտեսել, անփուլթ լի-նել, հոգատար չլինել: *Չի՛մ թողնի արեգագումըն՝ բաղչի սաջար իմ քիլ ամա* (23): *Տիսուտ կարոտ չը թողնիս* (65): 3. Բացառել, նկատի չառնել: *Թամամ աշխար պտուտ եկա, չը թողի Հաբաշ, նա՛վանի* (35): 4. Բաց թողնել, ապաստել: (էշխը) *բըռնածին չի թողնի, դայիմ չանգ ունե* (18): 5. Սպասել որ հասնի, ծաղկի: *Վարթիս խարըն շատացի է, չին թողնում վախտին բացվելու* (53): 6. Պահել մի նպատակի համար: *Ազատից հոքիբը, բան չը թողից քամ* (64): 7. Նկատի չառնել, վանց անել, բացառել: *Խոսրով փաշայնենն թողած, դուն թովուլի տախտ իս, գոպալ* (34): *Սկանդարի Ջուլարեն թողած, ջնաղ հեքալ արմանալու* (46): Տե՛ս նաև էջ 63:

ԹՈՂՈՒԹՅՈՒՆ, թյան, գ. Ներումն, ներողություն: ☉ *Թողություն շնորհել*—(կրոն.)—ներել: *Աստված թողություն շնորհե* (34-րդ խաղի ծանոթ.): *Ով որ սովորի, թողություն շնորհի* (24-րդ խաղի տողատակի ծանոթ.):

* Թո ու ալիբ թո = թաթ: *Էրեսիտ դի թո ու ալիբ թո* = երեսիղ դիր թաթ, այսինքն համեստ եղիր: Տե՛ս Մ. Հասրաթյան, Սայաթ-Նովայի խաղերի ժողովածու, 1959, էջ 67:

[ԹՈՌ] (թուրք.), ի, գ. Ցանց, ուռկան: [Կամով ընկավ չարի թռչն] (64):

ԹՈՎՈՒԶ (ադրբ.), ի, գ. Սիրամարգ: ☉ Թովուպի տախտ—թագավորական զահ, որ իր կամարածն ծածկոցի վրա ուներ անգին քարերից հյուսած սիրամարգի պատկեր: Փխբ. Շատ գեղեցիկ՝ հմայիչ պատկեր, գեղեցկություն: Դուն թովուպի տախտ իս, գո՛ւզալ (34):

ԹՈՓ (ադրբ.), ի, ա ծ. Բավմաթերթ, գնդածն: Բըլբուլին սըպանող թոփ վարթի սաջար (55):

ԹՈՉԻԼ, թռա, թռի, չբ. Թռչել: Գուպիմ թռչի բըլբուլի պես (53):

ԹՈՅՆԻԼ, ցու, նբ. Թոցնել, փխբ. Հեռացնել, վանել: Դու ինձ շուտով մի՛ թռցնի (40):

ԹՈՒԹ. ի, գ. Բաղցըր թութթա դառը լիղի շինեցի (63):

ԹՈՒԹԻ ՂՈՒՇ (կազմված է պարսկ. թութի—թութակ և ադրբ. դուշ--թռչուն բառերից): գ. Թութակ: Յիփ նըստում իս թութի դուշ իս (35):

ԹՈՒԽՏ (բրբ.), թխտի, գ. Թուղթ: Լիպուտ՝ գըրիչ ունիս, ծեռտ գուզգապ թուխտ (19): Թըխտիրըտ օսկե վարաղով Ամամվուր իս ճառ բացարած (39):

ԹՈՒԼԱՆԱԼ, չբ. Նվաղել, թալկանալ: Սիրտըս փուրումըս թուլացավ (57):

ԹՈՒՂ (թիբ.), 1. Նույնն է՝ Թող: Թուղ վըրես լալով պտուտ գամ, վարթի կարոտ բըլբուլի պես (40): Թուղ բի սելր անիմ (29): Տե՛ս նաև էջ 26, 56, 83: 2. Փուլթ չե, ինչ ուզում է լինի: Էլ լի՛ս կու բաշիմ էս դուսեն՝ թուղ լի ահուպար ունենամ (8): Տե՛ս նաև էջ 22, 26:

ԹՈՒԻՐ, թրի, գ. Սուր: Բու թուրըն սարդարի բաբաթ (47): Տե՛ս նաև էջ 47:

ԹՈՒԻՐԱ-ԹՈՒԻՐԱ (արաբ.), ա ծ. Տեսակ-տեսակ: Մարքարիտով լիքն կալ իս, սադափնիրըտ թուրա-թուրա (40):

ԹՈՒՐԼՈՒ (ադրբ.), ա ծ. Տեսակ, վանալան: Հապար թուրլու կերպուր սուրփ գինի անապական (13): Հաքիլ իս ատլաս, թուրլու վար ու խասս (29):

ԹՈՒՐՔԵՐԵՆ, ի, գ. Թուրքերեն էլ ուզում էի հետըն խառնել, բայց չխառնեցի (5-րդ խաղի սողատակի ծանոթ.):

ԹՈՒՓ, թիփ, գ. 1. Փոքր ծառ: 2. Նոր տնկած՝ նոր փթթող բույս: Յիրգ-նալին նամով թուփըն բացվիլ է (29):

ԹՈՒԻՔ (թիբ.). ի, գ. Թոք, թոքեր: Սիրտ ու թուլըս վարդ իս արի (13):

Ժ

ԺԱԺ. առանձին անգործածական. գործ է ածվում գալ բայի հետ: Ժած գալ—շարժվել: Յիփ տիղենետ ժած իս գալի, շըրշըղկում իս ջիղջիղի պես (2):

ԺԱՄ. ի, գ. 1. Ժամերգություն: Վուր տիղ ժամ, վուր տիղ պատարաք, վուր տիղ սիրով տաղ է ըլում (37): 2. Ժամանակ: Ժամըն ու ժամանակըն է նիղ (64): ☉ Ամեն ժամ—միշտ, մշտապես: Ով ունեցավ հուս ու հավատ... Տերն կու ճիշե ամեն ժամ (64):

ԺԱՄԱՆԱԿ, ի, գ. Աջաբ քանի ժամանակ է, թաք գիդենամ տարիտ, էրնեկ (25): Ժամանակ հասավ աչկիրիս լալու (50): Տե՛ս նաև էջ 85:

ԺԵ. գ. Հայերեն այբ/ւերենի «Ժ» տառի անունը: Ժե ժամանակ հասավ
աչկերիս լալու (50):

Ի

*ԻժՈՒՄ (թիբ.), մ. Հետո, այնժամ, ապա, այնուհետև: Յիսի միշտ՝ իժուս
տիս էկավ (33):

ԻԼԱՀԻ (արաբ.). ա ծ. գ. 1. Կարոտի, աղերսանքի, սիրո մտորումների
բովանդակությամբ ոտանավոր: Ըս Արուսիկի ասած է, իլահի (60-ի ծանոթ.):

ԻԼԱՋ (արաբ.), ի, գ. Միջոց, ճար, դեղ-դարման: Յիս քիզ ավել իլաջ
չունիմ (45):

ԻԼԹԻՄԱՋ (արաբ.), ի. գ. Խնդիրք, աղաչանք, աղերսանք: Խալսին էս
իլթիմավրն արա ասին. «ապրի քու ածողըն» (1): Յա՛ր, քիզիդ խոսիլ իմ
ուզում Շահի իլթիմապի նըման* (8): Տե՛ս նաև էջ 15, 15, 44, 44, 44, 44,
44, 46:

ԻԽՏԻԱՐ (արաբ.), ի. գ. Մեկի հանդեպ ազատ վարվելու իրավունք, իշ-
խանություն, արտոնություն, կամք: Տուր ինձի սըպանե՛ իխտիար ունիս (17):
⊙ Իխտիար իս—քո կամքն է: Նազ իս անում, իխտիար իս (6): («Նազ ես
անում. քո կամքն է»):

ԻՂԲԱԼ (արաբ.), ի. գ. Բարեբախտություն, հաջողություն: Թե վուր
ճանգըս ընգար, իս իղբալ ունիմ (58): Հենց ձեռովըտ կապեցիր, էնպես բուց
էր իղբալըս (66):

ԻՂՐԱՐ (արաբ.) ի. գ. 1. Խոստում: Իղրար ու ամագ չունեցող յարի ձեռ-
նեմեն դադ կոնիմ (68): Թե դուն ասիր յադ յար չունիմ, իղրարըտ էտ էր, նա՛-
զանի (45): Տե՛ս նաև էջ 85: 2. Խոստովանություն: Իղրար իման—երդումով
հաստատած խոստում: Սըրտումըս ունիմ իղրար իման (6): Սըրտումըս կա
ինթիպար իղրար (54): ⊙ Իղրարեմեն անց կենալ—խոստումնազանց լինել
խոստումը չպահել: Իղրարեմեն շուտ անց կացար, ո՛ւր է յարասուն տարին (22):
Տե՛ս նաև էջ 14, 15, 35: Իղրարին դրուտ կենալ—խոստմանը հավատարիմ
մնալ: Թաք իղրարին դրուտ կացի (6): Էջ 15: Իղրարով—խոսքի տեր, խոս-
տումին հավատարիմ: Իղրարով յար իմ քիզ ամա (23): Իղրար անիլ—ասել:
խոստովանել: Իղրար անիս, հոթիս հանիս, պըրծնիմ ահուկարեմեն (6):

ԻՄ՛, Տե՛ս էս: Չիս հարցընում իմ հալըս (66): Բի վարթըն էրից, ինձ իմ
յարրն (9):

ԻՄ՛ (թիբ.) (էական բայ. ս ա հ մ. և ղ. առաջին դեմք) Եմ (ս ա հ մ.
ն եր կ ա՛) յիս իմ, դուն իս, նա է, հ ո գ ն. մինք ինք, դուք իք, նրանք ին: Ա ն ց.
ա ն կ ա տ ար ը խոնարհվում է արդի գրական լեզվի նման՝ էի, էիր, էր, էինք,
էիք, էին): Աթառորթու սըրսի մուրազըն յիս իմ (59): Դժոխըլի ու դրախտի

* Շահի իլթիմապի նման—Շահին արժանի աղերսանքի պես:

դապեն յիս իմ (59) : Կովկիթըս կոտրիլ իմ, հայրսից խռով իմ (58) : Մեչըն շիմ կանացի մըտնի (36) (հանդիպում ենք գրեթե բոլոր խաղերում) :

ԻՄԱՆ (արաբ.), ի, գ. Հավատ, համոզվումը: Էս զամանի գոզայնեթուն ախրաթ ու իման չը մընաց (68) : Սըրտումըս ունիմ իղյար իման (6) : Էջ 15, 15, 90:

ԻՄԱՆԱԼ, ացա, ացի, ն բ. 1. Ըմբռնել, հասկանալ, խելամուտ լինել: Յիս էլ ուրիշ յար չունիմ, էս գըլխեն վաղ իմացի (14) : Տե՛ս նաև էջ 25, 26, 26, 26, 26, 53, 64, 73: 2. Գիտենալ, տեղյակ լինել: Հենց գիդիս՝ չիմ գիդի, յա՛ր, չի՛մ իմանում (26) : Արի մե դարդըս իմացի (41) : Տե՛ս նաև էջ 15, 60: 3. Համարել, կարծել, ընդունել: Հենց իմացի յար, բու դուլըն իմ (8) : Բունիաթըս ավազ չիմանաս՝ քարափ է, քարուկրեն է (10) : 4. Լսել: Անտակ ծովի միչեն հանած ակնիիր ունիմ լալ ու թիլա: Եատ մարթ էստունք կու իմանա, կոսե. «հալբաթ սա զանգին ա» (15) : 5. Զգալ, զգայարանների միջոցով գիտակցել: Անգրծակի մե ձեն էկալ դասեդաս, Անգաձ կալա, չիմացա ինչ հասասե (51) :

ԻՄԱՍՏՆԱՍԵՐ (հոգն. սեռ. իմաստնասիրաց), գ. Գիտություններ ուսումնասիրող, գիտնական, իմաստասեր, փիլիսոփա: Աշխարըս միլ մընալու չե՛ իմաստնասիրաց խաբարով (53) : Կանց յոթըն իմաստնասիրացըն շատ է էս բու Սայաթ-Նովու բանքիրըն մեմեկ (21) : Տե՛ս նաև էջ 60:

ԻՄԱՍՏՈՒՆ, ի, գ. (հոգն. սեռ. իմաստներու), 1. հույրք, բանիմաց, դաստող, հասկացող: Դուն են գըլխեն իմաստուն իս, խիլըտ հիմարին բաբ մի՛ անի (10) : 2. Իմաստասեր, փիլիսոփա: Խոսիկիրըտ մեմեկ չի ասվի՛ իմաստներու բանքի նրման (36) : Իմաստուննիրր չը տեսան էս աշխարիս հուտըն ու համ-րըն (44) :

ԻՆ, գ. Հայերեն այբուբենի «Ի» տառի անունը: Ին ինձի գըցեցիր դարդըս վուխպալու (50) :

ԻՆԹԻԶԱՐ (արաբ.), ի, գ. Ապասումն, կարոտով սպասելն: Սըրտումըս ինթիզար ունիմ (31) :

ԻՆԹԻԶԱՐ-ԻՂՐԱՐ (արաբ.), ի, գ. Ապասումի՝ կարոտի խոստում: Սըր-տումըս կա ինթիզար-իղրար (54) :

ԻՆՁ, ԻՆՁԻ տե՛ս Յիս: Բի վարթըն էրից, ինձ իմ յարըն (9) : Կու մեռնիմ, էլ ինձի պես չիս տեսանի (11) :

ԻՆՁ, դ. 1. Հարաբ. ած. դ.: Որ, որպիսի: Ինչ տիղ կուլիս՝ շնուք կու տասս (40) : 2. Նուլյնը գոյականաբար: Ո՛ր բանը: Յա՛ր, քիլ ինչո՛վ թարփի անիմ, աշխարումըս բան չը մընաց (24) : 3. Հարաբ. ած. դեր. Երկրորդական նախադասություն մեջ, որին համապատասխանում է գլխավորի մեջ ցուց. դեր.: Այնպիսի. նա, այն, նրան: Ինչ աչկ քիլ խայան մըտիկ տա, Զանում յար, կո՛ւր իմ ասի (32) : Ինչ ասիս կոնիլ տա, սերըն է անրսկամ (18) : 4. Նուլյնը՝ գոյականաբար: Ինչի դիբքիս նաղշ կոնիս (46) : 5. Հարգ. ած. դեր.: Ո՛ր, ո՛րպիսի: Սուչըս ինչ է, ասա ինձի (67) : Դասդաստանին յիս ինչ ջուլաբ տամ (64) : Տե՛ս նաև էջ 24, 83: 6. Նուլյնը՝ գոյականաբար: Ո՛ր բանը: Էս ինչ

ԻՍԿԻ (բրբ.), մ. Ոչ մի դեպքում, երբեք, բոլորովին: Իսկի չիս գալի, չիս ստում (13): Էջ 10, 24, 35, 55:

ԻՍԿՈՒՅՆ, մ. Անմիջապես, անհապաղ, շուտ: Դահիճըն իսկույն գըլ-խախտյաց (61):

ԻՍՍԱԿ, ա ծ. մ. Մաքուր, հստակ, անարատ: Դու քու սիրտըն իստակ պահե (10):

ԻՐ, դ. (ան ձ ն. դ ե թ. ե գ. 3-րդ դեմք) Իր, լուր: Զու տեսնողըն իր ճամփեմեն կու մողըրվի (2): Էջ 7, 32, 36, 40, 64, 71:

ԻՐԱՆ, դ. (ան ձ ն. դ ե թ ա ն. ի նքն-ի ե գ. տ յ. և հ ա յ գ. հ ո լ ո վ): Նրան: Ամեն մարթ իրանն է քաշում (67):

ԻՐԱՎ, գ. ա ծ. Իրավացի, արդար: Սայաթ-Նովու իսուկըն իրավ ու անիրավի մասին է (68):

ԻՐԱՐ, մ. Միմյանց: Ուշկ ու միտկըս իրար խառնեցիր (2): Էջ 33, 40:

ԻՐԵՔ, (բրբ.) թ. Երեք: Իրեք հարուր վացցուն ու վից ամեն անդամըտ դարարի (30): (Իրեք հարուր վացցուն ու վից = 366):

ԻՐԵՔ ԶՍԱՆ ՈՒ ՏԱՄՆ, թ. 70: Իրեք քսան ու տասըն խալըն էրեսիտ բուրբըն շար ա* (39):

Լ

ԼԱԼ¹ (լամ, լաս, լա, լացի, լաց, ն ե թ կ ա ն նակ՝ գու լամ, գու լաս, գու լա), չ բ. Լաց լինել, արտասուք թափել: Դու մի՛ լացի, յիս իմ լալու (9): Աչկըս լալիս է արին (2): Վադի ձեռնեմեն գու լամ յիս (67): Աչկըս գու լա հազարին (56): Տե՛ս նակ էջ 9, 13, 15, 16, 16, 18, 19 (10 անգամ), 21, 25, 26, 27, 38, 41, 45, 46, 52 (8 անգամ), 53, 56, 57, 60, 61, 61, 61, 64, 65, 67, 67, 69, 70, 74, 74, 89, 89, 89, 89: ☉ Լալ անիլ—լաց լինել: Դոստիրըս հիռու կանգնին, յադիրըն գան լալ անին (11): Աչկը արին լալ—ծանր վիշտ ունենալ: Աչկըս լալիս է արին (22): Տե՛ս նակ էջ 41:

ԼԱԼ² (պարսկ.), գ. ա ծ. Մունջ, համր: ☉ Լալ անիլ—լռեցնել, համրացնել: Բեդասլին վուր խոսեցնիս, լալ անիլըն ինչի՛ն է շահ (44): Վալ թե հասարաթետ մեռնիմ, բըլբուլ լիպուս լալ անին (11): Տե՛ս նակ էջ 8:

ԼԱԼ³ (պարսկ.), ի. գ. 1. Թանկագին քար, ակն, սուտակ, բուբին: Անտակ ծովի միչեն հանած ակնիր ունիմ լալ ու թիլա (15): Հուջըրես լիբըն է անգին լալով (15): Տե՛ս նակ էջ 5, 13, 13, 15, 21, 34, 37, 50, 53, 65, 83: 2. Պալ-ծառ, կարմիր գույն:

ԼԱԼԱ¹ (պարսկ.) լի (հ ո գ ն. լալեք). գ. Կակաշ: Խաղ կանչիք հանգով, լալեբըն ռանգով (29):

* Մ. Հասարթյանի ճիշտ մեկնաբանմամբ այս թիվը պետք է կարդալ ԳԻԺ: 3 = Գ, 20 = Ի, 10 = Ժ: Գիժ խալ, որը գծվեցնում՝ խենթացնում՝ հմայում է մարդուն: Տե՛ս Մ. Հ ա ս ր ա թ յ ա ն, Սայաթ-Նովայի հայերեն, վրացերեն և ադրբեջաներեն խաղերի ժողովածու, 1959, 39-րդ խաղի ծանոթագրությունը:

ԼԱԼԱՔ (պարսկ. լեյե), լի, գ. Սենեկապետ (թագավորական պալատի):
Շահ-Աբասի լալի նըման, շահի վեր գալուն մընում է (52):

ԼԱԼԱՆԻ բառախաղ՝ կազմված է լալ—թանկագին քար և Աննա բառերից*:
Յիս կանչում իմ լալանին (11):

ԼԱՄՋ (արաբ.), ի, գ. Ակնկալություն, քողարկված ձևով ասված խոսք
(ըստ Ախվերդյանի «անուշ խոսակցություն լավ արտաբերությամբ»): *Չենըտ
բաղըր ունիս, լամզով կու խոսիս (19):* ① *Լամզ ու բաս—ակնարկ, վարտուղի
հասկացնելու կերպ (ըստ Ռ. Աբրահամյանի «վեճ լավ տրամադրությամբ»):
Խոսկըտ ասա լամզ ու բասով (25):*

ԼԱՅԻՂ (արաբ.), մ. Արծանի, վայել: *Թաքավորի թագի լայիղ բարն իմ
(26): Չը կա փաշայի խապինումըն մալ քիպի լայիղ (48):* Էջ 65, 65, 65, 65,
65: ② *Լայիղ անիլ—արծանի գտնել: Գիդիմ վուր, յար դուն ինձ լայիղ չիս
անի (11):* Տե՛ս նաև էջ 79, 86:

ԼԱՆԳ (պարսկ.), միայն լանգ անիլ կապակցությամբ—օրորվել, շորոր-
վել, ճոճվել: *Աշխարքըն ծով, դուն մեչըն նավ, ման իս գալի, լանգ իս
անում (2):*

ԼԱՎ, ա ծ. Ընդհանրապես մարդուն հաճելի՝ դուրեկան բաների մասին:
1. Բարոյական սկզբունքներին համապատասխան, ակնիվ, բարձր: *Լավ մարթըն
էն է գըլուխըն պահէ աշխարումըս էթիբարով (53):* 2. Ախորժելի, հաճելի,
դուրեկան: *Կանց քիզ լավ հուտ չի ունենա Հընդու էկած դարանփիլըն (25):*
Տե՛ս նաև էջ 10, 11, 16, 43, 56: 3. Նվիրված, հավատարիմ, անդավաճան:
Ինչով չէլավ, չը ռաստ էկար մե լավ յարին, Սայաթ-Նովա (57): Տե՛ս նաև
էջ 26, 31: 4. Բախտավոր: *Ղաստ արա՝ Է՛լ լավ օրերու էդիվըն հասնիս, քա-
մանչա (1):* 5. գ. Ինչ որ լավ է, լավ բան: *Փիքըր ու խիալըս խիղճի, նաչարի,
տընանգի բարու ու լավի մասին է (68):* 6. գ. Բախտավորություն: *Գո՛վաւ,
աստված քիպի լավ տա, չուպողի աչկերուն ցավ տա (32):* 7. մ. Կատարյալ
կերպով, լրիվ: *Էրեկ լավ էր, կանց վուր էսօր (53): Արի մե ռահմ արա, լավ
կացի միպիդ (17): Ումնոր կանց միպի լավ սիրիս՝ աստված չարին թամամե
(22):* 8. Լիիրավ: *Յա՛ր, քիզ վըրեն արք ունենամ, մե լավ իխտիար ունենամ
(8):* 9. Էական բայի հետ կազմում է բաղադրյալ ստորոգյալ: *Արութինի ասած.
լավն է (18):*

ԼԱՎԱՆԱԼ (ացա կամ լավցա, հ ռ մ. լավցու) չ բ. Առողջանալ, բուժվել:
Վունչիչ դարով չը լավացավ մըհլամըս հիդ յարին մընաց (33):

ԼԱՎԱՇ (պարսկ.), ի, գ. Լավաջ հաց: *Լավաջում փաթաթած թավապեն
իս իմ (59):*

ԼԱՎՆԱԼ (բրբ.) Նույնն է՝ Լավանալ: *Էրում է մըհլամըն, չէ լավնում յա-
րեն (26):*

* Աննան վրաց. Հերակլ 2-րդ թագավորի քույրն էր, որին բանաստեղծը
անվանում է լալ—թանկագին քար: Տե՛ս Մ. Հ ա ս Ր ա թ Յ ա ն, Սայաթ-Նովայի
խաղերի ժողովածու, 1959, հայերեն 11-րդ խաղի ծանոթագրությունը:

ԼԱՐ, ի, գ. Աղեղի երկու ձայրի միջև պինդ ձգված առասան: Անդի լարն կլտրվի է (36): Ումբրիս լարը ձգիլ դադանգ իս արի (65):

ԼԱՑ, ի, գ. Ողբումն, ողբ: ☉ Լաց անիլ—լալ: Սիրտըս փուրումըս սքուր է, ալ աչկիրրս լաց է անում (57): Լաց ըլիլ—լալ, լաց լինել: Բըլբուլի հիդ լաց իս էլի (3): Դու մի՛ լաց լի, իս իմ լալու (9): Տե՛ս նաև էջ 18, 19, 19, 19, 19, 19, 26, 57, 64, 83:

ԼԱՑԻԼ, լացի, ճ ը մ. լաց, չ բ. Լաց լինել, լալ: Բըլբուլի: նրումն լացիլ իմ (27): Փոշման դառան ու լացեցին (64):

ԼԱՑՆԻԼ (թրբ.) ն բ. Լացացնել: Մանուշակ բացած հովին... Շատ մի լաց-նի Սայաթ-Նովին (27):

ԼԵՇ (պարսկ.), ի, գ. Մեռած մարմին (կենդանու), դի: Վայ թու դարին, դա՛րիբ բըլբուլ, լեջտ չափարին մընաց (33):

ԼԻ¹, ա ծ. 1. Լցված, լիբը, առատ: Էլ յի՛ս կու բաշիմ էս դուսեն՝ թուղ լի ահուզար ունենամ (8): Լուսով լի է տապանքն թո (61) 2. մ. Լիովին, ամբողջովին:

ԼԻ² (թրբ.). «Լինել» բայի սղված ձևը: Դու մի լաց լի, իս իմ լալու (9): Էջ 19, 19, 19, 19, 19, 19, 87:

ԼԻԲԱՍ (արաբ.), ի, գ. Հագուստ, վերնազգեստ: Սուչքս ի՛նչ է, ա՛սա ինձի, վուր հաքցրիր իմ չուվեցած սիվ ու սուբ լիբասըն ինձի (67):

ԼԻԶՈՒ (թրբ.), լիզվի, գ. 1. Լեզու (ճաշակելու և խոսելու օրգան): Լիզվով չիմ կանացի ասի, թեզուզ խոսկըս փար ունենամ (57): Նաև էջ 31, 37: 2. Առանձին անհատի խոսելու կերպը, արտահայտման եղանակը: Աշուղի լիզուն բըլբուլ է (33): 3. Մի հեղինակի բառամթերքը, ոճը: Վունցոր Սայաթ-Նովու լիզուն յոթանասուն բառ բացարած (39): 4. Եարտար խոսող՝ գրող: Զիռնիրըս՝ սրպիտակ մաքաղաթ, լիզուդ օսկե դալամի պես (39): 5. Մի բան հասկացնելու եղանակ՝ միջոց: Բըլբուլըն սարեմեն գու բա, իր լիզվովն լաղ կանչելով (54): ☉ Լիզու շինիլ—խոսեցնել, խոսել տալ: Բըլբուլին լիզու շինեցիր՝ դուն վարթի դըրախտ իս, գո՛վալ (34): Լիզվի տեր—ճարտար խոսող, խոսքով գրավող: Շատ մարթիբ քիպիտ կու էրիս, էտ լիզվի տեր վուր իս, ա՛խպեր (13): Դուշմանի լիզու—չարախոսող՝ կծու՝ խայթող լեզու: Դուշմանի լիզուն մընջանա Չարերով, Չարերով (41): Բըլբուլ լիզու—Լավ ասող-խոսող: Վայ թե հասարթեստ միռնիմ, բըլբուլ լիզուս լալ անին (11): Նաև էջ 69, 74: Հիւքերած լիզու—լեզուն բռնված, խոսելու անկարող (վշտից, ցավից): Աչկըս թաց, բերանըս ցամաք, լիզուս հիդքերած գիդենաք (57): Զաղցր լիզու—դուրեկան՝ գրավիչ՝ բարի խոսող: Զաղցր լիզվով ջան իս ասում (6): Մարիփաթով քաղցր լիզուն դիփունի վրոա անգին ա (15): Տե՛ս նաև էջ 26, 32, 49, 55, 64, 65:

ԼԻՂԻ (թրբ.), դու, գ. Դառնություն, որևէ դառնահամ բան: Զաղցր թուրս դառը լիղի շինեցի (63): Ով քիզ լիղի պարթիվե, դուն տու շաքար, Սայաթ-Նովա (37):

ԼԻՂՆՈՒՐԹ (թիբ.), ի. գ. Լողորդ: *Խիլքըս տանուլ տըված լիղնուրթ իմ դառի (63):*

ԼԻՆԻԼ, չբ. Լինել: *Կու լինի դատաստան ահիղ (64):*

ԼԻՐԹ (թիբ.), ի. գ. Լլարդ: *Լիրթ ու թուք—լլարդ և թոք: Լիրթ ու թուքըս պարդ իս արի (13):* («Լլարդ ու թոքս այրել իաշել ես»):

ԼԻԶՆ, ա ծ. 1. Լցված. լեցուն, լի: *Անուշահամ գինով լիքըն դուն օսկե թասըն իս, քամանչա (1):* Տե՛ս նաև էջ 26, 27, 37, 50, 56, 61: 2. Առատությամբ, շատ: *Մանուշակով լիքըն սարիր (33):*

ԼՅՈՒՆ, գ. Հայերեն այբուբենի «Լ» տառի անունը: *Լլուն լալով իմ լիս աշխարիս մընալու (50):*

ԼՈՂ, ի. գ. Լողալը: ☉ *Լող տալ—լողալ, լողալով շարժել: Աչկիրըտ ծով... էշխըս լող կու տա անղայիղ (65):*

ԼՈՂՄԱՆ. ԼՈՂՄԱՆԻ (արաբ.), ի կամ նու, գ. ա ծ. Գիտուն, իմաստուն, մեկնիչ, գուշակ Վերելյան առասպելական իմաստուն բժիշկ Լողմանի կամ Լոխմանի անունից): *Վի կենա Լողման հեքիմըն, բալքամ դարդիս անե չարա (36): Թեգուկ թաքավորըն կանչե. թեգուկ Լողմանի հեքիմը, վո՛ւր մե դարդըս կու հասկանան (30):*

ԼՅՆԻԼ. լցրու, լից, ն բ. Լցնել: *Չեռիտ ունիս թաս, լըցնիս ինձի տաս (29):*

ԼՅՎԻԼ, չբ. 1. Առատորեն լինել: *Սուսան սըմբուլով, դարիբ բըլբուլով բաղըն լըցվիլ է (29):* 2. Գիրանալ, չաղանալ, փարթամանալ: *Բոլեմետ չուրս մատըն ավելի, լըցվիլ է դոշտ ու թիկունքըտ (30):* 3. Ամբողջ ուժով դրսևորվել, երևան գալ, ի հայտ գալ: *Գարունքվան վախտըն լըցվիլ է,—էրանի ձիւ, ծաղկած վարիր (33):*

ԼՅՅԱԾ, լցված: *Օսկե փարչումըն լցցած անմահական ջուր իս, ա՛խւպեր (13):*

ԼՈՒՍ (բբբ.), ի. գ. Լույս: *Սատանեն... ասաց—գուպիք՝ ձիւ լուս կու տամ (64):* Յիրգնուց լուսըն վըրետ կամար թաղ արին, Մողնու սուրփ Գևուրք (62): ☉ *Լուս անիլ—լուսավորել: Վունց արեգազըն շուղկը տա, վունց լուսինը լուս անե (5): Լուս տալ—լուսավորել: Մութըն տիղըն լուս իս տալի (39): Լուսն բու ծնողին—օրհնանքի խոսք մահացածին: Ափսուս վուր շուտով միռիլ է, լուսըն բու ծնողին (35): Աչկի լուս—շատ սիրելի, թանկագին: Անգած արա, ո՛վ աչկի լուս (31):* Տե՛ս նաև էջ 41, 46, 46, 46, 46, 46, 46, 46, 46, 47, 47, 48, 48: *Լուստ պասկ—տե՛ս Պսակ: Պսակ լուտ առիր անանց (61):*

ԼՈՒՍԱՅՆԻԼ, ցրի, հր մ. ցրու կամ ցու, ն բ. Գիշերն անցկացնել առանց քնելու, մինչև լույսը մնալ: *Շատին պարթուն կու լուսացնիս... քամանչա (1):*

ԼՈՒՍԻՆ, լուսնի, գ. 1. Լուսին: *Վու՛նց արեգազըն շուղկը տա, վու՛նց լուսինը լուս անե (5):* 2. Ամիս, լուսնի ամիս: *Թե վուր լուսին ասիմ տարեմեն կուսին, Արեգագի նրման փարա իս, գո՛պալ (19):* Տե՛ս նաև էջ 7:

ԼՈՒՄՆԱՍՏՂ (բբբ.), ի. գ. Լույսի աստղ, Լուսաստղ, Արուսյակ, Վեներա: *Յա՛ր, թիւ տենողըն շարքըն չի գիղի, Լուսնաստղը պայծառ բացարած (39):* Տե՛ս նաև էջ 64:

ԼՈՒՄՆԻԱԿ (բրբ.), ի. գ. Լուսնյակ, լուսին: *Խեզուկ արեգագ լուսնիակ... ըլի... դիփունին կու ախտիս, գո՛ւլալ (34):*

ԼՈՒՐ (թճբ.), ի. գ. (կենդբ.) Լոր թռչունը: *Սիրտըս լուրի պես խորվեցիր (31):*

Խ

ԽԱԲԱՐ (արաբ.), ի. գ. Լուր. տեղեկություն: *Լեյլուսեն խաբար չունիմ (22):* Տե՛ս նաև էջ 51, 69, 70:

ԽԱԶԻՆԱ (արաբ.), նի, գ. 1. Գանձ, հարստություն: *Ջար կորցրած խոնթկարի պես նըստած է խազնից բեղամաղ (43):* 2. Գանձարան: *Չը կա փաշահի խազինուսըն մալ քիլի լալիղ (48):*

ԽԱԹԱԲԱՆԴ (արաբ., պարսկ.), ի. գ. Նախշազարդ սրահ, տաղավար (ըստ Գ. Ախվերդյանի՝ «Եբեսոս փայտից և փղոսկրից դրվագավորում»): *Փխբ. Գրավչություն, գեղեցիկ գործ: Խաթաբանդով չարաչարդաղ, բոշկ ու ամառաթըն դուն իս (38): Այնաբանդ իս խաթաբանդով (6):*

ԽԱԹԻՐ, ԽԱԹՐ (արաբ.), թրու կամ թի, գ. 1. Հարգանք, պատիվ: *Աբա խաթրըտ ջամ իս անում* (6):* 2. Ի սեր, սիրո, մի բանի սիրուն: *Վարթիս խաթրի խարեն էրված իմ (48): Գիշիր-ցերեկ յարի խաթրու ջիգարըս էրած գիղենաք (57):* ☉ *Հոքուտ խաթիր—քո հոգու համար, հոգուդ սիրուն: Թե բու հոքու խաթիր շալ հաքնիս՝ վար բաշած ատլասըն կու տան (37): Հոքուտ խաթիր մարմընիտ ումբըրը կես անիս (16): Զու խաթրու—ի հարգանս քո, քեզ հարգելով, քո պատճառով: Ղաբուլ ունիմ՝ բու խաթրու ինձ սրպանե (17): Խաթրով—բարի, մեղմ տրամադրությամբ: Խաթրով, խալով, բաղջըր լիվով... բանդ իս արի (14):*

ԽԱԹՐԶԱՄ (արաբ.), ա ծ. Լիահույս, վստահ, հանգիստ, ապահով: *Յա՛ր, ինձ մե ճաւփա կանգնեցու—կենչամ խաթրջամի նըման (47):* Տե՛ս նաև էջ 54:

ԽԱԹՈՒՒ-ԽԱԼ (արաբ., պարսկ.), ի. գ. Գեղեցիկ դիմագիծ: *Յիս քիվանից չիմ հիռանա՝ թեզուկ դուս գա խաթու խալրտ (13): Գրուխըտ պահելով արա՛նամ չը դիբչի խաթու-խալիտ (7):*

ԽԱԼ (պարսկ.), ի. գ. Բնածին սև նիշ երեսի և մարմնի վրա, բիծ, պուտ, բենկ: *Բարկ էրեսիտ խալ իս արի (3):* Տե՛ս նաև էջ 7, 9, 18, 26, 55, 61: ☉ *Խալ գցիլ—փխբ. հասունանալ: Դոշրտ դառած [բաղ ու բախշա] խալ է գըցիլ շաւաման (60):* էջ 78:

ԽԱԼԱԹ (արաբ.), ի. գ. 1. Պատվո պատմունճան, որով Արևելքում թագավորը կամ իշխանը պարգևատրում էր մեկին: *Մե բիռընը ենգիդունիա է, մե բիռըն էլ փաշայի խալաթ (15):* 2. *Փխբ. Շատ պատվական, ընտիր՝ թանկար-*

* *Խաթրըտ ջամ իս անում*, մեր կարծիքով պետք է կարդալ *խաթրըջամ իս անում*—այսինքն հուսադրում ես, հույս ես ներշնչում, այլապես *խաթրտ ջամ իս անում*—«հարգանքդ ապակի կամ հալելի ես դարձնում» ոչ մի իմաստ չունի (ԱԶ):

ժեք բան (որ ծառայում է միայն պատվո կամ նվիրատվության համար) : *Թաքավորի բարխանենն դուս էկած խալաթըն դուն իս* (38) :

ԽԱԼԻ (պարսկ.), լու գ. Գորգ : *Պատիրըտ պարով, պարբարով, դոշամետ՝ խալով խալիշով* (34) :

ԽԱԼԻՉԱ (պարսկ.), չի. գ. Փորր գորգ : *Պատիրըտ պարով, պարբարով, դոշամետ՝ խալով, խալիշով* (34) :

ԽԱԼԻՍ (արաբ.), ա ծ. Մաքուր, անխառն, պուտ : **⊙** *Խալիս դառնալ— մաքրվել, պտվել : Մրտա էշխի բուրեն խալիս դառնալու* (49) :

ԽԱԼԻՍ (արաբ.), ի. գ. Ժողովուրդ, մարդիկ, բավմություն : *Արի համով դուռուղ արա, խալիխ նոբար Սայաթ-Նովա* (37) : *Խալիխն էս իլթիմազըն արա՝ ասին, ապրի բու ածողըն* (1) : էջ 6, 53, 70, 70 :

ԽԱԼՎԱԹ (աղբբ.), ա ծ. Մեկուսացված, առանձնացած, գաղտնի : *Մեր խալվաթ օթախումըն բարիշելու վախտըն է* (66) :

ԽԱՂ¹, ի. գ. Խաղ, խաղալը, վվարճանալը : **⊙** *Խաղ անիլ—խաղալ, վվարճանալ : Գընա, հիդըն խաղ մի՛ անի* (6) : էջ 12 :

ԽԱՂ² ի. գ. Երգ, եղանակ, նվագ, տաղ : *Յարսուն տարին գըլուխ դրի ամենան խաղին* (4) : *Նըստիմ ու լամ, Ասիմ բարիթավուր խաղըն* (6) : Տե՛ս նաև էջ 18, 43, 45, 53, 58 :

⊙ *Խաղ ըլիլ—երգ դառնալ, երգի վերածվել : Խաղ իս էլի, Սայաթ-Նովա* (6) : *Խաղի դավթար—երգարան : Խաղի դավթար իմ քիզ ամա* (23) : *Խաղ կանչիլ—բարձր ձայնով երգել : Խաղ կանչիլք հանգով* (29) :

Սայաթ-Նովեն... շատին էրից խաղ կանչելով (54) : *Խաղ հանիլ—երգ հորինել, խաղ կապել : Ուշկ ու միսկըս խառնըվեցավ խուռըն-խուռըն խաղ հանելեն* (57) : *Խաղերումեն—խաղերից, տաղերից, երգերից : Խաղերումեն բեզարիլ իմ* (53) :

ԽԱՂԱԼ, ացի, հրմ. խաղա, չբ. Պարել, կաքավել : *Յիփ խաղում իս, վրազում իս օցի բերնի հուլի նըման* (39) : էջ 55, 60, 80 :

ԽԱՂՈՂ, ի. գ. Երգ ասող, երգասաց : *Յիփ քաղցր ձայնրտ վիր կոնիս, բաց կուլի հիդըտ խաղողըն* (1) :

ԽԱՄ¹ (պարսկ.), ա ծ. Հասարակ, ոչ թանկարժեք (կտորի մասին) : *Թե խամ հաքնիս, թե վար հաքնիս, կու շինիս դումաշ, նա՛վանի* (35) : էջ 51, 66 :

ԽԱՄ² (պարսկ.), ա ծ. Անփորձ, անվարժ, խակ : *Բապի մարթ չէ բաշի՝ էշխեմեն է խամ* (18) :

ԽԱՅԱԹ (արաբ.), ի. գ. Դերձակ : ... *Գուրմավուր իմ, բեքարա խալաթ* (56) :

ԽԱՅԱՆ, ԽԱՅԵՆ, ԽԱՅԻՆ (արաբ.), ա ծ. 1. Դավածան, ուխտապանց, ուխտադրուծ : *Խայեն յարին չէ ռաստ էկի, քիզանից խաթըջամ ունե* (38) : *Վարթըն ասաց. խային բըլբուլ, նալաթ էտ բու էլթիբարին, անցկացավ ապրի, մայխըն, մեկ օր չը հարցըրիր յարին* (52) : Տե՛ս նաև էջ 14 : 2. Խարդախ, նենգ : *Ով քիզ խայան մըտիկ տա, դառնա էրկու աչկով կուր* (13) : Տե՛ս նաև էջ 47, 64, 73 :

ԽԱՆՆ¹ (պարսկ.), ի, գ. 1. Բարձր պաշտոնյա, նահանգապետ (Պարսկաստանում) : *Ֆի խ բ. Տեր, հրամայող: Դուն իմ Շահ իս, Սուլթան, Խան իս* (45) : *Սուլթա իմացի, էնենց սրպանե՝ Սուլթան ու Խան իս ինձ ամա* (24) : 2. Վրաց թագավորների տիտղոսը պարսկական տիրապետության ժամանակ : *Դարդըս Խանին արպ արա* (13) : *Խանի պես դիվան իս անում* (6) : Էջ 12, 29, 73 :

ԽԱՆՆ² (վրաց.), մ. Երբեմն. մերթ : *Խան հիդ կեհամ, խան գու բամ* (18) :

ԽԱՆՁԱԼ (պարսկ.), ի, գ. Դաշույն : *Փահրադին բըլունգ սրպանից, Շիրին խանջալուն մընում է* (52) :

ԽԱՉԿԱԼ, ի, գ. (Եկեղ.) Խաչը պահող, եկեղեցու շինության այն մասը, որ կառուցված է վեմ քարի վրա, սեղան : *Բիմրու ու խաչկալըտ դրախտի բաղ արին Մողնու սուրփ Գևուրբ* (62) :

ԽԱՌՆԱԿԻՉ, ա ծ. գ. Խառնակություն՝ խռովություն գոյով, խռովարար : *Դիփ խառնակիչ ու ավիրող չարի ծեռնեմեն դադ կոնիմ* (68) :

ԽԱՌՆԵԼ, ԽԱՌՆԻԼ եցի, հ ի մ. նի, ն բ. 1. Մի նյութի մեջ ուրիշ նյութ ավելացնել : *Իմ էն արթար կաթիս արուն խառնեցի* (63) : 2. Միացնել, կցել : *Թուրքերեն էլ ուզում էի հետն խառնել, բայց չխառնեցի* (5-րդ խաղի տողատակի ծանոթ.) :

ԽԱՌՆՎԻԼ, վեցի, նվի, չ բ. Ուշք ու միտքը չկենտրոնանալ, շփոթվել : *Ուշկ ու միտկըս խառնվեցավ* (57) :

ԽԱՍ, ԽԱՍԱ (արաբ.), ա ծ. գ. Ընտիր, նուրբ. անխառն (գործվածք) : *Հաթիլ իս առլաս խասեմեն* (28) : *Հաթիլ իս առլաս, թուրլու վար ու խաս* (29) : ☉ *Խաս ալ*—ընտիր ծիրանի, կարմրագույն կտոր : *Հաթիլ ըլիս վար-վարբարն խաս ալով* (20) : *Խասսա մուրասսա*—նուրբ գործվածք ոսկեթել նախշերով կամ անգին քարերով. *Ֆի խ բ.* տիպար զեղեցկության : *Էրեսըտ խասս մուրասսա*—դալամ բաշիլըն ի՛նչ կոնե (46) :

ԽԱՎՐԻԼ (բբբ.), չ բ. Խավար դառնալ, լուսից կրկվել, մթնել : ☉ *Աչկը խավրիլ*—կուրանալ : *Աչկ խավրի, անգաճ խուլանա* (5) :

ԽԱՐՂ (պարսկ.), ի, գ. Փուշ, փշիկ (վարդի) : *Զաշվիլ է վարթըն մող չի թողնում, խարեն էրված իմ* (48) : *Վարթի նըման բաց իս էլի խարերով, խարերով* (41) : *Յիս վարթըն իմ, մին խար չունիմ* (45) : Տե՛ս նաև էջ 34, 42, 57, 71, 90 :

ԽԱՐՂ² (պարսկ.), ի, գ. (կենդբ.) Վարդենու որդ, միջատ : *Յիս բըլբըլ իմ, վարթըս մնաց խարումըն* (26) : *Կարոիր վարթըն խարին մընաց* (33) : Տե՛ս նաև էջ 19, 38, 39, 39, 70 :

ԽԱՐՂ³ (պարսկ.), ա ծ. Ստոր, անարգ : ☉ *Խար անիլ*—անարգել, ստորացնել, նվաստացնել : *Շատ սիրուն իս, Շախաթայի ասողին խար չիս անի* (4) :

ԽԱՐԱ (պարսկ.) ըի., գ. Մետաքսյա ընտիր կտոր : *Ֆի խ բ.* Գեղեցկություն, իրրություն : *Փըռանգըստանու էկած խարա իս, գո՛վալ* (19) :

ԽԱՐԱԲ (արաբ.) ա ծ. Փչացած, վնասված : ☉ *Խարաբ անիլ*—ավերել, քանդել, փչացնել : *Սելավի պես, առանց ցաւրիլ, դուն շուտով խարաբ մի անի* (10) :

ԽՈՒՓՈՒՆԿ (պարսկ), ի. գ. Վարագուրածն եղեգնյա ծածկոց լուսամուտներին. որ իջեցնում-բարձրացնում են թոկի միջոցով: **⊕** *Խափանգ անիլ*—իջեցնել, հավաքված չպահել: *Էրեսիտ խալրն ծածկըվում է՝ մապիրտ խափանգ իս անում* (2):

ԽՈՒՓԻԼ (բբբ.) եցի, հրմ. փի, նբ. 1. Խաբել, մոլորության մեջ զգել: (Չարբ) *խափից Աթամ նախահորըն, կերան ու դառան մերկանդամ* (64): Տե՛ս նաև էջ 34, 49, 69, 84: 2. Ստել, ճիշտ չասել, սուտ բան հավատացնել: *Տերըն վուր էկա՛վ խափեցին*—*Թե օցըն էր արավ սիթամ* (64):

ԽՈՒՓՈՎ, մ. Խաբելով, խաբելությամբ: *Չունքի ինձ կավթեցիր խափով, նա՛կանի* (17):

ԽԵ, գ. Հայերեն այբուբենի «խ» տառի անունը: *Էնդուր վախ բաշեցի խե ու ախբ թո՞* (50):

ԽԵՉ (բբբ.), ի. գ. (եկեղ.) Խաչ: Արբապատկեր: *Համբուրիմ սիրով համբուր, վունցոր խեչին է դաստուր* (13, 56):

ԽԵՐ (արաբ.), ի. գ. Օգուտ, բարիք, բարին: *Վունց բու խերը գուլիմ, վունց բու շառըն* (58): **⊕** *Խեր անիլ*—բարիք տալ, բարին տեսնել: *Թե քիզ աճել յադ յար սիրիմ, ումբրես չանիմ խեր, նա՛կանի* (45):

ԽԵՐԻԼ (բբբ.), նբ. Արդյունք տալ, պտուղ տալ, արգասավորել: *Ումբրես էրապի պես զընաց, ծառոս չըխերած գիտենաք* (57):

ԽԻԼԼ (արաբ.), ի. գ. 1. Միտք, մտածմունք: *Փրիր ու խիալըս հարգահ աշխրքի ցավի մասին է* (68): 2. Տարակույս, կասկած, ենթադրություն: *Էտ խիալըն սըրտետ հանե* (7): 3. Երևակայություն, երևակայելը: *Էտ ինչպես խիալ է, գո՛ւզալ, էտ խիալով նազ իս անում* (6): **⊕** *Խիալ անիլ*—1) մտածել, միտք անել: *Դուն ուրիշ խիալ մի՛ անի, Ռահմ արա, հոքիս մի՛ հանի* (12): *Աստուծ խիալ արից, սըվթա ստիղծից նախ մարթըն Աթամ* (64): 2) փափագել: *Էլ ջուքամըն դուն կու բաշիս, չուն մահիս խիալ իս անում* (8):

ԽԻԼԸ (թբբ.), ի. գ. Խելք: *Խիլըս հիմարին բար մի՛ անի* (10): Նաև էջ 27, 63: **⊕** *Խիլք ունենալ*—մտածելու՝ դատելու կարողություն ունենալ, խելոք լինել: *Թե խիլք ունիս՝ զըխիտ ճար արա* (26): Տե՛ս նաև էջ 69: *Խիլքը զըխեն հիռանալ*—խենթանալ: *Քու տեսնողի խիլքըն զըխեն հիռանում է* (38): *Խիլքը զխեն ջունուն ըլիլ*—խենթանալ, գժվել (սիրուց): *Ջունուն էլավ խիլքըս զխեսս* (14): *Խիլքը զխենն (զխեսմեն) տանիլ*—խելացնոր անել, խելքը գրավել, զմայլացնել, սքանչացնել, խենթացնել: *Բենուրվաթ յար, խիլքըս զըխեսս մի՛ տանի* (11): *Խիլքըս զխեսմես տարիլ իս* (13): Տե՛ս նաև էջ 14, 25, 26, 72: *Խիլքը տանիլ*—նույնն է՝ *Խելքը զխեն տանիլ*: *Տարար խիլքըս, հեյրան արիր* (6): *Ամեն մե մըտիկ տալով տարար խիլքըս* (66) էջ 88, 32: *Խիլքը տանուլ տալ*—մի բանով տարվել: *Խիլքըս տանուլ տըված լիղնուրթ իմ դառի* (63): *Սապին խիլքըս չը տանուլ տաս էտ խիալով, էտ հավաստով* (25): *Խիլքին մըտիկ*

* *Խե ու ախբ թո* = խաթ—գիծ, գիր: Տե՛ս Մ. Հասրաթյան, Սաւար-Նովայի խաղերի ժողովածու, 1959, Հայերեն 50-րդ խաղը:

արա (հեգն.) -- սրան տես, խելքին նայեք, հիմար: Դուն իմ խիլքին մըտիկ արա, Ջուրըն էկավ գերանըս տարավ, ծիղի համա իմ լալի (36):

ԽԻՂԸ (թհբ.), ի. 1. գ. Խելճ, աղքատ, կարոտլալ: Փիրբ ու խիալու խիղճի, նաչարի... մասին է (68): 2. ա ծ. Չնչին, հասարակ, ողորմելի, թշվառ: Դուն մե թարավուր իս, յիս մե խիղճ դավրիշ (55): Տե՛ս նաև էջ 22:

ԽԻՍՏ, ա ծ. մ. Չափազանց շատ, սաստիկ: Աստված վկա, խիստ դժվար է (31): Չաու ջուր իս, խիստ տխուր իս (6): Խիստ իս լալիս, Սայաթ-Նովա (13): էջ 16, 65, 75:

ԽԻՎ (թհբ.), ա ծ. գ. Խն, պակասամիտ, հիմար, խենթ (ի ծնե): Ծեծով չի խըրատվի խիվըն (37):

ԽԻՎԱՆԱԼ (թհբ.), ագա, չ բ. Խնանալ, խենթանալ, հիմարանալ: Ով ինձ շինից դիվանա՝ Սուրփ Կարապիտեն խիվանա (32):

ԽԼԻԼ, եցի, խլի. ն բ. Խլել, հափշտակել: Զիզ ինձանից ո՛վ կանա խլի (1):

ԽՄԱԾ, ա ծ. Հարբած: Էշխենետ խըմած մաստ էկած (32):

ԽՄԵՑՆԻԼ, ն բ. Խմել տալ: Խմեցուր ձեռիտ թասեմեն (28, 32):

ԽՄԻԼ, եցի, ն բ. Խմել, ըմպել: Վունց ուտիլ գուլե, վունց խըմիլ՝ մողըս նըստած յարիտ էրնել (25): Ածա խըմինք օսկե թասով (25): Տե՛ս նաև էջ 24, 26, 49:

ԽՄՑՆԻԼ (բբբ.), ցրի, ցրու, ն բ. Խմեցնել: Խըմցրեցիր անմիղ տիղըն, էս աղուի թասն ինձի (67):

ԽՆԴԱՑՆԻԼ (բբբ.), ցրի, ցրու, ն բ. Ուրախացնել: Շատ տըխուր սիրտ կու խընդացնիս... քամանչա (1): էջ 6:

ԽՆԴՐԻԼ, եցի, խնդրի, ն բ. Ցանկանալ, փափագել, ուզել: Յիս բու մահըն վո՛ւնց կու խընդրիմ նուղլ ու շարար իս ինձ ամա (23):

ԽՈՂ (բբբ.), ի. գ. Հող: ...Գաս իմ գերեզմանին Ածիս խողըն վըրես ափով (17): էջ 29:

ԽՈՄ (վրաց.) մ. Չէ որ, հո: Յիս խոմ էն գըլխեն էրած իմ, նուրմեկանց բարբաբ մի՛ անի (10): Տե՛ս նաև էջ 45, 77:

ԽՈՆԱՐ (բբբ.), ա ծ. Խոնարհ, հնավանդ, համեստ: Ավետարանն կու տա խոնար մարթուն էրանին (11):

ԽՈՆԱՐԻԼ (բբբ.), եցի, րի. չ բ. Ներքև թեքվել, ծովել, կոանալ (փուլ գալու, կոտրվելու աստիճան): Աչաբ բու սիրտըն ո՛վ շինից՝ խոնարից, հիվանից բեղամաղ* (43):

ԽՈՆԱՐՈՒԹԻՆ (թհբ.), թենի. գ. Խոնարհություն, նվաստություն, ցածու-թյուն, հնազանդություն: Խոնարություն արա կանց քիզ դեվերիտ (16):

ԽՈՆԹԿԱՐ (աղբբբ.), ի. գ. Օսմանական սուլթան, տեր, թագավոր: Չար կորցրած խոնթկարի պես նըստած է խազնից բեղամաղ (43): էջ 60:

* Արդյոք բո սիրտն ով շինեց, որ կոտրվեց, փուլ եկավ՝ հենակից՝ դիմհարից նեղացած: Տե՛ս Մ. Հ ա ս ր ա թ յ ա ն, Սայաթ-Նովայի խաղերի ժողովածու, 1959, «խոնարիլ» և «հիվանից» բառերը:

ԽՈՍԱԼ Տե՛ս Խոսել: Չիմ կշտանում գոզալի Ռիդ խոսալով (20): Էջ 32:

ԽՈՍԵՑՆԻԼ, ն բ. Խոսել տալ: Բեդասիլն վուր խոսեցնիս, լալ անիլըն ին-
՝ի՛ն է շահ (44):

ԽՈՍԻԼ, եցի, խոսի, ն բ. 1. Խոսել: Ի՛նչ կուլի մեկ հիդըս խոսիս, թե վուր
Սայաթ-Նովու յար իս (24): Հիդըս խոսի, մի՛ կենա խոռովի պես (26): Տե՛ս
Նակ էջ 11, 16, 18, 29, 31, 41, 45, 63, 64, 64, 66: 2. Զրուցել, խոսակցել: Հա-
մաշա յար, քիպիդ խոսիլ իմ ուզում, սիրտըս չե կըշտանում գափով, նա՛վանի
(17): 3. փ խ բ. Դալլալլել: Արի՛, բըլբուլ, խո՛սի բարըն... Դու վա՛րթ կանչե,
յիս յա՛ր կանչիմ (9): 4. Նվագել: Չարըդ ռաշի կուդեն պիտի, վուր դուն խոսիթ
քաղցըր հանգով:

ԽՈՍԿ (բբբ.), ի. գ. 1. Բառերով արտահայտված միտք, խոսք: Սայաթ-
Նովու խոսկըն իրավ ու անիրավի մասին է (68): Խոսկիրըս մեմեկ չի ասվի
(36): Տե՛ս նակ էջ 12, 24, 26, 49, 55, 56, 56, 64, 65, 80, 88, 90: 2. Կարճ,
իմաստալից ասացվածք, առած: Խոսկ իմ ասո:մ առակաց (13): Խոսկ ի՛
ասում առակավուր—մասալով (20): Տե՛ս նակ էջ 24, 64, 73: 3. Մի ամփոփ՝
ամբողջացած միտք: Ավիտարանի խոսկիրըն մարքարիտ է, կարբըն սիրո:ն
(37): 4. Խնդիրք, աղերսանք: Մե խոսկ ունիմ իթիմավով, անգաճ արա, ո՛վ
աչկի լուս (31): 5. Չարախոսություն, նենգախոսություն: Անգալի խոսկին յի՛
ավտա (32): 6. Ցանկություն, ուզած բան: Մարթ վուր քու խոսկով մեռանի՛
գալ անիլըն ինչի՛ն է շահ (44): 7. Կշտամբանք: Դառըն խոսկով սիրտըս խու-
ցից, վադի ձեռնեմեն գուլամ յիս (67): ☉ Խոսկը անց կենալ—հարգանք վայե-
լել, հարգվել, ասածը կատարվել: Շահի մոդ խոսկըն անց կու կենա, սըպանելու
ջալլաթ չը կա (33): Տե՛ս նակ էջ 18: Խոսկեն անց կենալ—ասածը չկատարել:
Ցիս քու խոսկեն չիմ անց կենա, թաք քու դամաղըն չաղ ըլի (23):

ԽՈՍՏՈՎԱՆԻԼ, եցի, հ ռ մ. Նի, ն բ. Ճշմարտությամբ ասել, հանձն առնել,
ընդունել: Խոստովանիս արած միխկըտ՝ չանիս ինքար (37):

ԽՈՍՏՈՎՆԱՀԵՐ, (բբբ.). ի. գ. Խոստովանահայր: Խոստովանհերըս հի-
աացավ, միդի համա իմ լալի (36):

ԽՈՐԱՆ, ի. գ. (եկեղ.): Եկեղեցու բեմ սեղանով, որտեղ պատարագ է
մատուցվում: Տապանակ ուխտի կտակով խորանըտ Ահարոնի նըման (62):

ԽՈՐՎԻԼ, եցի, վի, ն բ. Կրակի վրա եփել, խորովել: փ խ բ. Սաստիկ կակի՛
պատճառել, այրել, դաղել, տոչորել: Սիրտըս լուրի պես խորվեցիր էշխտ
կըրակով (31): Էրված խորված ման իմ գալի (57):

ԽՋԱԼԱԹ (արաբ.), ի. գ. Ամոթ. պատկառանք: Սըրտիս խրջալաթըն դո ն
իս (38):

ԽՈՌՎ, ի. գ. ա ծ. 1. Մեկից նեղացած: Կովկիթըս կոտրիլ իմ հարսի:յ
խըռով իմ (58): 2. Երես դարձրած, չարժանացած: Դովլաթըն միզնից խըռով ա
(44): Տե՛ս նակ էջ 40, 46: ☉ Խըռով կենալ—չխոսել: Հիդըս խոսի, մի՛ կենա
խըռովի պես (26):

ԽՐԱՏ, ի. գ. 1. Խորհուրդ, հորդոր: Խրատ սիրև, սարբր սիրև, շար սիրև

(16) : Մե մարթ չը կա, վուր ինձ խըրատ հասասե (51) : 2. Իմաստալից խոսք առածի ձևով : *Խըրատնիրըն գըրած Հարանց վարքումըն է (16) :*

ԽՐԱՏԻԼ, եցի, *հ ը մ.* տի, *ն բ.* Խորհուրդ տալ, հորդորել, սովորեցնել : *2ուրս տարեկան էրեխու պես՝ յարթս խրատիլ է ուզում (43) :* Տե՛ս նաև էջ 33 :

ԽՐԱՏՎԻԼ, *չ բ.* Խելքանալ, խելքի գալ, սովորել : *Ծեծով չի խըրատվի խիվըն (37) :*

ԽՐԹՆԻԼ (թբբ.), եցի, *չ բ.* Վախից ցնցվել, ետ ընկրվել : *Քու շընճրու հաչոցեմեն չիմ խըրթնի (58) :*

ԽՈՒԶ (թբբ.), ի, գ. Խոզ : *Մի՛ ածի խուզի առչիվըն լալ ու գովհար, Սա-յաթ-Նովա (37) :*

ԽՈՒԼԱՆԱԼ, ացա, *հ ը մ.* ցի, *չ բ.* Լսողությունից պրկվել, խլանալ : *Աչի խավրի, անգաճ խուլանա (5) :*

ԽՈՒՂ (թբբ.), ի, գ. Հող : *...Գաս իմ գերեզմանին, ածիս խուղըն վըրես ափով (17) :*

ԽՈՒԺՈՒԺ, *ա ծ. գ.* Գանգուր, գանգրահեր, գրուլ : *Խուճուճ-խուճուճ ծա-մերուտ տուր արայիշ (11, 55) :*

ԽՈՒՆԻ (պարսկ.), *ա ծ.* Արյունոտ : *Էրվեցազ խունի ջիգարըս (27) :* էջ 41, 88 :

ԽՈՒՌՆ-ԽՈՒՌՆ, *ա ծ. մ.* Խիտ-խիտ, կուտակված, խոնված կերպով, խիտ առ խիտ (ըստ Գ. Ախվերյո, «խորը, խորին») : *Ուշկ ու միտկըս խաճնվե-ցազ խուռըն-խուռըն խաղ հանելեն (57) :*

ԽՈՒՅ, (թբբ.) ի, գ. Խոց, վերք : *Կըրակ դրրիս սըրտիս խուցի յարու-մըն (26) :*

ԽՈՒՑԻԼ (թբբ.), եցի, *հ ը մ.* ցի, *ն բ.* Մարմինը ծակել՝ վիրավորել որևէ սրածայր առարկայով, խոցել, *փ խ բ.* Խոսքով վիրավորել, ծանր վիշտ պատճա-ռել : *Դառըն խոսկով սիրտըս խուցից (67) :*

ԽՈՒՑՎԻԼ (թբբ.), *չ բ.* Խոցվել, *փ խ բ.* ծանր վիշտ կրել : *Մըտիկ տը-վողըն կու խուցվի,—դաղերումեն բեզարիլ իմ (53) :*

ԽՐՓԻԼ, եցի, *հ ը մ.* փի, *ն բ.* Հարվածել, պարնել : *Ղաստ արա՝ շուշետ չը կտորին, չը խըփին քար. Սայաթ-Նովա (37) :* Տե՛ս նաև էջ 32 :

Ծ

ԾԱ, գ. Հայերեն այբուբենի «Ծ» տառի անունը : *Ծա ծովումըն մընաց դուս չէկազ նավրտ (50) :* Տե՛ս նաև էջ 68 :

ԾԱԼԻԼ, եցի, *հ ը մ.* ծալել, *ն բ.* Հավաքած, ամփոփած վիճակում դնել : *Ծա-լե դավթարըտ, դութին դի (23) :* Տե՛ս նաև էջ 49 :

ԾԱԾԿԻԼ, եցի, *հ ը մ.* ծածկել, *ն բ. 1.* Վրան առնել, ծածկել : *Հընդու դա-լամքարու վըրեն ծածկիլ իս մարմաշ (35) :* Տե՛ս նաև էջ 61 : *2.* Իր տակն առնել, պատել : *Մեչըն չիմ կանացի մրտնի. ծովի ծածկած վանքի նրման (36) :* *3.* Իրար

վրա դարսել: *Ռանգըն ռանգերուն ծածկում է, հուշրեն լիբըն է սահեմեն (44):*
(Իրար վրա դարսած գույնզգույն ընտիր կտորեղենով լիբն են սնդուկները):

ԾԱԾԿՎԻԼ, չ բ. Ծածկվել, սքողվել: *Էրեսիտ խալըն ծածկվում է (2):*

ԾԱՂԻԿ, ծաղկի, գ. *Չուրս բուրբըն ծաղիկնիր ին (54):* Տե՛ս նաև էջ 7, 26, 36, 37, 41, 64, 65, 71, 71:

ԾԱՂԿԱԶԱՐԹ, ի, գ. (եկեղ.) Տները ձիթենու, արմավենու կամ ծառերի ճյուղերով պարդարելու տոն, որ ընկնում է պատկի նախընթաց կիրակի օրը, արմավենյաց տոն, ծառպարդար: *Քի պարթարած տեսնիմ հիդ ծաղկապարթին (20):*

ԾԱՂԿԻԼ, չ բ. Ծաղկել: *Էրանի ձիզ, ծաղկած վարիր (33): Ամառն ու ձմեռն ծաղկած գուլբաղ ու բաղաթըն դուն իս (38):*

ԾԱՄ, ի, գ. Հյուսված մալ: *Խուճուճ-խուճուճ ծամերուտ տուր արալիշ (55):*

ԾԱՌ, ի, գ. Հուտըդ աշխարըս է զավթի՝ բալասանի ծառ իս էլի (13):
Տե՛ս նաև էջ 12, 55, 56, 56, 63, 71, 75:

ԾԱՌԱ, ծառի, գ. Ավելի չէ Սայթ-Նովեն—քիզ ծառա ու նոքար ա (46):

⊙ *Գըլխին ծառա—ծառայելու միշտ պատրաստ: Գըլխիս ծառա օխտը նորահարս ունիմ (59):* Տե՛ս նաև էջ 31:

ԾԱՎԱԼԻԼ, եցի, հր մ. լի, ն բ. Ափռել, տարածել: (Մըշու սուլթան սուրփ կարապիտ) *Մաստ: նըրտ ամեն տիղ ծավալի (61):*

ԾԱՐԱՎ, ի, գ. ա ծ. Պապակ: *...Ծարավ մարթըն բու շըրեմեն չի կըշտանա (38):*

ԾԵԾ, ի, գ. Ելեծով չի խըրատվի խիվըն (37):

ԾԵՐ (բբբ.) ի, գ. Ծայր, գագաթ: *...Սարի ձերին շանց կու տամ (58):*

ԾԻԾԱՂԻԼ, եցի, հր մ. դի, չ բ. Ծաղրել, ծաղրի առարկա դարծնել: *Հենց բան արա՝ մարթ վըրես չը ծիծաղի (16):*

ԾԻՂ, (թբբ.) ի, գ. Ծեղ, շյուղ: *Ջուրըն էկավ, գերանըս տարավ, ծիղի համա իմ լալի (36):*

ԾԻՐԱՆԻ, նու, գ. Ծիրանի գույնով ներկված կտոր և սրանից կարված պգեստ: *Հաթիլ իս բեհեզ ծիրանին (33):*

ԾԾԻԼ, եցի, հր մ. ձծի, ն բ. Ծծել: *Մի մոր ծըծած, մի մոր դալ իս (6):*

ԾՄԱԿ, ի, գ. 1. Արև չտեսնող տեղ (լեռան հյուսիս դարծած լանջը, կիրրճ, ձոր, անտառ): 2. Ընդհանրապես անտառ: *Գելըն ասավ. «Կուր ամալը գա ծըմակին, ալռեբրս կու գըցիմ դոչի դըմակին (58):*

ԾԸՆԻԼ, վեցի, չ բ. Ծնվել: *Թաք իս մորես չեի ծընի (23):*

ԾՆՈՂ, ի, գ. Հայր կամ մայր: ⊙ *Լուսը բո ծնողին—տե՛ս Լուս: Ափսոս վուր շուտով միտիլ է, լուսըն բու ծնողին ըլի (35):*

ԾՆՈՒՆՂԿԱՆ (թբբ.) ի, գ. Ծննդաբանություն, ազգաբանություն (որևէ տոհմի կամ մարդկանց), Գիրք ձևնդոց: *Գրրյալ է ի մեջ սուրբ գրքի, Ովանեսու միծի ծնունդկանաց (61):*

ԾՈՒԼ, ի, գ. 1. Ծով: *Բանի գուլե բամին տանե, ծովեմեն ավալ չի պակսի*

(10) : Տե՛ս նաև էջ 10, 13, 17, 18, 24, 27, 31—47, 40, 52, 67, 75, 86: 2. *փխբ*. Փոթորկահուլի կյանք: Աշխարհըն ծով, դուն մեջըն նավ (2) : Տե՛ս նաև էջ 24: 3. *փխբ*. Մի բանից շատ՝ առատությամբ լինելը: Դարդիրքս ծով ա (67) : 4. *փխբ*. Ալեկոծություն, հուլմունք, ծփանք: Յիս մի փուքըր նավի նըման, բու էշխըն է ծով, ա՛չկի լուս (31) : Ծովի ծածկած վանք—ծովով շրջափակված վանք (ըստ Գ. Ախվերդյանի ենթադրության Սևանա կղզու վանքը) : Մեջըն չիմ կանացի մըտնի, ծովի ծածկած վանքի նըման (36) :

ԾՈՎԱՅԻՆ, ա ծ. Ծովի: Նովափար ծաղիկ ծովային, մանիշակ բաց արած հովին (2) :

ԾՈՎԱՆԱԼ, ագա, չբ. 1. Ծով դառնալ, շատանալ: Կաթելով-կաթելով դարդըս ծովացավ (51) : 2. Ալեկոծվել, անհանգիստ լինել: Դառնացավ, թթվեցավ, կինքըս ծովացավ (51) :

ԾՈՎԱՑԱԿ, ի, գ. Ծովի չափ ցավ, խիստ մեծ ցավ, անհուն վիշտ: Ախ բաշեկն սիրտըս նընգավ ծովացավ (51) :

ԾՈՒՆԳ (բբբ.), ծնգա, գ. Ծունկ: ☉ Ծընգան տալ—ծեռքերը ծնկին խփելով իր վիշտն արտահայտել, վայ կանչել, ողբալ, սգալ: Հեքիմհիրքս ափսոսում ին, ծընգան տալով վա՛յ ին ասում (40) :

ԾՈՒՌ, ա ծ. Թեք, ոչ ուղիղ: Ծուռըն փետըն չի դըրըստի ջանդան (37) : Տե՛ս նաև էջ 83:

ԾՈՒՑ (թբբ.), ի, գ. Ծոց, կուրծք: Հիվանդ իմ էշխի կըռնեմեն, դիդ անիս ծուցիտ նըռնեմեն (6) : Ծուցիտ մեջըն վարթ, մանիշակ, սընբուլ ու սուսան իս շինի (2) : Տե՛ս նաև էջ 15, 22, 41, 42, 45, 45:

Կ

ԿԱ (ս ա հ մ. ն է յ ի կ ա կամ, կաս, կա, ա ն ց. ա ն կ. կայի, կայիր, կեր և այլն), չբ. Լինել, գոյություն ունենալ, գտնվել: Չըկա քիպի նըման... դուն իս աննման (3) : Էլ բերնումըս համ չըկա (67) : Բու մեջըն ի՛նչ դըվաթ կա (59) : Մե մարթ չը կեր՝ ազատիլ էր (33) : Տե՛ս նաև էջ 8, 8, 8, 8, 8, 8, 8, 8, 9, 9, 9, 9, 20, 24, 28, 29, 30, 30, 39, 39, 45, 49, 49, 49, 52, 60, 65, 67, 68, 68, 71, 75, 77, 89, 89, 89, 89, 89, 89, 89, 89, 89, 89:

ԿԱԹ, ի, գ. Բար ու կրթիտ օխշարի կաթ շաղ արին (62) : Հալալ Սայաթ-Նովուն կեն ու այիր թո* (50) : Տե՛ս նաև էջ 83:

ԿԱԹԵԼ, ԿԱԹԻԼ չբ. 1. Կաթելով թափվել: Կաթելով, կաթելով դարդըս ծովացավ (51) : Աչկեմես կաթում է արին (12) : Տե՛ս նաև էջ 65: 2. Ծորալ, հոսել: Պրառչեմեստ միդր է կաթում (60) : Տե՛ս նաև էջ 26, 64, 65:

ԿԱԹՆԱԿԻՐ (թբբ.), ա ծ. գ. Կաթով սնվող, կաթնասուն, կաթնակեր: ☉ Հում կաթնակիր—անազնիվ, տըմարդի անծ: Շատ ջանք դըրի, մե բափա չը տեսա հում կաթնակիրի (18) : Տե՛ս նաև էջ 34, 70:

* Կեն ու այիր թո = կաթ:

ԿԱԹՆԵ, ա ծ. Կաթով, կաթ սովող: *Փխբ. Շատ սիրելի, թանկագին: Խըմողըն վո՛ւնց կու կըշտանա՝ դուն կաթնե ախպուր իս, ա՛խպեր* (13):

ԿԱԹՆԵԱՆՊՈՒՐ (բրբ.). ի. գ. Կաթնաղբյուր, աղբյուր, որի ջուրը կաթի նման սպիտակին է տալիս և ախորժելի է: *Կու բըխեցնե կաթնեախպուր* (6՛): էջ 78:

ԿԱԼ, ի. գ. Հարթ գետին, որի վրա կամով ծեծում են հացահատիկը: *Մարքարիտով լիքը կալ իս* (40): ☉ *Կալ անիլ*—կալում հացահատիկ ծեծել, կալսել: *Կալ անիլըն ինչի՛ն է շահ* (44):

ԿԱԼԻԼ, ԿԱԼՆԻԼ ա ն գ. կ ա տ. կալա, ն բ. Ընդունել, ձեռք բերել: ☉ *Անգաճ կալիլ*—լսել, ակնաջ դնել: *Արի ինձ անգաջ կալ* (16): *Անգաճ կալա, չիմացա ինչ հասասե* (51):

ԿԱՄ¹, ի. գ. Ուզելը, հոժարելը, հոժարություն, ցանկություն, համաձայնություն: *Չարը զըթավ նըրան, տըվին իրար կամ* (64):

ԿԱՄ², շ. Կապում է մի քանի բառ կամ նախադասություն: *Կամ թե*—կամ: *Կամ թե գուրձավուր իմ, բեքարա խայաթ* (65):

ԿԱՄԱՎ (գրբ.) (կամք-ի ե վ. գ ո թ ծ. հ ո լ.), մ. Իր կամքով, իր ցանկությամբ, առանց ստիպելու: *Կամավ սովդեն մըտա դարդըն բառնալու* (49):

ԿԱՄԱՐ-ԹԱՂ, ի. գ. Պատուհանների, դռների կամարածև շինվածքը: *Յիրգնուց լուսըն վըրես կամար-թաղ արին, Մողնու սուրփ Գնուրք* (62):

ԿԱՄԱՑ; մ. Կամաց, ծանր, դանդաղ: *Մե քիչ կամաց գընա, գո՛վալ* (30):

ԿԱՄԻԼ, ԿԱՄԵՆԱԼ ն բ. Ցանկանալ, ուզել, պահանջել: *Աջաբ միպիդ ի՛նչ իս կամում* (13): *Թե կամենաս ամենան տիղ բու ասածըտ հապիր շինին, Սալաթ-Նովա, խոսկըտ ասա* (47): Տե՛ս նաև էջ 24, 51:

[ԿԱՄՈՎ]. մ. Իր կամքով, իր ցանկությամբ: [*Կամով ընկավ չարի թոռըն*], *Քաղից արգիլված խընծորըն* (64): Տե՛ս նաև էջ 67, 88:

ԿԱՄՔ, ի. գ. 1. Ցանկություն, բաղձանք: *Թե վուր հոքուտ կամըն իս անում, մարմինըտ բեղամաղ է ըլում* (37): 2. Հաճություն, տրամադրություն: *Լավ մարթըն են է՛ սիրով անե բարի հրեշտակներու կամըն* (44): էջ 53, 61:

ԿԱՆԱԼ (բրբ.), ացի, չ բ. Կարողանալ, ի վիճակի լինել: *Ամեն մարթ չի կանա կարթա՛ իմ գիրըն ուրիշ գըրեն է* (1): *Քիպ ինձնից ո՛վ կանա խըլի* (1): *Մեչըն չիմ կանացի մըտնի, ծովի ծածկած վանքի նըման* (36): Տե՛ս նաև էջ 53, 63, 69, 75:

ԿԱՆԱՆՉ, (բրբ.), ա ծ. 1. Կանաչ գույն ունեցող: *Կանանչ տերևեն նամ չը կաթի պարթի միշումըն* (48): *Կանանչ փոթուրն բաց կուլի* (54): 2. Մշտադալար, միշտ կանաչ: *Փխբ. Չափել, երիտասարդ, թարմ: Սալբուի նըման կանանչ իմ* (9): 3. գ. Կանաչ գույնը: *Կարմիր ու կանանչ ու. ճերմակ, սարիսար ալ արմանալու* (46):

ԿԱՆԳՆԵՑՆԻԼ, հ թ մ. ցու, ն բ. Կանգնեցնել, առաջնորդել, ուղի ցույց տալ: *Յար, ինձ մե ճանփա կանգնեցու—կենամ խաթըրջամի նըման* (47):

ԿԱՆԳՆԻԼ, եցի, հ թ մ. նի, չ բ. 1. Կանգ առնել, չգնալ, սպասել: *Համաշա իմ յարի ճամփին կանգնած իմ տալիս իմ դովա* (13): 2. Մեկուսի մնալ, մի

կողմ քաշվել: *Դոստիրս հիռու կանգնին, յադիրըն գան լալ անին* (11):
3. Ոտքի վրա մնալ: *Յիփ նըստում իս՝ թուրթի ղուշ իս, յիփ կանգնում իս՝ ռաշ նա՛կանի* (35): 4. Հաստատուն՝ աներեր մնալ, չշարժվել: *Ղալամըն ծիռին չէ կանգնում, մաթ շինեցիր նաղըշքարին* (35):

ԿԱՆԶԻԼ, եցի, հի ու մ. կանչե, ն բ. 1. Չայն արծակել, աղաղակել, ճչալ: *Դու վա՛րթ կանչե, յիս յա՛ր կանչիմ* (9): *Էրվում իմ, կանչում իմ ա՛ման* (27): Տե՛ս նակ էջ 78: 2. Չայն տալ, ծայնի միջոցով իր մոտ հրավիրել: *Յիս կանչում իմ լալանին* (11): *Բըլբուլ իմ, սիրով վարթ կանչիմ* (28): Տե՛ս նակ էջ 22, 22, 56: 3. Բարձր ծայնով երգել: *Խաղ կանչինք հանգով, լալեքըն ռանգով, վարթըն բացվի է* (29): *Սայաթ-Նովեն վուր բեպրի է, շատին էրից խաղ կանչելով* (54): Տե՛ս նակ էջ 67, 71: 4. Ողբալ: *Հա՛ լաց էլա, վա՛յ կանչեցի անհաշիվ* (63): 5. Հռառչել, ախ քաշել: *Մեջլումըն չոխրում մընաց Լեյլու համա ափս կանչելով* (54): 6. Օգնություն հայցել: *Մե տիղ հուրմի հեքիմ չը կա՛ դուռն էհամ, կանչիմ հարա* (36): Տե՛ս նակ էջ 90: 7. Հրավիրել: *Թեգուլ թաքավուրըն կանչե, թեգուլ Լողմանի հեքիմըն՝ վո՛ւր մե դարդըս կու հասկանան* (30): 8. Խնդրել, աղերսել: *Աստծու սերըն կանչողի պես դըռնեմետ ջուղաբ մի՛ անի* (10):

ԿԱՆՑ (թֆր.), ն խ դ. ր. Բան: Կապում է որակի կամ քանակի կողմից իրար հետ համեմատվող երկու առարկաներ, որոնք դրվում են *• ու ղ ղ*. կամ *հ ա յ գ. հ ո լ ո վ ո վ*: *Մե խոսկըտ կանց շաքար բաղցըր է, մե խոսկըտ վառ՝ քուրա-քուրա* (40): *Կանց յոթըն իմաստնասիրացըն շատ է էս քու Սայաթ-Նովու բանքիրըն մեմեկ* (26): *Թեգուլ մըտոք ճարտար ըլի, կանց Սողոմոն դադա ըլի* (34): Տե՛ս նակ էջ 34, 70: ☉ *Կանց վուր—քան թե* (համեմատություն): *Էրեգ լավ էր կանց վուր էսոր,—վաղերումեն բեպարիլ իմ* (53): *Կանց քիզ—քո համեմատությամբ, քեպանից: Կանց քիզ լավ հուտ չի ունենա Հընդու էկած դարամփիրըն* (25): *Խոնարութին արա կանց քիզ դեվերիտ* (16):

ԿԱՊԻԼ, եցի, ն բ. 1. Կաշկանդել, շղթայել: *Բանի գուպե քընած տիղըն իր թշնամին կուռը կապե, էլի վիրչումըն մեյդանըն Բոստոմի Չալուն մընում է* (52): 2. Մի բան փաթաթել մարմնի վրա իբրև պարզ: *Եկ ճակտիտ կապե պարլու մուղայիշ* (11): Տե՛ս նակ էջ 72: 3. Փնջել, փուռջ անել: *Չիսիտ դաստա կապած սուսանբար ունիս* (17): Տե՛ս նակ էջ 14, 49: 4. *փ խ բ*. Մոլոր վիճակի մեջ գցել: *Էշխեն ուշկ ու միտկըս կապած, ինձ ջըրի տարած գիդենաք* (57): 5. *փ խ բ*. Խափանել, ի դերև հանել, վրկել: *Հենց ձեռովըտ կապեցիր, էնպես բաց էր իղբալըս* (66):

ԿԱՇԱՌՔ, ի, գ. Մահը վուր կա առանց կաշառք հասան (51):

ԿԱՎԻ (վրաց.), ի, գ. Վրացուակ հագած կանանց ուլքերի վրայով իչած երկու ոլորած մազերի հյուսք, խոպոպիք: *Կավիրըտ օլոր տար ու բիր* (65, 11):

ԿԱՐ, ի, գ. Կարելը, կարելու կտոր՝ շոր: *Վունց ձնիլ գուպե, վունց կտրիլ՝ կարըս մունաթ չը բաշե* (15):

ԿԱՐԱԼ (բրբ.) ացի, չ բ. Կարենալ, կարողանալ: *Բիպիղ բաս ո՛վ կարա բընի* (13): Տե՛ս նակ էջ 54, 55:

ԿԱՐԹԱԼ (բբբ.), ացի, *Տ ր մ.* կարթա, ն բ., չ բ. Կարդալ: Ամեն մարթ չի կանա կարթա՝ իմ գիրըն ուրիշ գրրեն է (10): Կարթա Հարանց վարքըն սիրուն (37): Տե՛ս նաև էջ 60, 67, 68:

ԿԱՐՄԻՐ, գ. ա ծ. Կարմիր (գուլն): Կարմիր ու կանանչ ու ճերմակ, սարի-սար ալ արմանալու (46): Բացվիլ իս կարմիր վարթի պես (2): Տե՛ս նաև էջ 26, 26, 31, 34, 36, 38, 41, 49, 64, 64, 71, 71, 76, 82: ☉ Կարմիր կոպ—տե՛ս Կոպ:

ԿԱՐՄՐԱԳՈՒԹՆ, ա ծ. Կարմիր գուլնով, կարմիր գուլն ունեցող: Կար-մըրագույն դաշտի ծաղիկ՝ հովտաց շուշան իս ինձ ամա (24):

ԿԱՐՄՈՒՆՋ (բբբ.) ի, գ. Կամուրջ: Էշխիտ ջուրըն հիդ է, պալում, Մըտ-նում է յարսուն կարմունջըն (39):

ԿԱՐՈՂՈՒԹԻՆ (թթթ.), թենի, գ. Ուծ, պրուբլուն: Սուրփ Կարապիտի կարողութենով սովրեցա քամանչեն (4-րդ խաղի տողատակի ծանոթ.):

ԿԱՐՈՏ, գ. ա ծ. Մի բանից պրկված լինելը և պրկանքից տառապելը, կա-րոտություն: Աչկեմեն ջուհարըն գրնաց յարեն կարոտ ախ անելեն (57): ☉ Կարոտ մնալ—պուրկ մնալ, փափագին չհասնել: Դիդարեն կարոտ մընա-ցի (22):

ԿԱՐԶ (բբբ.), ի, գ. 1. Կարգ, դաս: Յիրիբ բան կա՝ հոքու մարմնու կար-քունըն է՝ գիր սիրե, դալամ սիրե, դավթար սիրե (16): 2. Շարք, դասավորու-թյուն: Ավիտարանի խոսկիրըն մարքարիտ է, կարքըն սիրուն (37):

ԿԱՐԶԻԼ (բբբ.), եցի, *Տ ր մ.* քի, ն բ. Պաշտոնի՝ գործի նշանակել: Շահի կարքած վեքիլի պես գիդի համա իմ լալի (36):

ԿԵԾԱԿ (բբբ.), ի, գ. Կայծակ: փ իս բ. Սիրո շանթ: Բաս աշուղըն վո՛նց դիմանա եդ բու տրված կեծակուն (4):

ԿԵՆ, գ. Հայերեն այբուբենի «կ» տառի անունը: Կեն կամով ավելցրար սրբոտի ցավըտ (50):

ԿԵՆԱԼ, կացա, *Տ ր մ.* կացի: 1. Ապրել, գոյություն ունենալ: Առանց քիզ մին օր վո՛նց կենամ (6): 2. Մնալ, լինել: Բարի կացի՝ թաք իդրարին դըրուտ կացի (6): Տե՛ս նաև էջ 15, 15, 17, 29, 64: 3. Սպասել: Տասնումեկ ամիս մունջ իմ կացի՝ տարեն էրված իմ (48): 4. Վերաբերվել, վերաբերմունք ցույց տալ: Արի միպիդ մե լավ կացի, դուրբան ըլիմ մուրվաթումըն (7): Արի մե ճահմ արա, լավ կացի միպիդ (17): 5. Մնալ մի դրության մեջ: Կու կենամ ջամալիտ մայիլ (65): Բերնումըս դընիմ սանձ՝ կենամ (6): 6. Կազմում է հարադիր բայեր: Խոսկեն անց կենալ—մերժել, չկատարել: Յիս բու խոսկեն չիմ անցկենա, թաք բու դամաղըն չաղ ըլի (23): Խոռով կենալ—չխոսել: Հիդըս խոսի, մի՛ կենա խըռովի պես (26): Նաև էջ 46: Ղաբուլ կենալ—համաձայնել: Ղաթ ղաբուլ կաց՝ ճարիս ճե ու այիբ թո* (50):

* Ղաբուլ կաց՝ ճարիս ճե ու այիբ թո = ճաթ (վրաց. եգիպտացորենի հաց) (համաձայնվիր ճարելու եգիպտացորենի հաց): Տե՛ս Մ. Հ ա ս ր ա թ յ ա ն, Սայաթ-Նովայի խաղերի ժողովածու, 1959, էջ 67:

ԿԵՆԱՑ (գրաբ. «կյանք» բառի *հոգն. սեռ. տր. հոլ.*) Կյանքին վերաբերող, կյանքի: *Թե էս կենաց փառքըն չուզիս, էն կենաց արմասըն կու տան* (37):

ԿԵՍ, ի, գ. 1. Մի ամբողջի երկու մասերից մեկը: *Գեւըն ասավ... «ակռերըս կու գրցիմ դոչի դրմակին... կենք կու խիխտիմ, կեսն էլ իմ քամակին Մե-մեկ, մե-մեկ սարի ծերին շանց կուտամ* (58): Տե՛ս նաև էջ 15: 2. Կես մասը կազմող. կեսի արժեք ներկայացնող որևէ բան: *Բոլորքըս գոզալնիր շարած մեջլիսի կեսըն իս, քամանչա* (1): *Կես անիլ—կիսել: Վախում իմ թե սերըս սիրտըս կես անի* (11, 55): Տե՛ս նաև էջ 28: *Կես ըլիլ—կիսվել: Հալբաթ սերըն կես է էլի, վուր միկի ատիլ է ուզում* (43):

ԿԵՐ («լինել» բայի ե գ. անց. անկ. ծնը)—կար: *Աշխարումըս քիզնից ավել ո՛վ ասավ թե կեր* (45): *Մե մարթ չը կեր՝ ազատիլ էր* (33):

ԿԵՐԱԾ, Մաշված, սպառված: *Էլ ապրելու ուսիկ չունիմ, իմ օրըս կերած գիդենաք* (57):

ԿԸՆԶԿԸՆԶԱԼ, չ բ. Կաղկանծել: *Կոմբլիս տակին կընծկընծալը շանց կու տամ* (58):

ԿԻՐ, կրի, գ. *Քար ու կիրըս օխչրի կաթ շաղ արին, Մողնու սուրփ Գե-վուրք* (62):

ԿԼԱՊԻՏՈՆ (թուրք.), ի, գ. Մետաքսաթելի վրա փաթաթած արծաթաթել, որ գործ է ածվում վարդեր կարելու կամ երիզներ գործելու համար: *Մապիրըս ձեհան, կլապիտոն, հուսիրըս շարբաք* (48):

ԿՇՏԱՆԱԼ, ացա, չ բ. 1. Բաղըը հագեցնել, հագնել: 2. Ծարավը հագեցնել: *Ծարավ մարթըն բու ջըրեմեն չի կըշտանա* (13, 38): 3. փխբ. Հագուող տալ այլ վզայություններին, ցանկություններին: *Աշխարքըն աշխարք-ով կշտացավ, իմ սիրտըն քիզանից սով ա* (13, 24, 31): *Զի՛մ կըշտանում, գո՛վալ, հիդլտ խոսալով* (20): Էջ նաև 29, 39:

ԿՈՆՊԻԼ, եցի, հոմ. պի, ն բ. Կողպել, փակել: *Էրծաթե կոխպերով կոխպած, դուն օսկե ռապա իս* (40):

ԿՈՇԻՄ (թիբ.) (կոծիս, կոծե): Տե՛ս Ածիլ¹: *Չեռնեմես վեր կոծիմ չանգիրըն մեմեկ: Բըլբուլն լալով ման կոծիս* (25): *Ինձ մաթլաբեն կոծին, քիզ կոծին ջամըն* (59):

ԿՈԿՈՐ (ի) (վրաց.), ի, գ. Կոկոն: *Գուլ իս կոկոր տերիվակալ* (6): Էջ 14:

ԿՈՄԲԱԼ (բրբ.), բլի, գ. Մահակ (հովվի): *Կոմբլիս տակին կընծկընծալը շանց կու տամ* (58):

ԿՈՂՊԵՔ, ի, գ. Փականք: ☉ *Կողպեք դնիլ—փակել, արգելափակել: Կու վիկալնիմ ձիզ մութ տիրըն կոծիմ, կողպեք կու դընիմ, ձիր ռապեն յիս իմ* (59): Էջ 56, 77:

ԿՈՆԻՄ (թիբ.) (կոնիս, կոնե): Տե՛ս Անիլ: *Առանց քիզ հ՛նչ կոնիմ աշխարիս մալըն* (21):

ԿՈՍԻՄ (թիբ.) (կոսիս, կոսե) : Տե՛ս Ասիլ : *Շատ մարթ կոսե թե յար ունիմ, դուն ուրիշ յար իս, գո՛վելի (7) : Հապար բաբաթ բան կոսիս (5) :*

ԿՈՎ, ի, գ. ☉ Կարմիր կով—փխբ. բարկացող՝ ցասկոտ, գծովող անծ : Սայաթ-Նովեն ասաց—Յիս կարմիր կով իմ, կովկիթըս կոտորիլ իմ՝ հարսից խըռով իմ (58) :

ԿՈՎԿԻԹ, կթթի, գ. Կավե լայնաբերան աման, որի մեջ կաթ են կթում : Կովկիթըս կոտորիլ իմ (58) :

ԿՈՏՐԻԼ, եցի, հ թ մ., ըի, ն բ. 1. Զարդել, կոտրել : Նիտըս բարումըն կոտրեցի (36) : 2. Փշրել, փշուր-փշուր անել : Ղաստ արա՛ շուշետ չը կոտորին, չը խըփին բար (37) :

ԿՈՐԶԻԼ, կորավ, չ բ. 1. Հեռանալ, գնալ անհայտ տեղ : Անհետանալ : Մեջլումի պես կորավ յարըս (27) : 2. Կործանման դատապարտվել, ոչնչանալ : Անբարի գուրծըն կորած է՝ կարթա Հարանց վարըն սիրուն (37) :

ԿՈՐՑՆԻԼ, ցրեցի, ն բ. 1. Անհայտ տեղ գցել, չիմանալ որտեղ է : Կորցրիլ իմ ջավաթիրըն ու լալըն (63) : 2. Հեռացնել, չբացնել, աչքից կորցնել : Յա ինծի կորցրեք, յա մի բան արեք (20) : Զար սատանեն կորցրեցիր (61) : 3. Զրկվել մի բանից : Ով կու գթնե, ախ չի բաշի, վայ բու կորցընողին ըլի (35) : 4. Փչացնել, ոչնչացնել : Զար կորցրած խոնթկարի պես նստած է խապնից բեղամաղ (43) :

ԿՊԶԻԼ, կպա, հ թ մ. կպի, հ ա թ ա կ ա տ. դ ե թ բ. կպած (արմ. կիպ), չ բ. Իրար հուպ գալ, շոշափել, դիպչել : Ղաստա կապած, ռեհինի կըպած, բաց իս էլի դուն գուլի պես (6) :

ԿՌՎԻԼ, եցի, չ բ. 1. Կովել : 2. Խոսքով ընդհարվել, վիճաբանել : Մախուխըն ու օխչի միսը կովեցան. ամեն մեկըն ասում ին՝ «մապեն յիս իմ» (59) :

ԿՍԿԾԱԼԻ, ա ծ. Կսկծացնող, մրմռացնող : Աչկի լուս, կսկծալի՝ յանա-յանա (27) :

ԿՏԱԿ, ի, գ. (կրոն). Աստծու դաշն մարդկանց հետ, որ ամփոփված է Հին և Նոր կտակարաններում, որով խոստանում է մարդկանց փրկություն և պահանջում է բարեպաշտ կյանք : Ուխտի կտակարան : Տապանակ ուխտի կտակավ խորանըտ Ահարոնի նըման (62) :

ԿՏՐԱՏԻԼ, եցի, ն բ. Մանր կտորների բաժանել, կտրատել : Բռնիլ է էշխի դանակըն, սիրտըս կտրատիլ է ուզում (43) :

ԿՏՐԻԼ, եցի, ն բ. 1. Ուժով ձգելով հատել, խպել, կտրել : Թե մե շափաթ քիպ չիմ տեսնի. կու կտրիմ բամանչի սիմըն (30) : 2. Կտրելով որոշ ձև տալ : Վունց ձևիլ գուպե, վունց կտրիլ, կարըս մունաթ չը բաշե (15) : 3. Բուժել, առողջացնել : Շատ տխուր սիրտ կու խընդացնիս, կու կտրիս հիվընդի դողըն (1) : ☉ Կտրիլ տալ—սրախողխող անել, խողխողել : Կտրիլ տու բանի կտրում է—բու թուրըն սարդարի բաբաթ է (47) : Ադաբը կտրիլ—չամաչել, անհամեստ լինել (26) : Ահը կտրիլ—չվախենալ : Կտրեցիր ադաբըտ, կտրեցիր ահըտ (26) :

ԿՏՐՎԻԼ, չ բ. Հառվել, կտրվել (ծգվելուց) : Անդի լարը կտրովիլ է (36) : Տե՛ս նաև էջ 86 :

ԿՐԱԿ, ի, գ. 1. Հուր : Ինչպես վուր կըրակին չի դիմանա մում, էնպես սա-
խաթ կուլի, ովոր խոսի հում (49) : Նաև էջ 37 : 2. Լույս, ճրագ : Մութըն տիղըն
լուս իս տալի առանց կըրակ՝ վառ բացարած (39) : 3. փ խ բ. Աեր, կիրք, խանդ :
Հուրի պես խորվեցիր էշխտ կըրակով (31) : Էշխտը կըրակ ունի՝ վունց կու էր-
վի, վունց կերթա (10) : Նաև էջ 60 : 4. փ խ բ. Աշխուժութիւն, ոգևորութիւն,
եռանդ : Դուն կըրակ, հաքածըտ կըրակ, վո՛ւր մե կըրակին դիմանամ (35) : 5.
Մորմոք, ցավ : Կըրակ դըրիր սրտիս խուցի յարումըն (26) : Գրակ ննգնիլ—
փ խ բ. կրակի նման այրվել. վառվել. բոցավառվել : Բարկ էրեստ՝ կըրակ նըն-
գած օսկու նըման ջիռանում է (38) : Կըրակ նընգած վառ իս էլի (13) : Կրակ
վեր ածիլ բերնեմեն—ոգևորել : Կըրակ իս վեր ածում բերնեմետ (6) : Կրակ
տալ—այրել, վառել, խորովել : Զիգարբս կըրակ իս տըրվի (8) : Կըրակը չաղ
անիլ—թեժացնել, բորբոքել : Էտ կըրակըն չաղ մի՛ անի (6) : Էջ 39, 62,
62, 66, 66 :

ԿՐԱԿԱԾ, ա ծ. Տաք, կրակի պես : Հուր իս՝ էշխով կրակած (13, 56) :

ԿՐԱԿԵ, ա ծ. Հրեղեն, կրակի նման : Կըրակե, ծովեմեն դուս էկած, ռաշ
ու ջեյրան իս ինձ համա (24) :

ԿՐԿԱԼ (բրբ.), ի, գ. Անասունների վրի կիսաօղակ կապ : Ըրտիտ համա
էրկըթե կըրկալ ունիմ (58) :

ԿՐՈՆԱՎՈՒԻՐ (թհբ.), գ. ա ծ. Հոգևորական, կրոնավոր (մարդ) : Էլ հորե-
վաի կրոնավուր... չը մընաց (68) :

ԿՈՒ, «կը» բայակերտ եղանակիչ մասնիկը Ռբիլիսիի բարբառում : 1. Բայի
հետ կապվում է սահմանական ներկա : Շատին վարթուն կու լուսացնիս (1) :
Շատ տըրտուր սիրտ կու խընդացնիս, կու կըտրիս հիվընդի դողըն (1) : Տե՛ս
նաև էջ 7, 7, 10, 10, 10, 17, 18, 18, 23, 25, 26 (4 անգամ), 27, 27, 29, 31,
33, 33, 34 (6 անգամ), 42, 45, 45, 50, 51, 51, 54, 55, 56, 57, 57, 65,
65, 65 (4 անգամ), 71 (7 անգամ), 76 (4 անգամ), 77 (5 անգամ), 78, 79, 79,
85 : 2. Կապվում է պայմանական ապառնի : Յիս էլ քիվիդ կու մեռնիմ (5) :
Էլ յի՛ս կու քաշիմ էս դուսեն (8) : Տե՛ս նաև էջ 31 (3 անգամ), 40, 53 (3 ան-
գամ), 81 : 3. Գալ, լալ բայերից և ձայնավորով սկսվող բայերից առաջ կու-ն
դառնում է գու, իսկ գալ բայի գ-ն դառնում է շնչեղ խուլ : Յիս յարի հիդ ման
գու քամ (18) : Զի սապ գու քա ալ դումաշըն, նապանի (11) : Յադի ձեռնեմեն
գու լամ (67) : Տե՛ս նաև էջ 6 (4 անգամ), 18, 21, 30, 70, 72, 76, 78,
82, 82 : 4. Ուփիլ բայի ըզձական եղանակի հետ միանալիս կու-ն դարձյալ դառ-
նում է գու, սակայն կու եղանակիչի ու-ի անկումով : Օրինակ՝ Զանի գուպե քա-
մին տանե՛ ծովեմեն ավապ չի պակսի (10) : Վունց ուտիլ գուպե, վունց խմիլ
(25) : Տե՛ս նաև էջ 22, 27, 29, 64, 69, 71, 84, 85 : 5. Կու եղանակիչի ու ձայ-
նավորի և բայի սկզբի ձայնավորի միացումով ստացվում է ո (օ) (անել, ասել,
և ածել բայերի դեպքում՝ կոնիմ, կոսիմ, կոծիմ) : Առանց քիվ ի՛նչ կոնիմ սոյ-
բաթըն ու սապըն. Ձեռնեմեն վեր կոծիմ չանգիրն մեռեկ (21) : Հապար բարբաթ

բան կոսիս (3) : Տե՛ս նաև էջ 17, 24, 31 (3 անգամ), 33, 33, 33, 38, 39, 39, 70, 76, 77 (3 անգամ) : 6. «Ըլիլ» բայի հետ միանալիս վերջինիս ը-ն ընկնում է : Ինչ կուլի միզ մըտիկ անիս (45) : Տե՛ս նաև էջ 18, 26 (4 անգամ), 54, 56, 63 (3 անգամ), 71 : 7. Ըհալ բայի հետ միանալիս ընկնում է կու եղանակիչի ու-ն : Ըրեսըտ նուր լուսնի նրման բանի կեհա կու բոլըրվի (2) : Տե՛ս նաև էջ 36, 50, 56 :

ԿՈՒԴԻ (վրաց.) ի. գ. Պոչ : Չարըտ ռաշի կուղեն պիտի, վուր դուն խոսիս բաղըր հանգով (1) :

ԿՈՒԹ (թբբ.), ի. գ. Կոթ : Կութըտ շիրմայեմեն պիտի, փուրըտ սադափով նախշ արած (1) :

ԿՈՒՂ (թբբ.), ի. գ. Կող. կողոսկր : Աթամի կուղեմեն քաշից, Եվան տըվից նրրան (64) :

ԿՈՒՇՏ (բբբ.), կշտի, գ. Կողք, մտը : Կըշտիս ունիս օսկե բարուր (25) :

ԿՈՒՌ (ն), կրան (հոգն. կոնիր), գ. 1. Բալուկ, թև, ձեռք : Կուըտ շիմ-շատ, մատնիրըտ մում բրոլե ճաղին կարոտ է (30) : Բանի գուլե քընած տիղըն իր թըշնամին կուըն կապե, էլի վիրչումըն մեյդանըն Բոստոմի Ջալուն մընում է (52) : Տե՛ս նաև էջ 21, 42 : 2. Կողմ : Հենց գիդիս դուրթ քո՛ւն ունիմ, մե աչկըս-անգաճըս թու կըռնումըն ունիմ (58) : Հիվանդ իմ էշխի կըռնեմեն (6) : Տե՛ս նաև էջ 69, 76 :

ԿՈՒՍԱՆՈՑ, ի (հոգն. սեռ. կուսանաց կամ կուսանանց), գ. Կուլսերի վանք : Մըշո սուլթան սուրփ Կարապիտ... թագ ու պարծան իս կուսանանց (61) :

ԿՈՒԻՐ (բբբ.), գ. ած. Կուր : Ով թիվ խայան մըտիկ տա, դառնա էրկու աչկով կուր (13, 56) : Տե՛ս նաև էջ 47, 47 :

Զ

ԶԱ (բբբ.), մ. Շարունակ, միշտ, անընդհատ : Խիլըն գըլխես հա՛ տանում իս (6) : Հա՛ լաց էլա, վա՛յ կանչեցի անհաշիվ (63) : Տե՛ս նաև էջ 14, 74, 74, 74, 83 :

ԶԱԲԱՇ, ի. գ. Հաբեշտան, Եթովպիա : Սայաթ-Նովու գերեզմանըն Հինդ, Հաբաշ Արաբ մի՛ անի (10) :

ԶԱԴԻԴ-ԱԴ (արաբ.), ի. գ. Երկաթե դապգահ լար քաշելու համար : Մեշկըտ հադիդեմեն քաշած սիրմա մավթուլի նրման է (7) :

ԶԱԶ (արաբ.), գ. Հաճույք, ախորժ : ☉ Հազ անիլ—ախորժել, հաճույք ստանալ, դուր գալ, ցանկանալ : Հալթաթ մահիս հազ իս անում (6) : Հազ չու-նիմ—անախորժ է, ատելի է, ատում եմ : Հազ չունիմ խային յարեմեն (6) : էջ 14, 14 :

ԶԱԶԱՐՐ, թ. 1. Հազար թիվը : Հազար տարի անց տերըն էկավ աշխար (64) : Տե՛ս նաև էջ 68, 68 : 2. Մեծ քանակություն, շատ-շատ : Հազար բաբաթ բան կոսիս (15) : Ով չէ տեսի—մե՛կ ա՛խ կոնե, ով կու տեսնե՛ հազա՛ր հարուր (25) : Թեգուլ հազար դարդ ունենամ, լիս սրրտումըս ա՛հ չիմ ասի

(31) : Տե՛ս նաև էջ 5, 24, 25, 27, 30, 73, 75, 77, 88: ☉ *Հազար ափսոս*— շատ ափսոս: *Ափսոսալու հազար ափսոս յիս էս դադա դար ունենամ* (57) : *Հազարեն մե ջեր*—մեկ-մեկ, երբեմն: *Ի՛նչ կուլի միզ մրտիկ անիս Հազարեն մե ջեր, նա՛զանի* (45) : *Հազար մե*—տե՛ս վերևի երկրորդ նշանակութ. *Չին գիդի թե ուշկ ու միտկըս հազար մե բարբթ հանգին ա* (15) :

ՀԱԶԱՐ² (արաբ.), ի, գ. Հանգիստ՝ խաղաղ կյանք, խաղաղություն: *Հազարին հազար պիտի* (56) («սոխակին խաղաղություն է պետք») :

ՀԱԶԱՐ³ (արաբ.), ի, գ. Սոխակ: *Հազարին հազար պիտի, էրած սրրուե-րին ճար պիտի* (56) :

ՀԱԶԱՐ ՀԱՐՈՒՐ, թ. Հարուր հազար: *Ֆի խ բ. շատ, մեծ քանակություն: Ով չէ տեսի՛ մե՛կ ա՛խ կոնե, ով կու տեսնե՛ հազար հարուր* (25) :

ՀԱԶԻՐ (արաբ.), ա ծ. մ. Պատրաստ: *Հազիր շինիլ*—պատրաստ համա-րել, անառարկելի կերպով ընդունել: *Թե կամենաս, ամենան տիղ բու ասածըս հազիր շինին* (47) :

ՀԱԼ (արաբ.), ի, գ. Վիճակ, դրություն: *Էշխեմետ հիվանդացա, չիս հարց-նում իմ հալըս* (66) : էջ 19, 26, 30, 32, 34, 41:

ՀԱԼԱ (արաբ.), մ. Դեռ, դեռևս: *Հալա չին գործի Թիրմանումըն շալ քիպի լալիղ* (48) :

ՀԱԼԱԼ (արաբ.) ա ծ. մ. 1. Արժանի, վայել: *Հալալ Սայաթ-Նովուն կեն ու ալիբ թո** (50) : 2. Անխարդախ, ուղիղ, արդար: *Հալալ մրտիկ արա հացի ու աղի* (16) : 3. Հարապատ: *Անց մի՛ կենա, թե հալալ իս, Մի մոր ծրնած, մի մոր դալ իս* (6) : էջ 15:

ՀԱԼԲԱԹ (արաբ.), մ. 1. Անտարակույս, անկասկած, անշուշտ, իհարկե: *Շատ մարթ կոսե հալբաթ սա վանգին ա* (15) : 2. Երևի, թերևս: *Հալբաթ մա-հիս հազ իս անում* (6) : էջ 14, 60:

ՀԱԼԻԼ (հ թ մ. հալե), 1. ն բ. Հալել: *Ֆի խ բ. Ոչնչացնել, վերացնել: Մեղա-վորաց միղըն հալե* (61) : Տե՛ս նաև էջ 52: 2. չ բ. Հալվել: *Թե վուր սարերուն հանդիբիս կու հալիս մումի նըման* (4) : Տե՛ս նաև էջ 15:

ՀԱԼԻԼԱ (բբբ.), լի, գ. Հալելի: *Ջամ—հալիլա, լալ ու թիլա* (6) : էջ 13:

ՀԱԼՎԻԼ, վեցա, կ թ. չ բ. ֆի խ բ. Տրորվել, մաշվել: *Հալվեցա, արնաքամ էլա՛ յարես հիդ արած գիդենաք* (57) : ☉ *Հալվիլ ու մաշվիլ—վշտից՝ տանջան-քից հյուծվել: Հալվեցա, մաշվեցա, էլ ինչ ջան գու բամ* (18) : *Հալվեցա, մաշվե-ցա քիպիդ, Ռա՛հմ արա, մե խոսի միպիդ* (27) :

ՀԱՆ (արաբ.) ի, գ. Վարձ, գին: *Թանգ հախով գընած չըրաղ իմ* (8) : Տե՛ս նաև էջ 61:

ՀԱԿ, հակն (հ ռ գ ն. հակնիր), գ. Ծանրոց, բեռան հակ: *Հակնիրըս է սիլա-սիլա* (15) :

* *Հալալ Սայաթ-Նովուն՝ կեն ու ալիբ թո* = կաթ—արժան է Սայաթ-Նովա-լին մոր ծծած կաթը: Տե՛ս Մ. Հ ա ս ր ա թ յ ա ն, Սայաթ-Նովալի խաղերի ժո-ղովածու, 1959, էջ 67:

ՀԱՆՈՐԹՎԻԼ (բբբ.), վեցի, չբ. 4ր. (եկեղ.) Հաղորդություն ընդունել, ճաշակել (օրհնած նշխար ու գինի ընդունել իբրև Զրիստոսի մարմին և արյուն) : *Միխկիրիտ դարձ գաս ու պիտի հաղորթվիս* (59) :

ՀԱՄ¹, ի. գ. Համտես, ճաշակելիք : *Մե գամ էլա մածնի համը շանց կուտամ* (58) : Տե՛ս նաև էջ 77 : 2. *Վի խ բ.* Ախորժեխություն, բավականություն : *Աշխարեմեն բեպարիլ իմ, էլ բերնումըս համ չը կա* (67) : ③ *Համ առնիլ—ճաշակել, ուտել, համն իմանալ : Համ առնիլըն ուպից նախամար Եվան* (64) : *Կու տեսնիք մինձ վարար, վուր առիլ իք էս պտղի համ* (64) :

ՀԱՄ² (արաբ.), ի. գ. 1. Հոգս, վիշտ, թախիծ, տխրություն : ③ *Համ անիլ—թախծել, տխրել : Էտ փրոսանդով համ իս անում* (6) : էջ 13 :

ՀԱՄԱ, ն խ դ ր. 1. Համար (մեկին մի բան հատկացված կամ վիճակված) : *Ճըտտ համա էրկրթե կըրկալ ունիմ* (58) : Տե՛ս նաև էջ 52 (7 անգամ) : 2. Ի սեր, ի հարգանս, սիրո : *Միռնելուս համա չիմ հոքում, ցիդի համա իմ լալի* (36) : էջ 52 (7 անգամ) : ③ *Ընդու համա—ալդ պատճառով : Թե խամ հաքնիս, թե վար հաքնիս, կու շինիս ղումաշ, նա՛վանի : Ընդու համա բու տեսնողըն ասում է վա՛շ, վա՛շ, նազանի* (35) : Տե՛ս նաև էջ 7, 54, 54, 64 :

ՀԱՄԱՅՆ, ա ծ. Բոլոր, բովանդակ, ամբողջ : *Ավետիս համայն առաքյալ* (61) :

ՀԱՄԱՆ (պարսկ.), մ. 1. Անընդհատ, շարունակ, միշտ : *Մազեն մե սահաթ լավ կուլի, դուն համան թազա իս, ա՛վիլ* (40) : Տե՛ս նաև էջ 67 : 2. Այնպես : *Էշխենետ համա՛ն իմ լացի* (41) :

ՀԱՄԱՇԱ (պարսկ.), մ. Միշտ, ամեն անգամ, շարունակ : *Համաշա իմ լսորի ճամփին կանգնած իմ* (13) : էջ 13, 25, 29, 31, 32, 42, 63, 70 :

ՀԱՄԲԱՐԸ (բբբ.), ի. գ. Համրանք, հաշիվ, հաշվել : *Թեզուլ իմանաս, գիդենաս աստեղերու համբարըն սիրուն, Անբարի գուրձըն կորած է* (37) :

ՀԱՄԲՈՒՐ (բբբ.), ի. գ. Համբուր : *Համբուրիմ սիրով համբուր, Վունցոր խեչին է դաստուր* (13, 56) :

ՀԱՄԲՈՒՐԻԼ, եցի, ն բ. Համբուրել : *Յիս քիզանից չիմ հիռանա..., թեզուլ սիրիս, թեզուլ ատիս, թեզուլ համբուրիս, ախպեր* (13) : էջ 24, 24, 73 :

ՀԱՄԴ (արաբ.), ի. գ. Փառք, փառաբանություն : *Ասկըտ ասկերումըն զուված՝ համդ ունիս, գուլալ թաքավուր* (10) :

ՀԱՄԴԱՄ (պարսկ.), ի. գ. ա ծ. 1. Խոսակից, սրտակից, ընկերակից, ընկեր : *Ամեն մարթ իրանըն է բաշում, դարդիման համդամ չը կա* (67) : *Էրնեկ մոդրտ նրատող յարին, վուր քիպի պես համդամ ունե* (38) : 2. Կողակից, շնչակից : *Աթամի կուղեմեն բաշից, Եվան տրվից նըրան համդամ* (64) : *Համդամ գուպիք՝ էս ծիլ դարար—Տերըն ասաց—չուտիք էս բար, Թե չէ կու տեսնիք մինձ վարար* (64) :

ՀԱՄԻՄ (թիբ.), ի. գ. (բսբ.) Համեմ : *Համիմ, սխտոր, պինտա ու պըռսու ունիմ* (59) :

ՀԱՄՈՎ, մ. ա ծ. Համերաշխ, հաշտ: Բաղցրությամբ, անուշությամբ: Արի համով* ղուլուղ արա, խալխի նոքար Սալաթ-Նովա (37):

ՀԱՄՓԻՐՈՒԹԻՆ (թիբ.), թենի, գ. Համբերություն: Համփիրութինը հատիլ է, չիմ դիմանում խալխի գափին (53):

ՀԱՄԲ (բրբ.), ի, գ. Համ, հաճույք: Իմաստուննիրրն չը տեսան էս աշխարհա հուտրն ու համբըն (44):

ՀԱՅԱ (արաբ.), յի, գ. Ամոթ, պատկառանք. ամոթի կզացում: Հայա սիրե, ադաբ սիրե, ար սիրե (16):

ՀԱՅԱԼՈՒ (արաբ., ադրբ.), ա ծ. Համեստ, պարկեշտ, ամոթխած. պատկառանքով, նամուսով: Էրեսըս հայալու պահիմ արըս մունաթ չը բաշե (15): Տե՛ս նաև էջ 29:

ՀԱՅԵՎԱՐ (բրբ.), մ. Հայերեն: Հիմի գուլիմ թե հայեվար ասիմ (4-րդ խաղի տողատակի ծանոթ.):

ՀԱՅԵՐԵՆ, ա ծ. Հայերենով գրված: Որըն զըրոց հայերեն տաղ է, որը՛ն վրաց (5-րդ խաղի տողատակի ծանոթ.):

ՀԱՅՏՆԵԼ, եցի: Տիրոջըն դու ցուցիր մարդկանց՝ Երրորդությունն հայտնեցիլ (61):

ՀԱՆԳ, ի, գ. 1. Երգի եղանակ: Էս դաստա բեդաստա երգի հանգով (7): Տե՛ս նաև էջ 40, 45, 46, 50, 51, 54, 55, 59, 75 (տողատակերի ծանոթ.): 2. Հնչյուն, նվագ, մեղեդի: Չարտ աաշի կուղեն պիտի, վուր դուն խոսիս բաղցըր հանգով (1): 3. Միջոց, կերպ, կարգ: Էշխըն վուր կա՝ հազար բաբաթ հանգ ունե (18): ④ Հանգ անիլ—1) ձայնակցել: Բըլբուլի հիդ հանգ իս անում (2): Տե՛ս նաև էջ 7, 86, 86: 2) Նմանվել: Կավիրըտ օլոր տար ու բիր, արալիշ գուլ հանգ իս արի (65): Հանգով—ներդաշնակորեն, միասին, ձայնակցելով: Խաղ կանչինք հանգով (29):

ՀԱՆԴԱՄ (պարսկ.), գ. ա ծ. 1. Վայելուչ: 2. Համաքայլ: Շուռ գանք հանդամով, երկնային նամով, թուփրն բացվիլ է (29):

ՀԱՆԴԻԲԻԼ (բրբ.), չ բ. 1. Իրար պատահել, դեմ առ դեմ գալ: Թե վուր սարերուն հանդիբիս, կու հալիս մումի նըման (4): 2. Կարճ ժամանակով մեկին կամ մի տեղ այցելել: Թե վուր բաղաբ տիղ հանդիբիս, կու բանդիս—վար չիս անի (14): 3. Չգտել մի բանի, պատահել: Ղաստ անիմ, բարու հանդիբիմ չարըս մունաթ չը բաշե (15):

ՀԱՆԻԼ, եցի, ն բ. 1. Դուրս բերել, հանել (մի բանի տակից, իրըչրց): Անտակ ծովի միչեն հանած ակնիր ունիմ (15): 2. Վերացնել, հեռացնել, վանել: Էտ խիալըն սըրտեստ հանե (7): 3. Դուրս բերել, արտահանել: Հընդկաց բաղաբիցըն հանած ջավահիր բար իս (46): 4. Նկարել: Մուլզ ունե էն նաղջարըն, վուր թահրըտ դալամով հանա (38): 5. Մասնատել: Դանգը դանգի միչեն հանած հիդ-բաշած մըսխալ մըսխալ իս (34): 6. Բողբոջել, ծաղկել, տերևակա-

* «Համով» բառի համար տե՛ս Մ. Հասարթյան, Սալաթ-Նովա, 1959 թ. հայերեն 37-րդ խաղի ծանոթագրությունը:

ել: Հանած ծառ է, էշխով վառ է (6): ☉ *Խաղ հանիլ*—երգ հորինել: *Ուշկ ու միտկըս խառնըվեցավ... խաղ հաննեն* (57): *Հոքին հանիլ*—տանջել, չարչարել: *Մարթու հոքին կու հանն* (60): Տե՛ս նաև էջ 12, 14, 23, 31: *Ջանը հանիլ*—տանջել, չարչարել: *Ջանըս հանեցիր, ջաղուքար իս* (6): էջ 13: *Տալոնն հանիլ*—արմատահան անել, արմատից պոկել՝ դուրս բաշել: *Չիր կու տա տալոնն կու հանն* (54):

ՀԱՆՔԻԼ (բրբ.), եցի, չբ. Հանգստանալ: *Ասի թե «էշխուեն չիմ հանք-չում տանըս, Չիսնիրըս թըլացազ՝ չէ շինում բանըս»* (25):

ՀԱՆԿԻԼ (բրբ.), եցի, չբ. Համարել, ընդունել: *Անունըս հաշմիր՝ սու-ադ* (65):

ՀԱՉՈՑ, ի. գ. *Քու շներու հաշոցենն չիմ խըրթընի* (58):

ՀԱՋ (արաբ.), ի, գ. Ուխտատեղի: *Ղարիբ դավրիշ իմ, հաջ չունիմ* (45):

ՀԱՍԱՍԵՒ, բառախաղ՝ կազմված թուրք. *հասաս*—«պահակ», «գիշերապահ» բառից և հայ. է էական բայից: *Մահը վուր կա, առանց կաշառք հասասեն* (51):

ՀԱՍԱՍԵՒ?, բառախաղ: «Խոսք ասել»: *Մե մարր չը կա վուր ինձ խըրատ հասասեն* (51):

ՀԱՍԱՍԵՑ, բառախաղ: Հասնելու մոտ է, հասնելու վրա է, շուտով հասնելու է, հասեհաս, հասվեհաս: *Դուն մահի հիդ, մահը քիզ հիդ հասասեն* (51):

ՀԱՍԱՍԵԷ, բառախաղ՝ կազմված հա բացականչական բառից, աղբբ. սաս—«ծալն» բառից և հայ. է էական բայից: *Անգան կալա, չիմացա ինչ հասասեն* (51):

ՀԱՍԱՍԵԾ, բառախաղ՝ կազմված «հասնել» և սե (հայերեն այբուբենի «Ս» տառի անունից): *Հասա ռա է, հասա ջե, հասասեն** (51):

ՀԱՍՆԻԼ, հասա, ն բ. 1. Հետևից գնալով, մոտենալ, հավասարվել: *Է՛լ լավ օրերու էդիվըն հասնիս* (1): 2. Մոտենալ: *Հասա ռա, հասա ջե* (51): էջ 68, 68, 68: 3. Տիրանալ, ձեռք բերել: *Չեթող թե մուրապին հասնին* (52): 4. Տեղի ունենալ, կատարվել: *Ժամանակ հասավ աչկերիս լալու* (50): *Հասավ գարունքվան հուսունըն* (43): 5. Նշված տեղը գալ: *Եկ գընանք չղըն, վուր հասնինք գղըն* (29): 6. Վախճանը գալ: *Յիս քիզանից չիմ հիռանա, թե չը հասնի մահիս վադեն* (7): 7. Հասունանալ: *Հասիլ է ծուցիտ շամամըն* (30):

ՀԱՍՍԱՏ, ա ծ. մ. Անդրդվելի: *Ով ունեցավ հուս ու հավատ, իղարին մընացողըն հաստատ, Տերըն կու հիշե ամեն ժամ* (64):

ՀԱՍՐԱԹ (արաբ.), ի, գ. Կարոտ, կարոտանք: *Վայ թե հասրաթետ միռնիմ* (11): *Շատըն հասրաթետ կու մեռնի՝ սրրտումըն կուռնեսս կարուր* (25): Տե՛ս նաև էջ 32, 54, 86:

ՀԱՎԱՋՈՎԱ (արաբ.), վի, գ. (բսբ.) Սև տերևներով և դառնահամ արմատներով դեղաբույս, դառնիճ, եղերդ: ☉ *Հավաջովա դառնալ—փխբ. դառ-*

* Հասասեն բառերը տե՛ս Մ. Հասրաթյան, Սայաթ-Նովայի հայ. վրաց. և աղբբ. խաղերի ժողովածու, 1959, հայերեն 51-րդ խաղը:

նիճ բույսի պէս դառնանալ (այսինքն ուրախությունից կրկվել, կյանքը սևանալ՝ դառնանալ) : *Էշխետ դառա հավաջողվա, իսկի չիս գալի, չիս ասում. «խիստ իս լալիս, Սայթթ-Նովա»* (13) : Էջ 25 :

ՀԱՎԱՍ (պարսկ.), ի, գ. Ցանկություն, հակում, սեր : *Սապին խիլքոտ չը տանուլ տաս էտ խիալով, էտ հավասով* (25) :

ՀԱՎԱՍԱՐ, մ. Միևնույն որակի, միևնույն կարգի, նույնանման : *Վարթ էրեստ խալ իս դրի—աստղի նըման հավասար* (60) :

ՀԱՎԱՏ, ի, գ. (կրոն.) Աստծուն հավատալը, հավատք, դավանանք : *Ով ունեցավ հուս ու հավատ, Տերըն կու հիշե ամեն ժամ* (64) :

ՀԱՎԱՏԱՐԻՄ, ա ծ. Վստահելի, նվիրված, անդավաճան : *Էսպես ասել է մեկ հավատարիմ սիրեկան* (23-րդ խաղի տողատակի ծանոթ.) :

ՀԱՎԱՋՅԱՑ (գրբ.) Հավաքեց, ժողովեց : *...Ջորոս ամենայն յուր հավաք-յաց* (61) :

ՀԱՏ, ի, գ. Տեսակ, նմանակ : *Սըրա հատը դիմացըն է* (24-րդ խաղի տողատակի ծանոթ.) :

ՀԱՏՆԻԼ, հատավ, չբ. Սպառվել, վերջանալ : *Համփիրությունըս հատիլ է, չիմ դիմանում խալխի գափին* (53) :

ՀԱՐԱ, յի, գ. Օգնություն կանչելու աղաղակ : ☉ *Հարա կանչիլ—օգնու-թյուն խնդրել : Մե տիղ հուրմի-հեքիմ չըկա, դուռըն էհամ կանչիմ հարա* (36) :

ՀԱՐԱՆՑ (գրաբ.) *հո գ ն. ս ե ռ.* «հայր» բառի, միայն *Հարանց վարք* կապակցության մեջ (կրոն.)—սուրբ հայրերի կյանքը, վարքագրությունը պարունակող եկեղեցական գիրք, «Վարք սրբոց» : *Կարթա Հարանց վարքըն սիրուն* (37) : *Խրատինիրըն գրած Հարանց վարքումըն է* (16) :

ՀԱՐԱՎ, ի, գ. Արևիլք, արիվմուտք, հարաձ ու հյուսիս *Չը կա բիպի նըման* (17) :

ՀԱՐԳԱԸ (պարս.), մ. Միշտ, շարունակ, ամեն ժամանակ : *Փիքըր ու խիալըս հարգահ աշխրըքի ցավի մասին է* (68) :

ՀԱՐՍ, ի, գ. Կովկիթըս կոտրիլ իմ հարսից խըռով իմ (58) :

ՀԱՐՄՆԻԸ (բրբ.), ի, գ. Հարսանիք : *Վուր տիղ հարսնիք, վուր տիղըն սուր, վուր տիղ սուբաթ խաղ է ըլում* (37) :

ՀԱՐՑՆԻԼ, ցրի, ցրու, ն բ. 1. Մեկին դիմել, մի բան իմանալու համար : *Թե վոր չիմանաս հարցըրու* (18-րդ խաղի տողատակի ծանոթ.) : 2. Մեկի կամքն իմանալ, համաձայնությունը վերցնել : *Չի հարցընի ախկատ, հարուստ, թաքավուր՝ մահը վուր կա, առանց կաշառք հասասե* (51) : 3. Մեկի վիճակի՝ որպիսության մասին հետաքրքրվել : *Էշխեմետ հիվանդացա, չիս հարցընում իմ հալըս* (66) : Տե՛ս նաև էջ 30, 69 : 4. Մի բանի հատկությամբ՝ վորությամբ հետաքրքրվել : *Թե դուն էշխի հիդ մանգալըն հարցընիս՝ չի դիմանա Բոստոմ Ջալըն՝ հարցնիս* (18) : 5. Նկատի ունենալ, հաշվի առնել, ուշադրություն դարձրնել : *Շահի վուրիաթ թաքաղըն չի հարցընի դուզուն դաղըն* (6) : Էջ 16 :

ՀԱՐՈՒՍ, գ. ա ծ. Ունևոր : *Չի հարցընի ախկատ, հարուստ, թաքավուր, մահը վուր կա առանց կաշառք հասասե* (51) :

ՀԱՐՈՒՐ, ի. թ. Հարյուր: Ով չէ տեսի՝ մեկ ախ կոնն, ով կու տեսնն՝ հա-
պար հարուր (25): Տե՛ս նաև էջ 18, 45:

ՀԱՐՓԻԼ (բրբ.), եցի, չբ. 1. Հարբել, գինովնալ: *Բանի գուպն մարթ վուր
հարփի, վո՛նց կուլի վապնից բեղամաղ* (43): էջ 56, 60: 2. փ խ բ. Գրավվել,
տարվել: *Մոտըտ նըստողըն կու հարփի* (40):

ՀԱՅ, ի. գ. 1. Լիություն: *Միր էղնեն թամամ աշխարըս սով քաշն—հաց չը
տեսնն* (15): 2. փ խ բ. Մտերմություն, բարեկամություն, հավատարմություն:
Մըտիկ արա աղ ու հացին (15): *Հալալ մըտիկ արա հացի ու աղի* (16):
⊙ *Աղ ու հացը դեն գըցիլ—ապերախտ՝ երախտամոռ լինել, բարեկամությունն,
հավատարմությունը մոռանալ: Աղ ու հացըն մի դեն գըցի, շաբթենը մեկ մըտիկ
սու միկ* (23):

ՀԱՋԱԾԸ (բրբ.), ի. գ. Հագնելիք շորերը, ինչ որ ունի վրան հագած: *Դո՛ն
կըրակ, հաքածըտ կըրակ, վո՛ւր մե կըրակին դիմանամ* (53): *Հաքածըտ պար ու
ղումաշ ա* (6): Տե՛ս նաև էջ 49:

ՀԱՋԻ (ն), ա ծ. մ. Վրան հագած (շոր, հագուստ): *Հաքիտ պարըն ալ իս
արի* (3): *Ում հաքին հին շալ ին տեսնում, էլ չին ասում թե էս ո՞վ ա* (44):
Նաև էջ 65:

ՀԱՋՆԻԼ (բրբ.), հաքա, հաքի, ն բ. Հագնել: *Կու հաքնիմ մապեղեն, կու
հաքնիմ շալըն* (21): *Հաքիլ ըլիս պար պարբաբըն խաս ալով* (20): էջ 42, 44,
49, 51, 51, 53, 57, 65:

ՀԱՋՑՆԻԼ (բրբ.), ն բ. Հագցնել, պետուավորել: *Հաքցրիր իմ չուպեցած սիվ
ու սուբ լիբասըն ինձի* (67): Տե՛ս նաև էջ 61:

ՀԵՅԲԱԹ (արաբ.), ի. գ. Երկյուղ և պատկառանք ապող բան: ⊙ *Հեյ-
բաթ մնալ—երկյուղով պատել (հիացմունքից): Տեսնողըն հեյբաթ կու մընա
էտ քու սիրուն մահ-ջամալիտ* (7):

ՀԵՅ ՎԱՆ, ձ. Վշտի՝ ցավի բացականչություն: *Հեյ վախ, էլ ձեռիս քա-
մանչա... չըկա* (67):

ՀԵՅՐԱՆ (արաբ.), ի. գ. Սրմանք, պարմանք, ապշելը: *Մապիրըտ դաստա,
պըռռըտ փըստա հեյրանի վախտ է* (29): ⊙ *Հեյրան անիլ—1) պարմացնել,
ապշեցնել: Շուղկըտ արեգագի նըման է՝ տեսնողին հեյրան իս անում* (8): 2)
խելքահան անել- խնթաացնել: *Տարար խիլըս, հեյրան արիր* (6):

ՀԵՆՉԱՐ (բրբ.), մ. Միայն, այնքան, բավական: ⊙ *Հենչաբ ըլի—միայն
թե, այնքան որ: Յիս էն մահին մահ չիմ ասի՝ Հենչաբ ըլի՝ դուն վըրես լաս*
(31): *Հենչաբ ըլի՝ ուրախ կենաս* (7): Տե՛ս նաև էջ 29, 29:

ՀԵՆՑ (բրբ.): մ. 1. Այնպես, այն կերպով: *Հենց բան արա՝ մարթ վըրետ չը
ծիծաղի* (16): *Գուպիմ ումբըրըս հենց անցկացնիմ օրըս մունաթ չը քաշն*
(15): 2. Ուղիղ, ուղղակի, իսկ և իսկ: *Հենց ձեռովըտ կապեցիր էնպես բաց էր
իղբալըս* (66): ⊙ *Հենց գիդիս—կարծում ես, հակառակ քո կարծածին: Հենց
գիդիս՝ չիմ գիդի, յար, չիմ իմանում* (26): Տե՛ս նաև էջ 76: *Հենց իմացի—ըն-
դունիր, համարիր: Հենց իմացի, յար, քու դուլըն իմ* (8):

ՀԵՍԱԲ (արաբ.) ի, գ. Հաշիվ: ① Հեսաբ անիլ—որևէ մեկի տեղ ընդունել, համարել: *Էրազումըն տեսածի հիդ միպի մե հեսաբ մի՛ անի* (10):

ՀԵՍՏԻ (թիբ.), մ. Այնպիսի, այնպես: *Էշխըն հեստի կըրակ ունի՝ վունց կու էրվի, վունց կերթա* (4): Տե՛ս նաև էջ 27, 27:

ՀԵՏ, ն յս դ թ. Կողքին, միասին, հետը: *Թուրքերեն էլ ուզում էի հետըն խառնել, բայց չխառնեցի* (5-րդ խաղի տողատակի ծանոթ.):

ՀԵՐԻԲ (բրբ.), մ. Բավական: *Պատանքին մե ջանգըն է հերիբ՝ չալ անիլըն ինչին է շահ* (44):

ՀԵՔԱԼ (արաբ.), ի, գ. Արծան, անդրի: *Ջրնաղ հեքալ—կիսանդրի: Սկանդարի Ջուղարեն թողած, ջրնաղ հեքալ արմանալու* (46): (Ըստ Ռ. Աբրահամյանի՝ կերպարանք, հասակ):

ՀԵՔԻՄ՝ (արաբ.), ի, գ. Բծիշկ: *Ի՛նչ կոնիմ հեքիմըն, ի՛նչ կոնիմ ջարեն* (26): *Էշխեմետ հիվանդացիլ իմ... Հեքիմնիրըս ափսոսում ին՝ ծընգան տալով վա՛յ ին ասում* (40): Տե՛ս նաև էջ 20, 39, 45, 52, 56:

ՀԵՔԻՄ՝ (արաբ. հաքիմ), ի, գ. Դատավոր, իշխանավոր: *Հեքիմ ու դատաստան չը կա, մե դյուստ աղալաթ չը կա* (33): Տե՛ս նաև Հուքմի-հեքիմ:

ՀԻԴ՝, ն յս դ թ. 1. Հետ, միասին, կողքին: *Ման իմ գալի դիդարի հիդ, վունց դարիբ բըլբուլ խարի հիդ, Դու վարթի հիդ, յիս յարի հիդ* (9): Տե՛ս նաև էջ 6, 7, 8, 8, 32 71: 2. Կապ, հարաբերություն: *Էրազումըն տեսածի հիդ միպի մե հեսաբ մի՛ անի* (10): *Դուն ուրիշի հիդ մի՛ խոսի* (30): *Գիլի հիդ բան չունիմ, չըբնին կու գովիմ* (58): 3. Նկատմամբ, վերաբերմամբ: *Հիդ աշխարիս բարեբար իս* (6): Տե՛ս նաև էջ 83: 4. Մոտ: *Մըհլամըս հիդ յարին մընայ* (33): 5. Հետո: *Բի վարթարած տեսնիմ հիդ ծաղկապարթին՝ հաքիլ ըլիս վարպարբարըն յասս ալով* (20): 6. Ետևից: *Դու մահի հիդ, մահը քիվ հիդ հասասե* (51): *Շատ մարթ կոսե յիս յարի հիդ ման գու քամ* (18): 7. Հետ-ի խնդրի անձնական դերանունին փոխարինում են դիմորոջ հողերը՝ *ս, դ, ն (ը)*: *Ի՛նչ կուլի մե հիդըս խոսիս* (24): Տե՛ս նաև էջ 40: *Ուրոր գընաս, ինձ էլ հիդըտ տար* (54): Տե՛ս նաև էջ 5, 15: *Գնա հիդըն յաղ մի՛ անի* (6): 7. Կապմուն է հարադիր բայեր: *Հիդ էհալ—հետ գնալ: Խան հիդ կեհամ, խան գուքամ* (18): *Հիդ քաշիլ—կրկին կշռել, ստուգելով կշռել: Դանգըն դանգին միչեն հանած, հիդ քաշած մըսխալ մըսխալ իս* (34): *Հիդ քաշվիլ—ճանապարհ տալ: Գուպլի սիրուն կարոտ իմ հիդ քաշվի սար իմ ասում* (28): Տե՛ս նաև էջ 42: *Մըտլի հիդ էհալ—մտածել, կասկածել: Դուն քու մըտլի հիդ մի՛ էհա, էտ յիխալըն սըրտետ հանե* (7):

ՀԻԴ՝ (արաբ.), ա ծ. 1. Սուր: *Թե դուն էշխի հիդ մանգալըն հարցընիս՝ չի դիմանա Բոստոմ Ջալըն՝ հարցընիս* (18) («սիրո սուր մանգաղին չի դիմանա նույնիսկ Բոստոմ Ջալը»): 2. Կատաղի: *Ամեն մարթ չի կանա մըտնի՝ էշխիտ ջուրըն հիդ է, պալում* (39):

ՀԻԴՔԱՇԻԼ (թիբ.), ն բ. Վերջստին, կրկին կշռել, ստուգելով կշռել: *Հիդ քաշած մըսխալ մըսխալ իս* (34):

ՀԻԴՔԵՐԱԾ (թիբ.), Կրկին բերոված: Աշկլս թաց, բերաննս ցամաք, լի-
պուս հիդքերած գիղենաք (57):

ՀԻԶ (պարսկ. հիպան բառից) -- պահանգ, հենակ, գերան: Աջաբ բու սիր-
ուրն ով շինից՝ խոնարից, հիպնից բեղամաղ (43): (Արդյոք թո սիրտըն ով էր
շինել, որ խոնարիվեց (կոտրվեց) հենակից դժգոհ): (Ըստ Գ. Ախվերդյանի՝
Հիպնից պետք է հասկանալ որպես Հեպ բառի բ ա ց. հ ո լ) .:

ՀԻԼ (պարսկ.), ի. գ. Համեմունքային բույս: Հուտով հիլ, միխակ... վարթ,
մանիշակ...իս (24): Տե՛ս նաև էջ 38:

ՀԻՄԱՆԱԼ, ՀԻՄՆԱՆԱԼ չբ. Հիմնավորվել, ամրապնդվել: Վուր յիս
ասիմ իմացի, էշիս մեչըն հիմացի (56): Յիս էն Սայաթ-Նովասին չիմ, վուր
ավզի վըրա հիմանամ (35): էջ 25, 51:

ՀԻՄԱՐ, ի. գ. ա ծ. Դուռն էն գըլխեն իմաստուն իս, խլլըլտ հիմարին բաբ
մի անի (10):

ՀԻՄԻ (բրբ.), մ. Ալծմ, հիմա: Հիմի գուլիմ թե հալեվար ասիմ (4-րդ խա-
ղի տողատակի ծանոթ.): Չունիմ վաղվան քաղցըր փառքըս, հիմի դարըն շա-
տացիլ է (52):

ՀԻՄՔ, ի. գ. Ծինության հիմքը: Հիմքըտ վերջստին նուրեցին, չաղ արին,
Մողնու սուրփ Գուուրք (62):

ՀԻՆ, ա ծ. Ում հաբին հին շալ իմ տեսնում, էլ չին ասում, թե էս ով ա (44):

ՀԻՆԳ, թ. Ըսպես թասլիք—մուխալիփի հանգում, հինգ յարփաղլի (տերե-
վավոր) (22-րդ խաղի տողատակի ծանոթ.):

ՀԻՆԴ, հինդու, գ. Հնդկաստան: Սայաթ-Նովու գերեզմանըն Հինդ, Հա-
բաշ Արաբ մի անի (10): Հինդու կամ Հնդու—Հնդկաստանի, Հնդկաստանի
կողմերից, Հնդկաստանից: Հինդու դիարեմեն էկած վար դալամքար իս (7):
Հնդու միչեմեն դուս էկած վարաքուրըտ (62): Հընդու էկած դալամքար իս
(6): էջ 13, 17, 17, 27, 28, 51, 82:

ՀԻՆԻԼ, եցի, ն բ. Հինել, տորքի վրա կտավի հենքի թել անցկացնել՝ գոր-
ծելու համար: Դադա պիտի... շարքարի միչոււըն խամ թիլ չը հինե (49):

ՀԻՇԱՏԱԿԵԼ, եցի, ն բ. Թվարկել, հիշել, անունը տալ: Օխտը անուն հիշա-
տակեցին (61):

ՀԻՇԻԼ, եցի, հ ի մ. հիշե: ն բ. Հիշել: Իդյարին մնացողըն հաստատ տե-
րըն կու հիշե ամեն ժամ (64):

ՀԻՇՏ (թիբ.), ա ծ. մ. Հեշտ, դյուրին: Աստըծու ծիռուըն հիշտ է մարթու
աշխարք ելուուտըն (53): Դու հիշտ դիմիշ անելու չիս, ճըրաբ վառած, դժվար
հարած (46):

ՀԻՌԱՆԱԼ (թիբ.). ացա, հ ի մ. Հիռացի, չ բ. 1. Հեռանալ, անջատվել,
սեկնել: Յիս քիպանից չիմ հիռանա թե չը հասնի մահիս վաղեն (7): Յա՛ր,
քիպանից հիռանալըս մեծնելուս վրա դժար ա (46): Ինչ քիպանից հիռացիլ իմ,
իմ ջանուարս ջան չե մրտի (43): Տե՛ս նաև էջ 22, 24, 55: 2. Խոռվել, նեղանալ,
թողնել: Յարին բեղամաղ մի՛ անի, Չը հիռանա անմիղ բանից: 3. Հրա-
մարվել մի բանից, թուլնել մի բան: Խոստովնահերըս հիռացավ, միղի համա իմ

լալի (36) : ☉ Հիռացի—կո՛րիւր, կո՛րսվիր: Ասաց թե. «հիռացի գըլխենն գընա» (26) : Խիլըը գլխեն հիռանալ—խենթանալ: Լնդու համա քու տեննողի խիլըը գըլխեն հիռանում է (38) :

ՀԻՌԱՏՆԻԼ (բրբ.), ն բ. 1. Անջատել, հեռացնել: Յա՛ր, չիմ տա, չիմ հիռացնի քիզ քու յարենն (42) : 2. Մտահան անել: Եփոթեցնել: Չունքի ուշկըս ու միտկըս իրար շաղեցիր՝ Փահմեն կու հիռացնիմ հանգիրըն մենեկ (21) :

ՀԻՌՈՒԻ (թբբ.), ա ծ. 1. Հեռավոր, հեռուն գտնվող, երկար: Հիռու տեղացեն գալիս իմ, խիլքի վարար շահ իմ բերի (15) : 2. մ. Մեկուսի, առանձին: Դոստիրըս հիռու կանգնին, յաղիրըն գան լալ անին (11) :

ՀԻՎԱՆԴ, հիվընդի, գ. Էշխենն հիվանդ պառկեցա (33) : Եատ տըխուր սիրտ կու խընդացնիս, կու կըտրիս հիվընդի դողըն (1) :

ՀԻՎԱՆԴԱՆԱԼ, ացա, չ բ. Հիվանդանալ: Էշխենտ հիվանդացիլ իմ, վունց միժնում իմ, վունց թե սաղ իմ (8) : Էջ 18, 34, 41 52, 56, 86:

ՀՅՈՒՆ, գ. Հայերեն այբուբենի «Ի, ւ» տառի անունը, իյուն: Հյուն հուսար ունի (50) : Էջ 67:

ՀՅՈՒՍԻՍ, ի, գ. Արիվիլք, արիվուտք, հարավ ու հյուսիս Չը կա քիզի նըման (17) :

ՀՆԱՐՔ, ի, գ. Ճար. միջոց: Սատանեն գըթավ հնարք (64) :

ՀՆԴԱՍ, ա ծ. Հնդկական, հնդիկների: Հընդկաց քաղաքիցըն հանած, ջավահիր քար արմանալու (46) :

ՀՆԴՍԱՆ (բրբ.), ի. գ. Հնդկաստան: Եուտով Հընդստան մի՛ էհա (23) : Էջ 36, 38:

ՀՆՊԱՐՏՈՒԹԻՆ (թբբ.), թենի, գ. Հպարտություն: Հընպարտութին չանիս՝ դուր գու քաս Տերիտ (16) : Էջ 28:

ՀՈ, գ. Հայերեն այբուբենի «Հ» տառի անունը: Հո համան կանչում իս Ձա ծայնով դավըտ (50) :

ՀՈԳՈՒՑ (թբբ.), ի, գ. Այս քաշելը, հառաչանք հանելը, հոգոց: ☉ Հոգուց հանիլ—հառաչանք արծակել, ախ քաշել: Արտասունք անիմ, շատ հոգուց հանիմ (29) :

ՀՈՎՏԵՄԲԵՐ, ի, գ. Արութինի ասած: Հոկտեմբերի 9-ին, քրոնիկոնի 446-ին (39-ի խաղի տողատակի ծանոթ.) էջ 55:

ՀՈՎ, ի, գ. Թեթև զով քամի: Նովափար ծաղիկ ծովային, մանիշակ բացարած հովին (2) :

ՀՈՎԻՏ, հովտի (հո գ ն. ս է ո. հովտաց), գ. Լեռնաղաշտ: Կարմրագույն դաշտի ծաղիկ, հովտաց շուշան իս ինձ ամա (24) :

ՀՈՎՆԱԼ (բրբ.), հովցա, չ բ. Հովանալ, զովանալ թարմանալ: Թեգուզ նընգնիմ ծովի մեջըն՝ հովնալու ճար չիս անի (4) : Էշխենտ սիրտըս երվում է, հովնալու ճար չունիմ (22) :

ՀՈՏ, ի, գ. Բուրմունք, անուշահոտություն: Ծուցըտ վարաղնած հուշրա է, հոտ ունե մուշկ ու ամբարի (30) : Հոտըտ աշխարս է զավթի (13) : Տե՛ս նան էջ 26, 78:

ՀՈՐԱԼ (բրբ.). ացի, ն բ. Հոգալ, մտածել, միտք անել: Միունելուս համա չիմ հոբում (36): էջ 52:

ՀՈՐԵՎԱՆ (բրբ.). ա ծ. Իր հոգու համար վսխեցող, երկյուղած, բա- րեպաշտ: Էլ հոբեվախ կրոնավուր... չը մընաց (68): էջ 90:

ՀՈՐԻ (բրբ.). հոբու (հ ո գ ն. հոբիբ), գ. 1. Հոգի, շունչ, կյանք, կենդա- նություն: Աստված դիփունանց մին հոբի էրիտ* (16): Աստված սիրե, հոբի սիրե, յար սիրե (16): 2. Ողջ էությունը կազմող կարևոր անհրաժեշտ մաս: Յիրիբ բան կա՝ հոբու մարմնու կարբումն է՝ գիր սիրե, դալամ սիրե, դավթար սիրե (16): 3. Բարոյական հատկություն մարդու մեջ: Հոբուտ մեչ ինսափ, սըրտումըտ շնուխլ ու բարամ չը կա, չէ (67): 4. (սնոտ.) Մարմնից անկախ աննյութ ու անմահ գոյացություն: Հոբիս չանիս դրախտի ջանեն դուս տալած (63): 5. (կրոն). Ըստ քրիստոնեական հավատի՝ սուրբ հոգի, սուրբ երրորդու- թյան անձերից մեկը: Աստուծու բերնեմեն առնիս մխիթարիչ սուրփ հոբին (5): 6. (կրոն. սնոտ.) Աննյութ, անտեսանելի էակ, որ մարդու մահից հետո շարու- նակում է գոյություն ունենալ: Տերըն էկավ աշխար, ապատեց հոբիբ (64): ☉ Հոբին հանիլ—շատ նեղել, չարչարել: Յարըն նազով հոբիս հանից (6): Տե՛ս նաև էջ 14, 23, 31, 79: Հոբին տալ— շատ սիրել, մեռնելու չափ սիրել: Հոբիս տամ շիշմատ կըռնանըն (28): Հոբով սրփվիլ—մեղքերի թողնություն ստանալ, ներվել, մեղքերից մարզվել: Հոբով ու մարմնով կու սըրփվի, ով քիվ գուբա մոնի նըման (62): Հոբու խաթիր—անձի սիրո համար, ի սեր անձի: Թե բու հոբուտ խաթիր շալ հաքնիս՝ պար բաշած ատլաս կու տան (37): էջ 28, 53, 89:

ՀՈՐՈՒՑ, տե՛ս Հոգոց: Արտասուներ հանիմ, շատ հոբուց հանիմ (Ախվերդ- յան, ԽԲ.):

ՀՐԻՇՏԱԿ (թհբ.). ի, գ. Հրեշտակ: Լավ մարթըն էն է՝ սիրով անե բարի հրիշտակներու կամբըն (44): էջ 61:

ՀՈՒԼ, ի, գ. Թանկագին քար, գոհար, որ պահվում է հեքիաթային օձի բե- րանում: Յիփ խաղում իս՝ վըռվըռում իս օցի բերնի հուլի նըման (39):

ՀՈՒՄ, ա ծ. Չեփած, կիսաեփ: ☉ Հում խոսիլ—անհիմն խոսել, սուտ ասել, ստել: Ինչպես վուր կըրակին չի դիմանա մուս, էնպես սախաթ կուլի, ովոր խոսի հում (49): Հում կաթնակիր—անապնիվ, տմարդի: Հում կաթնակիր Աթամի պաթ, նալաթ բու էթիբարին (22, 53): Մե բափա չը տեսա հում կաթնա- կիրի (18):

ՀՈՒՅՍ, ի, գ. Հույս: Հույս ունենալ—հուսալ, հույսով լինել: Հույս ունիմ իմ ստիղծողիմեն՝ միր դուշմանըն ըլի էս հալով (14):

ՀՈՒՆԱՐ (բրբ.). ի, գ. Հնարագիտություն, շլորհք: Հյուն հունար ունի (50):

ՀՈՒՆԻՍ, ի, գ. Արության սասածը, հունիսի սկզբին, քրոնիկոնի 446-ին (33-ի ծանոթ.): էջ 49:

ՀՈՒՋՐԱ (արաբ.) (հ ո գ ն. հուջրեք), գ. Արկղ, սեղուկ (թանկագին իրե-

* Աստված բոլորին միակերպ ստեղծեց, միևնույն շունչը տվեց:

րի համար) : Հուշրեն լիքըն է անգին քարով (15) : Հուշրեն լիքն է սաղեմեն (44) : Տե՛ս նաև էջ 45 :

ՀՈՒՍ¹ (բրբ.), ի, գ. Հյուսված մազ, մազերի հյուսվածք : Մապիրըտ ռե-
հան, կըլապիտոն, հուսիրըտ շարբար (48) :

ՀՈՒՍ² (բրբ.), ի գ. Հույս : Ով ունեցավ հուս ու հավատ... Տերն կու հիշի
ամեն ժամ (64)

ՀՈՒՍԱԼ¹, ացի, հյւմ, հուսա, չբ. Հույս ունենալ : Աղաչիմ փըրկիչըն՝ հու-
սամ (64) : Հուսամ... միղթիրըս քավիմ (64) :

ՀՈՒՍԱԼ², (թհբ.), չբ. Հոսել : Ման իմ գալի արտասունքըս հուսա-
լով (20) :

ՀՈՒՍԻԼ¹ (բրբ.), եցի, ն բ. Հյուսել : Դաստամազըտ նամ չի ուզի՝ առանց
հուսի կու օլըրվի (2) : Տե՛ս նաև էջ 26, 45 :

ՀՈՒՍԻԼ² (թհբ.), չբ. Հոսել : Աչկեմեն արտասունք հուսիլ իմ ուզում (17) :

ՀՈՒՍՈՒՆ (արաբ.), ի, գ. Հրաշալիք, գեղեցկություն : Հասավ գարունը-
վան հուսունըն (43) :

ՀՈՒՏ (թհբ.), ի, գ. 1. Հոտ, բուրմունք : Հուտըտ աշխարըս բըռնիլ է՝ բա-
լասանի ծառ բացարած (39) : Զու հուտըն ռեհան իս շինի (2) : Հուտըտ գու քա
սըմբուլի պես (6) : Տե՛ս նաև էջ 14, 22, 38, 39, 61, 72 : 2. փխբ. Հաճույք,
հմայք : Իմաստուննիրը չը տեսան էս աշխարիս հուտն ու համբըն (44) :

ՀՈՒՏՈՎ (թհբ.), ա ծ. Հոտավետ : Հուտով հիլ, միխակ, դարիչին, վարթ,
մանիշակ, սուսանբար իս (24) :

ՀՈՒՏՈՎԻՆ (թհբ.), ա ծ. Հոտավետ (հանգի համար հարմարեցրած) :
Մանուշակ բաց արած հովին, կարմիր վարթ, ծաղիկ հուտովին (27) :

ՀՈՒՐ¹, հրի, գ. Կրակ : փխբ. Ավյուն, խանդ, եռանդ : Վախում իմ թե՛
ինձ էլ երիս՝ Անհանգչիլի հուր իս, ախպեր (13) : Հուր իս էշխով կըրակած
(56) : Տե՛ս նաև էջ 24, 27, 47, 73, 73 :

ՀՈՒՐ² (բրբ.), ի, գ. Հյուր : Ուրախացի, ուրախայու, չունքի միլ մող հուր
իս, ախպեր (13) : էջ 25, 25, 73 :

ՀՈՒՐԻ (արաբ.), գ. Ջրահարս, հավերժահարս : Դուն են հուրին իս, վուր
գեմի կու կավթե (17) :

ՀՈՒՐԻԶԱԴԱ (արաբ. պարսկ.), դի, գ. Հավերժահարսի սերնդից, գեղեց-
կուհի : Թեգուլ հուրիկադա ըլի... դիփունին կու ախտիս—գուլալ (34) :
էջ 50, 83 :

ՀՈՒՐՅԱՆ (արաբ.) : Գործ է ածվում հուրյան բիրյան անիլ, հուրյան բիր-
յան շինիլ արտահայտությունների մեջ—փխբ. մերկացնելով տանջել, խորովել :
Տանջամահ անել : Ինձ հուրյան բիրյան արիր, Ասում իս, թե դիմացի (13, 56) :
Ինձ հուրյան բիրյան շինեցիր. աջաբ դուն էլ դարդ իս արի (13) :

ՀՈՒՔՄ (արաբ.), ի, գ. Իշխանություն, ուժ : Աչկ ու ունքըտ վեր իս թողի,
հուքըտ մե ռուս ցարի բարբաթ (47) :

ՀՈՒՔՄԻ-ՀԱՔԻՄ, ՀՈՒՔՄԻ-ՀԵՔԻՄ (արաբ.), ի, գ. 1. Իշխանավոր : Չը
կա բիլ պես հուքմի-հեքիմ Դուն Ռոստոմի Զալ, թաքավուր (10) : 2. Դատա-

վոր: Մեն տիւղ հուքմի-հեքիմ չը կա՝ դուռըն էհամ, կանչիմ հարա (36): Էլ ադա-
լաթ, հուքմի հաթիմ, սուչըս ինչ է, ասա ինծի (67):

2

2Ա, գ. 1. Հայերեն այբուբենի «2» տառի անունը: 2. Եարականում՝ ձայն, ելևէջ: ՀՈ համան կանչում իս 2ա ծախով դավըտ* (50): Էջ 67:

2Աս, ի. գ. Աչ ու ծախ կախեցին՝ բրոլե ճաղ արին, Մողնու սուրի Գևուրք (62): Էջ 82:

2ԱՅՆ, ի. գ. 1. Երգելու հարմարեցրած ձայնը: Միաբանքըտ քաղցրը ծախով տաղ արին, Մողնու սուրի Գևուրք (62): 2. Երգի եղանակ: ՀՈ համան կանչում իս 2Ա ծախով դավըտ (50): 3. Դալլալլ, հնչյուն: Ղարիբ բըլբուլ, ծախըտ մալում (19): 4. Նվագարանի հնչյուն, նվագ: Յիփ քաղցրը ծախըտ վիր կոնիս, բաց կուլի հիղըտ խաղողըն (1): 5. Լեզու, խոսք: Եկ խոսի, ծախիտ ճանանչ իմ (9): ☉ 2ախը վիր անիլ—հնչեցնել: ...քաղցրը ծախըտ վիր կո-
նիս (1):

2ԱԲ, ի. գ. 2իու պոչի մազը, որից քամանչայի ճիպոտ են պատրաստում: 2արըտ ռաշի կուղեն պիտի, վուր դուն խոսիս քաղցրը հանգով (1):

2ԳԻԼ, եցի, ն բ. 2գել, ձիգ քաշել, լարված դրության մեջ պահել: Ումբրիս լարը ձըգիլ դադանգ իս արի (65):

2ԵՆ (բբբ.), ի. գ. 1. 2այն, հնչյուն: 2ենըտ քաղցրը ունիս, լամզով կու խոսիս (19): Բարսկ ձենով սազ իս անում (6): Տե՛ս նակ էջ 31, 69: 2. Երգի եղանակ: Էս էլ դիբա ու ենգիդունիայի ձենում Արութինի ասած (49): Տե՛ս նակ էջ 18, 37, 43, 75: ☉ 2ենը գալ—1) ձայնը լսվել, լուր իմանալ, տեղեկանալ: Բաս ինչի՞ ձենը չե գալիս, սալբու չինար, էտ ի՞նչ արի (33): 2) ձայն լսվել: Անգըրծակի մե ձեն էկավ դասեդաս (51): 2են տալ—կանչել, ձայնել: Բըլբու-
լի պես պրտիտ էկա վարթի վրոա ձեն տալով (14): 2են իմ տալի յանա-
յանա (27):

2ԵՈ (բբբ.). (հոգն. ձեռնիր), ի. գ. 2եոք: 2եռիտ ունիս թաս, լըցնիս ինծի տաս (29): 2եռնիրըտ՝ սիպտակ մաքաղաթ, լիզուտ օսկե դալամի պես (39): Տե՛ս նակ էջ 31, 38, 38, 45, 47, 56: ☉ Մեկի ձեռնեմեն—մեկի պատ-
ճառով: Դառըն խոսկով սիրտըս խուցից, վադի ձեռնեմեն գուլամ լիս (67): Տե՛ս նակ էջ 89, 89, 89, 90, 90, 90, 90: 2եռնեմեն ձիռըն գըցիլ—սրան-սրան տալ, չպահել: Մի՛ գըցի ձեռնեմեն ձիռըն՝ օսկե թաս իմ, Սայաթ-Նովա (23):

2ԵՎԻԼ, ն բ. 2ևել: Վունց ձևիլ գուպե, վունց կտրիլ՝ կարըս մունաթ չը քաշե (15):

2Ի. ձիու. գ. Դադա պիտի խոսկըն դադիմի շինե... Զորու նըման չասե իմ դեղեն ձին է (49):

2ԻԶ, տե՛ս Դուն: Էրանի ձիւ, ծաղկած վարի (33):

* Անվերջ կանչում են երգելով կամ ողբալով, ճարդ, դեղդ (կամ բողոքդ):
Մ. Հասրաթյան, Սայաթ-Նովա, խաղերի ժողովածու, 1959:

ՁԻՌ, ՁԻՌՔ (թճբ.) (Ռ ո գ ն. ծիռնիր), ի. գ. Ձեռք: Հեյ վախ, էլ ծիռիս
բամանչա չըկա (67): Ձիռնիրըս թըլացալ չէ շինում բանըս (26): Տե՛ս նակ
էջ 21, 29, 42, 46, 51, 52, 60, 70, 72: ☉ Ձիռնենն վեր ածիլ—կտրելով թա-
փել: Առանց թիվ ի՛նչ կոնիմ սոյբաթըն ու սազըն, Ձիռնենս վեր կոծիմ չան-
գիրըն մեմեկ (21): Ձիռք բաշիլ—հրաժարվել, ետ կանգնել: Նըրանից ծիռըստ
բաշիլըն՝ շատ ա էտ ալ արմանալու (46):

ՁԻՐ, տե՛ս Դուն: Ձիր ռազեն յիս իմ (59):

ՁԻՔ, միայն ձիք տալ արտահայտության մեջ—ձգել, քաշել: Գուղ մարթըն
մանգաղով գու բա, ձիք կու տա, տակռեն կու հանե (54):

ՁՄԻՌ (թճբ.), ծմռան, գ. Ձմեռ: Ամառըն ու ձմիռըն ծաղկած գուլբաղ
ու բաղաթըն դուն իս (38):

ՁՈՒՆ (բրբ.), ձնի, գ. Ձյուն: Յիրգնուց վըրետ ծուն է էկի (34): Ձընի
տակեն նուր դուս էկած սըմբուլի պես (40):

Ղ

ՂԱԲՈՒԿ* (արաբ.), մ. Ընդունելի, համաձայն: Սըրան դաբուկ իմ (63):

☉ Ղաբուկ անիլ, դաբուկ կենալ, դաբուկ ունենալ—համաձայնել, հոժարել: Ղա-
բուկ անիս, յար, այար (65): ՂԱԹ դաբուկ կաց՝ ճարիս ճե ու ալիթ թո** (50):
Ղաբուկ ունիմ—բու խաթրու ինձ սըպանին (17): Տե՛ս նակ էջ 15, 52, 67:

ՂԱԴԱՂ (արաբ.), ի. գ. Ձափ, մեծություն: Ափսուսալու հազար ափսուս,
յիս էս դադա դար ունենամ (57):

ՂԱԴԱՂ² (արաբ.), դի, գ. Ցավ, հիվանդություն, դժբախտություն: ☉ Ղա-
դեն առնիլ—ցավը իր վրա վերցնել, ցավը տանել (ուրիշին փրկելու համար):
Հենչաթ ըլի՝ ուրախ կենաս, Սայաթ-Նովեն առնե դադեն (7): Ղադետ տանիմ—
ցավդ տանեմ: Արտասուներ անիմ, շատ հոգուց հանիմ,—յար դադետ տա-
նիմ (29):

ՂԱԴԱՆԳ (արաբ.), ի. գ. Աղեղ (նետ-աղեղ): ☉ Ղադանգ անիլ—աղե-
ղի լարը ձգել: փ իս բ. Տանջել, չարչարել: Ուլբրիս լարը ձգիլ դադանգ իս
արի (65):

ՂԱԴԻՄԻ (արաբ.), ա ծ. Հին, անտիկ: ☉ Խոսկը դադիմի շինիլ—հին աշ-
խարհի իմաստունի պես խոսել: Դադա պիտի խոսկըն դադիմի շինե (49):

ՂԱԶԱ (արաբ.), պի, գ. Դատավոր: Դժոխկի ու դրախտի դազեն յիս
իմ (59):

ՂԱԶԱԲ (արաբ.), ի. գ. Ցասում, բարկություն, պատուհաս: Ղազաբ

* Թբիլիսահայ բարբառում «Ղ»-ով սկսվող արաբերեն և վրացերեն ծագում
ունեցող բառերը բառասկզբում հնչվում են աննկատելի՝ հապիվ նշմարելի կո-
կորդային ձայնի երանգավորումով:

** Ըե ու ալիթ թո = Ճաթ—եգիպտացորենի հաց: Տե՛ս Մ. Հասրաթյան,
Սայաթ-Նովայի խաղերի ժողովածու, 1959, էջ 67:

անիլ—բարկությունը՝ ցատումը մեկի գլխին թափել: Մըտիկ արա ըու: Ստեղծողին՝ նահախ տիղ դազաբ մի՛ անի (10):

ՂԱԶԱԼԻ (արաբ.), լու. գ. Ուտանավորի ձև արաբական տաղաչափությամբ, որտեղ յուրաքանչյուր բառի տողի վերջը առաջին երկտողի վերջավորության կրկնությունն է, գալով: Ղազալի: Հսպես ասել է մեկ հավատարիմ սիրելիան (23): (36. 37-րդ էջերի տողատակի ծանոթ.):

ՂԱԹ, գ. Հալերեն այբուբենի «Ղ» տառի անունը: Ղաթ դաբուլ կաց՝ ճարիս ճե ու ալիբ թո* (50):

ՂԱԼ (արաբ.), միայն դալ անիլ կապակցությամբ—անհանգստացնել, նեղություն, գլխացավանք պատճառել: Չիմ անի քալազըն, չիմ անի դալըն (21): Յա՛ր, յիս թիզ բարով իմ տալիս, շուռ իս գալի դալ իս անում (8):

ՂԱԼԱՄ (արաբ.), ի. գ. 1. Գրիչ: Ղալամըն գիրըս չէ գրում մե չուրացած թանթի նըման (36): Տե՛ս նաև էջ 55: 2. Վրժին: Պատկիրըստ դալամով քաշած, թահիրտ ռանգե-ռանգ իս անում (2): Ղալամըն ձիռին չէ կանգնում, մաթ շի-նեցիր նաղըբարին (35): Տե՛ս նաև էջ 54, 78: 3. Կիս բ. Ուսում, գիտություն: Գիր սիրե, դալամ սիրե, դավթար սիրե (16): ☉ Ղալամ քաշիլ—նկարել (վրժինով): Էրեսըստ խասա մուրասա—դալամ քաշիլըն ի՛նչ կոնե (46): Տե՛ս նաև էջ 13, 34, 78:

ՂԱԼԱՄԹՐԱՇ (արաբ., պարսկ.) ի. գ. Գրչահատ, փոքր դանակ, կմելին: Թերթերուկըտ՝ նիտ ու նաշտար, սուր դալամթրաշ, նազանի (35):

ՂԱԼԱՄՐԱՐ (արաբ., ադրբ.), ու կամ ի. գ. Արևելյան ճաշակով տպած ընտիր տեսակի չիթ: Մե բիռըն կար-դալամբարի, տիղ ունե վունցոր մաքադաթ (15): Հընդու դալամբարու վրենե ծածկիլ իս մարմաշ (35): Էջ 13, 17, 27, 49, 82:

ՂԱՄ (արաբ.), ի. գ. Վիշտ. ցավ, մտահոգություն, տխրություն: Շատ մարթ կա սրրտում ունե դամ (18): Էջ 30, 54:

ՂԱՄԱԹ (արաբ.), ի. գ. Հասակ, մարմնի տեսք. ֆիզուրա: Բարակ դամաթիտ խիստ սազ գու քա դիբա ու կարբաբ (48):

ՂԱՄԱՐ (արաբ.), ի. գ. Լուսին: Էրեսըստ է շամս ու դամար (3): Էրեսըտ՝ փարսեվար ասիմ, նըման է շամս ու դամարին (35):

ՂԱՄԶԱ (արաբ.), պի. գ. Նազ, նազանք: Ղամզով—նազանքով, նազով. աչք-ունքով մի բան հասկացնող: ...Նազ ու դամզով ջանըս փուլ ու փանդ իս արի (14): Էջ 26, 31:

ՂԱՄԻՇ (ադրբ.), դամշի. գ. Եղեգն: Փ իս բ. Բարակ, նուրբ մեջք. իրան: Բոլըստ սարվի ունիս, մեչկըստ է դամիշ (55): Տե՛ս նաև էջ 22, 72:

ՂԱՄՐԱՇ (արաբ. հայ.), ա ծ. մ. Վշտակիր, ախ քաշող: Բոլորըս դամբաշ ին դառի՝ ուրախ սիրտ անգամ չը կա (67):

ՂԱՅԻՄ (արաբ.), ա ծ. Ամուր, պինդ, հաստատուն: (Էշխը) բըռնածին չի թողնի՝ դալիմ շանգ ունե (18):

* Տե՛ս 116-րդ էջի երկրորդ ծանոթությունը:

ՂԱՆԳ (արաբ.), ի, գ. Բաց վարդագույն շաքարի տեսակ: *Փխբ.* Ասվում է որևէ շատ սիրելի բանի կամ անձի մասին: *Ղանդ ու շաքարի նըման իս* (12): *Պռռռնչիրըտ ղանդ իս արի* (14): *Լիվուտ շաքար, պրռռռըտ ղանդ, ակռերրտ մարբըրիտ արմաս է* (24): Տե՛ս նաև էջ 12, 13, 23, 26, 37:

ՂԱՍՍ (արաբ.), միայն *դաստ անիլ* կապակցության մեջ—ջանք թափել, ջանալ, աշխատել: *Ղաստ արա՝ էլ լավ օրերու էղիվըն հասնիս, քամանչա* (!): *Ղաստ անիմ յարու հանդիբիմ* (15): էջ 5, 27, 46, 53:

ՂԱՎ (աղբբ.), ի, գ. Աբեթ: *Չախմախ էլ ունիս դու, դավ էլ, աշխարումըս քիւնից ավել ո՛վ ասավ թե կեր* (45):

ՂԱՎԱՐ-ՂԱՎԱՐ (արաբ.), Գործ է ածվում միայն *դավար-դավար անիլ* կապակցության մեջ—թափառական դարձել: *Չանըս արավ դավար-դավար* (60):

ՂԱՐԱ (արաբ.), բի, գ. 1. Բարանձավ: 2. Լեռան ճեղքվածք: *Փահրաղըն միռած, Շիրինըն ասաց՝ դարեն էրված իմ** (48): *Անգալին աստված սրպանե, Փահրադ-Շիրին՝ դարի բաբաթ* (47):

ՂԱՐԱԼԵԶԱ (արաբ.), ջի, գ. Աշուղական ոտանավորի ձև, որի հանգավոր բառերը գրվում են տառերի այբուբենական անուններով, օրինակ՝ *Սիրտըս էլավ Բե ու այիբ էրկու բեն*** (66): *Էս այբբենական դարահեջա է* (Օհանի ծանոթ.) (50-րդ խաղի տողատակի ծանոթ.):

ՂԱՐԱՆՓԻԼ (աղբբ.), ի, գ. (բաբ.) Շահոքրամ, մեխակ: *Կանց թիւ լավ հուտ չի ունենա Հընդու էկած դարանփիլըն* (25):

ՂԱՐԱՐ (արաբ.), ի, գ. 1. Որոշում, վճիռ, կարգադրություն, հրաման: *Էս ձիւ դարար—Տերըն ասաց—չուտիք էս բար, թե չէ կու տեսնիք մինձ վարար* (64): 2. Ներդաշնակություն, հարմարեցում: *Իրիբ հարուր վացցուն ու վից ամեն անդամըտ դարարի**** (30):

ՂԱՐԻ (աղբբ.) բու, գ. Ծեր կիև, չար պառավ, վիուկ: *Չեթող թե մուրապին հասնին, տես ինչ արավ քավթար դարին* (52):

ՂԱՐԻԲ (արաբ.), ի, գ. ա ծ. 1. Պանդուխտ, օտարական, տարերևացի: *Ղարիբ դարվիշ իմ, հաջ չունիմ* (45): *Ուստի՝ գու քաս, դարիբ բըլբուլ* (52): Տե՛ս նաև էջ 18, 19, 19, 19, 26, 32, 44, 45, 49, 49, 74: 2. Տղամարդու հատուկ անուն: *Օխտըն տարի էլ ման գու բամ սապըն ձիոխ Ղարիբի պես* (31):

* Շիրինը վշտացած է լեռան այն ճեղքվածքից, որ ճեղքել է Ֆահրաղը և ինքնասպան եղել: Տե՛ս *Մ. Հասրաթյան*, *Սայաթ-Նովայի խաղերի ժողովածու*, 1959:

** *Բե ու այիբ էրկու բեն* = քաբաբ: Սիրտըս էլավ ըբբաբ, սիրտս խորովվեց, տոչորվեց (սիրուց): Տե՛ս *Մ. Հասրաթյան*, *Սայաթ-Նովայի խաղերի ժողովածու*, 1959, էջ 66:

*** Այսինքն մարմնի բոլոր անդամները, մարմնի մասերը ներդաշնակ են, ոչ մի պակասություն չունեն: Տե՛ս նույնը. հայերեն 30-րդ խաղի ծանոթությունը:

ՂԱՊՂԱՊԱ (արաբ.), բի, գ. (կենդ.) Ձկնկուլի մի տեսակը գեղեցիկ վկով և փետրափուռը գլխով: *Վիպտո է նրման դարողարի (60)*:

ՂԱՐՂՈՒՂԱՄԻՇ (ալլոբ.), -դամշի, գ. (բսբ.) Ակնիվ տեսակի բամբուկ, եղեգն: *Բարակ մեշկրտ՝ դարդու դամիշ (39)*:

ՂԱՓԱ (արաբ.), փի, գ. Սուրճ: *Ածողիտ էրկու կու շինիս, առաջ չայի, դափա գուպիս (1)*: էջ 6 (առաջ թեյ, հետո սուրճ կուպես):

ՂԱՓԱԶԱ (արաբ.) ի. գ. Վանդակ (թռչունի): *Յիս մե դարիբ բուրբուլի պես, դուն օսկե դափապի նրման (6)*: էջ 18:

ՂԱՓԻԱ (արաբ.) փի, գ. Արաբական կամ պարսկական ոտանավորի մի ձև: *Ղափիս: Հսպես Աշուղ-Օղլանի օգութլամա Արութինի ասած (18-րդ խաղի տողատակի ծանոթ.): Տե՛ս նաև էջ 31*:

ՂԱՓԻԱ-ՅԱՐԱՆԱ (արաբ., պարսկ.), նի, գ. Սիրածին նվիրված ոտանավոր: *Ղափիս-յարանա, Արութինի ասած. (էջ 29-ի տողատակի ծանոթ.):*

ՂԱՓԻԼ (արաբ.), մ. Անսպասելի, հանկարծակի: *Ումբրիս լարը ձգիլ դափանգ իս արի, վայ թե կրտրվիլ է դափիլ, յա՛ր, ա՛ յար (65)*:

ՂԻՄԱԹ, ՂԻՄԵԹ (արաբ.), ի, գ. Գին, արժեք, հարգ: *Յիս բու դիմաթըն չիմ գիդի (12)*: *Օշով դիմեթըտ չի գիդի—լավ ու արևաստ իս, բամանչա (1)*: էջ 5, 15, 23, 27:

ՂԻՄԻՇ (աղբբ.) միայն դիմիշ անիլ կապակցությամբ: 1. Ջոնաբերել, չինայել, չափսոսալ: *Աստված վրկա, դիմիշ արած գըլուխըս բիվ մատաղ ըլի (23)*: 2. Խնայել, խղճալ, ափսոսալ: *Դաժանություն հանդես բերել: Կու միռնիմ, էլ ինձ պեսին չիս տեսանի, Զու Սայաթ-Նոդեն իմ, մի՛ անի դիմիշ (55, 21)*: Տե՛ս նաև էջ 63:

ՂՈԲԱ (վրաց.), բի, գ. Ցանկապատ (փշից կամ ցախից): *Վունց դոբա ունե, վունց չափար, իս էնպես բաղըն ի՛նչ կոնիմ (36)*:

ՂՈՆԱԳ (աղբբ.), ի. գ. Հլուր: *Աստված սիրե, դոնաղ սիրե, տար սիրե (16)*:

ՂՈՉ. (աղբբ.) ի, գ. Խոյ, արու ոչխար: *Ամեն դոչի գլխին մե-մեկ շուն ունիմ (58)*:

ՂՎԱԹ (արաբ.), ի, գ. Ուժ: *Մախուխըն ու օխըրի միսը կրոպեցան. Ամեն մեկրն ասում ին. Զու մեչըն ինչ զրվաթ կա... մարթու զրվաթ տըվողըն ու փապեն իս իմ (59)*:

ՂՐԳԻԼ (բրբ.) եցի, նբ. Ուղարկել, առաքել: *Բրբուլին բաղըն զրոգեցիբ մանիշակով լիբըն սարիբ (33)*:

ՂՐՄԸԸ (աղբբ.), գ. ա ծ. Կարմիր, որդան կարմիր (ներկ): *Մե բիռըն զրրուպ ու պափռանգ, մե բիռըն էլ դարանփիլ ա (15)*:

ՂՌԻԹԻ (արաբ.), թու, գ. Տուփ, արև: *Ծալե դավթարըտ, դուրին դի (23)*:

ՂՌԻԼ (պարսկ.), ի, գ. 1. Ծռոտ: *Դռանըտ նոքար չիս պափի, թաքավուր իս՝ դուլ սրպանող (47)*: *Բանի գուպե արբար բլի՛ դուրըն աղին դավ տալու չե*

(10) :2. ճորտ, ստրուկ: Հենց իմացի, յար, յու ղուլըն իմ, թանգ հախով գընած չըրաղ իմ (8) :

ՂՈՒԼՈՒՂ (աղբբ.), ի. գ. Ծառայություն, սպասարկություն: Հուր իս սիրով սիրելան, քիպի ղուլուղ պատվական (13. 56) : ☉ Ղուլուղ անիլ—ծառայել, ծառայություն մատուցել: Արի հատով ղուլուղ արա, իալխի նորար Սայաթ-Նովա (37) :

ՂՈՒՄԱՇ (արաբ.) ի. գ. Մետաքսյա կտոր, նուրբ կերպաս: Հաքածըս պար ու ղումաշ ա (6) : Բի սազ գու թա ալ ղումաշըն, նապանի (11) : Էջ 13. 13, 21, 31, 51, 71 :

ՂՈՒՆԳ (թիբ.) ի. գ. Եղունգ: Մատնիրըտ՝ մուս, ղունգըտ արավ ին՝ սարսարի (60) :

ՂՈՒՇ (աղբբ.), ի. գ. Թռչուն: ☉ Թութի ղուշ—(պարսկ., աղբբ.)—թուրակ: Յիփ նըստում իս, թութի ղուշ իս (35) :

ՂՈՒՇԼՈՒ (աղբբ.) ա ծ. Թռչունի, թռչնային: ☉ Ղուշու կարբաբ—թռչնակալար բեհեկ (նուրբ գործվածք) : Բի սազ գու թա ղուշու կարբաբ (3) :

ՂՈՒՍԱ (արաբ.) սի. գ. Վիշտ, տխրություն, ցավ, հոգս: Էլ յիս կու բաշիմ էս ղուսեն (8) :

ՂՈՒՐԲԱՆ (արաբ.) գ. Մատաղ, զոհ, զոհաբերություն: Բանի վուր ջան իմ, յար, քի ղուրբան իմ. աբա ինչ անիմ (29) : ☉ Ղուրբան ըլիլ—մատաղ լինել, զոհաբերվել: Ղուրբան ըլիմ ծուցիտ նըռանըն (28) : Տե՛ս նակ էջ 17 :

ՂՈՒՐԹ (թիբ.) 1. գ. Ճշմարտություն: Ղուրթըս ենդուր ճանփա չէ գնու՛մ շատացիլ է խալխի սուտըն (53) : 2. ա ծ. մ. Ճիշտ, ուղիղ, ճշմարիտ: Ղուրթ ին ասի փիր ուստաբար դադիրըն. «բաղ շինեցի, վարթըն բաղից վադիրըն» (21) : Հենց գիդիս ղուրթ թո՛ւն ունիմ (58) :

Ճ

ՃԱԿԱՏ, ճակտի կամ ճակատի, գ. Ճակատիտ կապե վարլու մուղայիշ (11) : Սիվ արաբի ճակտի վրա խալ անիլըն ինչի՛ն է շահ (44) : Տե՛ս նակ էջ 54, 72 :

ՃԱՂ (բրբ.), ի. գ. Եկեղեցու ջահ: Աչ ու ծախ կախեցին՝ բրոլե ճաղ արին, Մողնու սուրփ Գևուրբ (62) : 2. Աշտանակ, մուսակալ: Մատնիրըտ մում՝ բրոլե ճաղին կարոտ է (30) :

ՃԱՄՓԱ (բրբ.), վի. գ. Ճանապարհ: Բու տենողըն իր ճամփեմեն կու մուլըրվի (2) : Չուրս բոլորըն ծաղիկնիր ին, ճամփին փիանդազ ըլիլով (54) : Տե՛ս նակ էջ 7, 25, 64, 83 : ☉ Ճամփա կանգնեցնիլ—օգնել, միջոց՝ ճար ցույց տալ: Յա՛ր, ինձ մե ճամփա կանգնեցու—կենամ խաթրջամի նըման (47) :

ՃԱՆԱՆՉ (րրբ.), ա ծ. մ. Ծանոթ, ճանաչ: Եկ խոսի, ծայնիդ ճանանչ իմ (9) :

ՃԱՆԱՆՉԻԼ (բրբ.), եցի ն բ. Ճանաչել: Յիս բաղման չիմ, բաղի տիրու՛ըն ճանանչիմ (28) :

ՃԱՆԱՆՉՎԻԼ, վեցի, չր. ճանաչվել: Մարթ իր խոսկով կու ճանանչ-
վի (47):

ՃԱՆԱՊԱՐ (բբբ.), ի. գ. ճանապարհ: Ծ Աճկր ճանապարհն մընալ—
ակնդետ սպասել մեկին: Էշխեմեն Քիվանդ պառկեցա, աչկրս ճանապարհն
մընաց (33): Աչկրս ճանապարհտ է, ինչի՞ իս շատ ուշանում (66):

ՃԱՆԳ (բբբ.), ի. գ. ճանկ, մագիլ, ճիրան, եղունգ: Գրլուխը մահու ճան-
գին ա (15): Ծանգը նընգնիլ—Ձեռքըն ընկնել: Թե վուր ճանգըս նընգար, իս
իղբալ ունիմ (58):

ՃԱՆԳԻԼ (բբբ.), եցի, ն բ. ճանկել, խել, հափշտակել, շորսի: Ամեն
մարթ չի՞ կանա ճանգի շահով շըբար, Սայաթ-Նովա (37):

ՃԱՆՓԱ, փի. գ. Նույնն է՝ ճամփա: Ծ Ծանփա գնալ—փ իս բ. անցնել,
ընդունելի լինել (որևէ բան): Ղուրթըս էնդուր ճանփա չէ գընում՝ շատացիլ է
խախի սուտըն (53): Ծանփեն չափիլ—ճանապարհ բռնել՝ որոշ ուղղու-
թյամբ գնալ: Թե խիլը ունիս, դարիբ բըլթուլ, էլ բու բաղի ճանփեն չափե (52):

ՃԱՌ, ի. գ. խոսք, ճառ, քարոզ: Խոսկիրըտ անգին քավահիր՝ Ասմավուրու
ճառ իս էլի (13): Թրխտիրըտ օսկե վարազով Ասմավուր իս՝ ճառ բացա-
րած (39):

ՃԱՐ, ի. գ. 1. Միջոց, հնարք, ելք: Չիմ լաց լի՞ թե ճար ունենամ (8): Սա-
յաթ-Նովեն իմ, ճար չունիմ (45): Էշխեմետ սիրտըս էրվում է, հովնալու ճար
չունիմ: Տե՛ս նաև էջ 42, 42, 70, 74, 85: 2. Դարման, դեղ, օգնություն: Սայաթ-
Նովեն ասաց՝ դարդըս կանց մե ճարըն* շատացիլ է (53): Ծ Ծար անիլ—հնար
գտնել, մի բանով օգնել: Թեգուլ նընգնիմ ծովի մեջըն՝ հովնալու ճար չիս անի
(4): Տե՛ս նաև էջ 67: Գլխին ճար անիլ—ապստվելու ելք գտնել: Գընա թե
խիլը ունիս, գըլխիտ ճար արա (26):

ՃԱՐԻԼ, եցի, ն բ. ճարել, հայթայթել, ձեռք բերել: Թեգուլ անմահութին
ուլիս, սիրով կու ճարիմ քիլ ամա (23): էջ 36, 63, 67:

ՃԱՐՏԱՐ, ա ծ. մ. Մեծ խելքի տեր, հանճարեղ: Թեգուլ մըտոք ճարտար
լի, կանց Սողոմոն դարդա ըլի... դիփունին կու ախտիս, գուպլ (34):

ՃԵ, գ. Հայերեն այբուբենի «ճ» տառի անունը: Ծարիս ճե ու այիբ
թո** (50):

ՃԵՐՄԱԿ, ա ծ. գ. Սպիտակ: Կարմիր ու կանանչ ու ճերմակ, սարիսար ալ
արմանալու (46):

ՃԻՊՈՒՏ (թբբ.), ի. գ. ճիպոտ. քամանչայի աղեղը: Ըիպուտըտ վարաղնած
պիտի՝ թահրր ունենա հազար ռանգով (1):

* Ըստ Գ. Ախվերդյանի «քան վհինգ հազար. վրաց այբուբենի ճ (ճար) տառն հինգ հազարի թվանշանն է»: Տե՛ս Գ. Ախվերդյան, Սայաթ-Նովա, 1852. խաղ ԼԴ, էջ 138:

** Ծե ու այիբ թո = ճաթ—եգիպտացորենի հաց: Տե՛ս Մ. Հասրաթյան, Սայաթ-Նովայի խաղերի ժողովածու, 1959, էջ 67:

ճիՏ (բրբ.), ճտի, գ. Վիւ, պարանոց: *ճլտիտ համա կրկրթե կրկլալ ունիմ* (58): ☉ *ճիտ անիլ--փաթաթվել, գրկախառնվել, ողջագուրվել: Կամով ու ճիտ անելով փաթաթվելու վախտըն է* (66): *ճիտը գցած—վշտահար, տխուր: Է՛լ վաղ միռնի Սայաթ-Նովեն՝ ճիտըտ գրցած չր տեսնե* (5): *Սայաթ-Նովեն առանց նրնգիր ճիտը գրցած լալ է ուզում* (43):

ճԿՃԿԱԼ, ացի, չ բ. Ծվվալ (թոչունի): *Բրլբուլըն լաց կուլի... պտո:տ գու քա բախչի վըրա ճրկճրկալով* (14):

ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ, թյան, գ. (կրոն.) Արդարություն: *Մշու սուլթան սուրփ Կարապիտ, ... գըլուխ վարթապիտ ճշմարտության* (61):

ՃՐԱՐ (բրբ.), ի, գ. Ճր ա գ, լույս: *Դու հիշտ դիմիշ անելու չիս, ճրաք վառած, դրժվար ճարած** (46): Տե՛ս նաև էջ 26:

ՃՈՒԽԿ (բրբ.), ի (հոգն. ճուխկեր), գ. Ճուլդ: *Մի՛ թողնի ճուխկըտ քաղելու* (54): *Ճուխկընիրըն բացրացիլ է* (52): էջ 49, 69, 71:

ՃՈՒՐՏ (թբբ.), ի, գ. Ճորտ: *Դուն ուրիշի հիդ մի՛ խոսի, քու ճուրտըն աղին կարոտ է* (30):

Մ

ՄԱԴԱՆ (արաբ.), ի, գ. Հանք: *Մա՛դան չունիս, Բադեշխանեն դուս արած* (63):

ՄԱՋ (հոգն. մալիր), ի, գ. 1. Հեր, վարս, ծամ: *Տարին տասներկու ամիս մալիրըտ հուսած կուլի* (14): *Հենչաք ըլի դուն վըրես լաս մալըտ շաղ տալով, աչկի լուս* (31): Տե՛ս նաև էջ 7, 7, 8, 13, 23, 32, 40, 44, 44, 45, 65, 65, 72, 78: 2. Թարթիչ, հոնքեր: *Թերթերուկիտ մալըն՝ վար օսկու վարնիշ* (11, 55): ☉ *Մազ չի պակսի—ոչինչ չի պակասի, ոչինչ չի փոխվի: Թե կու պակսիմ, քիզ կու պակսիմ, աշխարիս մե մազ չի պակսի* (10):

ՄԱԶԱ (աղբբ.), պի, գ. Խմիչքի հետ տրվող քաղցրեղեն, աղանդներ կամ այլ ուտելիք: *Մազեն մե սախաթ լավ կուլի, դուն համան թապա իս, ա՛յիզ* (40): *Մախուխըն ու օխչրի միսը կովեցան. Ամեն մեկրն աւու՛մ ին՝ «մազեն չիս իմ»* (59):

ՄԱՋԵՂԵՆ, ի, գ. Այծի մալից գործած կոշտ՝ կուփտ քուրծ, կտոր: *Կու հաքնիմ մազեղեն. կու հաքնիմ շալրն, կերթամ ու ման գու քամ վանքիրըն մե-մեկ* (21):

ՄԱԹ (արաբ.), միայն մաթ շինիլ կապակցության մեջ—վարմացել, ապշեցնել (գեղեցկությամբ): *Ղալամըն ձեռին չե կանգնում, մաթ շինեցիր նաղըշ-րարին* (35):

ՄԱԹԱՀ (արաբ.), ի, գ. Ապրանք, հազվագյուտ ընտիր իր (վաճառքի համար): *Հընդու միչեմեն դուս էկած դիմեթով մաթառ իմ բերի* (15): էջ 27, 54:

* Ծրագ վառած, ակնարկում է այն, երբ մեկին ճրագով են փնտրում և մեծ դժվարությամբ գտնում:

ՄԱԽԵԼԱԲԱ (վրաց.), բի. գ. Խոր ափսե: *Ինձ մարտարեն կոծին, քիզ կոծին ջամբ* (59):

ՄԱԼ (արաբ.), ի. գ. Ունեցվածք, հարստություն, կալվածք: *Առանց քիզ ինչ կոծիմ աշխարհս մալուն* (21): Տե՛ս նաև էջ 65, 76: ☉ *Մալ անիլ—կուտակել, դիպել (գանձ, հարստություն): Աշխարհս միզ մընալու չէ, մալ անիլուն ինչի՛ն է շահ* (44):

ՄԱԼՈՒՄ (արաբ.), ած. մ. Հայտնի, ծանոթ. ճանաչելի: *Ղարիբ բըլբուլ՝ ձայնըտ մալում* (9): ☉ *Մալում անիլ—*իմանալ, հասկանալ՝ նկատել, ճանաչել: *Խոսկիրըտ մալում իմ արի՝ անարատ մարդը իս, ա՛խպեր* (13):

ՄԱԽՈՒԻՍ (թիբ.), (վրաց. մախոխի), ի. գ. Մեծ պասի օրերին գործածվող ջրալի թթվաչ կերակուր, որ պատրաստում են ալյուրը ջրի մեջ թթվեցնելով և հետը խառնելով ալյուրով բանջարեղեն, պասուց բուսեղեն կերակուր, մախոխ: *Մախուիլուն ասալ*. «Յետը շափաթ պաս ունիմ, Համիմ, սիտոր, պինտա ու պրոաս ունիմ» (59): էջ 77, 77, 77:

ՄԱԾՈՒՆ, մածոնի, գ. *Մածնի համը շանց կու տամ* (58):

ՄԱԿԱՄ (արաբ.) մ. Միթե, արդյոք: *Մակամ օչով յա՛ր չէ սիրի, էս ի՛նչ արի, էս ի՛նչ բան ա* (31): *Մակամ մի՛ռավ Սայթթ-Նոպեն* (30): էջ 37, 45, 46:

ՄԱԿԱՐ (արաբ.) Նույնն է՝ Մակամ: *Սայթթ-Նոպեն լալիս է, Մա՛կար ղարիբ բըլբուլ է* (56):

ՄԱՀ, ի. կամ մահու. գ. Մեռնելը: *Յիս էն մահին մահ չիմ ասի՝ Հենչաք ըլի՛ դուն վըրես լաս* (31): *Դուն մահի հիդ, մահը քիզ հիդ հասասե* (51): Տե՛ս նաև էջ 17, 17, 18, 26, 27, 36, 40, 40, 48, 55, 59, 68, 68, 68, 85: ☉ *Գլուխը մահի տալ—*անձնասպան լինել: *Դուն գըլուխըտ մահի կու տաս, յիս էլ քիզիդ կու միռնիմ* (5): Տե՛ս նաև էջ 11, 14:

ՄԱՀԱՆԳ (պարսկ.), ի. գ. Մետաղի որպիսություն որոշող փորձաքար: ☉ *Մահանգ անիլ—*փայլ տալ, փայլեցնել: *Ակոերըտ օսլումըն շարած, պրոռըրտ մահանգ իս անում* (2) (Շրթունքները որպես փորձաքար շփվելով ոսկե ատամների կալի են տալիս նրանց):

ՄԱՀ-ՋԱՄԱԼ (պարսկ. արաբ.), ի. գ. Լուսներես, պատկեր գեղեցկության: *Տեսնողըն հեքաթ կու մընա էտ բու սիրուն մահ-ջամալիտ* (7):

ՄԱՂԻԼ, եցի, նք. Մաղել, շաղ տալ, ցողել: *Շուշա-բրոլե գուլաբղան բեր-նետ վարթաջուր մաղում իս* (46):

ՄԱՅԻԼ, միայն մայիլ կենալ կապակցությամբ - վմայլել, հիանալ, սքանչա-նալ: *Կու կենամ ջամալիտ մայիլ* (65):

ՄԱՅԻՍ, ի. գ. Անցկացավ ապրիլ մայիսըն, մեկ օր չը հարցրիր յարին (52): Տե՛ս նաև էջ 28, 44, 48:

ՄԱՆ (բրբ.), գ. Պտույտ, շրջան: Առանձին անգործածական. կիրառվում է *ածիլ, գալ բայերի հետ: Ման ածիլ—*շրջեցնել, պտույտ ածել: *Բըլբուլին լալով ման կոծիս* (25): *Ման գալ—*1) շրջել, թուփառել: *Ման էկա յիրկիր՝ չը տեսա էտ բու նըման ջուրաթումըն* (7): *Էրած, խորված ման իմ գալի* (57): *Մեջլուսի նրման ման իմ գալի, յարեն էրված իմ* (48): Տե՛ս նաև էջ 33,

41, 41, 45, 46, 46, 76, 78: 2) Զբոսնել: Հսօր իմ յարին տեսա բախչի մեշըն ման գալով (14): Տե՛ս նաև էջ 17, 19, 24, 58: 3) Հետամուտ լինել, հետևիցն ընկնել: Շատ մարթ կոսե յիս յարի հիդ ման գու բամ (18): 4) Վեհաշուք ընթանալ: Զար ու պարբաբե դրոշա՝ ման իս գալի ալամի պես (39):

ՄԱՆԳԱԼ (թիբ.), ի. գ. Մանգաղ: Թե դուն էշխի հիդ մանգալըն հարցընիս՝ չի դիմանա Բոստոմ Զալըն (18):

ՄԱՆԳԱՂ, ի. գ. Գուղ մարթըն մանգաղով գու բա, ծիբ կու տա տակռեն կու հանե (54):

ՄԱՆԳԱՆԱ (ադրբ.), նի. գ. Մամուլ, մամլիչ, ճնշող՝ սեղմող սարք: Բամեցիր էշխտ մանգանով (43):

ՄԱՆԴԻԼ (հուն.), ի. գ. Գլխի թաշկինակ, վարշամակ: Անգործիլ, անխարջ ու քրիհ մանդիլի վար իմ քիզ ամա (23):

ՄԱՆԻՇԱԿ (բրբ.), ի. գ. Մանուշակ: Ծուցիտ մեշըն վարթ, մանիշակ, սրնբուլ ու շուշան իս շինի (2): էջ 7, 7, 14, 31, 37, 37, 49, 50, 52:

ՄԱՆՈՒԿ, ի. գ. Փոքրահասակ երեխա, տղա: Մեր ու մանուկ բաժանվեցան, մանուկըն էնդուր ունի լալու (44):

ՄԱՆՈՒՇԱԿ, ի. գ. Նույնն է՝ Մանիշակ: Մանուշակ բաց արած հովին (27): Համաշա սեյրան իս անուս, վարթ ու մանուշակ քաղում իս (46):

ՄԱՇԻԼ, եցի, նբ. Հյուծել, քայքայել, տկարացնել: Հա՛ լաց էլա, վա՛ լ կանչեցի անհաշիվ, էլ ի՛նչ օգուտ, ջան տու, կինքըտ հա՛ մաշի (63): Տե՛ս նաև էջ 13:

ՄԱՇՎԻԼ, եցա, չբ. 1. Երկար գործածվելուց հնանալ, քայքայվել: Ղումաշ ասիմ, շուրեղեն է, կու մաշվի (19): 2. Հյուծվել, քայքայվել, նվազել, տկարանալ: Հալվեցա, մաշվեցա, էլ ի՛նչ ջան գու բամ (18): Էրվեցավ ջիգարըս, մաշվեցավ ջանրս (26): Տե՛ս նաև էջ 41:

ՄԱՋՈՒՄ (արաբ.), ի. գ. Դեղի հատկություն ունեցող սննդարար ուտելիք տկարության և ձերության դեմ: || Անուշաբույր քաղցրավենի: Հուտըտ աշխար բռնից, փրճանգի մաջում (11, 55):

ՄԱՍ (ն), ի. գ. 1. Հատված, կտոր: 2. (եկեղ.): Հաղորդություն, ճաշակ (իբրև Զրիստոսի մարմնի մաս): Մընացի սըկու մասեմեն (32): 3. (եկեղ) Օրհնած բարակ բաղարջ հացի կտոր, որ բաժանում են աատարագի վեքջում. բարձրաբեմ: Թե վուր լալով պըղձում անիս, անմահացըն մասըն կու տան (37):

⊙ Մաս անիլ—բաժանել, անջատել, մասնատել: Յիս կանչում իմ մասանին, սե ու ալիբ մաս անին* (11): Մաս-մաս—կտոր-կտոր: Մաս-մաս շինիլ—փ իս բ. տանջել, չարչարել: Յիփ կու հարնիս ալ ու ալմաս, տեսնողին կու շինիս մաս-մաս (41):

ՄԱՍԱԼԱ (արաբ.), ի. գ. Առակ, առած, պարճալի պատմություն: Խոսկ իս ասում առակավուր—մասալով (20):

* Սե ու ալիբ մաս անին—Ս/ալաթին/ ու Ա/սնային/ մասնատեն, բաժանեն: Տե՛ս Մ. Հասրաթյան, Սալաթ-Նովայի խաղերի ժողովածու, 1959, 11-րդ իլադի ձևադրություն:

ՄԱՍԱՆԻՆ, բառախաղ՝ կազմված մաս և ան՛չ բառերից: Տե՛ս Մաս անիլ (Մաս բառի տակ): *Յիս կանչում իմ մասանին, սե ու այիբ մաս անին* (11):

ՄԱՍԻՆ, ն խ դ ռ. Վերաբերմամբ, նկատմամբ: *Փիբր ու խիալը հարգան հշխարհի ցավի մասին է* (68):

ՄԱՄՆԵՄԱՍ, մ. Մաս-մաս, կտոր-կտոր: **⊙** *Մասնեմաս անիլ*—մաս-մաս անել, կտրատել: *Սայաթ-Նովեն բու յարըն է, թեգուզ մասնեմաս անին* (11): Տե՛ս նաև էջ 44:

ՄԱՍՏ (պարսկ.), Գործ է ածվում միայն հետևյալ կապակցությունների մեջ. *մաստ անիլ*—հարբեցնել, զինու՛ցնել: *Բու էշխըն ինձի մաստ արավ* (24): *Մաստ եկած*—հարբած: *Էշխեմետ խըմած մաստ եկած, գլուխըս մահին ռաստ եկած* (32):

ՄԱՍՈՒՆԶ (գրաբ. «Մասն» բառի հոգ ն. ուղղ.), ի, գ. (եկեղ.) Մասեր, նշխարներ սրբերի ոսկորներից, որոնք պահում են եկեղեցում արծաթյա տուփերի մեջ: (Մըշու սուլթան սուրփ Կարապիտ) *Մասունքըտ ամին տիղ ծավալի* (61):

ՄԱՎԹՈՒԼ (վրաց.), ի, գ. Մետաղալար, երկաթալար: *Մեշկըտ հադիդեմեն քաշած սիրմա մավթուլի նըման է* (7):

ՄԱՏԱՂ, մատղի, գ. Ջահել կենդանի, որ մորթում են իբրև զոհ և միսը ձրի բաժանում: *Օխչրի միսըն ասավ... Բիզ կու քոռացնե իմ մատղի զորըն* (59): **⊙** *Մատաղ անիլ*—զոհաբերել: *Գլուխըս մատաղ կոնիմ դարուզ անիս, յա՛ր, այար* (65): *Մատաղ ըլիլ*—զոհաբերվել: *Ախպոր ճանփին կինքըս մատաղ ըլի թող* (63): Տե՛ս նաև էջ 36: *Բիզ մատաղ*—մտերմաբար խնդրելու՝ աղաչելու ձև: *Անգած արա, մատաղ իմ քիզ* (14, 30):

ՄԱՏ (ն), ի, (հոգ ն. մատնիր), գ. Մատ: Կրճիթըտ շիմշատ է, մատնիրըտ է մում (11, 55): Տե՛ս նաև էջ 45, 45, 72:

ՄԱՏԱՆԻ, մատնու. գ. Օսկե մատնումըտ դուն դըրիլ իս լալ քիզի լալիլ (48):

ՄԱՐ (ասոր.), ի, գ. ա ծ. Տեր, պաշտպան: *Էլոված, խորված ման իմ գալի, մե տիղ չը կա մար* ունենամ* (57):

ՄԱՐԱ (պարսկ.), թի, գ. Անգին քար առասպելական վիշապօձի գլխին: *Բաս վո՛նց թարիփ անիմ մարա իս, գո՛վալ* (19):

ՄԱՐԱԼ (աղբբ.), ի, գ. Եղնիկ, եղջերու: *Վուրսնուրթի ձեռիցըն փախած ջեյրան, մարալ արմանալու* (46): էջ 63, 68, 68, 70, 77:

ՄԱՐԴ (պարսկ.), ա ծ. 1. Կտրիճ, քաջ, արի: 2. Ազնիվ, վեհանձն: *Յիփ քի սիրով մեհման անիմ, վի կացի, թե մարդ իս, արի* (13):

ՄԱՐԹ, ու (հոգ ն. մարթիբ), գ. 1. Մարդ: *Աստուճ խիալ արից, սլվթա, ստիղծից նախ մարթըն Աթամ* (64): Տե՛ս նաև էջ 70, 71: 2. Անորոշ ենթակա:

* Մար-ը եթե ասոր, «տեր» բառը չէ, ապա «մարել (հանգչել)» բառի կրճատումն է՝ հանգի համար: Տե՛ս Մ. Հասրաթյան, Սայաթ-Նովա, 1959, էջ 233:

Հենց բան արա վուր մարթ վըրնտ չը ծիծաղի (10) : Մարթուս էհրիբար չը մընաց (68) : Տե՛ս նաև էջ 5, 11, 21, 32, 34, 54, 60, 60, 61, 64, 66, 67 :
⊙ Ամեն մարթ—յուրաքանչյուր ոք : Ամեն մարթ չի կանա խըմի, իմ ջուրըն ուրիշ ջըրեն է (10) : Ամեն մարթ իրանն է քաշում (67) : Շատ մարթ, շատ մարթիք—մարդիկ, շատերը : Շատ մարթ քու էշխեննն կու դառնա լիպիդ (17) : Շատ մարթ կոսե թե յար ունիմ (7) : Շատ մարթիք քիպիդ կու էրիս, էտ լեպվի տեր վուր իս, ա՛յսպեր (13) : Տե՛ս նաև էջ 27, 30, 30, 32, 60 : Մե մարթ— ոմն, մեկը : Բըլքամ մե մարթ ռաստ գա, վուր ինձ խըրատե (21) : Մե մարթ չը կեր, ապատիլ էր, Սալթ-Նովեն դարին մընաց (33) : Տե՛ս նաև էջ 68 : Մարթու հոքին հանիլ—տանջել, չարչարել : Մարթու հոքին կու հանե (60) :

ՄԱՐԹԱՍԵՐ, ա ծ. Մարդասեր, բարի : Մարթասեր իշխան չը մընաց (68) :

ՄԱՐԹԻԲ (հո գ ն. «մարդ» բառի) : Մարդիկ : Շատ մարթիք քիպիդ կու էրիս (13) :

ՄԱՐԻՓԱԹ (արաբ.). ի. գ. Բարեկրթություն, շնորհք, քաղաքավարություն : Էտ քու ամեն մարիփաթով դիփունին կու ախտիս, գո՛ւալ (34) : ⊙ Մարիփաթով—շնորհքով, բարեկիրթ : Մարիփաթով քաղցըր լիպուն դիփունի վըրա անգին ա (15) :

ՄԱՐՄԱՇ (վրաց.), գ. Նուրբ կտավ, շղարշ, մուսլին : Հընդու դալամքարու վըրեն ծածկիլ իս մարմաշ (35) :

ՄԱՐՄԱՐ, ի. գ. Սընիրըտ տաշ մարմար բարով... Մոդնու սուրփ Գևո՛ւրք (62) :

ՄԱՐՄԻՆ, մնու. գ. Մարդու կենդանի օրգանիկվը : Թե վուր հոքուտ կամքն իս անում, մարմինըտ բեդամաղ է ըլում (37) : Հոքուտ խաթրի մարմնուտ ումբըր կես անիս (16) : Տե՛ս նաև էջ 28, 82 :

ՄԱՐԶԱՆ (արաբ.), ի. գ. Թանկագին քար, բուստ : Դաստամապիտ թիլի մեչըն մե շադա մարջան է քաշած (35) :

ՄԱՐՏ, ի. գ. Մարտ ամիսը : Գարունքվան ծաղիկ, բաց իս էլի մարտի միշումըն (48) : Տե՛ս նաև էջ 7, 9, 35 :

ՄԱՐԶԱՐԻՏ, ի. ՄԱՐԶՐԻՏ, քըրտի (բբբ.), գ. 1. Մարգարիտ, թանկագին քար : Մարքարիտով լիքըն կալ իս (40) : Մարքարիտըա շադա շադա՝ շարըս մունաթ չը քաշե (15) : Տե՛ս նաև էջ 50, 59 : 2. ֆ ի ս բ. Մարգարտի նման լիսելը (փայլուն՝ իմաստալից մտքի մասին) : Ավիտարանի խոսկիրըն մարքարիտ է կարըն սիրուն (37) (այսինքն՝ «Ավետարանի խոսքերը սիրուն կարգով շարած մարգարիտ են») : 3. ֆ ի ս բ. Գեղեցկությամբ և այլ ընտիր հատկություններով փայլող : Ակռեքըտ մարքըրիտ ալմաս է (24) : Ակռընհիրըտ լալ ու մարքըրիտ, ռանգիտ մարթ կու երանե (22) :

ՄԱԶԱՂԱԹ (բբբ.), ի. գ. 1. Մագաղաթ : Մե բիռըն վար դալամքարի, տիդ ունի վունցոր մաքաղաթ (15) : 2. ֆ ի ս բ. Նուրբ մաշկ : Չեռնիրըտ սիպտակ մաքաղաթ, լիպուտ օսկե դալամի պես (39) : Սուրաթ-մաքաղաթ—տե՛ս Սուրաթ : Օսկե վարաղով վարաղնած սուրաթ-մաքաղաթըն դուն իս (38) :

ՄԱՔԻՅԱԼ (գրաբ.) . Մաքրված, սրբացած, սուրբ: Սուրբըստ սրբոց սիրտըստ մաքրյալ (61) :

ՄԱՔՈՒՐ, ա ծ. Անարատ: Անարատ մաքուր իս, ա՛յսպէր (13) :

ՄԵ, ա ծ. 1. Մեկ, մի: Արի միպիդ մե լավ կացի (7) : Ի՛նչ կուլի միկ մըտիկ անիս Հապարեն մե ջեր (45) : Պատանքին մե ճանգըն է հերիք, չալ անիրըն ինչին է շահ (44) : Տե՛ս նաև էջ 18, 18, 20, 28, 29, 30, 32, 32, 32, 32, 33, 33, 33, 36, 38, (5 անգամ), 45 (5 անգամ), 46, 46, 46, 49, 49, 51, 52, 54, 74, 83: 2. Իբրև անորոշ ենթակա: Դուն մե թաքավուր իս, յիս մե խիղճ դավրիշ (11, 55) : Տե՛ս նաև էջ 27 (12 անգամ), 53, 55, 56 (6 անգամ), 57, 64, 68, 70, 74, 75, 76: 3. Միևնույն, նույն: Ինձ ու իմ սիրեկան յարին մե տարի բերած գրդենաք (57) : Տե՛ս նաև էջ 19, 20: 4. Խնդրելու՝ աղաչելու ձև: Դահմ արա, մե խոսի միպիդ՝ բեմուրվաթ, ծեն իմ տալի յանա-յանա (27) : **⊙** Մե գամ—մի անգամ: Մե գամ էլա մածնի համը շանց կու տամ (58) : Մե մարթ—որևէ մեկը: Մե մարթ չը կա, վուր ինձ խըրատ հասասե (68) : Մե քանի—մի քանի, անորոշ քանակությամբ: Մե քանի բիռըս դարիչին, մի բիռըն էլ դարամփիլ ա (15) :

ՄԵԲԱՇ (հայ. աղբբ.) (թիբբ.), մ. Հանկարծ, միանգամից: Գուպիք Լրկը-սիտ մետի, մեբաշ սրղոցիմ (59) :

ՄԵԼԻՐ (արաբ.), ի. գ. Տանուտեր, գյուղական իշխան: Գիղումըն մելիք--տանուտեր իս (36) :

ՄԵԿ, 1. թ. Մեկ: Ով չէ տեսի՝ մեկ ա՛յս կոնե, ով կու տեսնե՛ հապար հարուր (25) : Տասնենտ մեկըն չին ասի, թեզուկ աշխարըս քիկ գովին (2) : Տե՛ս նաև էջ 55: 2. մ. Մի անգամ, մի ժամանակ: Ինչ կուլի մեկ հիղըս խոսիս (24) : 3. մ. (էական բայի հետ) Միևնույնն է: Մարթ համաշա մեկ չի ըլի (53) : 4. Ժխտական իմաստ՝ «ոչ մի»: Անցկացավ ապրիլ մայիսըն, մեկ օր չը հար-ցրիր յարին (52) : 5. Գ ո թ ծ. հ ո լ ռ վ ո վ գործ է ածվում «ամբողջ», «չափով», «մեծությամբ» նշանակություններով: Յարուլտ մեկ մըհլամ չունիս, էնդուր գու լաս (44) : **⊙** Մեկ էլ—դարձյալ, նորից, կրկին, էլի, մեկ անգամ: Թե տեսնողըս մեկ էլ տեսավ՝ դիվանա-դաբանգ իս անում (2) : Սիրտըն մեկ էլ լարա մի՛ անի (66) : Տե՛ս նաև էջ 51: Մեկ մեկու—միմյանց, իրար: Գեղըն ու չոբանը մեկ մեկու ռաստ էկան (58) : Մեկ չէ, էրկու չէ—շատ-շատ են: Մեկ չէ, էրկու չէ՝ աշխարում շատի ծեռնեմեն գու լամ յիս (67) : Շափթենը մեկ—շաբաթվա մեջ մի անգամ: Աղ ու հացըն մի՛ դեն գըցի, շափթենը մեկ մըտիկ տու միկ (23) :

ՄԵՀՄԱՆ (պարսկ.), ի. գ. Հյուր: **⊙** Մեհման անիլ—1) հրավիրել. 2) հյուրասիրել, հյուրընկալել: Յիփ քի սիրով մեհման անիմ, վի կացի, թե մարթ իս, արի (13) : Էջ 25: (Գ. Ախվերդյանի և Ռ. Սբրահամյանի մոտ՝ Մեյման) :

ՄԵՀՄԱՆԴԱՐ (պարսկ.), ի. գ. Հյուրընկալ, ասպնջական: Շատ աջայիք մեհմանդար իս, սուփրի սապանդարիտ էրնեկ (25) : (Գ. Ախվերդյանի և Ռ. Աբրահամյանի մոտ՝ Մեյմանդար ձևով) :

ՄԵԶՐԿԻԼ (թիբ.) կր. չբ. Մեծարվել: Կու մեծրվիս այվլնումըն (1):

ՄԵՂԱՎՈՐ (գրաբ. հոգն. սեռ. մեղավորաց), գ. ած. (կրոն.): Աստվածային օրենքի դեմ մեղք գործող (անծ): Հկռկ. արդար: Մեղավորաց միջըն հալե (61):

ՄԵՂՐ, ի, գ. Մեղըր վայրի վայրիցար (61):

ՄԵՄԵԿ, ՄԵ ՄԵԿ, ՄԵ-ՄԵԿ, ՄԵՄԵԿ ՄԵՄԵԿ (թիբ.), ած. մ. Մեկ-մեկ, մեկական, առանձին-առանձին: Չիռնեմես վեր կոծիմ չանգիրըն մեմեկ (21): Կերթամ ու ման գու բամ վանքիրըն մեմեկ (21): Էջ 33, 33, 33, 33, 33, 33: Ամեն դոչի գրլխին մե-մեկ շուն ունիմ (58): Տե՛ս նաև էջ 52: Մեմեկ, մեմեկ էլ չի սավի (34): 2. Երբեմն: Մե մեկ ինծի տխուտ թե անիս լայիդ, Կու կենամ ջամալիտ մայիլ, յա՛ր, ա՛ յար (65): Տե՛ս նաև էջ 50:

ՄԵՅՂԱՆ (արաբ.), դևի, գ. Ասպարեկ, հրապարակ: Մեյդանըն Ռոստոմի Ջալուն մընում է (52):

ՄԵՉ, միչի (բաց. միչեմեն, միչեն), գ. 1. Ներսը, ներսի կողմը, մեջ: Ծուցիտ մեչըն վարթ մանիշակ սրնբուկ ու շուշան իս շինի (2): Ընդուր աչկըս չէ ցամաքում, սըրտիս մեչըն արին մընաց (33): Տե՛ս նաև էջ 17, 31, 37, 50, 51, 52, 60, 66, 71, 89: 2. Ցույց է տալիս տեղը, շրջանը, որտեղ կատարվում է գործողությունը: Աշխարքըն ծով, դուն մեչըն նավ—ման իս գալի, լանգ իս անում (2): Հընդու միչեմեն դուս էկած դիմեթով մաթաֆ իմ բերի (15): Անտակ ծովի միչեն հանած անգին գովհար իս (17): Տե՛ս նաև էջ 14, 14, 14, 18, 24, 26, 36, 37, 41, 58, 64, 82: 3. Դեպի ներս: Բամին մեչըն անց է կենում մապիրըտ էլբան իս շինի (2): 4. Ցույց է տալիս վիճակ, դրություն: Էշխի մեչըն սողանում իս (6): Գիշեր-ցերեկ կուբսիտ մեչըն իս (25): Տե՛ս նաև էջ 10, 14, 25, 58, 65, 65, 65, 65, 73, 78: 5. Ցույց է տալիս համեմատություն, հարաբերություն: Ամեն սպի մեչըն գոված դուն թամամ տասըն իս, բամանչա (1) (բոլոր նվագարանների մեջ դու ես գերազանցը, բամանչա):

ՄԵՉԿ (բրբ.), ի, գ. Մեջք: Մեչկըտ սալբու չինարի պես, ռանգըտ փռանգի առլաս է (24): Մեչկըտ հադիդեմեն քաշած սիրմա մավթուլի նըման է (7): Տե՛ս նաև էջ 23, 31, 55, 72:

ՄԵՋԼԻՍ (արաբ.), ի, գ. Հանդես. խնջույք: || Հավաքույք: Յիփ վեր գուբաս՝ մեչլխումըն բաղըր կող ու սափա գուլիս (1): Բոլորըտ գուլանիր շարած մեչլխի կեսըն իս, բամանչա (1): Տե՛ս նաև էջ 7 18, 20, 42, 56, 89:

ՄԵՌԱՆԻԼ (գրաբ.), տե՛ս Մեռնիլ: Յիփ մեռանիմ վըրես լացի (6): էջ 15, 17, 22, 61:

ՄԵՌՆԻԼ, մեռա, չբ. Մեռել, մահանալ: Շատըն հասրաթետ կու մեռնի (25): Չունքի մահըս յարիմեն է, թուղ լի մեռնիմ լավ գուլալով (14):

ՄԵՏԻ (թիբ.), մ. Միասին: Գուլիք էրկսիտ մետի, մեբաշ սողցիմ (59):

ՄԵՐՂ (բրբ.), մոր, գ. Մայր: Ասի՛ թե յիս քու ախպեր, Բու մերըն ինծի մեր անին (11): Անց մի՛ կենա թե հալալ իս, մի մոր ծծած մի մոր դալ իս (6): էջ 15, 15, 22, 22, 36, 61:

ՄԵՐՉ, դ. (Մենք-ի ս ե ու հ ո լ ո վ) : Տե՛ս Յիս : Մեր խալվար օրախումըն բարիչելու վախտըն է (66) :

ՄԵՐԱԾ, ա ծ . մ . Մակարդված . թանձրացած . լերդացած : Ախ քաշելեն սրտիս մեշըն արունըն մերած գիղենաք (57) :

ՄԵՐԱՆՎ, ի . գ . Մակարդ (մածնի . պանրի) : փ խ բ . Սկզբնապատճառ, ձիւք : Յիս կանչու : ի մ մերանին . ըսկըպընական մերանին* (11) :

ՄԵՐԱՆՉ, բառախաղ է . կազմված՝ մեր բառից և Աննա անունից : Յիս կանչում իմ մերանին (ես կանչում եմ մեր Աննային**) (11) :

ՄԵՐԻԼ (բրբ.) . եցի . ն բ . Մակարդել . թանձրացնել . լերդացնել : Ախ քաշելեն սրտիս մեշըն արունըն մերած գիղենաք (57) :

ՄԵՐԿԱՆԱԼ, ացա , չ բ . Մերկությունը երևան գալ : (Չարը) Խափից Աթամ նախահորըն , կերան ու դառան մերկանդամ , Մերկացան ու ամանչեցին (64) :

ՄԵՐԿԱՆՂԱՄ, ա ծ . մ . Մերկ անդամներով , մերկացած մարմնով : (Եվան) Բաղից արգիված խընձորըն , խափից Աթամ նախահորըն , կերան ու դառան մերկանդամ (64) :

ՄԸԸԼԱՄ տե՛ս Մհլամ : Մըհլամըս հիդ յարին մընաց (33) :

ՄԹՆԻԼ , չ բ . Մութն ընկնել : Գելըն ասալ . «մուլափ կու տամ , վուր մըթնի» (58) :

ՄԻՎ , թ վ ա կ . ա ծ . Մի , մեկ : Վարթըն մի ամիս ումըլը ունե՛ դուն ամենան վախտ իս գո՛ղալ (34) : Էջ 15, 15, 50, 51, 51 :

ՄԻՉ , մ . Արգելք արտահայտող բառ , որ դրվում է բայի արգելական-հրամայական ձևի վրա (2-րդ դեմքում) : Յարին բեղամաղ մի՛ անի (6) : Իմ ու ըու սըրտի բանըն դիփ աշկարա մի՛ անի (66) : Զու պատվական զըլուխըտ դուն ավարա մի՛ անի (66) : Էջ 11, 11, 12, 12, 12, 15, 17, 19, 19, 19, 19, 19, 20, 20, 20, 20, 20, 20, 20, 20, 22, 23, 23, 26, 34, 34, 34, 34, 34, 36, 36, 36, 36, 40, 40, 40, 41, 41, 45, 47, 53, 54, 56, 56, 62, 65, 65, 65, 71, 71, 72, 72, 72, 88, 88, 88, 88 :

ՄԻԱԲԱՆՔ (գրբ.) . ի . գ . (կրոն.) Միաբանություն . վանքի կամ եկեղեցու հոգևորական դասը : Միաբանըլտ քաղցըլը ծախնով տաղ արին , Մողնու սուրփ Գուուք (62) :

ՄԻԶ (թիբ.) (մենք դերանվան հ ո գ ն . տ ո թ . հ ա յ ց . հ ո լ .) տե՛ս Յիս : Աշխարհս միզ մընալու չե՛ իմաստնասիրաց խաբարով (53) : Ի՛նչ կուլի միզ մրտիկ անիս Հազարեն մե չեր , նա՛վանի (45) :

* Ես կանչում եմ մեր Աննային—սիրո սկզբնապատճառին (տե՛ս Մ . Հասարթան , Սալաթ-Նովայի խաղերի ժողովածու , 1959 , 11-րդ խաղի ծանոթություն :

** Աննա—վրաց . Հերակըլ 2-րդ թագավորի քույրը : Տե՛ս նույնը :

ՄԻԶԱՆ (արաբ.), միվնի (բ ա գ. հ ո լ. սիվնից). գ. Կշեռք: *Ռախտարի նըման նըստած իմ իջարից, միվնից բեղամաղ** (43):

ՄԻԶԻ (թիբ.), դ. Նուլնն է՝ Միվ: *Էրապումըն տեսածի հիդ միվի մե հեսար մի՛ անի* (10): Էջ 20, 24, 60:

ՄԻԶԻԴ (թիբ.) Մեվ հետ: *Աջար միվիդ ի՛նչ իս կամում սըրտետ մե խաբար իմանամ* (35): Էջ 17, 24, 29, 41:

ՄԻԹԿ, տե՛ս Միտկ: *Դա՛րդ մի՛ անի, ջա՛ն ու ջիգար, միթկըտ դիվաց չը տեսնե* (5):

ՄԻԽ (պարսկ.), ի. գ. Գամ, բևեռ: *Տախտակնիրը էրծաթենեն, միխիրըն օսլե գուլիչով* (34):

ՄԻԽԱԿ (թիբ.), ի. գ. Մեխակ: *Հուտով հիլ, միխակ, դարիչին, վարթ, մանիշակ, սուսամբար իս* (24):

ՄԻԽԿ, տե՛ս Միդք: *Միխկիրըտ դարծ գաս ու պիտի հաղորթվիս* (59):

ՄԻԾ, (թիբ.) ա ծ. Իբրև մակդիր նշանավոր անծերի, մեծ: *Ովաննես միծի ծընունդկանանց* (61):

ՄԻՂ, տե՛ս Միդք: *Խոստովնահերըս հիռացավ, միդի համա իմ լալի* (36):

ՄԻՂԱՆԶԻԼ (թիբ.), եցի, ն բ. 1. Մեղանչել. մեղք՝ հանցանք գործել: 2. Մեղավոր՝ անիրավ լինել մեկի կամ մի բանի նկատմամբ: *Ա՛րի, մի՛ղք իս, Սայաթ-Նովա, միղանչող, ախպոր ճամփին կինըս մատաղ ըլի թող* (63):

ՄԻՂԲ (թիբ.), ի. գ. Մեղբ: *Պըռռչեմետ միղբը է կաթում* (14, 47, 60):

ՄԻՂԶ, ՄԻՂԿ, ՄԻՂ (թիբ.), ի. գ. 1. Մեղք, մեղավորություն, հանցավորություն: *Թաքավոր իս, դիվանս արա... Միղ ունենամ, զըխորըս տուր քար* (54): *Խոստովնահերըս հիռացավ, միդի համա իմ լալի* (36): 2. Ինչ որ խղճահարություն է պատճառում, գուք է շարժում: *Արի, միղք իս, Սայաթ-Նովա, միղանչող* (63): ☉ *Միղկիրը դարծ գալ*—գործած հանցանքը վղջալ, թողություն խնդրել, սխալ ընթացքից հրաժարվել: *Միխկիրըտ դարծ գաս ու պիտի հաղորթվիս* (59): *Միղք անիլ*—հանցանք գործել, արլուն թափել, սպանություն գործել: *Յիս մե միղք իմ արի՛ նշտար քաշեցի, իմ էն արթար կաթիս արուն խառնեցի* (63): *Միղքը հալիլ*—հանցանքը վերացնել, ոչնչացնել: (Սայաթ-Նովան) *Աղաչում է երեսըն անկյալ, Մեղավորաց միղքըն հալե* (61): *Միղքիրը քավիլ*—1) Հանցանքը ներել, թողություն շնորհել, արդարացնել: 2) Աշխատանքով կամ մի լավ գործով արած սխալն ուղղել: *Հուսամ, Սայաթ-Նովես, միղքիրըս քավիմ, Թե չե դատաստանին իս ինչ ջուղաբ տամ* (64):

ՄԻՆ (թիբ.) 1. Նուլնն է՝ Մի՛: *Առանց քիզ մին օր վո՛ւնց կենամ* (6): Էջ 15, 31: 2. Միևնույն, նույն: *Աստված դիփունանցըն մին հոբի երիտ* (16):

3. Ոչ մի: *Յիս վարթըն իմ, մին խսր չունիմ* (45):

* Մաքսավճար հավաքողի նման նստել եմ մաքսավճարից և կշեռքից դժգոհ (որովհետև քարվան չի գալիս քաղաք): Մ. Հասարթյան, Սայաթ-Նովայի խաղերի ժողովածու, 1959, էջ 273:

ՄԻՆԱ (պարսկ.). Նի. գ. Ոսկյա և արծաթյա իրերի կամ պարուկների վրա եղած փոսիկներ, որոնց մեջ հազցված է լինում կապույտ գույնի քար: *Օսկու մեշըն մինա արած, աչկիրըտ ակնակապ թաս է* (24):

ՄԻՆՁ (թճբ.), ա ծ. Մեծ: *Չուտիք էս բար, թե չէ կու տեսնիք մինձ պարար* (64):

ՄԻԶԿ (թճբ.), ի. գ. Նույնն է՝ Մեչկ: *Միշկիտ ունիս օսկե քամար* (3): էջ 8, 14, 51:

ՄԻՌԱՆԻԼ (գրաբ.) 1. տե՛ս Մեռնիլ: *Յիփ միռանիմ, վըրես լացի* (6): 2. փ խ բ. Տանջվել, չարչարվել: *Ով չէ տեսի, տիստ է ուզում, ով տեսնում է՝ միռանում է* (38):

ՄԻՌՆԻԼ (թճբ.), միռա, չ բ. Նույնն է՝ Մեռնիլ: *Թաք յիս միռնիմ դուն սաղ ըիս* (22): *Յիս էլ քիպիդ կու միռնիմ* (5): *Յիփ միռա, իծում տիս էկավ* (33): էջ 11, 11, 11, 18, 21, 22, 40, 45, 50, 50, 51, 52, 54, 55, 63, 65, 72: **⊙** *Միռնելուս վրա*—մահից ավելի, մահից առավել: *Յար, քիպանից հիռանալըս միռնելուս վըրա դըժար ա* (39): *Միռնիմ*—աղաչանքի արտահայտություն: *Նապիտ միռնիմ, նապ մի՛ անի, նապըտ ինձ կու սըպանի* (22), էջ 34 (10 անգամ):

ՄԻՌՆՈՐ, ի. գ. Մեռնող, մահացող, հոգեվարքի մեջ գտնվող: *Միռնողըն քիպեն կու առնե անմահական դիդ* (2):

ՄԻՍ, մսի. գ. *Մախուխըն ու օխչրի միսը կըռվեցան. ամեն մեկըն ասում ին՝ «մապեն յիս իմ»* (59): էջ 77 (3 անգամ):

ՄԻՏ, միայն միտն ածիլ կապակցությամբ—մտաբերել, հիշել: *Բըլբուլըն միտըն ածավ ռեհնով կապած թայգուլին* (33):

ՄԻՏԿ (բրբ.), մտկի, գ. Նույնն է՝ Միտք: **⊙** *Միտկը մուլըրվիլ*—ինչ անելը չիմանալ: *Չըլի միտկըտ մուլըրվիլ է, սըրտումըտ պըխտուր իս, ա՛խպեր* (13): *Մտկի հիդ էհալ*—մի բանի մասին մտածել: Միտք անել: *Դուն մըտկի հիդ մի՛ էհա, էտ խիալըն սըրտես հանն* (7): *Ուշկ ու միտկ*—ամբողջ միտքը, ուշադրությունը: *Ուշկ ու միտկըս իրար շաղեցիր* (21): *Չին գիդի թե ուշկ ու միտկըս հապար մե բաբաթ հանգին ա* (15): Տե՛ս նաև էջ 60, 75, 75:

ՄԻՏՔ, մտքի, գ. Իմացականություն, խելք: *Մտոք* (գրաբ. *հո գ ն. գ ո թ. հ ո լ.*) —խելքով, մտքով: *Թեգուլ մըտոք ճարտար ըլի... դիփունին կու ախտիս, գոպալ* (34):

ՄԻՐ (թճբ.) (Մենք-ի ս է ո. հ ո լ) տե՛ս Յիս: *Միր էդնեն թամամ աշխարըս սով քաշե,—հաց չը տեսնե* (5): էջ 11, 26:

ՄԻՐԱ (պարսկ.). ռի. գ. Արև թիկնիք թիկնիք և Բարեկամություն թիկնիք: *Բաս վո՛ւնց թարիփ անիմ, միրա՞ իս, գո՛պալ* (19):

* Այս խաղի 2-րդ տան 4-րդ տողի միրա բառը, որ Սայաթ-Նովայի բնագրում այդպես էլ գրված է, ընկ. Մ. Հասարթյանը իրավացիորեն դարձրել է մարա, որովհետև մյուս բոլոր տների 4-րդ հանգակապ տողերը ունեն խարա,

ՄՆԻԹԱՐԻՉ, ա ծ. Մխիթարյոզ, սփոփիչ: Աստուծու բերնեմեն առնիս մխիթարիչ սուրփ հոքին (5):

ՄԿՐԱՏ, ի, գ. Չիռիտ բըռնե օսկեջրած մըկրատըն (11): Էջ 21, 72:

ՄԿՐՏԵԼ, եցի, ն բ. (կրոն.) Զրիստոնեական կրոնն ընդունողին ավազանի կամ ջրի մեջ լվալ, կնքել: Գնացիր գետըն Հորդանան, տերըն ինքըն մկրտեցիր (61):

ՄՀԼԱՄ (արաբ.), ի, գ. Վերքը բուժող միջոց, սպեղանի, փարատիչ: Էրում է մըհլամըն, չէ լավնում յարեն (26): Էջ 39, 49, 61, 75::

ՄՂԴՍԻ (արաբ.), սու, գ. ա ծ. Երուսաղեմ ուխտի գնացած, մահուտի, հացի: Գործ է ածվում իբրև մակդիր հատուկ անուններից առաջ: Յիս—մղղըսու վուրթի Արուփինըս գըլուխ դըրի ամենան խաղին (4): Էջ 10-ի ծանոթ.:

ՄՅՈՒՍ, գ. Հաջորդ, հետևյալ: Մյուս էրեսին Սայաթ-Նովեն (23): Էջ 36-ի տողատակի ծանոթ.:

ՄՆԱԼ, ացի (հրմ. կացի), չ բ. 1. Մի տեղ անշարժ վիճակում կենալ: Ծովումըն մընաց դուս չեկավ նավըտ (50): Վա՛յ բու դարին, դարիբ բըլըու, վուր լեշըտ չափարին մընաց (33): 2. Գտնվել մի վիճակում: Մե մարթ չը կեր՝ ազատիլ էր, Սայաթ-Նովեն դարին մընաց (33): Տե՛ս նաև էջ 17, 24, 28, 39, 49, 49, 49, 61: 3. Վիճակվել: Փահրադին ջըլունգըն սըպանից, Շիրին խանջալին մընում է (52): 4. Որոշ դրություն պահպանել, որոշ դրության մեջ գտնվել: Այիբ Ասոված սիրիս, բեն բարի կացի (50): Իդրարին մընացողըն հաստատ Տերըն կու հիշե ամեն ժամ (64): 5. Գոյություն ունենալ, պահպանվել, լինել: Էլ հոքեվախ կըռնավուր, մարթասեր իշխան չը մընաց (68): Աշխարըս միզ մնալու չէ իմաստնասիրաց խաբարով (53), Տե՛ս նաև էջ 61, 70, 70: 6. Հարատևել: Ո՛վ է մընացի աշխարումըս քարասուն (51): 7. Չփոփոխվել, նախկինը լինել: Էլի վիրչումըն մեյդանըն Ռոստոմի Ջալուն մընում է (52): 8. Կուտակվել մի տեղ, հավաքվել: Էնդուր աչկըս չէ ցամաքում սըրտիս մեչըն արին մընաց (33): 9. Սպասել: Խաբար գընաց բըլըուլի մող, վարթըն բու գալուն մընում է (52): 10. Մի բանի ապավինել, հույսը մի բանի դնել: Մընացի սկու մասեմեն, աչկի լուս, ջուր իմ ասի (32): 11. Կազմում է հարադիր բայեր: Կարոտ մընալ—կարոտել: Դիդարետ կարոտ մընացի (22): Սով մընալ, փ խ բ. մի բանի կարոտություն քաշել: Աշխարըս աշխարով կըշտացավ, իմ սիրտըս քիզնից սով մընաց (24): Աչկը ճանապարհին մնալ—ակընդետ սպասել մի բանի: Էշխեմեն հիվանդ պառկեցա, աչկըս ճանապարհին մնաց (33): Բան չըմնալ—ամեն ինչ սպառվել: Յա՛ր, քիզ ինչով թարիփ անիմ, աշխա-

փարա, վարա, առա հանգավոր բառեր, և որովհետև այս բանաստեղծությունը ներսից էլ հանգավոր է (դափիա է), հետևապես 2-րդ տան 4-րդ տողը չէր կարող մյուսներից տարբերվել: Մարա բառը ոչ միայն ձևով է ներդաշնակում, այլև իմաստով էլ միանգամայն համապատասխանում է բերված օրինակին (տե՛ս Մարա): Տե՛ս Մ. Հասրաթյան, Սայաթ-Նովայի խաղերի ժողովածու, 1959, 19-րդ խաղի ծանոթագրություն:

րումըս բան չը մընաց (24) : Բիպի չի մնա—սպառնալիքի արտահայտություն մեկի հասցեին, արածի համար հատուցում կատանաս : Էտ բու արարմունքսըն քիպի չի մընա (26) :

ՄՆՋԱՆԱԼ, ացա, չբ. Լոել, պապանծվել, խոսել չկարողանալ, համբանալ : Դուշմանի լիպուն մընջանա (41) :

ՄՈՒ (թֆբ.), ի, գ. 1. Մուտ, կողք : Մողըտ նըստող յարիտ էրնեկ (25) : 2. Հետ : Միպ մող հուր իս, ա'խպեր (13) :

ՄՈՂԱՆԱԼ (բբբ.), չբ. Մոտենալ, մոտիկ լինել, հասնել : Օրըն ի օրըն շատանում իս, էշխի մեշըն մողանում* իս (6) : Էջ 14 :

ՄՈՒՐՎԻԼ (բբբ.), վեցի, չբ. Մուրովել : Բու տեսնողըն իր ճամփեմեն կու մուրովի (2) : Էջ 7, 25 :

ՄՈՆ (թֆբ.) (գրաբ. մոյն), ա ծ. մ. Լավ, վայելուչ կերպով, կարգին : Հոբով ու մարմընով կու սըրփովի, ով քիպ գու քա մոնի նըման, Մողնու սուրփ Գևուրք (62) :

ՄՈՏ, ի, գ. Նույնն է՝ Մոդ : Էրնեկ մոտըտ նըստող յարին (38) :

ՄՈՐԹԻԼ, եցի, նբ. Վիլը կտրել, գլխատել : փ իս բ. Տանջել, չարչարվել : Էշխեմեն անդանակ էլա, եկ մորթե՝ ջալլաթըն դուն իս (38) :

ՄՍԽԱԼ (արաբ.), գ. Ծանրության հին չափ = $\frac{1}{2}$ գրամի : Հիդքաշած մըսխալ մըսխալ իս (34) (այսինքն՝ «ամենայն մանրամասնությամբ նորից կշռված ես, անթերի ես») :

ՄՏԻԿ, գործ է ածվում *անիլ, տալ* բայերի հետ : Մըտիկ անիլ—1) Հոգ տանել, խնամել, պահպանել, նայել : Էլ բու բաղին մըտիկ արա, ուրիշ բաղեն վարթ չին տա քիպ (23) : 2) Նայել, դիտել : Թուղ քիպ սեյր անիմ, յա՛ր, մըտիկ անիմ (29) : 3) Մի բանի հավատարիմ լինել : Մտիկ արա աղ ու հացի (6) : Էջ 15 : 4) Աչքաթող չանել, չմոռանալ, ուշադիր լինել, հիշել : Մըտիկ արա բու ստիղծողին (14) : Ի՛նչ կուլի միպ մըտիկ անիս (45) : 5) Լավ մտածել, խորհել : Բիպիքիպ մըտիկ արա, փոշմանելու վախտըն է (66) : ☉ Խիլքին մտիկ արա—սրան տես, խելքին նայեք, հիմար : Դուն իմ խիլքին մըտիկ արա, ջուրըն էկավ, գերանըս տարավ, ծիղի համա իմ լալի (36) : Մտիկ տալ—1) նայել, հայել, դիտել : Ամեն մե մըտիկ տալով տարար խիլքս (66) : Ով քիպ խայան մըտիկ տա՝ դառնա էրկու աչկով կուր (13) : Տե՛ս նաև էջ 47, 47, 48, 54, 64, 70 : 2) Հիշել, մտաբերել, չմոռանալ : Շափթենը մեկ մըտիկ տու միպ (23) : 3) Ուշադրություն դարձնել, կարևորություն տալ : Բարով տամ քիպ.—մըտիկ տու միպ (6) :

ՄՏՆԻԼ, մտա, նբ. 1. Ներս գալ : Հ կռկ. դուրս գալ, ելնել : Մըտնողըն էլ չի դուս էհա՛ դուռ, մահու պատճառ բացարած (39) : Հենց գիդիմ թե չուրս տարի է Բաղաբը բարվան չե մըտի (49) : Տե՛ս նաև էջ 60, 60, 66 : 2. Տակովն անցնել : Էշխիտ ջուրըն հիդ է, պալում, Մըտնում է յարսուն կարմունջըն՝ չա-

* Հանգի համար հարմարեցրած բառ : Ըստ Գ. Ախվերդյանի «էշխի մեշըն մողանում իս»—սիրո կենտրոնին ես մոտենում, հասնում :

սիս թե մե գիդ է պալում (39) : Էջ 7, 18, 52: 3. Իջնել, սուլվել: Ամեն մարթ չի կարա մլտնի՝ էշխտ ջուրըսն հիդ է, պալում (39) :

ՄՈՒԶՂ (պարսկ.), ի, գ. Վարձատրություն, վարձ, վճար: *Կ խ բ.* Որևէ լավ բանի համար համապատասխան փոխարինություն: *Մուպդ ունե էն նաղջարըն, վուր թահրըտ դալամով հանա* (38) :

ՄՈՒԹ, մթան, գ. Խավար: *Մութըն տիղըն լուս իս տալի* (39) : Տե՛ս նաև էջ 77: **⊙** *Մութ բռնիլ*—մթնել, խավարել: *Թամամ մութ բռնից աշխարք* (64) :

*ՄՈՒԼԱՓ (թհբ.), գ. Ժամանակամիջոց մի բան կատարելու համար: **⊙** *Մուլափ տալ*—ժամանակ տալ, սպասել, համբերել: *Գելն ասազ. «մուլափ կու տամ վուր մթնի»* (58) :

ՄՈՒՆԱՄՄԱԶ (արաբ.), ի, գ. 1. Հինգտողյա ոտանավորի ձև, որի առաջին կամ բոլոր տողերը և մյուս տների 5-րդ տողը միևնույն վերջնահանգն ունեն: 2. Այդ ոտանավորով երգվող երգ կամ եղանակ: *Էսպես մոխամմազ բայաթի Արութինի ասած* (13-րդ խադի տողատակի ծանոթ.): Տե՛ս նաև էջ 25, 26, 27 էջերի տողատակի ծանոթ.:

ՄՈՒՀԱԶԱՐ (արաբ.), ի, գ. Ցանկապատ, վանդակապատ, ծողաշար, բալլրիք: *Աչկերուտ ունքիրըտ էլավ մուհաջար* (11) : *Յա՛ր, ուշկըս գընաց՝ մապիրըտ մընաց մուհաջարին* (29) : Տե՛ս նաև էջ 72:

ՄՈՒՂԱՄ (արաբ.), ի, գ. 1. Ոտանավորի ձև՝ հինգ տողից կազմված տնով, որի առաջին տան բոլոր տողերը և մյուս տների 5-րդ տողերը նույն հանգով են վերջանում: 2. Այդ ոտանավորով երգվող երգ կամ եղանակ: *Թասլիք օսմանցոց մուղամ* (3-րդ խադի տողատակի ծանոթ.):

ՄՈՒՂԱՅԻՇ (արաբ.), ի, գ. Ժապավենածև թիթեղ կամ թել ոսկուց կամ արծաթից՝ ճակատի կողմից մալերին ամրացնելու համար: *Ջարլու մուղայիշ*— ոսկեթել ժապավեն: *Ճակտիտ կապե կարլու մուղայիշ* (11) : Տե՛ս նաև էջ 72:

ՄՈՒՄ (թհբ.), ի, գ. Մոմ: *Թե վուր սարերուն հանդիրիս, կու հալիս մումի նրման* (4) : Տե՛ս նաև էջ 22, 45, 66, 72, 78:

ՄՈՒՆԱԹ (արաբ.), ի, գ. Անտեղի հիշատակություն իր արած մի լավության մասին, որ անհաճո կերպով ավրում է լավություն ստացողի վրա, նրան մի տեսակ պարտավորեցնում ու ճնշում է. երախտապարտություն, շնորհ: **⊙** *Մունաթ բաշիլ*—ճնշման՝ պարտավորվածի անհաճո զգացում ունենալ՝ ստացած լավության անտեղի հիշատակությունից: *Գուլիմ ուբըրըս հենց անց կացնիմ՝ օրըս մունաթ չը բաշե* (15) : *Վունց ձևիլ գուպե, վունց կրտրիլ՝ կարլուս մունաթ չը բաշե* (15) : Էջ 27 (7 անգամ) :

ՄՈՒՆԶ, *ա ծ. մ.* Զխոսկան, լուռ. անձայն: *Տասնուսեկ ամիս մունջ իմ կացի՝ Տարեն երված իմ* (48) :

ՄՈՒՇԿ, մշկի, գ. Մշկայծյամի պորտից ստացվող անուշահոտ նյութ, մուկուս, մուշկ: *Մըշկով լիքը բրորլի պես, թաղումրն շնուր կու տաս* (14) : Էջ 26, 45:

ՄՈՒՍԱՎԱՍԻ (արաբ.) Բանաստեղծության տեսակ կամ երգի անուն: Ըսպես դիբա ու ենգիդունիայի հանգով, որ մուսադասի կասեն (30): Էջ 45, 51, տողատակի ծանոթագրություններ:

ՄՈՒՏ, ի. գ. (մտնելը, ներս մտնելը): 1. Թբիլիսիի բարբառում՝ «մտնել» բայի հրամայական ե. գ. ձևը: Մուտ բաղչեն նապով, քիզ գովիմ սապով, յար, իլթիմապով (29): Էջ 44 (5 անգամ): 2. Արնի մայր մտնելը, մութն ընկնելը, մայրամուտ: Ո՛վ կոսե թե յիս կու ապրիմ առուտենեն ինչրու մուտըն՝ աստծու ձեռնումըն հիշտ է, մարթու աշխարք ելումուտըն (53):

ՄՈՒՐ, մրի. գ. Որևէ սև նյութ. փխբ. Չարախոսություն, կրպարտություն: Վադի էրեսըն սիվանա, աչկի լուս, մուր իմ ասի (32): Էջ 48, 48:

ՄՈՒՐԱԶ (արաբ.), ի. գ. Նվիրական նպատակ, իղծ, փափագ: Մուրապին հասնիլ—նպատակին հասնել, իղծը կատարվել: Չէթող թե մուրապին հասնին, տես ինչ արավ քավթար դարին (52):

ՄՈՒՐԱԽԱՍ (արաբ.), ա. մ. Թուլլություն շնորհված՝ մեկնելու կամ մի տեղ մտնելու համար: Ծուցիտ մեչըն չայիր չիման, Չի ման ասիմ, մուրա-յասս իմ (6):

ՄՈՒՐԱՍԱ (արաբ.), ի. ա. ծ. Ոսկով ու ակներով կարդարած, ոսկեխաշ, ականազարդ: Էրեսըտ խասս մուրասս—դալամ քաշիլըն ինչ կոնե (46):

ՄՈՒՐՎԱԹ (արաբ.), ի. գ. 1. Մեծահոգություն, ներողամտություն, մար-դասիրություն: Արի, միպիդ մե լավ կացի, դուրբան ըլիմ մուրվաթումըն (7): 2. Գուք. խիղճ: Բեմուրվաթ իս, մուրվաթ չունիս (12): Տե՛ս նաև էջ 26:

3

ՅԱ (պարսկ.). կ. Կամ, կամ թե: Յա ինձի կորցրեք, յա մե բան արեք (20):

ՅԱԴ (թուրք.), ի. գ. ա. ծ. 1. Օտար, անծանոթ, օտարական: Դոստիրըսս հիշու կանգնին, յադիրըն գան լալ անին (11): Տխուտ կարոտ չը թողնիս, Չասիս՝ սա օտար, սա յադ (65): Տե՛ս նաև էջ 21, 33, 46, 62, 89: 2. Ուրիշ: Թե քիզ ափիլ յադ յար սիրիմ, ուբրես չանիմ խեր, նա՛վանի (45): Տե՛ս նաև էջ 63:

ՅԱԽԱ (ադրբ.), խի. գ. Օձիք: Պրոռչեմետ միղրր է կաթում, թողնիս յա-խետ թաց կուլի (14):

ՅԱՂԻ (ադրբ.). ղու. (հոգ. բաց. յաղերումեն), գ. Թշնամի: Դոստի-րոս դուշման ին դասի,—յաղերումեն բեզարիլ իմ (53):

ՅԱՂՈՒԹ (արաբ.). ի. գ. Թանկագին քար երկնագույն կապույտ կամ կարմրավուն դեղին գույնի, հակինթ: Անգին յաղութ, անգին ալմաս, բողորբոտ ջավահիր շարած (46): Ակոեբըտ յաղութ-ալմաս է (12):

ՅԱՆԱ-ՅԱՆԱ (թուրք.). մ. Այրվելով, վառվելով, տոչորվելով: Գիշեր-ցերեկ ման իմ գալի էշխետ յանա-յանա, գոզալ (39): Արնի պես աչկըս է լալի յանա-յանա (27): Չեն իմ տալի յանա-յանա (27): Տե՛ս նաև էջ 41 (11 ան-գամ). 56:

ՅԱՇԻԼ (թուրք. հայ.), եգի. ն բ. Նայել: *Երանի է բու սիրոչըն, յադի յաշիլըն ինչ կոնե* (46):

ՅԱՇՎԻԼ (թուրք. հայ.), չ բ. Համեմատվել, բաղդատվել, հավասարվել: *Ջեյրան աաիմ շատ մարթ թիպիդ կու յաշվի, բաս վո՛ւնց թարիփ անիմ մարսս իս, գո՛վալ* (19):

ՅԱՐ՝ (պարսկ.) . ի. գ. 1. Սիրեկան, սիրունի, սիրված անձ (որևէ սեռի): *Ընդհանուր գործածական բառ ժողովրդական բանահյուսության աշուղական երգերի մեջ: Ջան չունիմ յարի ձեռնեմեն, Հիվանդ իմ էշխի կրռնեմեն, Դիդ անիս ծուցիտ նրռնեմեն* (6): *Սայաթ-Նովեն բու յարըն է, թեգուլ մասնեմաս անին* (11): *Երրինի պես Փահրադի դիլդարըն իմ, յիս էն գըլխեն Սայաթ-Նովու յարըն իմ* (26): *Յարի մեչըն յար անիլ*—սիրուհու սըրտի մեջ խոց բացանել: *Ով ասավ թե նահախ տիղ, յարիտ մեչըն յար անին* (Գ. Ախվերդ., էջ 170): էջ 12, 12, 12, 12, 13, 13, 14, 14, 16, 16, 17, 17, 18 (5 անգամ), 19, 19, 21, 22, 22, 23, 23, 25, 26 (4 անգամ), 27, 29, 29, 30, 30, 30, 31, 31, 32, 32, 34, 36, 37, 38, 40, 40, 41, 42, 42, 44 (9 անգամ), 45, 46, 47, 54, 54, 55, 55, 58, 58, 59 (6 անգամ), 60, 60, 62, 63, 64, 65 (4 անգամ), 69, 71, 72, 72, 74, 74, 75 (4 անգամ), 86 (10 անգամ): 2. Ընկեր: *Աստված սիրե, հոգի սիրե, յար սիրե* (16): *Յարերով—ընկերներով: Ման իս գալի բադի մեչըն յարերով, յարերով* (4):

ՅԱՐ՝, տե՛ս Յարա: *Յար անիլ*—վերք բացել: *Ո՛վ ասավ թե նահախ տիղ յարիտ մեչըն յար անին* (11):

ՅԱՐԱ (ադրբ.), յարի, գ. 1. Վերք, խոց: *Էրում է մրհլամըն, չե լավնում յարեն* (26): Տե՛ս նաև էջ 49, 75: 2. *Փ իս բ. Հոգեկան վիշտ: Սիրտըս արիր յարա, յա՛ր* (65): *Արութինի շախ սիրտըն մեկ էլ յարա մի՛ անի* (66): *Յարովըտ մեկ—քո վերքին համապատասխան: Յարովտ մեկ մհլամ չունիս, էնդուր գուլաս, Սայաթ-Նովա* (44):

ՅԱՐԱԼՈՒ (ադրբ.), ա ծ. Վիրավոր: *Յարալու ջեյրան իս դառի* (65): Տե՛ս նաև էջ 20: *Յարալու անիլ, յարալու շինիլ*—վիրավորել, խոցել. *Փ իս բ. հոգեկան վիշտ պառճառել: Սիրտըս յարալու արիր* (56): *Սիրտըս յարալու շինեցիր* (22):

ՅԱՐԱՆ (բառախաղ, կազմված յար և Աննա բառերից) Հերակ 2-րդ թագավորի քույրը, որին կարոտով կանչում է Սայաթ-Նովան): *Յիս կանչում իմ յարանին, թեջնիս, վարսաղ, յարանին** (11):

ՅԱՐԱՆԱ (պարսկ. ադրբ.), գ. Սիրածին եվիրված ոտանավոր, երգ, ծոն: *Ըսպես բարիթավոր, յավ յարանա, Արութինի ասած* (6): էջ 16, 33 տողատակերի ծանոթ.:

* Տե՛ս Մ. Հասրաթյան, Սայաթ-Նովայի խաղերի ժողովածու, 1959, հայերեն 11-րդ խաղի ծանոթագրությունը:

Թեջնիս վարսաղ յարանին—կնշանակե և՛ թեջնիս բանաստեղծական ձևը, և՛ վարսաղ երաժշտական եղանակը բանաստեղծը հորինել է յար Աննայի համար:

ՅԱՐԱՆԱՆԱՆՈՒՄ (պարսկ. արաբ.). գ. Սիրային ոտանավորի ձև: *Արու-թինի (ասած)*, *լավ յարանա-դափիս* (21-րդ խաղի ծանոթ.):

ՅԱՐԱՍՈՒՆ, ՅԱՐՍՈՒՆ (թիբ.). թ. Երեսուն: *Իղրարենեն շուտ անցկա-ցար, ո՛ւր է յարասուն տարին* (22): *Յարսուն տարին գըլուխ դըրի ամենան խաղին* (4-րդ խաղի տողատուսի ծանոթ.): *Որր յարսուն օանգ կու փոխիս* (39): Տե՛ս նաև էջ 12:

ՅԱՐՓԱՂԼԻ (աղբբ.), ա ծ. (բառացի՝ Տերևավոր): Ոտանավորի ձև հինգ տնից՝ հնգական տողով, որոնց վերջին երկու տողերը կրկներգեր են: *Ըսպես թասլիբ, մուխալիփի հանգում, հինգ յարփաղլի* (22-րդ խաղի տողատակի ծանոթ.):

ՅԻԴ (թիբ.). մ. Ետ. Կազմում է հարադիր բայեր: *Յիդ անիլ*—արձակել, բացել: *Հավեցա, արնաքամ էլա՛ յարես յիդ արած գիդենաք* (57): *Սըրտի դարդըս յիդ անում իս, յիդ արա, տիս, թե թաբիր իս* (6): Էջ 14: ☉ *Յիդ էհալ*— ետ կանգնել, հրաժարվել: *Յիդ կէհաս՝ քար չիս անի* (4): *Ջուրն յիդ է*—ջուրը ետ է տալիս, ջրապտույտ է: *Ամեն մարթ չի կանա մրտնի՛ էշխիտ ջուրըն յիդ է, կա՛լում* (39):

ՅԻԶԻԴ, ա ծ. գ. 1. Հուղա, դալաճան, սատանա*: 2. Անհավատ, հեթանոս (Եպիդ բառից)**: *Էշխենետ դառիլ իմ յիպիդ* (27): *Շատ մարթ քու էշխենն կու դառնա յիպիդ* (17):

ՅԻՂ (թիբ.). ի. գ. Յուղ: *Վախում իմ թե դարդըն հալե, յիդի համա իմ լալի* (36):

ՅԻՍ (թիբ.). (*ս է ո. իմ, տ ր. հ ա յ ց. ինձ, ինձի, բ ա ց. ինձնից, ինձա-նից, գ ո ր ծ. ինձանով, ն է ր գ. ինձանում, հ ո գ ն. մենք, ս է ո. մեր, միր, տ ր. հ ա յ ց. միպ, միպի, բ ա ց. միպանից կամ միպնից, գ ո ր ծ. միպանով կամ միպնով, ն է ր գ. միր մեջ*): Անձնական դերանուն 1-ին դեմքի, այն բառը, որ խոսողը գործ է ածում իր անվան փոխարեն, Ես: *Յիս էլ ուրիշ յար չունիմ* (14): *Դուն մե թաքավուր իս, յիս մե խիղճ դավրիշ* (55): *Դու մի՛ լաց լի, յի՛ս իմ լալու* (9): Էջ 10, 17, 18, 18, 18, 19 (10 անգամ), 20, 21, 21, 21, 22 (5 անգամ), 23, 24, 25, 26, 30, 30, 31, 32, 32, 33, 34 (6 անգամ), 36, 36, 36, 36, 36, 36, 37, 37, 39, 40, 42, 45, 46 (6 անգամ), 50, 51, 52, 57, 60, 60, 62, 62, 67, 70, 72, 72, 73, 74, 75, 76, 76, 76, 77 (7 անգամ), 83, 85, 86, 89, 89: *Իմ (ս է ո. հ ո լ.) Զի վարթըն էրից, ինձ իմ յարըն* (9): *Չիս հարցընում իմ հալըս* (19, 66): *Բարով տեսա, իմ սիրեկան* (41): Տե՛ս նաև էջ 19, 20, 23, 24, 25, 25, 26 (4 անգամ), 29, 31, 34 (5 անգամ), 37, 39, 45, 46, 52, 57 (6 անգամ), 60, 62, 62, 66, 69, 73, 75, 75, 76, 77, 77, 77, 83, 88 (4 անգամ), 89, 89: *Ինձ, ինձի (տ ր. հ ա յ ց. հ ո լ.) Արի ինձ անգաճ կալ, ա՛յ դիվանա սիրտ* (16): *Սուլթան ու խան իս ինձ ամա* (29): *Թեզուլ աշխարրս պտուտ գա:ս՝ չիս*

* Տե՛ս Հ. Աճառյան, Անձնանունների բառարան, հատոր Բ, Եպիդ անունը:

** Տե՛ս Մ. Հասրաթյան, Սայաթ-Նովայի հայ. վրաց. և աղբբ. խաղերի ժողովածու, 1959, Հայերեն 17-րդ խաղի ծանոթագրությունը:

տեսնի ինձի պես, ապիպ (23) : Կու միռնիմ, էլ ինձի պես չիս տեսանի (11) : Տուր ինձի սրպանե (17) : Տե՛ս նակ էջ 5, 19, 22 (4 անգամ), 24, 25, 25, 26, 27, 28, 29 (3 անգամ), 30, 32, 33, 34 (3 անգամ), 36 (3 անգամ), 37 (9 անգամ), 40, 44, 45, 47, 56, 62, 63, 64, 67, 68, 71, 72, 72, 73, 74, 75, 75, 77, 77, 78, 78, 83, 86, 86, 87: Ինձնից (բ ա գ. հ ո լ.) : Քիպ ինձնից ո՛վ կանա խրլի, աշուղի բասըն իս, բամանչա (1) : Մեր, Միր (թհբ.) (հ ո գ ն. ս ե ռ. Մենք-ի) : Մեր: Մեր խալվաթ օթախումըն բարիշելու վախտըն է (66) : Միր դուշմանըն ըլի էս հալով (14) : Տե՛ս նակ էջ 11, 26: Միպ (թհբ.) (Մենք-ի հ ո գ ն. տ ռ. և հ ա յ գ. հ ո լ.) Մեպ: Բարով տամ քիպ, մըտիկ տու միպ (6) : էջ 14: Միպ մոտ հուր իս, ա՛խպեր (13) : էջ 25: Տե՛ս նակ էջ 12, 14, 25, 33, 36, 60, 60, 61, 61, 62, 70, 70: Միպի (թհբ.) Նույնն է՝ Միպ: Հալբաթ սերըն կես է էլի, վուր միպի ատիլ է ուլում (43) : էջ 20, 34, 60: Միպանից, միպնից (թհբ.) (Մենք-ի բ ա գ. հ ո լ.) Մեպանից, մեպնից: Բեղամաղ չըլի միպանից (6) : Յա՛ր, յիս քիպ ի՛նչ գեթ իմ արի՝ նստած իս միպնից բեղամաղ (43) :

ՅԻՐԳԻՐ (թհբ.), յիրգրի, գ. Երկիր. աշխարհ: Ման էկա յիրգիր՝ չը տեսա էտ բու նրման ջուրաթումըն (7) :

ՅԻՐԳՆԱՅԻՆ (թհբ.), ա ծ. Երկնային, երկնքի: Յիրգնային նամով թուփըն թացվիլ է (29) :

ՅԻՐԳՆՈՒՑ (թհբ.), գ. ա ծ. 1. Երկնային, երկնքի: Յիրգնուց լուսըն վըրետ կամար թաղ արին, Մողնու սուրփ Գևուրք (62) : 2. Երկնքից: Յիրգնուց վըրեդ ձուն է էլի (34) :

ՅԻՐԻԶ (թհբ.), թ. Երեք: Յիրիք բան կա՛ հորու, մարմնու կարթումն է՛ գիր սիրե, դալամ սիրե, դավթար սիրե (16) :

ՅԻՓ (թհբ.), մ. Երբ: Յիփ միռա՛ իծում տիս էկավ (33) : էջ 6, 6, 7, 7, 15, 17, 17, 25, 26, 49, 49, 50, 51, 51, 51, 55, 57:

ՅԻՓՈՐ (թհբ.), մ. Երբ որ: Դովլաթըն էթիբար չունե, յիփոր կերթա ուրուշ քարով (53) :

ՅՈՒՍՈՒԼ (ադրբ.), ա ծ. գ. Աղբատ, տնակ, ընչպուրկ, չունետր: Յոխ-սուլին վըրգող, բեինսափ, վարի ձեռնեմեն դաղ կոնիմ (68) :

ՅՈԹԱՆԱՍՈՒՆ, թ. 70 թիվը. փ խ բ. ճոխ. հարուստ, իմաստալի: Սայաթ-Նովու լիզուն յոթանասուն բառ բացարած (39) :

ՅՈԹ (ն), թ. Յոթ: Կանց յոթըն իմաստնասիրացըն շատ է էս բու Սայաթ-Նովու բանքիրըն մեմեկ (21) :

ՅՈՒԱՐՈՒՄՉԴԱՆ (ադրբ.) Մի երգի անուն (բառացի մեր ճանապարհից) : Հսպես որ ասում է Յուարուսդան-Շիրվանի հանգում (26-րդ խաղի սողատակի ծանոթ.) :

ՅՈՒՐ, դ. Իրենը, իրեն հատուկ եղածը (ստացական դերանուն) : Ջորրս ամենայն յուր հավարյաց (61) :

Ն

ՆԱ, դ. (ս է ո. նրա, տ ր. նրան, բ ա ց. նրամեն) : Անծնական դերանվան ել. 3-րդ դեմք: Նա պահե թիզ, ումնոր ծառա իս, գո՛րպալ (19) : Նաբազ մարթըն թիզ չի տեսնի, դուն նրրա պասըն իս, քամանչա (1) : Աստված թիզ ու նրան պահե (34) : Տե՛ս նաև էջ 43, 63, 84 :

ՆԱԲԱԹ (արաբ.), ի, գ. Սառը շաբար : Ջուած (մաքրած շաբար) (Ռ. Աբրհմ.) : Լիզուտ շաբար՝ ու նաբաթ է (33) : Պըռռոշնիրրոտ նաբաթ ունիս (12) : (Ասվում է *փ իս բ.* որևէ սիրելի բանի մասին) :

ՆԱԲԱԹԵ, ա ծ. Նաբաթից պատրաստած : *փ իս բ.* Շատ սիրելի : Նաբաթե շաբաթըն դուն իս (38) :

ՆԱԶ (պարսկ.), ի, գ. Արտաքուստ չկամություն ցույց տալը, չեմ ու չում անելը, կոտրատվելը, զգվանք, պչրանք, կոկետություն : Վունց մե գոզալ չե ունեցի էտ քու արած նազի նըման (8) : Յարըն նազով հոքիս հանեց (6) : Տե՛ս նաև էջ 12, 26 : Ծ Նազ անիլ—Կոտրատվել, կոկետություն անել, չեմ ու չում անել : Նազ մի՛ անի, նազրոտ ինձ կու սըպանե (22) : Տե՛ս նաև էջ 13, 13, 34 (15 անգամ) : Նազնից—նազից, նազի պատճառով : Շատ մարթ կա նըստած լաց լելիս, գոզալի նազնից բեդամաղ (43) : Նազով—նազ անելով, նազանքով : Մուտ բաղչեն նազով, թիզ գովիմ սազով (29) : էջ 44 (5 անգամ) : Նազ ու դամզով—նազով, նազանքով, նազ ծախելով : Նազ ու դամզով, յար, իմ հոքիս հանեցիր (19) : Նազիտ միռնիմ—աղաչանքի արտահայտություն : Նազիտ միռնիմ, նազ մի՛ անի, նազրոտ ինձ կու սըպանե (22) : էջ 49, 50 :

ՆԱԶԱՆԻ (պարսկ.), ա ծ. 1. Ենորհալի, գեղեցիկ, քնքուշ, նուրբ, վալելչնկալով : 2. Որպես կոչական բառ. հոգյակս, սիրելիս, նազելի : է՛յ նազանի, ռահմ արա, դուն մի՛ դառնա աջալըս (66) : Ի՛նչ կուլի միզ մըտիկ անիս Հազարեն մե ջեր, նա՛զանի (45) : Դու դառի ինձ տեր, նա՛զանի (45) : էջ 21, 29 (7 անգամ), 51 (7 անգամ), 62 (7 անգամ), 72, 88 :

ՆԱԶԻԲ (արաբ.), ի, գ. Նախարար, մինիստր, թագավորի խորհրդական (Արևելքում) : Բեդասլըն ասըլ չի դառնա, թեգուզ վեթիլ, նազիր շինին (47) :

ՆԱԶԻՈՒ (պարսկ. նազ. և ադրբ. լու վերջածանց), ա ծ. 1. Նազելի, նազ ունեցող : 2. *փ իս բ.* Սիրելի, գեղուհի. չքնաղ : Սայաթ-Նովա, նազլու յարին՝ գընած նոքարի նըման իս (12) :

ՆԱԹԻԶ (արաբ.), ի, գ. Արդյունք, հետևանք : Աթամ վուր էտ շարթըն արավ, նաթիջում դրժուխկ գընաց (64) :

ՆԱԼ (արաբ.), ի, գ. Պայտ : Գեդիներն վարթարվեցավ իմ յարի օսկե նալով (14) :

ՆԱԼԹ (արաբ.), ա ծ. գ. Անիծյալ, նզովյալ. անեծք, նզովք : Հում կաթ-նակիր Աթամի վաթ, նալաթ քու էթիբարին (22) : Տե՛ս նաև էջ 49, 69, 70 :

ՆԱԼՍ, մ. Մի բանից առաջ, սկզբում : Աստուծ ստիղծից նախ մարթըն Աթաւ (64) :

ՆԱԼՍԻԼԼԱՅՐ, հոր. գ. (կրճու.) Ըստ Աստվածաշնչի առասպելաբանության

երկրի վրա առաջին մարդը՝ Ադամը, որից ստեղծվել են բոլոր մարդիկ: (Եվան) *Քաղից արգիլված խնձորը՝ խափից Աթամ նախահորն, կերան ու դառան մերկանդամ* (64):

ՆԱԽԱՄԱՐ, մոր, գ. (լրոն.) Նախամայր: Ըստ Աստվածաշնչի առասպելաբանության մարդկության առաջին մայրը՝ Եվան: *Համ առնիլ ուպից նախամար Եվան* (64):

ՆԱԽՇ, ի, գ. Զարդանկար, նկար, պատկեր: *Տեսնողըն նախշտ կու տոն հրդե, փարշևանգի բըմբուլի պես* (40):

ՆԱՀԱՍ (պարսկ. արաբ.), մ. ա ծ. Իվուր, անիրավացի, անտեղի: *Թե սուչ ունենամ սրպանե, թե չե նահախ մի՛ բարգանա* (40): ☉ *Նահախ տիղ—վուր տեղը, անտեղի: Մըտիկ արա բու սըտեղծողին՝ նահախ տիղ դապար մի՛ անի* (10):

ՆԱՂԱՇ (արաբ.) ի, գ. 1. Նկարիչ: 2. Ասեղնագործ: *Ափսուս վուր շուտով միտիլ է, լուսըն բու ծընողին ըլի, ապրիլ էր, մեկել էր բերի բիպի պես նաղաշ* (35):

ՆԱՂՇ, ի, գ. Նույնն է՝ Նախշ: *Մե նաղշտ Արաբ անցկացավ, մե նաղշտ Հընդըստան գընաց* (25): էջ 38 (5 անգամ): ☉ *Նաղշ անիլ—նախշել, նվառել: Ինչի դիբչիս նաղշ կոնիս* (46): Տե՛ս նաև էջ 5:

ՆԱՂՇՔԱՐ (արաբ. պարսկ.), ի, գ. Նկարիչ: *Մուզդ ունե էն նաղշբարըն, վուր թահրըդ դալամով հանա* (38): *Ղալամըն ծիւին չե կանգնում, մաթ շինեցիր նաղշբարին* (35):

ՆԱՄ (պարսկ.) գ. 1. Թացություն, խոնավություն: *Դաստամազըտ նամ չի ուպի, առանց հուսիլ կու օլրվի* (2): Տե՛ս նաև էջ 64, 65: 2. Ցող, շաղ: *Ցիրգ-նային նամով թուփըն թացվիլ է* (29): Տե՛ս նաև էջ 34: ☉ *Նամ անիլ—թըջել, թացացնել: Դաստամազըտ նամ իս անում* (6): *Նամ դիբչիլ—թըջվել, թացանալ: Գըլուխըտ պառնելով արա, նամ չը դիբչիլ խաթու խալիտ* (7):

ՆԱՄԱԳ (պարսկ.) ի, գ. Աղ: *Մրտիկ արա բու սըտիղծողին, տուլ-նամագ-աղ իմացի* (14):

ՆԱՄ-ՆԱՄ, տե՛ս Նամ: *Վարթըն էլվրնում կուլի, նամ-նամ արխին սազ ըլիլով* (54):

ՆԱՆԱ, (ադր.) նի (բ ա գ. հ ո լ. նանեն), գ. Մայր, մայրիկ: || *Մեծ մայր: Իմ էն արթար կաթիս արուն խառնեցի, բաս էնդու համա իմ նանեն դո:ս արած* (63):

ՆԱՇՏԱՐ, տե՛ս Նշտար: *Թերթերուկըտ նիտ ու նաշտար* (35): էջ 51, 78:

ՆԱՉԱՐ (պարսկ.) գ. ա ծ. Խեղճ, անճար: (Փիբը ու խիալըս) *Խիղճի, նաչարի, բարու ու լավի մասին է* (68):

ՆԱՉԱՐ (արաբ.), ի, գ. Ատաղձագործ: *Պատվական տեսնելու նովար ու նաջար, Բըլբուլին սրպանող թոփ վարթի սաջար* (55): (Պատվական տեսնելու արվեստագետ (պվնիվ գործեր ստեղծող ատաղձագործ):

ՆԱՎ, ի, գ. Աշխարհըն ծով, դուն մեշըն նավ, ման իս գալի, լանգ իս անում (2): Տե՛ս նաև էջ 24, 46:

ՆԱՐԴ (պարսկ.), ի. գ. Նարդու խաղատախտակ: ☉ Նարդ անիլ-վան-դակապատել, փակել: *Որտրոս փորումըս սրպանեցիր, էշերտ քիզի նարդ իս արի* (13):

ՆԱԶԱԶ (արաբ.), ա ծ. Նտոր, ցածրահոգի. չնչին: Անկատար, պակասավոր (Ռ. Աբրահամյան): *Նարազ մարթոն քիզ չի տեսնի, դուն ներա պասն իս, բամանչա* (1):

ՆԸՎԱԽՏ (պարսկ.), գ. Գզվանք, փայփայանք: *Ասոված քիզ պահե, ում հիդ վուր նըվախտ իս* (34):

ՆԻԶԱ (թեբ.), նիզնի, բ ա գ. հ ո լ. նիզնից, գ. Նիզակ: *Տեսա արո:նուտ ջեյրանըն՝ վո-րանուրթի նիզնից բեղամաղ* (43):

ՆԻՂ (թեբ.), ա ծ. Նեղ: *Փ խ բ. Ծանր, դժվար: Ժամըն ու ժամանակն է նիղ, Մահըն գու բա ամենան տիղ* (64):

ՆԻՏ (թեբ.), ի. գ. Նետ: *Նխորս բարո:մըն կոտրեցի, թիղի համա իմ լալի* (36): Տե՛ս նաև էջ 51, 55, 78:

ՆՀԱԽ, տե՛ս Նահախ: *Ով ասավ, թե նի:սխ սիղ յարիդ մե:չըն յար անին* (11):

ՆՄԱՆ, ա ծ. 1. Միևնույն հատկություններ ունեցող (չափը, ձևը, գույնը). համատիպ, նույնպիսի: *Արիվիլք, արիվմուտ, հարավ ու հյուսիս Չը կա քիզի նըման՝ չափով, նապանի* (17): *Չըկա քիզի նըման, ...քիզ նըման, քիզ նըման.— դուն իս աննըման* (3): *Օրըն յարսուն ռանգ կու փոխիս, վունց մեկըն չե տուլի նըման* (39): *Վիզրտ է նըման ղարղարի* (60): Տե՛ս նաև էջ 38, 44, 45, 51, 61, 82: 2. գ. Ուրիշ անծի կամ իրի նման անծ, իր. տեսակ: *Մե նըմանըտ ռաշի նըման, մե նըմանըտ ջուրա-ջուրա* (40): *Բըլըուլի լիզվով իմ ասում, Տեր, պահի վարթի նըմանըն* (52): 3. Ն խ դ ը. Պես. ինչպես, օրինակով, կերպով: *Էր:սըտ նուր լուննի նըման՝ բանի կեհա՝ կու բըլըրվի* (2): *Բարկ էրեսըտ կըրակ նընգած օսկու նըման ջիռանում է* (38): *Ծովի պես ուրդան իմ տալիս, գըծվիլ իմ Արապի նըման* (8): էջ 18 (16 անգամ): Տե՛ս նաև էջ 10, 17, 17, 22, 23 (7 անգամ), 24, 26, 31, 41, 46, 52 (4 անգամ), 55, 55, 55, 57, 60, 64 (4 անգամ), 65, 65, 65, 65, 72, 75, 78, 82, 82:

ՆՄԱՆԱԾ, ա ծ. Նման: *Պատվական շինած, նըման նըմանած Լեյլու դի-դարին* (29):

ՆՆԳԻՐ (թեբ.), ննգուր, գ. Ընկեր: *Սայթ-Նոյեն առանց նընգիր ճի-տըն գըցած լալ է ուլում* (43):

ՆՆԳՆԻԼ (թեբ.), ննգա, չ բ. 1. Ընկնել, նետվել: *Թեզուզ նընգնիմ ծովի մեչըն՝ հովնալու ճար չիս անի* (4): 2. Թափառել: *Մեչըումի պես սարըն իմ նընգի* (22): 3. Դիմել դեպի մեկը, ապավինություն խնդրել: *Բու դըռանըտ նընգած ըլիմ, ով տեսնե, ասն՝ տուսաղ իմ* (8): *Թող դըռանըտ նընգած ըլիմ օտար բարեկամի նըման* (47): 4. Ենթակա լինել մի բանի: *Ախ բաշեեն սիրուրս նընգավ ծովացավ* (68): 5. Դիպվել, կուտակվել, կախվել: *Ծովըն նընգած ամի:ի նըման դոշըս ու յախես բաց է անում* (57): ☉ *Կըրակ նընգնիլ—արվել, վա:ռ:վել, հուրհրատել: Բարկ էրեսըտ կըրակը նընգած օսկու նըման ջիռանում է*

(38): *Սևադեն նընգնիլ*—սևանալ. *Իանգըն վուր սևադեն նընգընի՝ ալ անիլեն ինչի՛ն է շահ* (44): Տե՛ս նաև էջ 25:

ՆՇԱՆ, ի. գ. Նիշ, նշան: *Խըփեցեք մե տիղըս, մե նըշան արեք* (20):

ՆՇՏԱՐ, ի. գ. Վիրահատական սուր դանակ: *Յիս մե միղք իմ արի՛ նշ: տար քաշեցի, իմ էն արթար կաթիս արուն խառնեցի* (63):

ՆՈՎԱԲ (արաբ.), ի. գ. Հնդկական պայպատ, պլնվական: *Փ իս բ. Ավնիվ հատկությունների տեր անծ: Պատվական տեսնելու նովաբ ու նաջար, բըլբուլին սըպանող թոփ վարթի սաջար* (55):

ՆՈՎԱԲԻՆ-ԱԶԱՐ (արաբ.), ա ծ. Փթթած, ժողկած ու դալար: *Պատվական տեսնելու նովաբին-աջար** (11):

ՆՈՎԱՓԱՐ (արաբ.), ի. գ. (բսբ) Նունուֆար ծողիկը: *Նովափար ծողիկ ծովային, մանիշակ բաց արած հովին* (2):

ՆՈՐԱՀԱՐՍ, ի. գ. Նոր հարս բերած, մանկամարդ կին: *Գըլխիս ծառ: օխտը նորահարս ունիմ* (59):

ՆՈՐԱՐ (պարսկ.), ի. գ. Ծառ: *Մե նոքարըն էրկու աղին ինչ անե* (21): *Ավելի չէ Սայթ-Նովեն—քիպի ծառա ու նոքար ա* (46): Տե՛ս նաև էջ 33, 53, 64, 64:

ՆՍՏԻԼ եցի, ն բ. Նստել: *Նստիմ, վըրես շըվաք անիս* (24): *Մողըտ նըստող լարիտ էրնեկ* (25): էջ 16, 43, 50, 51, 54, 56, 60, 60, 60, 70:

ՆՎԱԽՏ, տե՛ս Նըվախտ: *Աստված քիպ պահե, ում հիդ վուր նըվախտ իս* (34):

ՆՈՒ, գ. Հայերեն այբուբենի «ն» տառի անունը: *Նո: Ջորու նըման չասե՛ իմ դեդեն ձին է, մարթ վուր ըլի նու ու այիբ էրկու բեն*** (49): էջ 21, 66, 86, 86:

ՆՈՒԳԲԱՐ (պարսկ.), ի. գ. Տարվա առաջին պտուղ, երախայրիք: *Աշխարումըս նուր դուս էկած թազա նուգբար իս, գովելի* (7):

ՆՈՒՂԼ (պարսկ.), ի. գ. Շաքարով նուշ: *Նուղըլ ու շաքար իմ քիպ ամա* (33):

ՆՈՒՅՆ, ա ծ. Միևնույն: *«Գուլ իս անգին»-ից նույն հանգով* (42-րդ խաղի սողատակի ծանոթ):

ՆՈՒՌ, նռան, գ. *ն մ ա ն*. Դեռահաս աղջկա ստինք: *Ղուրբան իմ ծուցիտ նըռանըն* (28): *Հիվանդ իմ էշխի կըռնեմեն, դիդ անիս ծուցիտ նըռնեմեն* (6):

ՆՈՒՐԻ (թիբ.), ա ծ. 1. Նոր, այժմ առաջ եկած: *Էրեսըտ նուր լուսնի նը-*

* Նովաբին-աջար բառակապակցությունը մեր կարծիքով պետք է ուղղել Նովաբի-նաջար (տե՛ս 55-րդ խաղի 2-րդ տան առաջին տողը), որ *փ իս բ.* կնշանակե արվեստագետ ատաղձագործ, ընտիր՝ ակնիվ իրեր պատրաստող (տե՛ս Նովաբ և նաջար բառերը): Աջար բառ չկա:

** *Նու ու այիբ էրկու բեն* = Նաբաբ—անշնորհք (արաբ. բառ): Մարդ որ անշնորհք լինի՝ ջորու նման կասի իմ մայրը ձին է (*Մ. Հասրաթյան*):

ման՝ քանի կենա կու բուրբովի (2) : 2. Դեռ ձեռք չսոված, չգործածած: *Քու հաքածըն նուր բարբաթ է* (33) : 3. Առաջին անգամ պտղաբերած: *Աշխարումըս նուր դուս էկած թազա նուգբար իս, գովելի* (7) : 4. Նորատունկ, վերջերս գցած: *Նուր բաղ իս, նուր բաղչի մեշըն բոլորըստ վարթով չափարած* (24) : 5. մ. Յուլյց է տալիս ժամանակ, որի մերձավոր եշանակությունը որոշվում է բայի ժամանակով. *Հենց այժմ: Աշկիրըտ կարմիր վարթ, նուր բացարած տուխտ* (19) : *Ձընի տակեն նուր դուս էկած, արիվ դիրբած սընբուլի պես* (40) : Տե՛ս նաև էջ 50 :

ՆՈՒՐ² (արաբ.), ի. գ. Լույս: *Ինչ աշկ քիզ խայան մըտիկ տա, ջանում լար, կուր իմ ասի, նուր չիմ ասի, նուր չիմ ասի* (32) :

ՆՈՒՐՈՒԼ (թիբ.) եցի, ն բ. Վերանորոգել: *Հիմըստ վերջստին նուրեցին, Մողնու սուրփ Գևուրը* (62) :

ՆՈՒՐՄԵԿ, ՆՈՒՐՄԵԿԱՆՑ (թիբ.) մ. Կրկին. դարձյալ, նորից: *Յիս քիզ նուրմեկ գովիմ, արի՛* (30) : *Յիս խում են գըլխեն էլրած իմ, նուրմեկանց քաբար մի՛ անի* (10) : Տե՛ս նաև էջ 45 :

Շ

ՇԱԲԱՆԳ (պարսկ.). միայն *շաբանգ* անիլ կապակցության մեջ—դայլայել տխակի պես: *Յիփ մըտնում իս մեջլիսումըն, շանգ շուխի շաբանգ իս անում* (2) :

ՇԱԴԱ (արաբ.), դի. գ. Ծարան, շարվածք (մարգարտի): *Դաստամպիտ թիլի մեշըն մի շաղա մարջան է բաշած* (35) : Տե՛ս նաև էջ 17 :

ՇԱԴԱ-ՇԱԴԱ (արաբ.), ա ծ. Ծարան-շարան: *Մարքարիտըս շադա-շադա՝ շարըս մունաթ չը բաշե* (15) :

ՇԱԼ (պարսկ.), ի. գ. 1. Բրդե թելից տանը պատրաստած հասարակ և հաստ գործվածք, գլխավորապես վերնազգեստի համար: *Ում հաքին հին շալ ին տեսնում, էլ չին ասում, թե էս ով ա* (44) : *Կու հաքնիմ մապեղեն, կու հաքնիմ շալըն, Կերթում ու ման գու քամ վանքիրըն մեմեկ* (21) : Տե՛ս նաև էջ 53 : 2. Բրդի գույնզգույն թելերից գործված նուրբ և լավորակ կտոր: *Բարակ միչկիտ թիրման շալըն նըման է օսլե քամարին* (35) : Տե՛ս նաև էջ 65, 65 :

ՇԱՆ (պարսկ.), ա ծ. Ուրախ, պարծաւեր, կենսուրախ: *Արուլինի շախ սիրտըն մեկ էլ լարա մի՛ անի* (66) :

ՇԱՆԱԹԱՅԻ, չմեկնաբանված բառ, ըստ երևույթին կրոնա-փիլիսոփայական մտքեր արծարծող բանաստեղծության մի ձև կամ նման տիպի բանաստեղծության անուն* : *Շատ սիրուն իս, Շախաթայի ասողին խար չիս անի* (4) :

* Տե՛ս Մ. Հասարթյան, Սայաթ-Նովայի խաղերի ժողովածու, 1959, Հայերեն 4-րդ խաղի ծանոթագրությունը: (Ըստ Գ. Ախվերդյանի՝ խաղերից մեկի եղանակի անունը) : *Շախաթայի ասողին խար չիս անի*—Շախաթայի երգչից հետ չես մնա. նրան չես պիջի, նրան հավասար ես :

ՇԱՀԷ, ի, գ. 1. Օգուտ, վաստակ: Հիշու տիղացեն գալիս իմ խիլքի պարար շահ իմ բերի (15): 2. Օգնություն, դեղ, ճար: Էշխենետ հիվանդացիլ իմ վունց պարար, վունց շահ ին ասում (40): Տե՛ս նաև էջ 40: Ինչին է շահ—ոչ մի օգուտ չունի, ավելորդ աշխատանք: Պատանքին մե ռանգըն է հերիք՝ չալ անիլըն ին չին է շահ (44): Էջ 61 (8 անգամ):

ՇԱՀԷ (պարսկ.), ի, գ. Պարսկական թագավոր: Շահըն էր բաշի, չեր դի մանա էս իմ բաշած պայանին (11): Մարթ իր խոսկով կու ճանանչվի, գուպե Շահի վեպիր շինին (47): Տե՛ս նաև էջ 16, 16, 18, 46, 49, 52, 55, 59, 62, 69:
⊙ Շահի անիլ—շահի՝ թագավորի նման արդար ուղիղ դատ անել: Աղալաթըլ շահի անիս (6), էջ 16:

ՇԱՀԷ (պարսկ. Շահեն), ի, գ. Բապե, որով որս են բռնում: Շահով շքար—բապեով ընտիր որս: Ամեն մարթ չի կանա ճանգի շահով շքար, Սալաթ-Նովա (37):

ՇԱՀԱՆԴԱԶ (պարսկ.) (չմեկնված բառ: Ըստ Մ. Հասրաթյանի՝ նետ, նետածիգ): (Ըստ Ռ. Աբրահամյանի՝ պարծենկոտ, պոռոտախոս, մեծ-մեծ բրդող): Յար, իս բիվ բարով իմ տալիս, —շուռ իս գալի, դալ իս անում, Չունքի խոսկըտ անց է կենում բելու շահանդապի նըման (8):

ՇԱՀՋԱԳԱ (պարսկ.), դի, գ. Արքայալուն, արքայորդի, թագածառանգ: Շահյադի պես սան իս անում (6):

ՇԱՀՐԱԴԵԼ (պարսկ.), ի, գ. Տոնավաճառ: Տարենը մե գամ բաց կուլիս մաթահ շահրադել բազարի (38):

ՇԱՂԷ, ի, գ. Ցող: Դաստամազրտ սիմ ու շարբաբ, նամ շաղ էկած ռենան է (22): Էջ նաև 45:

ՇԱՂԷ, գործ է ածվում շաղ անիլ, շաղ տալ կապակցությունների մեջ: Շաղ անիլ ջրով շաղախել, հունցել: Զար ու կիրըտ օխշարի կաթ շաղ արին, Մողնու սուրփ Գևուրք (62): Շաղ տալ—սփռել, ցանել: Յիփ մեռանիմ, շաղ տու վըրես դաստամապի թյլի շաղեն (7): Սըրփե, շաղ տու ոտիտ տակըն (13):

ՇԱՂԻԼ, եցի, ն բ. Միսըը շփոթել՝ խառնել: Ուշկ ու միտկըս իրար շաղեցիր (21):

ՇԱՄԱՄ, ՇԱՄԱՄԱ (արաբ.), ի, գ. 1. Անուշահոտ սեխանման փոքր ու կլոր բաշեջարանոցային պտուղ, որ պահում են հոտի համար: 2. Ն մ ա ն. Ժողովորդական բանաստեղծության մեջ նորահաս աղջկա կուրծքը: Հասիլ է ծուցիտ շամամըն, օսկե թաբադին կարոտ է (30): Դոշըտ է սինի՝ շամանիրըտ դամ իս անում (6): Տե՛ս Եան էջ 13, 57, 78:

ՇԱՄԱ (արաբ.) ի, գ. Արեգակ: Էրեսըտ է շամ ու դամար (3): Էջ 8, 51:

ՇԱՆԳ (արաբ.) . ա ծ. Գեղեթիկ, շուրհալի: Յիփ մրոնում իս մեջլիսուրն, շանգ շուխի շաբանգ իս անում (2): (Ելք մտնում են խնջուլքի մեջ՝ գեղեցիկ երգում-դալալում են և զվարճանում են սոխակի պես):

ՇԱՆՑ, միայն Շանց տալ—կապակցության մեջ—1) Ցույց տալ: Վարթըն ակորդվին մի՛ շանց տա (54): Նաև էջ 40: 2) Սպառնալ: Աւուտեհան բիվ թա-

մաշան շանց կու տամ (58) : Առուտեհան խերն ու շառը շանց կու տամ (58) :
Էջ 76 (6 անգամ) :

ՇԱՌ (պարսկ.), ի. գ. 1. Փորձանք, չարիք : Վունց բու խերը գուպիմ, վունց
բու շառըն, անդեր (58) : Առուտեհան խերն ու շառը շանց կու տամ (58) :
2. Զրպարտություն : Յար, քիզ խկի կավալ չրի՝ բու դուշմնին՝ շառ բա-
ցարած (39) :

ՇԱՎԱՐԴԱՆ (վրաց.), ի. գ. (կենդր.) Բագե : Շավարդան բագա իս,
ապիզ (40) :

ՇԱՏ, ա ծ. 1. Մեծ քանակությամբ եղած, բազում : Հ կ ո կ. քիչ, սակավ :
Շատ մարթ կուե թե յար ունիմ, դուն ուրիշ յար իս, գովելի (7) : Շատ մարթիք
քիզիդ կու երիս, էտ լիզվի տեր վուր դուն իս (13) : Տե՛ս նաև էջ 27, 29, 30, 31,
32, 60, 85 : 2. Դրվում է ածականից ու մակբայից առաջ՝ նրանց նշանակությու-
նը սաստկացնելու, ինչպես գերադրական աստիճան : Շատ սիրուն իս, Շախա-
թայի ստողին խար չիս անի (4) : Արտասունք անիմ, շատ հոգուց հանիմ (29) :
Տե՛ս նաև էջ 10, 18 : 3. մ. Ուժգին կերպով, սաստիկ, խիստ, հուլիժ : Կանց յոթըն
իմաստնասիրացըն շատ է էս բու Սայաթ-Նովու բանքիրըն մեմեկ (21) : Շատ
մի լացնի Սայաթ-Նովին (27) : Աչկըս ճանապարհտ է, ինչի իս շատ ուշանում
(66) : Տե՛ս նաև էջ 33, 63 : 4. գ. Մեծ քանակություն, բազմություն : Սայաթ-Նո-
վեն շատին երից խաղ կանչելով (54) : 5. Մեծ մասը, մեծամասնությունը : Շա-
տըն սատանեն է տանում (44) : Շատըն հասրաթետ կու մեռնի (25) : Տե՛ս
նաև էջ 38, 54, 89 :

ՇԱՏԱՆԱԼ, ա ծ. չբ. 1. Ավելանալ, բազմանալ : Դարդիրըս շատացավ քանի
մե քանի (88) : Թուղ դոստիրըս շատանան (11) : Էջ 14, 22, 29, 70, 70, 70,
70, 72 : 2. Աճել, մեծանալ : Օրըն ի օրըն շատանում իս, էշխի մեչըն մողանում
իս (6) : Էջ 14 :

ՇԱՐՂ, ի. գ. Թելին անցկացրած ուլունք, վարդարանք, շարան, շարոց :
Դոշիտ պիտի լալ ու ալմաս շարերով, շարերով (41) : Էջ 27, 57, 57 :

ՇԱՐԷ, ի. գ. Շարված լինելը, շարք : Իրիք քըսան ու տասըն խալըն էրե-
սիտ բուրբըն շար ա (39) :

ՇԱՐԴ (արաբ.), ի. գ. Արդարություն, օրենք : Խըրատ սիրե, սաբըր սիրե,
շար սիրե (16) : Էջ 15, 28, 71 :

ՇԱՐԲԱԲ (արաբ.), ի. գ. Նուրբ մետաքսաթել : փ ի ս բ. Մետաքսաթելի
նճան նուրբ ու փալլուն լինելը : Մափր ունիս սիմ ու շարբաբ (3) : Էջ 8, 34,
65, 66 :

ՇԱՐԲԱԹ (արաբ.), ի. գ. 1. Օշարակ : Խըմողին վընաս չի անի՝ ձեռիտ
բանածըն շարբաթ է (33) : 2. փ ի ս բ. Հոգեկան քաղցրություն : Խմիլ իս էշխով
շարբաթըն (14) : 3. փ ի ս բ. Շատ սիրելի անձ : Նաբաթե շարբաթըն դուն
իս (38) :

ՇԱՐԹՂ (արաբ.), ի. գ. Անհալ մեղր : փ ի ս բ. Շատ քաղցր հաճելի բան :
Խոսկիրըտ քաղցըր, լիզուտ շաբար—շարթի միչումըն (48) : Լիզուտ քաղցըր
ունիս՝ շարար ու շարթին (20) :

ՇԱՐԹ՝ (արաբ.), ի. գ. Պայման: Աթամ վուր էտ շարթըն արավ... դոմխը գընաց (64):

ՇԱՐԻԼ, եցի, ն բ. 1. Իրար կողքի կարգով դասավորել: Անգին ակըն վըրնտ շարած, անբան օսկու ռախտ իս, գոպալ (34): Նաև էջ 63: 2. Կարգով շուրջը նստեցնել: Բոլորքըտ գոպալնիր շարած, մեջլիսի կեսըն իս, քամանչա (1):

ՇԱՐԻՓ (արաբ.), ի. գ. Իշխան, կուսակալ (Մեքքայի), փոխարքա, բարձրաստիճան պաշտոնյա: Տասը տարի ման իմ գալիս փաղիշահի շարիփի պես (31):

ՇԱՐԶ, ի. գ. Կարգ, դաս: Ըն բանըն արա, վուր աստուճու շարքումըն է (16): Տեսնողըն շարքըն չի գիդի՝ լուննաստղ պայծառ բացարած (39):

ՇԱՓԱԹ (բբբ.), ի. կամ փթի, գ. Շաբաթ: Օխտը շափաթ պաս ունիմ (59): Օրըն իր շափաթով կարոտ իմ յարին (20): Էջ 32, 45, 49, 77:

ՇԱՓԱՂԱԹ (արաբ.), ի. գ. Յուր, հուրհրատում, կայծ: Մե բիռըս Փըռանգի ատլաս է, տալիս է շովղ ու շափաղաթ (15):

ՇԱՓԹԵՆԸ, ա ծ. մ. Շաբաթական, շաբաթվա մեջ: Շափթենը մեկ—շաբաթվա մեջ մեկ անգամ: Շափթենը մեկ մըտիկ տու միզ (23):

ՇԱՋԱՐ, ի. գ. 1. փ խ բ. Շատ հաճելի՝ դուրալի բան: Պըռոշնիրըտ՝ նաբաթ ունիս, դանդ ու շաքարի նըման իս (12): Լիզուտ շաքար, պըռոշըտ դանդ, ակռեքըտ մարբըրիտ ալմաս է (24): Տե՛ս նաև էջ 23, 31, 32, 36, 37, 49, 53, 56, 64, 65: 2. փ խ բ. Բազմություն, բարություն: Ով քիպի լիղի պարքիվե, դուն տու շաքար, Սայաթ-Նոպա (37):

ՇԵՆՋ, ի. գ. Շինվածք. փ խ բ. Մարմնի արտաքին նկարագիրը, տեսք, կերպարանք: Շիմշատի ծառ բրհամ էկած, շենքըտ տաշիլըն ի՛նչ կոնե (46):

ՇԻՄՇԱՏ (պարսկ.), ի. գ. 1. (բբբ.) Տոսախ ծառը: Շիմշատի ծառ բրհամ էկած, շենքըտ տաշիլըն ի՛նչ կոնե (46): 2. ա ծ. փ խ բ. Բարձր և ճկուն (հասակի մասին): Կըռնիրըտ շիմշատ է, մատնիրըտ է մոււմ (11): Էջ 22, 42, 45, 72:

ՇԻՆԻԼ, եցի, ն բ. 1. Ստեղծել, հորինել: Դադա պիտի խոսկըն դադիմի շինե (49): Պատվական շինած, նրման նրմանած Լէյլու դիդարին (28): 2. Մի բան անել, մի բանով պահզվել: Չիռնիրըս թըլացավ, չէ շինում բանըս (26): 3. Մի բանի վերածել, դարձնել: Արտսունքըս արուն շինեցիր (24): Թե իսամ հաքնիս, թե պար հաքնիս՝ կու շինիս դումաշ, նապանի (35): Տե՛ս նաև էջ 6, 7, 23, 25, 47, 51, 56, 57, 60, 66, 83: 4. Պաշտոնի նշանակել: Մարթ իր խոսկով կու ճանանչվի, գուպի Շահի վեպիր շինին. Բեդասլըն ասլ չի դանա, թեգուզ վեքիլ նապիր շինին (47): 5. Լարել միմյանց դեմ. թշնամի դարձնել: Դոստիրըս դուշման շինեցիր, յադեբուն ինչպե՛ս դոստ անիմ (31): ☉ Բաղ շինիլ—այգի գցել: Բաղ շինեցի, վարթըն քաղից վադիրըն (21): Ջարար շինիլ—վնաս բերել: Բի պարար շինեցիր շահրտ (21): Լիզու շինիլ—խոսեցնել, ասել՝ երգել տալ: Բըբըուլին լիզու շինեցիր՝ դուն վարթի դըրախտ իս. գոպալ (34):

ՇԻՐԱՄԱՅԻ (պարսկ.). չի (ր ա ց. հ ու լ. շիրմայեմեև) գ. Առյուծամուկ, մի

ծուկ, որի ոսկորներից դառակի կոթ են պատրաստում: || Փղուակր: *Կութըտ շիրմայենեն պիտի, փուրտ սաղափով նաղշ արած* (1):

ԵԻՐՎԱՆ, Նահանգ, մարդու հատուկ անուն: *Ըսպես որ ասում է Յուլաբու-մըզկան — Եիրվանի հանգում* (26):

ԵՆՇԵՆԿԱԼ, չ.բ. Վրայի վարդերը իրար դիբչելիս շխկ-շխկ ձայն հանել: *Յիփ տիղենտ ժած իս գալի, շրխշրխկում իս ջիղջիղի պես* (2):

ԵՆՈՐՀԻԼ, եցի, ն.բ. Իբրև շնորհ ներել մեկին: ☉ *Թողություն շնորհիլ — Ներել: Ով որ սովորի, թողություն շնորհի (24): Աստված թողություն շնորհե սիրեկանեն սպանած Արուսիս Սայաթ-Նովին (34-ի տողատակի ծանոթ.):*

ԵՆՈՒԻԿ (թիբ.), ի. գ. Տե՛ս Ենուբ: *Հոքուտ մեջ ինսափ, սըրտումըտ շնուխկ ու բարամ չը կա, չե* (67):

ԵՆՈՒԻՔ (թիբ.), ի. գ. Ենորիբ, արծանիբ, բարեմասնություն, վայելչություն: *Ենուբ տալ — գեղեցկացնել, գեղեցկություն տալ, վարդարել: Բաց կուլիս կարմիր վարթի պես, բաղչումըն շնուբ կու տասս (14): Էջ 26 (4 անգամ): Ինչ տիղ կու լիս շնուբ կու տասս (40):*

ԵՆՎՂ (բրբ.), ի. գ. Եող, լույս: *Աչկիրլուտ ծով, էրեսըտ շովղ (65): Մե բիռս Փրոանգի ատլաս է, տալիս է շովղ ու շափաղաթ (15):*

ԵՎԱՐԻԼ (բրբ.), եցի, չ.բ. Մուրովել: *Ովոր էրեսըտ կու տեսնե, խիլըն կու դառնա շրվարած (46):*

ԵՎԱՔ, ի. գ. Սովեր, հովանի: *Նըստիմ, վըրես շվաք անիս (24): Աշխարիս շվաք իս անում սալբ ու չինար իս, գովելի (7):*

ԵՈՒՆԻ (պարսկ.), գ. Կատակ, պվարճություն: *Յիփ մըտնում իս մեջլիսումըն, շանգ շովիի շաբանգ իս անում (2):*

ԵՈՒՂՎ (թիբ.), ի. գ. 1. Եողբ, ցուլք, փայլ, ճառագայթ: *Շուղկըտ արեգագի նման է (8): 2. Սովեր: Շուղկըտ աշխարը բըռնիլ է (24): Տե՛ս նաև էջ 18: Շուղկ տալ — ճառագայթել, լուսավորել: Վունց արեգակըն շուղկը տա, վունց լուսինը լուս անե (5):*

ԵՈՒՆ, շան (հոգն. շներու), գ. Ամեն դոշի գըլխին մեմեկ շուն ունիմ (58): *Զու շներու հաչոցենեն չիմ խըրթնի (58):*

ԵՈՒՆԶ, շնչի, գ. Ենչող օդ. պեփուռ: *Գարնան շընչի ծաղկի նըման կարմիր վարթըտ բաց կուլի (14, 47):*

ԵՈՒՇԱ (պարսկ.), շի, գ. 1. Եիշ, սրվակ: *Եիրապու շուշումըն ածած նաբաթի շարբաթըն դուն իս (38): 2. Ապակի Քբաց վարդագույն: Եիրապու շուշա իս դանդով (6): Էջ 13: 3. փ իս բ. Սիրտ, հոգեվիճակ: Ղաստ արա, շուշետ չի կոտրին, չի խըփին բար, Սայաթ-Նովա (37):*

ԵՈՒՇԱ-ԲՐՈԼԵ (պարսկ. վրաց.), ի. գ. Բյուրեղապակի: *Շուշա-բրոլե գուլաբղան բերնետ վարթաշուր մաղում իս (46):*

ԵՈՒՇԱՆ, ի. գ. (բսբ.) Եուշան ծաղիկը: *Դաշտի ծաղիկ հովտաց շուշան իս ինձ ամա (24):*

ԵՈՒՌ, գործ է անվում գալ և տալ կապակցությունների մեջ: *Եուռ գալ — 1) ման գալ, պտտվել, դառնալ: Եուռ գանթ համդամով. իրգնային նամով*

թուփըն թացվի է (29) : Վարթի մեչըն շուռ իս գալի (6) : 2) Դառնալ, թեքվել մի կողմ : Յա՛ր, յիս քիզ բարով իմ տալիս, շուռ իս գալի, դալ իս անում (8) : 3) Նստել, բազմել, թառել : Խաբար գնաց բըլբուլի մող. «վարթըն քու գալուն մընում է. ճուխկընհիրըն բացրացիլ է, վըրեն շուռ գալուն մընում է» (52) : Վըրետ շուռ գամ բըլբուլի պես (24) : Տե՛ս նաև էջ 14, 14 : Շուռ տալ—դարձնել, պտտացնել : Շուռ էրիտ չարիսի փալագըն (44) :

ՇՈՒՏ, մ. Արագ կերպով : Իդրարենն շուտ անցկացար (22) :

ՇՈՒՏՈՎ, մ. 1. Շուտ, կարճ ժամանակում : Մե փուքըր էտենց դիմացի, շուտով Հընդըստան մի՛ էհա (23) : 2. Վաղ, կանուխ : Ափսուս վուր շուտով միտիլ է, լուսըն քու ծընողին ըլի (35) : Տե՛ս նաև էջ 56 :

ՇՈՒԻԵՂԵՆ (թհբ.), ի, գ. Շորեղեն : Դումաշ ասիմ՝ շուրեղեն է, կու մաշվի (19) :

ՇՓՈԹՎԻԼ, չբ. Վրդովվել, հուզվել : Տի՛ս, թե ինչպես է շրփոթվի (36) :

ՇՔԱՐ (արաբ.), ի, գ. Հավագյուտ ընտիր որս : Ամեն մարթ չի կանա ճանգի շահով շըբար, Սայաթ-Նովա (37) :

Ո

ՈՂՓԱԼ (բրբ.), չբ. Ողբալ : Լաց ու ողփա, Սայաթ-Նովա (67) :

ՈՎՂ (ս ե ռ. ում, հ ա յ ց. տր. ում, հ ո գ ն. ովքիր) Անձնական հարաբերական դերանուն, որ գործ է ածվում երկրորդական նախադասության մեջ, որին գլխավորի մեջ համապատասխանում է նա, որ երբեմն դրվում է, երբեմն՝ ոչ՝ 1. Այն մարդը, որ : Ով քիզ խայան մըտիկ տա՝ Դառնա էրկու աչկով կուր (13) : Տե՛ս նաև էջ 30, 30, 38, 47, 49, 51, 53, 64, 73, 82 : 2. Ամեն մի մարդ որ : Ով չէ տեսի՛ մեկ ախ կոնե. ով կու տեսնե՛ հազար հարուր (25) : Ով կու տեսնե՛ ջունուն կուլի (8) : Տե՛ս նաև էջ 13, 38, 54, 75, 85 : 3. Գլխավոր նախադասության մեջ, մի բան իմանալու համար, ո՛ր մարդը : Ո՛վ ասավ թե նըհախ տիղ յարիտ մեչըն յար անին (11) : Քիզ ինձնից ո՛վ կանա խըլի, աշուղի բասըն իս բամանչա (1) : Տե՛ս նաև էջ 5, 60, 62, 68, 70 : 4. Կիսահարցական խոսքերում, երկրորդական նախադասության մեջ, շեշտով : Ում հաքին հին շալ ին տեսնում, էլ չին ասում, թե էս ո՛վ ա (44) : Տե՛ս նաև էջ 61, 89 : 5. Որևէ մեկին, անորոշաբար : (ս ե ռ. հու.) և կ ի ս ա հ ա թ ց ա կ ա ն : Աշխարհում մըն է մընացի, վուր ինձ ու քիզ մըթա (30) : Էջ 50, 66 : 6. Նույնը հ ա թ ց. դ ե թ ա ն ու ն, ս ե ռ. հ ո լ ո վ ո վ : Բու դարդըն ինձի պառվեցուց, ո՛ւմըն ասիմ, Սա՛յաթ-Նովա (23) : 7. Բ ա դ ա դ ր յ ա լ հ ա թ ա բ ե թ ա կ ա ն դ ե թ ա ն ու ն (որ շաղկապով) : Նա պահե քիզ, ումնոր ծառա իս (19) : Էջ 31, 34 : ☉ Ով գուլե—ով ուզում է՝ թող լինի, նշանակություն չունի, արժեք չունի, հաշիվ չէ : Եկ քիզիդ սիրով դամ անիմ, ով գուլե բեդամաղ ըլի (23) : Ով որ—նա որ, այն մարդը որ : Էս խաղը ով որ սովորի Դոստիլի խաղի ձենով ասե (8-րդ խաղի տողատակի ծանոթ.) : Ովոր ինձ չի սիրի՛ յիս է՛լ չիմ սիրի (18) : Տե՛ս նաև էջ 18, 37, 47, 63, 66 :

Ով՞, ձ. կոշական ծայնարկություն, ա՛յ է՛յ: Մե խ.սկ ունիմ իլթիմազով, անգաճ արա, ո՛վ աշկի լուա (31): Ո՛վ ջափահիր, անգին արմաս, յար, թու արիվըն կու սիրիս (54):

ՈՏ (բրբ.), ի, գ. Ոտք: Էրեսըս դի ոտիտ տակըն (8): Էջ 28, 25:

ՈՐ, նույնն է՝ Վուր՛: Որըն գըրոց հայերեն տառ էր, որըն վրաց (5): Էսպես դիբա ու ենգիդունիայի հանգով, որ մուսադասի կասեն (30): Էջ 11, 11, 16, 36, 40, 40 տողատակի ծանոթագրություններում: Որն որ—որը: Էս էլ դիբա ու ենգիդունիայի հանգով, որըն որ մուսադասու պես կասեն (35):

ՈՐՈՎԱՅՆ, ի, գ. Մարմնի ստորին խոռոչը, որի մեջ ամփոփված են ստամոքսը, աղիքները և արգանդ: Որովայնե երգիր պաբիր (61):

2

2 (բացասական մասնիկ՝ առաջ եկած ոչ-ի սղումից): Գործ է ածվում բայերի հետ՝ կցվելով սկզբին «ոչ»-ի նշանակությամբ: 1. Չայնավորից առաջ է. Ով վաղ գընաց, վարթըն բաղից, չասին թե պետկ է բըլբուլին (33): Սայթթ-Նովեն իմ, ճար չունիմ, յիս վարթըն իմ, մին խար չունիմ, թե դուն ասիր յաղ յար չունիմ (45): Չըլի միտկըտ մուլըրվիլ է (13): Տե՛ս նաև էջ 14, 53, 55, 62, 62, 70, 75, 75, 89: 2. Բաղաձայններից առաջ՝ չը: Մարթասեր իշխան չը մընաց... մարթկանց վըրա ջան չը մընաց (68): Գուվիմ ումբըս հենց անց կացնիմ՝ օրոս մունաթ չը բաշե... դարըս մունաթ չը բաշե (15): Էջ 27 (9 անգամ), 28, 29, 46, 49 (5 անգամ), 51, 51, 52, 53, 53, 60, 60, 80, 83, 89 (7 անգամ), 90 (3 անգամ):

2Ա, գ. հայերեն այբուբենի «2» տառի անունը: Հասա Ռա է, հասա Չա, Ծա (51):

2ԱԼ (ադրբ.), ա ծ. Մորթի, կտորի կամ փետուրի վրա տեղ-տեղ այլ գույնի բծեր՝ կետեր նուեցող, պուտ-պուտ, խատուտիկ, սև ու սպիտակ: Չալ անիլ—գույնպույն ներկել: Պատանքին մե ռանգըն է հերիք, չալ անիլըն ինչի՞ն է շահ (44):

2ԱԼՄԱՆ (ադրբ.), ի, գ. Հրահան, կայծքար: Կրակ տըվիր կըրակեն ավել. Չախմախ էլ ունիս դու, դավ էլ (45):

2ԱՂ (ադրբ.), ա ծ. Վ. Լավ տրամադրությամբ, ուրախ, զվարթ: Յիս թու խոսկեն չիմ անցկենա, թար թու դամաղըն չաղ ըլի (23): ☉ Չաղ անիլ—1) թեժացնել, արծարծել: Էտ կըրոնկըն չաղ մի՛ անի (6): 2) հաստացնել, ամրացնել, ուժեղացնել: Հիմըտ վերըստին նուրեցին. չաղ արին, Մոդնու սուրփ Գևուրք (62): Չաղ շուռ գալ—առողջ՝ կայտառ յարել. լավ ժամանակ անցկացնել: Չաղ շուռ արի յարսուն տարի, յարին բեդամաղ մի՛ անի (6):

2ԱՅ (ադրբ.), ի, կամ չաու, գ. Գետ: Չայի անիլ—գետի պես հորոզ դարձընել: Արտասունքըտ չայի՛ անիս, Չաու ջուր իս (6): Էջ 16, 16:

2ԱՅԻ (չին.), գ. Թեյ: Աձողիտ էրկու կու շինիս, առաջ չայի, դափա

հուլիս (1) : Էջ 6 : (Նվագողիտ երկու դրուբյան մեջ ես դեռնի նախ թեյ, հետո սուրճ կուլես) :

ՉԱՅԻՐ-ԶԻՄԱՆ (աղբբ. պարսկ.) . ի . գ . Խոտավետ դաշտ, մարգագետին : *Ֆիխ բ. Թարմ բուրումնալից տեղ : Ծուցիտ մեջըն չայիր-չիման* (6) : Էջ 15 :

ՉԱՆԳ¹, ի . գ . Ծանգ, մագիլ, ճիրան : (Էշխը) *Բրննածըն չի թողնի՝ դայիմ չանգ ունե* (18) :

ՉԱՆԳ² (պարսկ.) , ի . գ . 1 . Երածշտական գործիք, տավիղ, չոնգուր : *Սանթուր ու բանանչա չանգ իս, բարակ ծենով սապ իս անում* (6) : Էջ 13 : 2 . Տավղի լար : *Չեննենս վեր կոծիմ չանգիրըն մեմեկ* (21) : ☉ *Չանգ անիլ—* երածշտական ծայն հանել : *Չուգարտ չոնգուր չանգ իս անում* (2) :

ՉԱՐ¹, 1 . ա ծ . Չար, անգութ : *Աջաբ քիզ հնչ գեթ իմ արի—խոտում իս դուռ չարի բաբաթ* (47) : 2 . ա ծ . Վնասող, վնասաբեր, չարիք բերող : *Ծեծով չի խրրատվի խիվըն, ինչուու անծնեն չը դուս էհա անախտիլի են չար դիվըն* (37) : 3 . գ . Չարութուն, անգթություն, անարդարություն : *Վոննց դիմանամ էսչափ չարին* (12) : Տե՛ս նաև էջ 27, 34, 58, 90 : 4 . (կրոն.) Սատանա : *Համ աննիլըն ուլից նախամար Եվան, Չարը գրթավ նրրան, տըվին իրար կամ* (64) :

ՉԱՐ², ի . գ . (պատմ.) Ռուսաց թագավորը կամ կայսրը, ցար : Թուրք.-պարսկ . *ց հնչյուն չիկենլու և ալլ պատճառով** : *Աչկ ու ունբըտ վիր իս թողի՝ հուբմըտ մե րուս չարի բաբաթ* (47) :

ՉԱՐԱ¹ (պարսկ.) , թի . գ . Միջոց, օգնություն, ճար, հնար, դեղ : *Իմ դիղեմեն քիզ չրկա չարա* (26) : Էջ 39, 52, 63 :

ՉԱՐԱ² (պարսկ.) , թի . գ . Վրան (տես Չարդախ-ի օրինակը) :

ՉԱՐԴԱՂ (պարսկ. արաբ.) , ի . գ . Եվաքարան, ծածկ : *հութաբանդով չարա-չարդաղ, բոշկ ու ամարաթըն դուն իս* (38) :

ՉԱՐԽ (պարսկ.) , ի . գ . Անիվ, ճախարակ, դուրգն (բրուտի) : *Աչկիրըտ օսկե փիալա չարխեմեն փրնչան է բաշած* (35) : ☉ *Չարխի փալազ—* երկնքի անիվ . *փիխ բ. բախտի անիվ, ճակատագիր : Շուս էրիտ չարխի փալազըն, դով-լաթն միզնից խոով ա* (44) (այսինքն՝ «երկինքը շուս տվեց անիվը, հարստությունը մեկանից խոով է») :

ՉԱՓԱՐ (պարսկ.) , ի . գ . Փշավոր բույսերով ցանկապատ : *Վա՛յ բու դարին, դարիբ բըլբուլ, վուր լեշտ չափարին մընաց* (33) : Էջ նաև 52 :

ՉԱՓԱՐԻԼ (բբբ.) , ն բ . Փշե ցանկապատով շրջափակել : *Բախչի մեջըն բոլորբըտ վարթով չափարած* (24) :

ՉԱՓԻԼ, ն բ . *փիխ բ. Մի տեղով գնալ գալ* : ☉ *Ճամփա չափիլ—* իր ճանապարհով գնալ : *Թե խիլբ ունիս, դարիբ բըլբուլ, էլ բու բաղի ճանփեն չափե* (52) :

* Չար-ը ցար-ի թուրքական-պարսկական արտասանությունն է : Տե՛ս Մ . Հասարթյան, Սայաթ-Նովայի խաղերի ժողովածու, 1959, 47-րդ խաղի ծանոթագրություն :

ՉԱՓՈՎ, ա ծ. Չափած-ձևած, ներդաշնակ, համամասնակաև: Արիվիւք, արիվուտ, հարավ ու հյուսիս Չը կա բիւի նըման՝ չափով, նազանի (17):

ՉԷ, մ. Ոչ: Էլ բերնուձըս համ չը կա, չէ (67): Բուրբըս դամքաշ ին դաթի՝ ուրախ սիրտ անգամ չը կա, չէ (67): Էջ 89 (8 անգամ): Չէ թե— ոչ թե, ոչ միայն: Մըտիկ տու միկ Չէ թե ամսով.—օրիվակալ (6): Էջ 14: (Մեկ մտիկ տուր ոչ թե ամսով, այլ ամեն օր):

ՉԷԹՈՒՂ (թիբ.) (թողնել բայի արգելական ձևը): Չթողեց, թուլ չտվեց: Չէթուղ թե մուրապին հասնին (52):

ՉԻ ՄԱՆ (պարսկ.), Ինչ ես... Ծուցիտ մեչըն չայիր չիւան Չի ման ասիմ, մուրախասս իմ սըրտուձըս ունիմ իղրար, իման (6): Էջ 15:

ՉԻՄԱՆ (պարսկ.), ի, գ. Մարգագետին, կանաչ՝ սիւպվետ տեղ: փ խ բ. Հոգեպարար տեղ: Ծուցիտ մեչըն չայիր չիւան (6): Էջ 15:

ՉԻՄ, ՉԻՄԻ, իմ (գրակ. եմ) էական բայի սահմ. ներկա եզ. 1-ին դեմքի բացասական ձևը, չեմ: Յար, չիմի տա, չիմ հիռացնի բիկ բու յարենն, բարեբարենն (42):

ՉԻՆԱՐ (պարսկ.), ի, գ. 1. Սոսի ծառը, չինարի: 2. փ խ բ. Բարձր ու սլացիկ հասակ, վայելչակալմ մարմին: Աշխարիս շվաք իս անում սալք ու չինար իս, գովելի (7): Սալքու չինար, էտ ինչ արիր (33):

ՉԻՆԻ (պարսկ.), չիու. 1. գ. Չինական հախճապակի: Ջամ իս չինի, դոշտ է սինի (16): 2. ա ծ. Չինական: Էսպես Արութինի ասած Թասիրըն չինի խաղի հանգում (29):

ՉԻՆՈՒՄԱԶԻՆ (բրբ.), ի, գ. Չինաստանը և նրան հարևան երկրները. Մե բիռըս Չինումայինին կու առնե թամամ փարաղաթ (15):

ՉՈՒՄԱՆ (պարսկ.), չոբևի, գ. Հովիվ: Գեղըն ու չոբանը մեկ մեկու ռաստ էկան (58): Գիլի հիդ բան չունիմ, չոբնին կու գովիմ (58): Էջ 76 (6 անգամ):

ՉՈՒ (աղբբ.), ի, գ. Վայրի՝ անբնակ տեղ, դաշտ: Եկ գնանք չոըն (29): Հասրաթենտ չոլիրըն ընգած, Մեջլումի պես Լեյլու կայաթ (65):

ՉՈՆԳՈՒԻ (վրաց.), ի, գ. Արևելյան երաժշտական լարավոր գործիք թառի նման: Ջուգըրըտ չոնգուր չանգ իս անում (2):

ՉՐԱՂ (պարսկ.), ի, գ. ճրագ: փ խ բ. Տան ծառա: || Վարպետի մուտ աշակերտ: || Մեկի կողմից հովանավորվող պատանի, նվաստ վիճակից առաջ քաշված՝ մարդ դարձած: Հենց իմացի, յար, բու դուլըն իմ թանգ հախով գրնած չըրաղ իմ (18) (այսինքն՝ «Հաշվիր, ո՞վ յար, թե դու ես ինձ մարդ չինել, թե ոչնչութունից քո ստեղծած մարդն եմ») *:

ՉՐԻՆ, ՉՐԻՆՔԻ (պարսկ.), շ. Որովհետև, քանի որ: Պատիվ անիմ քանի քան իմ, Չուն աշխարըս է անցողական (6): Էջ 15, 18: Ուրախացի, ուրախացու, չուրքի միկ մող հուր իս, ախպեր (6): Էջ 15, 18, 25, 26, 29, 33, 62:

ՉՐԻԲ (աղբբ.), ի, գ. 1. Բույսերի հիվանդության տեսակ (գլխավորապես

* Տե՛ս Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու. հատ. IV, Հայպետհրատ, 1951, էջ 323:

խաղողի տերևների), չոռ: 2. Գործ է ածվում իբրև անեծք՝ հիվանդությամբ՝
ցավով բռնվելու իմաստով: Վաղի էրեսըն սիվանա.—Աչկի լուս, մուր իմ ասի,
չուր չիմ ասի (32): Էջ 48 (5 անգամ):

ՉՈՒՐԱՆԱԼ (թիբ.), ացա, ացի, չբ. Չորանալ, ցամաքել: Ղալամըն գիրըս
չէ գրում մե չուրացած թանքի նըման (36):

ՉՈՒՐՍ (թիբ.), թ. Չորս: Բոյեմետ չուրս մատըն ավելի լըցվիլ է դոշոտ
ու թիկունքըտ (30): Էջ 45, 60, 60, 61: ☉ Չուրս բուրբբ—ամեն կողմ, չորս
բուրբբ: Չուրս բուրբբըն ծաղիկնիր ին (54):

Պ

ՊԱԿՍԻԼ (բբբ.), չբ. 1. Պակասել, նվազել, քչանալ: Բանի գուլե բամին
տանն՝ ծովեմեն ավազ չի պակսի (10): Ընդուր չէ պակսում էրկու աչկիս
էրկու այիբ էրկու բեն* (49): Տե՛ս նաև էջ 66: 2. Չլինել, զուլություն չունենալ,
մեռնել: Թե կու պակսիմ, քիզ կու պակսիմ (10):

ՊԱՀ, միայն պահ տալ կապակցության մեջ—աշակերտության տալ, ուսման
տալ: Թեզուզ դըբրատանըն պահ տաս՝ ծեծով չի խըրատվի խիվըն (37):

ՊԱՀԻԼ, նբ. 1. Պահել, պահպանել: Դու բու սիրտըն իստակ պահե (10):
2. Խնամել, հոգ տանել: Գըլուվըտ պահելով արա՝ նամ չը դիբչի խաթու
խալիտ (7): 3. Պաշտպանել, թիկունք լինել: Նա պահե քիզ, ումնոր ծառա
խս (19): 4. Հովանի լինել, պատուպարել (Կրոնական նշանակությամբ):
Աստված քիզ ու նրան պահե (34): Տեր, պահե վարթի նըմանըն (52): 5. Իր
տրամադրության տակ ունենալ, ծառայեցնել: Դռանըտ նոքար չիս պահի (47):
Տե՛ս նաև էջ 64: 6. Պաս բռնել՝ իրեն վրկելով մտեղեն կերակուրներից (ավան-
դական կամ կրոնական սովորության համաձայն): Պիտի վուր պաս պահիս,
հազար փըշըրվիս (59): 7. Պատվերը կատարել: Սիթամ արից տերըն էլ,
քըշից դրախտեն, Բանի վուր պատվիրըն չըպահին թամամ (64): ☉ Գլուխ
պահիլ—պատվով՝ նամուսով ապրել: Լավ մարթըն էն է՝ գլուխըն պահե աշ-
խարումըս էյթիբարով (53):

ՊԱՅԾԱՌ, ա ծ, մ. Վճիտ, պարզ, փայլուն: Լուսնաստըղ պայծառ բացա-
րած (39):

ՊԱՌԿԻԼ, եցա, չբ. 1. Գետնի վրա մեկնվել: Թաք պառկիմ յարի դըռանըն
(28): 2. Հիվանդության պատճառով անկողին ընկնել: Էշխեմեն հիվանդ պառ-
կեցա (33): Էշխեմետ հիվանդացիլ իմ, պառկած իմ դըծար հալի (22, 27):

ՊԱՌՎԵՑՆԻԼ (բբբ.), ցա, ցու, նբ. Պառավացնել, ծերացնել: Բու դարդըն
ինձի պառվեցուց (23):

ՊԱՍ, ի, գ. (եկեղ. կրոն.) Պահեցողություն, ծոմ, հրաժարումն մտեղեն

* Էրկու այիբ էրկու բեն = աբ-աբ (կրկնություն պարսկ. աբ—ջուր բառի.
այստեղ փ յ բ. առումով կնշանակե արցունք): Տե՛ս Մ. Հասարթյան, Սայաթ-
Նովայի խաղերի ժողովածու, 1959, էջ 66:

կերակուրներից որոշ ժամանակ՝ եկեղեցու պատվերի համաձայն) : ☉ *Պաս պահիլ*—մտեղեն կերակուրներից իրեն կրկել : *Պիտի վուր պաս պահիս, հա-
պար փրջըրվիս* (59) : *Պաս ունենալ*—պասի մեջ լինել, ծոմ բռնել : *Օխտը շա-
փաթ պաս ունիմ* (59) : *Պասն իս*—արգելված ես, անհասանելի՝ անմատչելի
ես (որևէ մեկի համար) : *Նաքալ մարթըն քիլ չի տեսնի, դուն նրա պասըն
իս, քամանչա* (1) :

ՊԱՏ, ի, գ. *Պատիրըտ կարմիր ագուրով, սրնիրըտ տաշ մարմար քարով*
(62) : *Պատիրըտ պարով, պարբաբով* (34) :

ՊԱՏԱՆՔ, ի, գ. Սպիտակ սավան, որի մեջ փաթաթում են մեռելին և
կարում : *Պատանքին մե ռանգըն է հերիք՝ չալ անիլըն ինչի՞ն է շահ* (44) :

ՊԱՏԱՐԱՔ (բբբ.), ի, գ. (կրոն. եկեղ.) Պատարագ, միջօրյա (ետ առա-
վոտյան) ժամերգություն, եկեղեցական արարողություն, ժամասացություն :
Վուր տիղ ժամ, վուր տիղ պատարաք, վուր տիղ սիրով տաղ է ըլում (37) :

ՊԱՏԻՎ, պատվի, գ. Հարգանք, բարի անուն : ☉ *Պատիվ անիլ*—հարգել,
մեծարել : *Պատիվ անիմ քանի ջան իմ* (6) :

ՊԱՏԿԻՐՔ (թհբ.), ի, գ. Ներկերով նկարված դեմք, դիմանկար, պատկեր :
*Փ ի բ. Գեղեցիկ դեմք, երես : Պատկիրքըտ դալամով քաշած, թահիրըտ ռանգե
ռանգ է անում* (2) :

ՊԱՏՃԱՌ, ի, գ. Առիթ, շարժառիթ, ինչ որ տեղիք է տալիս մի բան լի-
նելու : *Դուռ, մահու պատճառ բացարած* (39) :

ՊԱՏՌԵՑՆԻԼ, ն բ. Նախանձից տրաքեցնել : *Ջիզրու կու պատռեցնիմ, բու
ջապեն յի իմ* (59) :

ՊԱՏՌՎԻԼ, չ բ. Համբերությունը հատնել, էլ չհամբերել : *Քանի փրջվիս,
պատրռվիս, պիտի վուր պաս պահիս* (59) :

ՊԱՏՎԱԿԱՆ, ա ծ. 1. Պատվի արժանի, որին հարկավոր է պատվել, մե-
ծարելի : *Հուր իս սիրով սիրական, Քիպի դուլուղ պատվական* (56) : Տե՛ս նաև
էջ 25 : 2. Ընտիր, հարգարժան, հարգելի : *Քու պատվական գըլուխըտ դուն
ավարա մի՛ անի* (66) : 3. Թանկագին, արժեքավոր : *Պատվական, անգին ջա-
վալիր, լալ-Բադեշխան իս ինձ ամա* (24) : *Դուն պատվական ջավահիր իս,
էրնեկ բու առնողին ըլի* (35) : Տե՛ս նաև էջ 15 : 4. Ընդհանրապես՝ շատ լավ,
գովելի : *Պատվական շինած, նրման նրմանած Լեյլու դիդարին* (29) : 5. ս. Ար-
ժանի : *Պատվական տեսնելու Նովաբին-աջար* (11) :

ՊԱՏՎԻՐՔ (թհբ.), ի, գ. Մեծի հրաման, կարգադրություն, պատվեր, հրա-
հանգ : (Տերը) *Քշից դրախտեն, Քանի վուր պատվիրքըն չպահին թամամ* (64) :

ՊԱՐԱՊ, ա ծ. Ոչնչով չբարդված, ապատ : *Պարապ վախտի րափա գուպիս*
(1) : էջ 6 :

ՊԱՐՁ, ա ծ. Մաքուր, ջիևջ, պայծառ : *Փ իս բ. Ուրախ, վվարթ : Պրխտուր
սիրտըտ պարզ արա, բըլբուլի պես փարզ արա* (13, 56) : էջ 25, 73 :

ՊԱՐԾԱՆ (թհբ.), ի, գ. Պարծանք : *Թագ ու պարծան իս կուսանանց* (61) :

ՊԱՐՔԻՎԻԼ (բբբ.), ն բ. Պարգևել, շնորհել, տալ : *Ով քիպի լիդի պարքիվե,
դուն տու շաքար* (37) :

ՊԵՍ, կ ա պ 1. Նման, տեսակ, հանգույն, օրինակով: Բացվիլ իս կարմիր վարթի պես (2): Խանի պես դիվան իս անում (6): Հուտրտ գու քա սմբուլի պես (6): Էջ 7, 7, 7, 7, 14, 14, 14, 14, 14, 15, 18, 18, 20, 20, 20, 22, 24, 25, 26, 26, 26, 26, 34, 36, 37, 37, 37, 40, 40, 40, 41, 41, 45, 46, 46, 46, 46, 51, 51, 51, 52, 54, 55, 55, 56, 56, 56, 60, 60, 69, 70, 70, 73, 75, 86: 2. Եթե ինդիրը անծնական դերանուն է՝ պես-ը կցվում է նրա հետ, գործ է ածվում գոյականաբար և հոլովվում է: Կու միռնիմ, էլ ինձ պեսին չիս տեսանի (55):

ՊԵՏԿ (բբբ.), գ. ա ծ. Պետք, պիտանի: Վարդըն բաղից, չասին թե պետկ է բրբբուլին (33):

ՊԻՏՆԱ (վրաց.), տի, գ. (բբբ.), Վայրի անանուխ, դաղձ համեմունքը: Համիմ սխտոր, պիտնա ու պրոաս ունիմ (59):

ՊԻՏԻ, դ ի մ ա զ ու կ բ ա յ: 1. Հարկավոր է, արժանի է, պետք է: Անգանրտ էրծաթեն պիտի, գըլուխըտ ջավահիր քարած (1): Չարըտ ռաշի կուղեն պիտի, վուր դուն խոսիս բաղըր հանգով (1): Դոշիտ պիտի լալ ու ալմաս շարիրով, շարիրով (41): 2. Պետք՝ կարիք պագցվել մի բանի: Էրած սրտին ճար պիտի (56): Թարիփըտ դավթարի իմ արի, փիլ պիտի, վուր գիրքըն տանե (7): Տե՛ս նաև էջ 23, 74: 3. Կապմուն է բաղադրյալ ապառնի՝ բային տալով պարտավորության արտահայտություն (ինքը մնում է անփոփոխ, խոնարհվում է բայը): Միխկիրիտ դարձ գաս ու պիտի հաղորթվիս (59): Մարթ պիտի համաշա բիրանըտ տընդըղե՝ խոսկ իս ասում առակավուր—մասալով (20): Տե՛ս նաև էջ 61, 66: 4. Բարբառներում հաճախ խոնարհվում է պիտի եղանակիչը, իսկ բայը դրվում է անորոշ դերբայով կամ լ-ի անկումով: Աշխարքըն բունն ըլի, ի՞նչ պիտիս տանի (16): Բամեցիր էշխիտ մանգանով,— յիս պիտիմ քիզնից բեղամաղ (43):

ՊԻՏՈՒՐ (թբբ.), ա ծ. Պլտոր, ոչ պարզ, ոչ վճիտ: փ ի բ. Տխուր, մտայլ, խաղվահուլլ: Պրիտուր սիրտըտ պարզ արա (13, 56): Սըրտումըտ պրիտուր րու, ախպեր (13):

ՊԻԱՍ (հուն.) Սոխի համ ունեցող բանջարեղեն, որ գործ են ածում որպես համեմունք: Համիմ, սխտոր, պիտնա ու պրոաս ունիմ (59):

ՊԻՈՇ, ի. գ. Շրթունք: Պոշեմետ միլր է կաթում (14): Էջ 7, 12, 23, 26, 26, 37, 38, 44, 64, 78:

ՊՍԱԿ, ի. գ. (կրոն.). Շրջանակ սրբապատկերների գլխի շուրջը, իբևև նկարված անձի սրբության նշան: Մշո սուլթան սուրփ Կարապիտ... պասակ լուստ առիր անանց (61):

ՊՍՈՒՅ (բբբ.), մ. Փոքր հասակից, երեխա ժամանակ: Պստուց գլուխ որի ամենան խաղին (2):

ՊՏՈՒԼ (բբբ.), ն բ. Փնտրել, որոնել: Շատ սովորաբար քիչ կու պրտռե (7): Դու վարթ պրտռե, յիս գուպլին (9):

ՊՏՈՒՂ, պտղի, գ. Ծառի բերք: Կու տեսնիրք մինձ վարար, վուր առիլ իք էս պտղի համ (64): Էջ 84:

ՊՏՈՒՏ. գործ է ածվում գալ բայի հետ: Պտուտ գալ—1) շրջել, ման գալ մի բան որոնելու՝ գտնելու նպատակով: *Թաւամ աշխար պտուտ էկա... Չըտեսա բու դիդարի պես (35): Թեզուզ աշխարրս պտուտ գաս՝ չիս տեսնի ինձ պես ապիզ (23):* 2) մեկի կամ մի բանի շուրջը պտտվել իբրև սիրո՝ գուրգուրանքի առարկա: *Թող վըրետ լալով պտուտ գամ, վարթի կարոտ բըլբուլի պես (40): Բլբուլի պես պտուտ էկա վարթի վրա ձեն տալով (14):* 3) օդում շրջանաձև պտտվել (մի տեղ իջնելու նպատակով): (Բըլբուլը) Պտուտ գու բա բաղչի վրա ճըլճըկալով (14):

ՊՐԾՆԻԼ, չ բ. Ապտովել, փրկվել: *Իդրար անիս, Հոթիս հանիս, պըրծնիմ ահուկարենեն (6):*

ՊՈՒԾՊՈՒԾԱ (վրաց.), ճի, գ. (բսբ.). Կակաչ: *Իմ բըլբուլին ալ պուճպու-ձեն վո՛ւնց խափե (33):* Էջ 49, 69, 69:

Ջ

ՋԱԴՈՒԶԱՐ (պարսկ.), ի, գ. 1. Կախարդ, վհուկ: *Ջադուքար իս փել ու փանդով (6):* 2. Հրապուրիչ էակ: *Խիլըրս տարավ ջադուքարին չիմ տեսի (20):* Տե՛ս նաև էջ 13:

ՋԱԶԱ (պարսկ.), լի, գ. Պատիժ: *Ջիգրու կու պատռեցնիմ բու ջապեն լիս իմ (59):* Էջ 56, 77:

ՋԱԼԱԼ (արաբ.), ի, գ. Մեծություն, ուժ, հպորություն: *Տես ի՛նչ արից հու-րիզադա ջալալոն, կորցրիլ իմ ջազաֆիրըն ու լալոն (63):* Էջ 83:

ՋԱԼԴ (պարսկ.), մ. Արագ, շտապ, շուտ: *Չասիս թե վարթըն ջալդ կեհա (23):*

ՋԱԼԼԱԹ (արաբ.), ի, գ. 1. Դահիճ: *Եկ մորթե, ջալլաթըն դուն իս (38):* Տե՛ս նաև էջ 56: 2. *Փիխ բ.* Բռնակալ, տիրան: *Շահի մող խոսկըն անց կու կե-նա, սրպանելու ջալլաթ չը կա (33):*

ՋԱՄ¹ (պարսկ.), ի, գ. 1. Թաս (գինու): *Չեոիս քամանչա, մեջխսումը ջամ չը կա (67):* 2. *Փիխ բ.* Սիրո ըմպանակ: *Ջամ իս չինի, դոշըտ է սինի, շա-մամնիրրո դամ իս անում (6):* 3. Մեծ պղինձ, կաթսա: *Սիչրի միսըն աւսավ... «ինձ մաթլաբեն կոծին, քիզ կոծին ջամը» (59):* 4. (կրոն., սնտո.): Մեծ կաթ-սա դժոխքում՝ մեղավորներին տանջելու համար: *Աթամ վուր էտ շարթըն արավ, նաթիջում դըժուխըր գընաց ջամ (64)* (այստեղ՝ «ամբողջ», «ողջ»):

ՋԱՄ² (պարսկ.), ի, գ. Լավորակ ապակի: || Հայելի: ☉ *Ջամ-հալիլա—* հայելու ապակի (կամ հայելի-հայելի): *Ջամ-հալիլա լալ ու թիլա (6):*

ՋԱՄԱԼ (արաբ.), ի, գ. Գեղեցկություն, պատկերք, գեղեցիկ դեմք: *Կու կենամ ջամալիտ մայիլ (65):* ☉ *Մահ-ջամալ—*լուսներես, պատկեր գեղեցկու-թյան: *Տեսնողըն հեյբաթ կու մընա էտ բու սիրուն մահ-ջամալիտ (7):*

ՋԱՄ-ՀԱԼԻԼԱ, տե՛ս Ջամ²: Ջամ-հալիլա լալ ու թիլա (6) : էջ 13:

ՋԱՆ (պարսկ.), գ. 1. Հոգի, շունչ, կյանք, կենդանություն: Աշխարումըս դուն իմ ջանն իս (45) : Աշխարումըս այս չիմ բաշի, բանի վուր ջան իս ինձ ամա (24) : Տե՛ս նաև էջ 8, 14: 2. Մարմին: Էրվեցավ ջեգարըս, մաշվեցավ ջանըս (26) : Ինչ քիզանից հիռացիլ իմ, իմ ջանումըս ջան չե մըտի (43) : էջ նաև 13: 3. Առողջություն, ողջ-առողջ վիճակում լինելը: Պատիվ անիմ, բանի ջան իմ (6) : էջ 15: Բանի վուր ջան իմ, յար, քի դուրբան իմ (29) : 4. Հանգիստ՝ բարվոք վիճակ, դրություն: Ջորըն անվորին կերիլ է, մարթկանց վրա ջան չը մընաց (68) : Ջան չունիմ յարի ծեննեմեն (6) : 5. ա ծ. Իբրև փաղաք-շական խոսք դրվում է գոյականներին կից, սիրելի, անծկալի: Լէյի ջան, ման իմ գալի յանա-յանա (27) : ☉ Ջան գալ—առողջ լինել, ողջ և առողջ նալ: Հալվեցա, մաշվեցա, էլ ի՞նչ ջան գու բամ (18) : Ջան տալ—տանջվել, չարչարվել: Էլ ի՞նչ օգուտ, ջան տու, կինքըտ հա մաշի (63) : Ջանը հանիլ—1) տանջել, չարչարել: Ջանըս հանեցիր՝ ջադուբար իս (6) : 2) զմայլեցնել, հիացնել, հիացմունքից հոգին դուրս գալ: Բաղըր լիվով ջան իս հանում (6) :

ՋԱՆԱԼ, ացի, ն բ. Ջանք անել, ջանք գործադրել (աշխատել մի բան անելու) : Ծակտետ ունքըտ չի կարա գա, բանի գուլե վուր շատ ջանա (38) :

ՋԱՆԸՄ, ՋԱՆՈՒՄ (պարսկ.) Դիմելու ձև: Հոգես, սիրելիս: Դիռ Սալաթ-Նովեն չե միռի՝ դուն ի՞նչի տրխուր իս, ջանըմ (34) : Ջանում յար, կո՛ւր իմ ասի, նուր չիմ ասի (32) : էջ 15, 15, 15, 15, 15, 47, 50, 50, 50:

ՋԱՆՔ, ի, գ. Ուժերի լարում՝ մի բան անելու համար, ճիգ, փուլթ: ☉ Ջանք դընիլ—ուժերը լարել մի բան անելու համար, աշխատել, ճիգ թափել: Ծատ ջանք դըրի, մե բափա չը տեսա հում կաթնակիրի (28) :

ՋԱՌ (պարսկ.), ի, գ. Կանչ, կոչ, համբավ (շահի գալու առթիվ, որ ժողովուրդը լսի և ճանապարհից հեռանա) : Ջառ բաց անիլ—կանչելով ճանապարհ բացանել տալ (շահի գալու առթիվ) : Տեսնողըն էնպես կիմանա՝ Ծառ իս գալի ջառ բացարած (39) : (Ջառ կնշանակե նաև թագավորին ուղեկցող շքախումբ, վորաշարք, շքերթ. ջառ բացարած—շքերթ բացած) :

ՋԱՎԱՀԻՐ (արաբ., թուրք-ից), ի, գ. 1. Գոհար, թանկագին քար: Անգա-ճըտ էրծաթեն պիտի, գըլուխըտ ջավահիր քարած (1) : Տե՛ս նաև էջ 31, 63, 63: 2. փ իս բ. Ծատ սիրելի և գեղեցիկ անծ: Գանծ իս սիրով ու սիրեկան. լալ ու ջավահիր պատվական (6) : Ով ջավահիր, անգին ալմաս, յար, բու արիվըն կու սիրիս (54) : Տե՛ս նաև էջ 15, 23, 37, 50, 83: 3. փ իս բ. Գեղեցիկ և ընտիր հատկություններ ունեցող որևէ բան: Խոսկիրըտ անգին ջավահիր՝ Ասավուրու ճառ իս էլի (13) : էջ նաև 80:

ՋԱՎԱՀԻՐԶԻ (արաբ., ադրբ.), չու, գ. ա ծ. Գոհարավաճառ, ակնավաճառ: Հուջրես լիքըն է անգին լալով, ջավահիրշուն ահ իմ բերի (15) :

ՋԱՐ (արաբ.), ի, գ. Բանակ, վորք: Ջար կորցրած խոնթկարի պես նըս-նսած է իսպանից բեղամաղ (43) :

ԶԱՐԱ (արաբ.), ռի, գ. (*հոգն*. շարեք) : Վիրաբույժ, բժիշկ : *Ի՞նչ կոնիս հեքիմըն, ի՞նչ կոնիս շարեն* (26) : *Ջարեքըն դիզըտ չին գիդի* (44) :

ՋԱՓԱ (արաբ.). փի, գ. Նեղութուն, ծանր աշխատանք : *Ջափա քաշիլ*— նեղություն կրել : *Ջափեն յիս քաշեցի, սափեն յադիրըն* (21) :

ՋԳՐԵՑՆԻԼ, ցրեցի, պ տ ճ. Ջղայնացնել, բարկացնել : *Սայաթ-Նովին մի ջըգրեցնի* (14) :

ՋԵՅՐԱՆ (ադրբ.), ի, գ. 1. Եղջերու, կիտար : *Տե՛ս արունուտ ջերանըն՝ վուրսնուրթի նիպնից բեդամաղ* (43) : Նաև էջ 44, 60, 63 : 2. *փ խ բ*. Վայելչա-հասակ՝ բարեձև մարմնով տղա կամ աղջիկ : *Ասիր ջերան իմ, թուղ քի սեյր անիս, յա՛ր, մըտիկ անիս* (29) : էջ 24, 31, 31, 37, 44, 86 :

ՋԵՐ (վրաց.), մ. Անգամ : || Դեռ : *Մե ջեր*—մեկ անգամ : *Ի՞նչ կուլի միս մըտիկ անիս հապարեն մե ջեր* (45) : *Հապարեն մե ջեր*—մեկ-մեկ, երբեմն :

ՋԻԳԱՐ (պարսկ.), ի, գ. 1. Լյարդ, թոքեր : *Էրած ջիգար*—*փ խ բ*. հոգեկան ծանր վիճակ : *Գիշիր-ցերեկ յարի յաթրու, ջիգարըս էրած գիդենաք* (57) : էջ 18, 39, 41, 75 : 2. *փ խ բ*. Սրտակից, սիրելի, մտերիմ : *Դարդ մի՛ անի ջան ու ջիգար* (5) :

ՋԻԳՐ (կիրգիզ.), գ. Ոխ, ոխակալություն : *Ջիգրու*—ոխակալորեն, քինախընդրաբար : *Դիտավորյալ, միտումնավոր : Ջիգրու կու պատռեցնիս, քու ջապեն յիս իմ* (59) :

ՋԻՂԱ (արաբ.), դի, գ. Թագի վրա դրվող փետուր (ջալլամի և ալլն) : *Թաքավուրի թագի ջիղա, օսկե թիլըտ շաղմաղում իս* (46) :

ՋԻՂՋԻՂԱ (վրաց.), դի, գ. Արծաթե բարակ թիթեղ : *Յիփ տիդենետ ժած իս գալի, ջըխկջըխկում իս ջիդջիդի պես* (2) :

ՋԻՌԱՆԱԼ (թիբ.), ացա, չ բ. Ջեռանալ, տաքանալ, շիկանալ : *Բարկ էրեսըտ՝ կըրակ նընգած օսկու նըման ջիռանում է* (38) :

ՋՆԱՂ (արաբ.), ի, գ. Անրակ : ☉ *Ջընաղ հեքալ*—կիսանդրի : *Սկանդարի Ջուլղարեն թողած, ջընաղ հեքալ արմանալու* (46) :

ՋՈԳՎԻԼ (բրբ.), վեցի, չ բ. Տարբերվել, առանձնանալ : *Չիս ջոգվում անգին բարեմեն* (6) : էջ 14 :

ՋՈՐԻ, րու, գ. *Ջորու նըման չասե, իմ դեդեն ծին է* (49) :

ՋՐԱՏԱՐ (բրբ.), ի, ա ծ. գ. Սեղծ, դժբախտ, անօգնական : *Վո՛ր մե դարդին կու դիմանաս, դուն ջրատար Սայաթ-Նովա* (37) :

ՋՐՀԻՂԻԼ (թիբ.), ի, գ. Ջրհեղեղ : *Բոլորքս տալղա, ջըրհիդիդ* (65) :

ՋՈՒՀԱՐ (արաբ.), ի, գ. 1. Գոհար : 2. *փ խ բ*. Փայլ, աչքի լույս, տեսողություն : *Աչկենես ջուհարըն գընաց* (57) :

ՋՈՒՀԱՐԴԱՐ (արաբ. պարսկ.), ի, ա ծ. Գոհարակերպ : || Անգին քարեր կրող, ակնակիր : *փ խ բ*.՝ Փայլուն՝ գերապանց (գործ) : *Դուն էն գըլխեն ջուհարդար իս, վըրես վարնըռան է քաշած* (35) :

ՋՈՒՂԱԲ (արաբ.), ի, գ. Պատասխան : ☉ *Ջուղաբ անիլ*—մերժել, կրկել : *Աստու սերըն կանչողի պես դըռնենետ ջուղաբ մի՛ անի* (10) : *Հուսամ, Սայաթ-Նովեն, միդքիրըս քավիս, թե չէ դատաստանին յիս ի՞նչ ջուղաբ տամ* (64) :

ՋՈՒՆՈՒՆ (արաբ.), ի, գ. ա ծ. մ. Սիրուց խննթացած, խելացնոր: Յիս մե էշխի ջունուն իմ (56): Նաև էջ 25: ☉ *Ջունուն անիլ*—խենթացնել, խելքահան անել (գեղեցկությունից): *Սայաթ-Նովուն ջունուն արիր* (3): *Ջունուն րիլի*—խելացնորվել, խելագարվել: *Էշխենետ ջունուն իմ էլե* (31): Նաև էջ 18, 24, 26, 60:

ՋՈՒԻՐ, ջրի, գ. (բ ա ց. հ ու լ. ջրենն): *Ջուրն էկավ գերանըս տարավ* (36): *Անմահական ջրով լիքը օսկե փնջան իս ինձ ամա* (24): *Ծարավ մարթըն բու ջրբենեն չի՝ կրշտանա* (38): Նաև էջ 4, 12, 14, 16, 47, 47, 56, 86: ☉ *Ջրի տարած*—խեղճ, անօգնական: *Էշխեն ուշկ ու միտկըս կապած, ինձ ջրի տարած գիղենաբ* (57): *Ջուրը տանիլ*—խեղճ՝ անօգ վիճակում լինել: *Բաս բու էշխին վո՛ւնց դիմանամ, ջուրը տանե Սայաթ-Նովին* (2): *Օսկե ջուր*—ոսկեջուր, ոսկեպօծելու մետաղական ֆեղուկ: *Իմ սիրմա էրծաթ—ախպեր՝ օսկե ջրով վարչակած* (13): *Էշխի ջուր փխբ.*—սիրո բուռն արտապեղում: *Ամեն մարթ չի կանա մըտնի՝ էշխտ ջուրն հիդ է, վալում* (39):

ՋՈՒԻՐԱԹ (արաբ.), ի, գ. Համարձակություն. խիպախություն, հանդգնություն: *Ման էկա յիրկիր, չը տեսա էտ բու նըման ջուրաթումըն** (7):

ՋՈՒԻՐԱ-ՋՈՒԻՐԱ (աղբբ.), ա ծ. Տեսակ-տեսակ, այլատեսակ, վանական տիպի: *Մե նըմանըտ ռաշի նըման, մե նըմանըտ ջուրա-ջուրա* (40):

ՋՈՒԲԱՄ (արաբ.), ի, գ. Վնաս, կորուստ, բաշանք: ☉ *Ջուբամ բաշիլ*—վնասվել, կորուստ ունենալ: *Էլ ջուբամըն դուն կու բաշիս, չուն մահիս խիալ իս անում* (8):

Ռ

ՌԱ, գ. Հայերեն այբուբենի «Ռ» տառի անունը: *Հասա ռա է, հասս ջե* (51):

ՌԱԴ (արաբ.), գ. Հեռու, դենը: *Ռադ անիլ*—հեռացնել, վանել: *Գըլուխըս չարեն ռադ անիմ, սարրս մունաթ չը բաշե* (15):

ՌԱԶԱ (արաբ.), փ, գ. Սողնակ, լուսամուտների կամ դռների փեղկերը զոցելու երկաթե հարմարանք: *Էրծաթե կոխպեքով կոխպած, դուն օսկե ռապա իս, ապիլ* (40): *Կողպեքըն կու դընիմ՝ ծիր ռապեն յիս իմ* (59):

ՌԱՆՏ (արաբ.), ի, գ. Ջարդարանք: Հանդերձանք: *Անգին ակըն վըրետ շարած, անբան օսկու ռախտ իս, գոպալ* (34):

* *Ջուրաթ* (արաբ.)—«համարձակություն», «հանդգնություն» նշանակությամբ այստեղ չի համապատասխանում բովանդակությանը: *Ջուրա*—«տեսակ» բառն է, որ Սայաթ-Նովան վերևի *մուրվաթումն* բառի հետ հանգավորելու համար գրել է *Ջուրաթումն*, որը պետք է լիներ *Ջուրայումն* «տեսակում», «տեսակի մեջ»: Տե՛ս Մ. Հասարթյան, Սայաթ-Նովալի խաղրի ժողովածու, 1959, էջ 282:

ՌԱՆՏԱՐ (պարսկ.), ի. գ. Մաքսատան ծառայող, մաքս հավաքող:
Ռ:սխտարի նըման նըստած իմ՝ իջարից, միվնից բեղամաղ (43):

ՌԱՀՄ (արաբ.), ի. գ. Կարեկցություն, զուր, ողորմություն: **⊙** *Ռահմ անիլ—գթալ, ողորմալ, խղճալ: Ռահմ արա, հոքիս մի՛ հանի* (12): *Ռահմ արա—մե խոսի միվիդ* (27): Նաև էջ 29, 88:

ՌԱՆԳ¹ (պարսկ.), ի. գ. Գույն: *Թամաշա իս, վարթի ռանգ իս* (6):
էջ 13, 18, 38, 34, 37, 44, 55, 61, 61, 61, 61, 61, 65, 71, 72: 2. Երանգ: *Մի-պուտըտ վարաղնած պիտի՝ թահրը ունենա հապար ռանգով* (1):

ՌԱՆԳ² (պարսկ.), ի. գ. Հույս: *Ռանգ ու ռուքար—հույս և ապավեն:*
Ծալե դավթարըտ ղութին դի՛ ռանգ ու ռուքար իմ քիվ ամա (23):

ՌԱՆԳԵ ՌԱՆԳ (պարսկ.), ա ծ. գ. Գույնվզույն, բավմերանգ: *Պատկիր-բըտ ղալամով քաշած, թահրըտ ռանգե ռանգ իս անում* (2):

ՌԱՆԴԱ (պարսկ.), դի. գ. Հյուսնի գործիք, հարթիչ: *Ծուռըն փետըն չի*
դըրստի ռանդան, դո՛ւրգար Սայաթ-Նովա (37):

ՌԱՇ (պարսկ. ռաշխ), ի. գ. Առասպելական նծույգ՝ թևավոր և վեցոտանի:
Կրրակե ծովենեն դուս էկած ռաշ ու ջեյրան իս ինծ ամա (24): *Չարըտ ռաշի*
կուդեն պիտի, վուր դուն խոսիս քաղցրի հանգով (1):

ՌԱՍՏ (պարսկ.), միայն ռաստ գալ կապակցության մեջ—միմյանց հան-
դիպել, պատահել: *Գելըն ու չրբանը մեկ մեկու ռաստ էկան* (58): էջ 33, 48,
54, 75, 76:

ՌԵՀԱՆ (արաբ.), ռեհնի, ի. գ. Համեմունքային բույս: *Ջու տերըն բաղըն*
ինչ կոնե՛ քու հուտըն ռեհան իս շինի (2): էջ 7, 14, 16, 23, 32, 34, 45, 65,
65: *Դաստա կապած, ռեհնին կըպած, բաց իս էլի դուն գուլի պես* (14):

ՌՈՒՆՍԱԹ (արաբ.), ի. գ. Իրավունք, թուլլտվություն: *Թե ռուխասթ տան,*
սիրտըս բանամ, կու տեսնիք դարդիրըս ծով ա (67):

ՌՈՒՍ, ա ծ. Ռուսին վերաբերող, ռուսական: *Աչկ ու ունըրտ վեր իս թո-
ղի, հուրըրտ մե ռուս ցարի բարթթ* (47):

Ս

ՍԱ, դ, (սրա, սրան) Ցուցական դերանուն, որ գործ է անվում անծի կամ
առարկայի անունը տալու փոխարեն (առաջին դեմք): *Տխուտ կարոտ չը թող-
նիս, չասիս՝ սա օտար, սա՛ լադ* (65): *Շատ մարթ էստունը կու իմանա, կոսե.*
«հալբաթ սա վանգին ա» (15): էջ 16, 27, 37, 83, 87, 87: *Բոլորը սըրա մեչ է*
գրրած (6): *Սրան դաբուլ իմ, արարիչ ստիղծող* (63):

ՍԱԲԱԲ (արաբ.), ի. գ. Պատճառ, առիթ: *Սաբաբ անիլ—պատճառ բուն,*
(մեկին մեղադրելու համար): Թե վուր գիդիմ բեկաբիլ իս, ուրիշին սաբաբ մի՛
անի (10):

ՍԱԲԲ (արաբ.), ի. գ. Համբերություն: *Խրրատ սիրե, սաբբ սիրե, շար*
սիրե (16):

ՍԱԴԱ (պարսկ.), *ա ծ*. Մաքուր. անխառն: *Թեզույ սաղափ սաղա ըլի... դիփունին կու ախտիս, գուչալ (34) : Ռանգըն ռանգերուն ծածկում է, հուշրեքըն լիքն է սաղեմեն (44)* (Իրար վրա դարսած, գուլնգուլն, մաքուր, անխառն (ապրանքներով-կտորեղենով) լիքն են սնդուկները) :

ՍԱԴԱԽ, ՍԱԴԱՂ (աղբբ.), *ի, գ. 1*. Նետերի պայուսակ, նետաման, կապարճբ: *Անդի լարըն կըտրվիլ է, դարդակ սաղաղըն ի'նչ կոնիմ (36) : 2*. Աղեղ. կամար: *Ունքիրըտ սալիղ սաղախ է, թերթերուկըտ' նիտ է, պալում (39) :*

ՍԱԴԱՓ (արաբ.), *ի, գ. Մարգարտաբեր խեցեմորթու փայլուն խեցին, մարգարտամայր, որից պանպան իրեր և պարդեր են պատրաստում: Կութըտ շիրմայեմեն պիտի, փուրըտ սաղափով նաղշ արած (1) : Էջ 5, 50, 56:*

ՍԱԶ¹ (պարսկ.), *ի, գ. Նվագարան, արևելյան երաժշտական լարավոր գործիք: Ամեն սապի մեչըն գոված դուն թամամ տասըն իս, քամանչա (1) : Նաև էջ 18, 20, 33, 38, 46: Մուտ բախչեն նապով, քիզ գովիմ սապով, յար, իլթիմապով (29) : ☉ Սազ անիլ—նվագել, երգել: Սանթուր ու քամանչա չանգ իս՝ բարակ ձենով սազ իս անում (6) : Էջ 13, 14:*

ՍԱԶ², *ա ծ. մ. Հարմար, ներդաշնակ, լավ. կարգին: Վարթըն էլվընումըն կուլի, նամ-նամ արխին սազ ըլիլով (54) : ☉ Սազ գալ—հարմար լինել, պատշաճել, ներդաշնակել: Բի սազ գու քա ալ դումաշըն, նապանի (11) : Նաև էջ 8, 65, 72:*

ՍԱԶԱ (պարսկ.), *ա ծ*. Սաւական, համապատասխան. արժանի: *Թաք դո:ն տիս գաս, վիր կու կենամ,—թե սապիս սապա իս, ա՛պիզ (40) :*

ՍԱԶԱՆԴԱՐ (պարսկ.), *ի, գ. Երաժիշտ, նվագող, նվագածու: Շատ աշա յիբ մեհմանդար իս, սուփրի սազանդարիտ էրնեկ (25) :*

ՍԱԼԱՄ (արաբ.), *ի, գ. Ողջույն: Բարովին բարով չիս տա՝ թաքավուրի սալամի պես (39) :*

ՍԱԼԲ, ՍԱԼԲԻ, ՍԱԼԲՈՒ (պարսկ.), *ի, գ. Նոճի, կիպարիս: Աշխարիս շվաք իս անում, սալբ ու չինար իս (7) : Սալբի ասիմ՝ ախրը մին օր կու տաշվի (19) : Սալբուի նըման կանանչ իմ (9) : Նաև էջ 44: ☉ Սալբու չինար—նոճի ու սոսի. փ իս բ. սլացիկ՝ վայելչակալմ հասակ: Մեչկըտ տալբու չինարի պես, ռանգըտ փըռանգի առլաս է (24) : Էջ նաև 48:*

ՍԱԼԻՂ (արաբ.), *ի, գ. Զենք: Սալիղ սաղախ—նետաղեղ: Ունքիրըտ սալիղ սաղախ է, թերթերուկըտ նիտ է, պալում (39) :*

ՍԱԽԱԹ (արաբ.), *ա ծ*. Խեղանդամ, վնասված, խախտու: *փ իս բ. Սխալ, թյուր, անճիշտ Ինչպես վուր կըրակին չի դիմանա մուս, Ընպես սախաթ կուլի. ովոր խոսի հուս (49) :*

ՍԱԽՏ (արաբ.), *ի, գ. Վիշտ: Անդամ, առանց սախտ իս, գուչալ (34) (Անհուգ, անվիշտ ես, գուչալ) :*

ՍԱՀԱԹ (արաբ.), *ի, գ. Ժամ, պահ, ժամանակ: Մապեն մե սահաթ լավ կուլի, դուն համան թապա իս, ա՛պիզ (40) :*

ՍԱՂ (աղբբ.), *ա ծ. 1*. Ողջ, առողջ, կենդանի: *Բանի սաղ է Սայաթ-Նո-*

վեն, շատ բան կու տեսնիս, քամանչա (1) : ☉ Սաղ ըլիս—որչ լինես: Թաք յիս մեռնիմ, դուն սաղ ըլիս (22) : Էջ նակ 18, 34 (5 անգամ), 50, 69: 2. Ամբողջ, լրիվ, բոլոր: Էս խոսկըս սաղ իմացի (14) : Էջ նակ 69:

ՍԱՂՉԱ (պարսկ.). չի, (ն երգ. հոլ. չումն): Պատից դուրս ցցված աղյուս՝ ճրագը դնելու համար: Կու վրովըռաս ճրարքի պես՝ սաղչումըն շնուք կու տաս (14) :

ՍԱՄԱՆԴԱՐ (պարսկ.), գ. ած. Աղեղնակիր, ծիածանակիր, ազեղանման, կամար: Ունքիտ սամանդարիտ էրնեկ (25) : (Կամար ունքերիտ երանի) : (Սամանդար բառացի նշանակում է սալամանդրա, մողես, որ դիցաբանության մեջ մի հրեղեն էակ է ներկայացնում*) :

ՍԱՅ-ԱԴ (ադրբ.), Հաշվիր, համարիր, ընդունիր: Սայաթ-Նովեն իմ, սալադ, Անուներս հաշվիր՝ սայ-ադ (65) :

ՍԱՅԱԴ (արաբ.), ի. գ. Որսկան, որսորդ: Յարալու ջեյրան իս դառի, յիս բու էդնետ՝ ավչի-սայադ (65) :

ՍԱՆ (պարսկ.), ի. գ. Հարգանք, պատիվ (Ռ. Աբրահմ. «մարդաշատ հավաքույթ»): ☉ Սան անիլ—հարգել, պատվել: Խանի պես դիվան իս անում, Շահպադի պես սան իս անում (6) :

ՍԱՆԴԱԼԵ, ած. Սանդալ ծառի ընտիր շինափայտից պատրաստած: Վիր-նատունըտ սանդալե տախտակ (62) :

ՍԱՆԴԱՐԱՄԻՏ (թիբ) (կրոն.) դժոխք, սանդարամետ: Ինչ հրաշալի կերպ ունիր դուն, սանդարամիտըն պորոք սարսյալ (61) :

ՍԱՆԹՈՒՐ (թուրք.), ի. գ. Արևելյան երաժշտական լարավոր գործիք: Ինչ կոնիմ սանթուր քամանչեն, Վուզըտ չոնգուր չանգ իս անում (2) : Էջ 7, 13, 29:

ՍԱՆՉ, ի. գ. փխբ. Ջսպող միջոց: Բերնումըս դընիմ սանձ՝ կենամ (6) : Էջ 15:

ՍԱՆՉԱՀԱՐԻԼ, նբ. Հնապանդեցնել: փխբ. Ջսպել, ընկճել: Բերնումըս դընիմ սանձ՝ կենամ, սանձահարիմ, սիրտըս վարիմ (6) : Էջ 15:

ՍԱՋԱՐ (արաբ.), ի. գ. 1. Ծառ: Չիմ թողնի արեգագումըն՝ բաղչի սաջար իմ քիզ ամա (23) : 2. Թուփ: Բաղըն վարթարած, բլլբուլը բընած վարթի սաջարին (29) : Նակ էջ 72:

ՍԱՏԱՆԱ (սնոտ.), նի. գ. Ժողովրդական երևակայությամբ՝ մարմնավորված չար ոգի, որ ծագում է մարդկանց վնասել, մեղքերի մեջ գցել: Սատանեն մե դամբ է դըրի Աթամի վաթըն վուրսալու (44) : Էջ 61, 61, 80, 80:

ՍԱՐԴ, (հոգն. սարիր): Լեռ: Մեջլումի պես սարըն իմ նընգի, Լելումեն: խաբար չունիմ (22) : Դարդըս ասիմ՝ գու լան սարիր (3) : Մե-մեկ, մե-մեկ սարի ծերին շանց կու տամ (58) : Էջ 10, 19, 31, 34, 42, 49, 52, 71:

* Տե՛ս Մ. Հասարայան, Սայաթ-Նովայի հայ. վրաց. ադրբ. խաղերի ժողովածու, 1959, հայերեն 25-րդ խաղի ծանոթությունը:

ՍԱՐՉ (պարսկ.), ի, գ. Գլուխ: Գլխովս չարեն շահ անիմ, սարս մունաթ չը բաշե (15):

ՍԱՐԳԱՐ (պարսկ.), ի, գ. Զորապետ: Կըտրիլ տու քանի կըտրում է—քու թուրն սարդարի բաբաթ (47):

ՍԱՐԻՍԱՐ (պարսկ.), գ. Կերպասի տեսակ, որի միջով ծայրից ծայր և հավասար անցնում են ոսկե թելեր: Կարմիր ու կանանչ ու ճերմակ, սարիսար ալ արմանալու (46):

ՍԱՐՍԱՐԻ (թիբ.), ա ծ. Թափառաշրջիկ, անտուն: || Մոլորված: Կուռըտ շիմշատ, մատնիրըտ՝ մում, դունգըտ արավ ինձ սարսարի (60):

ՍԱՐՍԻԼ, չբ. Սարսել, սարսափել: Սանդարամիտըն պորոք սարսյալ (61):

ՍԱՐՎԻ, վու (հոգն. սարվիք), գ. Նուլնն է՝ Սալի: Բոլըտ սարվի ունիս, մեչկըտ է դամիշ (55): Անցկացավ աշունքվա վախտըն, սարվիքըն խաղալ է ուզում (43):

ՍԱՐՎԻԲ, տե՛ս Սարվի: Անցկացավ աշունքվա վախտըն, սարվիքըն խաղալ է ուզում (43):

ՍԱՓԱ (արաբ.) փի, գ. Ուրախություն, վվարճություն, ուրախ ժամանց: Յիփ վեր գու բաս՝ Մեջլիսումըն քաղցրը պող ու սափա գուլիս (1): Աշխարհս միկ մընալու չէ, քանի նըստինք պող ու սափին (53): Նաև էջ 6, 33, 89:

ՍԵ, գ. Հայերեն այբուբենի «Ս» տառի անունը: Էլ ո՛ւմ բըռնիմ սե ու ալիք էրկու բեն* (49): Սե ու ալիք մաս անին (11): (Սե ու ալիք մաս անին—Սուլաթ-Նովայի և Աննայի սկզբնատառերի անուններից բառախաղ, որ կնշանակի Սայաթ-Նովային Աննայից բաժանեն**):

ՍԵԼԱՎ (պարսկ.), ի, գ. Հեղեղ: Սելավի պես առանց ցամքիլ դուն շուտով խարաբ մի՛ անի (10):

ՍԵՅՐ (արաբ.) գործ է ածվում միայն սեյր անիլ կապակցության մեջ—հիացմունքով կայել, դիտել: Թուղ քի սեյր անիմ, յա՛ր, մըտիկ անիմ (29):

ՍԵՅՐԱՆ (պարսկ.), ի, գ. 1. Զբոսանք: Բըլբուլըն վարթին, վարթըն բաղաթին. սեյրանի վախտ է (29): 2. Տեսարան, դիտելու արժանի բան: Բարսկ մեչկըտ սեյրան արիլ (6): Սիրով ու սեյրան իս ինձ ամա (24): ☉ Սեյրան անիլ—վբոսնել: Համաշա սեյրան իս անում, վարթ ու մանուշակ քաղում իս (46): Սեյրան էհալ—վբոսանքի գնալ: Բաղչեն սեյրան կեհաս (7):

ՍԵՅՐԱՆԳԱՀ (պարսկ.), ի, գ. Զբոսավայր, վբոսատեղ: Յիփ դուն սեյրանգահըն կեհաս, օչով այնումըտ չէ գալիս (34):

ՍԵՊՏԵՄԲԵՐ, ի, գ. Սեպտեմբերի երեքին, բրոնիկոնի 444-ին (26-րդ խաղի տողատակի ծանոթ.), էջ 40, 54:

* Սե ու ալիք էրկու բեն == սաբաբ—պատճառ, առիթ: Էլ ո՛ւմ պատճառ բռնեմ: Տե՛ս Մ. Հասրաթյան, Սայաթ-Նովայի խաղերի ժողովածու, 1959, էջ 66:

** Տե՛ս նույն տեղում, 11-րդ խաղի ծանոթությունը:

ՍԵՎԱԿԱ (արաբ.), դի, գ. 1. Սև գույն՝ ներկ: 2. Սևութուն: ☉ *Սևադեն նընգնիլ* — սև գույնի լինել: *Ռանգըն վուր սևադեն նընգնի՛ ալ անիլըն ի՛նչին է շահ* (44):

ՍԵՐ, ի. 1. գ. Համակրանքի ուժեղ պագցում երկու տարբեր սեռի անհատների միջև: *Սերըն սեր կու բերե* (18): *Սերըտ ինձ մահ դառավ, էլ չիմ դիմանում* (26): Տե՛ս նաև էջ 30, 40, 60, 62, 72: 2. *ա ծ*. Այդ պագցմունքին հատուկ դրանից բխող: *Համբուրիմ սիրով համբուր* (13): *Հուր իս, սիրով սիրեկան* (56): Նաև էջ 42, 73: 3. գ. Գթություն, հայց: *Աստծու սերըն կանչողի պես դըննենտ ջուղաբ մի՛ անի* (10):

ՍԻԹԱՄ (արաբ.), ի, գ. Բռնություն, ճնշում: Պատիժ: ☉ *Սիթամ անիլ* — 1) բռնանալ. ստիպել: *Տերըն վուր էկամ խափեցին, թե օցըն էր արավ սիթամ* (64): 2) Պատժել: *Սիթամ արից տերըն էլ, բշից դրախտեն* (64):

ՍԻԼԱ-ՍԻԼԱ (ադրբ.) *ա ծ*. Լիքը-լիքը, թափվելու աստիճան: *Բերնիրըն վըրա չե գալիս, ֆակնիրըս է սիլա-սիլա* (15):

ՍԻՄ (պարսկ.), ի, գ. Բարակ մետաղալար, նվագարանի լար: *Թե մե շափաթ բիլ չիմ տեսի, կու կըտրիմ քամանչի սիմըն* (30): *Սիմըտ օսկեն քաշած պիտի* (1): էջ 5, 8, 22, 34, 45, 72:

ՍԻՆԻ (պարսկ.), նու. գ. Մետաղյա մատուցարան: *Զամ իս չինի, դոշըտ է սինի* (6): էջ 13:

ՍԻՊՏԱԿ (բրբ.), *ա ծ*. Սպիտակ, ճերմակ: *Չեռնիրըս՝ սիպտակ մաքաղաթ* (39):

ՍԻՊՏԱԿԻԼ (բրբ.), չբ. Սպիտակել, ճերմակել: *Թողով չի սիպտակի սիվըն* (37):

ՍԻՎ (թիբ.), 1. *ա ծ*. Սև: *Սիվ արաբի ճակտի վըրա խալ անիլըն ինչին է շահ* (44): 2. գ. Սևութուն: *Թողով չի սիպտակի սիվըն* (37): 3. գ. Սզո նշան՝ արտահայտություն: ☉ *Սիվ ու սուք հաքցնիլ* — սև շորեր հազցնել ի նշան սզո: *Հաքցըրի իմ չուպեցած սիվ ու սուք լիբասըն ինձի* (67):

ՍԻՎԱՆԱԼ (թիբ.), ագա, չբ. 1. Սևանալ: 2. *փ իս բ*. Ամոթափար լինել, խայտառակվել: *Ովոր ինձի շինից դիվանա՛... վադի էրեսըն սիվանա* (32):

ՍԻՐԱ (պարսկ.), սիրի, գ. Բոց, կրակ, հուր: *Սիրա սիրմըտ սըրտիս մեչլըն ցանեցիր* (19):

ՍԻՐԱԾ, ի, գ. Սիրելի՛ նվիրված անձ (կին կամ տղամարդ), յար: *Սըրտով սիրածըս դուն իս* (66):

ՍԻՐԱԿԱՆ, ի, գ. Նույնն է՝ Սիրեկան: *Հուր իս, սիրով սիրական* (56):

(*Հուր իս*, կարդա հյուր ես):

ՍԻՐԵԿԱՆ, ի, գ. 1. Սիրված անձ, սիրական: *Բարով տեսա իմ սիրեկան* (41): Տե՛ս նաև էջ 57 (6 անգամ), 50, 36 (3 անգամ), 25, 63, 75: *Սերըն սեր կու բերե, սիրեկան գու քամ* (18): *Ըսպես Արութինն ու սիրեկանըն ո՛ր ասիլ են, էն է* (26-ի տողատակի ծանոթ.): 2. *մ*. Շատ սիրելի, գերազասելի: *Ամեն ըռանգ ծաղկի մեչըն՝ կարսիր վարթըն սիրեկան է* (54): Տե՛ս նաև էջ 15:

ՍԻՐԻԼ, ն բ. 1. Սեր՝ հակում ունենալ մի բանի նկատմամբ: Գիր սիրե, դալամ սիրե, դավթար սիրե (16): Էջ 28 (18 անգամ), 42: 2. Սեր տածել մեկի նկատմամբ: Յիս քիզանից չիմ հիռանա, թեզուզ սիրիս, թեզուզ ատիս (13): Թաք ուրիշ գուզալ չը սիրիս՝ իղրարով յար իմ քիզ ամա (13): Տե՛ս նաև էջ 24, 30 (3 անգամ), 34, 36, 45, 46, 62: ☉ Աստված սիրող—զթացող, խղճացող: Աստված սիրողըն ինձ ազատի՝ յարքս մունաթ չը բաշե (15): Աստված կու սիրիս—շատ եմ խնդրում, անշուշտ եմ: Աստված կու սիրիս, պար մի՛ հաքնի, պարեն էրված իմ (48) (4 անգամ): Զու արիվըն կու սիրիս—թե քո կյանքը կսիրես, խնդրում եմ: Ուրոր գնաս, ինձ էլ հիղըտ տար, քու արիվըն կու սիրիս (54) 8 անգամ:

ՍԻՐՄ (թհբ.), ի, գ. Սերմ: փ խ բ. Սկզբնական զգացմունք, որը կարող է պարզանալ և ուժեղանալ: Սիրո սիրմըտ սըրտիս մեշըն ցանեցիր (19): Էջ 31:

ՍԻՐՄԱ (պարսկ.), մի, գ. 1. Զուտ արծաթ: Իմ սիրմա էրծաթ ախպեր (13): 2. Արծաթաթել կամ ոսկեթել: Մեշկըտ՝ հադիդենն բաշած սիրմա մավ-թուլի նըման է (7): 3. Ոսկեհեր: Մապիրըտ սիրմա իս անում (26):

ՍԻՐՈՎ, մ. 1. Հաճությանը, հոժարությանը: Լավ մարթըն էն է՝ սիրով անե բարի հրիշտակներու կամքըն (44): Եկ քիպիդ սիրով դամ անիմ (23): Տե՛ս նաև էջ 15, 25, 61: 2. ա ծ. Սիրելի: Գանձ իս սիրով ու սիրեկան (6): Վըրետ շուռ գամ բըլթուլի պես՝ սիրով սեյրան իս ինձ անա (24): Էջ 15, 53:

ՍԻՐՏ, սրտի, գ. 1. Իբրև մարմնի կարևոր մասը, նույն ինքը՝ անձը: Վա-խում իմ թե սերըտ սիրտըս կես անի (11, 55): Բերնուըս դընիմ սանձ կենամ, սանձահարիմ, սիրտըս վարիմ՝ Անհնանալու գանձ կենամ (6): Դու քու սիրտըն իստակ պահե, յադի խոսկըն ավտալու չե (10): Տե՛ս նաև էջ 14, 15, 20, 22, 28, 30, 31, 33, 34, 46, 51, 72, 81: 2. Սիրտն իբրև ազբյուր և հարուցիչ զգա-լական կարողությունների. զգացմունք: Սիրտըս էշխենեն էրած է, դուզուն դա-դըն ի՛նչ կոնիմ (36): Էշխենետ սիրտըս էրվում է, հովնալու ճար չունիմ (22): Տե՛ս նաև էջ 34, 37, 39, 46, 52, 54, 60, 60, 64, 66, 67, 68, 75, 75: 3. Տրամա-դրություն: Յարի սիրտը պայ արին (11): Չըլի միտկըտ մուլորվի է, սըրտուըտ պըխտուր իս, ախպեր (13): Սիրտըս տխուր, աշկըս լալով (14): Էջ 21, 25, 25, 26, 89, 89: 4. Ներքին խորհուրդ, դիտավորություն: Իմ ու քու սըրտի բանըն դիփ աշկարա մի՛ անի (66): Դուն քու մըտկի հիդ մի՛ էհա, էտ խիալըն սըրտետ հանե (7): Էջ 14, 15, 38, 46, 71, 88: ☉ Սիրտը բանալ—ասել, պատմել, ար-տահայտվել: Թե ռուսխաթ տան, սիրտըս բանամ, կու տեսնիք դարդիրըս ծով ա (67): Սիրտը դադ անիլ—ծանր վիրավորանք հասցնելով սաստիկ վշտացնել: Յարի սիրտըն դադ մի՛ անի (6): Սիրտը պայ անիլ—տրամադրությունը փշաց-նել: Դուն իս ասի՝ նհախ տիդ Յարի սիրտը պայ անին (11): Սիրտը էրիլ. փ խ բ. —սիրո զգացում բորբոքել: Սիրտըս էշխենեն էրած է, դուզուն դադըն ի՛նչ կո-նիմ (36): Սիրտը էրվիլ—սիրո զգացմունքից տառապել: Էշխենետ սիրտըս էրվում է, հովանալու ճար չունիմ (22): Սիրտը խնդացնիլ—ուրախացնել, վըշ-տերը ցրիվ տալ: Եատ տխուր սիրտ կու խնդացնիս... քամանչա (1): Սիրտը

խուցիլ—*փ խ բ.* խոսքով վիրավորել: *Դառնն խոսկով սիրտըս խուցից* (67): *Սիրտը ծովացավ նընգնիլ*—սրտում ծովի չափ՝ անհունորեն վիշտ կրել: *Ախ բաշենն սիրտըս նընգալ ծովացավ* (51): *Սիրտը կես անիլ*—մեղսնել: *Վախում իմ, թե սերըտ սիրտըս կես անի. կու միռնիմ, էլ ինծպեսին չիս տեսանի* (55, 11): *Սիրտը կշտանալ*—մի բանից հագենալ, բավարարվել: *Սիրտըս չէ կըշտանում գափով, նազանի* (17): *Սիրտը յարա անիլ, Սիրտը յարալու անիլ, Սիրտը յարալու շինիլ*—սիրտը խոցել, խոր վիշտ պատճառել: *Սիրտըս արիր յարա, յա՛ր* (65): *Սիրտըս յարալու արիր, Աշկըս գու լա հա՛ կարին* (56): *Սիրտըս յարալու շինեցիր, էրվում իմ մըրմընջալի* (22): *Սիրտը պարզ անիլ*—սիրտը պարզ՝ հստակ դարձնել: *Պըխտուր սիրտըտ պարզ արա, բըլբուլի պես փարզ արա* (56): *Սիրտը սով մընալ*—մի բանից կարոտ մնալ: *Աշխարըս աշխարով կշտացավ, իմ սիրտըս քիզնից սով մընաց* (24): *Սիրտը վարիլ*—ինքնատիրապետել: *Բերնումըս դընիմ սանձ՝ կենձ, սանձահարիմ, Սիրտըս վարիմ* (6): *Էջ 15: Սիրտը փուրումը թուլանալ*—մի բանից խիստ ձանձրանալ, հոգնել: *Սիրտըս փուրումըս թուլացավ, անգալներու պխ անենեն* (57): *Սիրտը փուրումը սըպանիլ*—*փ խ բ.* տանջել, չարչարել: *Սիրտըս փուրումըս սըպանեցիր, էշխըտ քիզ նարդ իս արի* (13): *Սիրտը փուրումը սըբուր ըլիլ*—ծանր վիշտ ունենալ, սգի մեջ լինել: *Սիրտըս փուրումըս սըբուր է, ալ աշկիրըս լաց է անում* (5?): *Սըրտեն հանիլ*—մոռանալ, չհիշել: *Էտ խիալըն սըրտետ հանն* (7): *Սրտի մեջ արին մնալ*—վիշտ կրել: *Էնդուր աշկըս չէ ցամաքում սըրտիս մեջըն արին մընաց* (33): *Սըրտի մուրապ*—փափագ, նվիրական իղձ, ամենացանկալի բան: *Աթմորթու սըրտի մուրապըն յիս իմ* (59): *Սըրտի վարթը թառամիլ*—*ի խ բ.* տխուր լինել: *Թառամիլ է սըրտիս վարթը, սափա, զող ու դամ չը կա* (67): *Սրտով սիրած*—հավանած, ընտրյալ: *Սըրտով սիրածըս դուն իս* (66):

ՍԻՐՈՒՆ, 1. ա ծ. Գեղեցիկ: *Տեսնողըն հեյբաթ կու մընա էտ բու սիրուն մահջամալիտ* (71): *Նաև էջ 10, 53, 53: 2. մ. Լավ. հմտորեն: Թեգուլ իմանաս, գիղենաս աստղերու համբարըն սիրուն* (37): 3. գ. Գեղեցիկ անձ: *Արութի՛նի ասած մե սիրունի վըրա* (20-րդ խաղի տողատակի ծանոթ.):

ՍԻՐՈՒՆՈՒԹԻՆ (թեթ.), թենի, գ. Սիրունություն: *Սիրունութինըտ էլավ արբար* (3):

ՍԽՏՈՐ, ի, գ. *Համիմ, սխտոր, սինտա ու պըռաս ունիմ* (59):

ՍԿԻ, սկու, գ. Սկի՛, եկեղեցական արծաթյա հաղորդության թաս, որի մեջ լցնում են գինի և պատարագի ժամանակ նվիրագործում: *Մընացի սկու մասենմեն, Ա՛չկի լուս, ջո՛ր իմ ասի* (32):

ՍԿԻԶԲ, սկզբի, գ. *Հունիսի սկզբին քրոնիկոնի 446-ին* (33): *Էջ 49, 70:*

ՍՂՈՑԻԼ, ն բ. Սղոցելու միջոցով մեղսնել: *Գուպիք էրկըսիտ մետի, ուսբաշ սղոցիմ* (59):

ՍՄԱՌԻԼ (արաբ.), ի, 1. գ. Ընդհանուր անուն տարբեր անուշահոտ և գուլ-նըզգույն ծաղիկների (Սալաթ-Նովայի տաղերում գործ է ածվում *սուսան* բառի հետ): *Սուսան սըմբուլով, դարիթ բըլբուլով բաղըն լըցվի է* (2^o): 2. ա ծ.

Սուրբույի նմանություն ունեցող: Սուսան սրմբուլ դաստամապրտ էրեսիտ խափանգ իս արի (65): Դաստամապրտ նրման սրմբուլ սուսանի (11): Նան էջ 76, 72, 74, 76:

ՍՆԲՈՒԼ, ի. գ. Նույնն է՝ Սմբուլ: Ծուցիտ մեշըն վարթ, մանիշակ, սրնբուլ ու սուսան իս շինի (2): էջ 7, 14, 52, 56:

ՍՈՅԲԱԹ (արաբ.), ի. գ. Բաղդր գրույց, խոսակցություն: Առանց քիզ ինչ կոնիմ սոյբաթըն ու սապըն (2): էջ 33, 53:

ՍՈՎ, ի. գ. 1. Հացի մեծ պակասություն երկրում, որից տառապում է ժողովուրդը: Միր էդնեն թամամ աշխարրս սով բաշե.—հաց չը տեսնե (5): 2. Ն մ ա ն. Պակասություն, բացակայություն մի բանի: Յ Սով մնալ—փխբ. չհագենալ, կարոտ մնալ մի բանի: Աշխարրս աշխարով կշտացավ, իմ սիրտը քիզնից սով մընաց (24): էջ նան 25, 46: Սով քաշիլ—սովի մատնվել, սոված ման լինել (տե՛ս 1-ին նշան. օրինակը):

ՍՈՎԴԴԱ (պարսկ.), դի. գ. Սեր: Կամավ սովդեն մըտա դարդըն բառնալու (49):

ՍՈՎԴԱՋԱՐ (պարսկ.), ի. գ. Վաճառական, առևտրական: Շատ սովդաբար քիզ կու պտոե՛ դուն անգին բար իս, գովելի (7):

ՍՈՎՈՐԻԼ, չբ. Ուսանել, վարժությամբ լուրացնել մի բան: Սովրեցա քամանչեն ու չոնգուրըն ու ամբուրեն (4): էջ 10, 10, 18, 37: (Տողատակերի ծախթագրություններ):

ՍՊԱՆԻԼ, եցի, նբ. 1. Կյանքից կրկել, մեռցնել: Տուր ինձ սըււսնե՛ ինստիար ունիս (17): Սուչքս իմացի, էնենց սըպանե (24): Տե՛ս նան էջ 29, 49, 49, 50, 52, 54, 56, 62, 64: 2. Մահ պատճառել, մահվան պատճառ դառնալ: Փահրադին քըլունգ սըպանից, Շիրին՝ խանջալուն մընում է (52): 3. փխբ. Տանջել, չարչարել, հոգին հանել: Յար, իմ հորին հանեցիր, էս բու Սալթ-Նովան դուն սըպանեցիր (19): Նազ մի՛ անի, նազըտ ինձ կու սըպանե (22) (5 անգամ): Տե՛ս նան էջ 64, 79, 79: 4. Ցրել, վերացնել (մշուշը, մառախուղը): խոսկըս առակով իմացի, Լուսնաստըղ, փուզով սըպանող (47): Յ Սիրտը փուրումը սպանիլ—տանջել, չարչարել (հոգեպես): Սիրտըս փոռոնըս սըպանեցիր, էշխըտ քիզի նարդ իս արի (13):

ՍՎԹԱ (պարսկ.), գ. Սկիզբը, առաջ: Աստուձ խիալ արից սըվթա (64):

ՍՏԻՂԾԻԼ, նբ. Գոյացնել: Աստուձ... ստիղծից նախ մարթըն Աթամ (64):

ՍՏԵՂԾՈՂ, ՍՏԻՂԾՈՂ (կրոն.), ի. գ. Արարիչ, աստված: Մըտիկ արաբու ստեղծողին, նահախ ստիղ դավաբ մի՛ անի (10): Սըրան դաբըլ իմ արարիչ-ստիղծող, Հոքիս չանիս դրախտիջանեն դուս արած (63): Տե՛ս նան էջ 26, 26:

ՍՐՓԻԼ (բբբ.), եցի, նբ. Մաքրել: Սըրփե, շաղ տու ոտիտ տակըն (13):

ՍՐՓՎԻԼ (բբբ.), վեցի, կր. չբ. 1. Բուժվել, լավանալ: Ամեն բորոտըն կու սըրփվի, քիզի գու քա ով փափակով (62): 2. (կրոն.) Մաքրվել, սրբվել, մեղքերը թողնել: Հոքով ու մարմնով կու սըրփվի, ով քիզ գու քա մոնի նըման (62):

ՍՈՒԼԹԱՆ (արաբ.), ի, գ. 1. Թագավոր (Մանուկական ապգերի): *Չի վախենա սուլթան-խանից* (6): Նաև էջ 30: 2. *փ ի ս*. Որևէ անձի համար որպես տեր, տիրակալ, իշխող անձ: *Դուն իմ Շահ իս, Սուլթան, խան իս, Ինչ կուի միւ մըտիկ անիս հազարեն մե ջեր, նազանի* (45): Նաև էջ 37, 52: 3. *ա ծ*. (կրոն. եկեղ.): Մեծ հռչակ վայելող տաճարի՝ սրբավայրի մակդիր, որպես ամենապորը մյուս սրբավայրերի հետ համեմատած: *Մշո սուլթան սուրփ Կարապիտ* (61):

ՍՈՒՆ (բրբ.), սան (*հո գ ն*. սնիր), գ. Սյուն: *Պատիրըտ կարմիր ագուրով, սընիրըտ տաշ մարմար քարով* (62):

ՍՈՒՉ (ադրբ.), ի, գ. Մեղք, հանցանք: *Սուչըս իմացի, էնենց սըպանե* (24): էջ 20, 37, 56, 89:

ՍՈՒՍԱՄԲԱՐ (պարսկ.), ի, գ. Անուշահոտ տերև ունեցող բույս: *Չիռիտ դաստա կապած սուսամբար ունիս* (17): (Սալաթ-Նովայի հայերեն խաղերում գործ է ածվում *սմբուլ* բառի հետ միասին):

ՍՈՒՍԱՆ (բրբ.), ի, գ. Շուշան ծաղիկը: *Սուսան սըմբուլով, դւրիք բըլբուլով բաղըն լըցվի է* (29): էջ 7, 22, 44, 52, 72, 86:

ՍՈՒՍԱՆԲԱՐ, նույնն է՝ Սուսամբար: *Վարթ, սուսանբար իմ քիւ ամա* (23): էջ 36, 37, 38:

ՍՈՒՏ, ստի, գ. Ճշմարտությանը հակառակ բան, ստություն, կեղծիք, խաբեբայություն: *Ղուրթըս էնդուր ճամփա չէ գնում շատացիլ է խալխի սուտըն* (53):

ՍՈՒՐՂ, սրի, գ. Միասայրի կամ երկսայրի սառը զենք, թուր: *Ա՛չկի լուս, ո՛ր իմ ասի, Սուր չիմ ասի, սուր չիմ ասի* (32):

ՍՈՒՐՉ, *ա ծ*. Հատու, կտորող: *Թերթերուկըտ... սուր դալամթրաշ, նազանի* (35):

ՍՈՒՐԱԹ (արաբ.), ի, գ. Դեմք, կերպարանք: || Պատկեր: *Ով քու սուրաթըն տեսնում է, ասում է՝ թահարիտ էրնեկ* (25): Նաև էջ 17, 18: ☉ *Սուրաթ-մաքաղաթ*—նախշակարդ մագաղաթի՝ հին ձեռագրի վրա նկարված պատկեր: *Օսկե վարաղնով վարաղնած սուրաթ-մաքաղաթըն դուն իս* (33): *Սուրաթը քաշիլ—*դեմքը նկարել, պատկերահանել: *Յիփ քու սուրաթը ցու րաշիմ՝ նախշումըն շնուք կու տաս* (14):

ՍՈՒՐԲ, ՍՈՒՐՓ, սրբի (բրբ. սրփի), *ա ծ*. (կրոն.): *Մակդիր եկեղեցու կողմից որպես սուրբ ճանաչված անձի կամ նրա անունով կառուցված եկեղեցու: Սուրբ Կարապիտի կարողությունով սորվեցա քամանչեն* (4): *Մըշո սուլթան սուրփ Կարապիտ* (61): *Քար ու կիրըտ օխշարի կաթ շաղ արին, Մողնու սուրփ Դևուրը* (62) (6 անգամ): ☉ *Սուրբ սրբոց*—սրբության սրբոց, ամենասուրբ: *Սուրբըտ սրբոց սիրտըս մաքրյալ* (61): *Սուրփ գինի*—ըստ քրիստոնեական կրոնի Քրիստոսի արյունը: *Հազար թուրլու կերակուր, սուրփ գինի անապսկան* (13, 56): *Սուրփ Ռոթի*—ըստ քրիստոնեական կրոնի՝ աստծո ոգին լուսա-

կերպ աղավաճու կերպարանքով, որ իջնում է Զրիստոսի վրա Հորդանան գետում մկրտվելիս: Աստճու բերնեմեն առնիս մխթարիչ սուրփ հոքին (5):

ՍՈՒՓՐԱ (թուրք.), ռի, գ. Հաց դնելու սփռոց: Սուփրի սապանդարիտ երնեկ (25): Սուփրի մեչըն թալգուլի պես դաստա կապած Ռեհնին կպած, Բաց իս էլի դուն գուլի պես (6): Էջ 14:

ՍՈՒՔ (բրբ.), ի, գ. 1. Լաց ու կոծ, տխրություն մեկի մահվան կամ աղետի պատճառով: Վուր տիղ հարսնիք, վուր տիղըն սուք, վուր տիղ սոլբաե խաղ է ըլում (37): 2. ա ծ. Սզո նշան արտահայտող, սզո նշան կրող: Սուչըս ինչ է, ա՛սա ինձի, վուր հաքցըրիր իմ չուպեցած սիվ ու սուք լիբասըն ինձի (61):

ՍՐՈՒՐ (թհբ.), ի, ա ծ. Սզավոր, սուզ ունեցող, սուզ կրող, սզացող, վշտահար: Սիրտըս փուրուըս սրբուր է, ալ աչկիրըս լաց է անում (57):

Վ

ՎԱԴ (թհբ.), (հոգն. վադիր), գ. ա ծ. Վատ, չար, չարասիրտ, անգուր (անծ): Ովոր ինձ շինից դիվանա... վադի էրեսըն սիվանա (32): Վադի ծննեմեն գուլամ լիս (67): Վադիր—վատ՝ չար մարդիկ: Բաղ շինեցի, վարթըն բաղից վադիրըն (21):

ՎԱԴԱ (արաբ.), վադի, գ. Ժամանակ, ժամկետ, պայմանաժամ: Յիս քիզանից չիմ հիռանա՝ թե չը հասնի մահիս վադեն (7):

ՎԱԴԻՐ, տե՛ս Վադ: Բաղ շինեցի, վարթըն բաղից վադիրըն (21):

ՎԱԶ (ն), (բա ց. հոլ. վազինց), ի, գ. Խաղողի որթ, թուփ: Զանի գուլե մարթ վուր հարփի, վո՛ւնց կուլի վազնից բեդամաղ (43):

ՎԱՆ, ի, գ. Վտանգ, կասկած: Վախ բաշիլ—մի բանից վախենալ, խուսափել: Ընդուր վախ բաշեցի խե ու ալիբ թո* (50):

ՎԱՆԵՆԱԼ, եցա, չբ. Երկուդ կրել մեկից, նրանից վտանգ սպսո՛ւն: Չի վախենա սուլթան-խանից (6):

ՎԱՆԻԼ (բրբ.), ցա, չբ. Նույնն է՝ Վախենալ: Վախում իմ, թե սիդորս կես անի. (11): Վախում իմ թե՛ ինձ էլ էրիս՝ անհանգչիլի հուր իս, ախպեր (13): Էջ 52, 72:

ՎԱՆՏ (արաբ.), ի, գ. Ժամանակ: Եկ գընանք չուրն՝ վուր հասնիք գուրն. ջեյրանի վախտ է (29) (3 անգամ): Պարապ վախտի ռափա գուլփա (1): Նաև էջ 50, 60, 83 (3 անգամ): Վախտը լըցվիլ—խնկական ժամանակը լինել: Գարունքվան վախտըն լըցվիլ է,—էրանի ձիվ ծաղկած վարիր (33): Վախտին—իր ժամանակին: Վարթի խարըն շատաջիլ է, չին թողնում վախտին բացվելու, քաղերումեն բեզարիլ իմ (53):

* Խե ու ալիբ թո = Խաթ (խաթա-փորձանք բառի կրճատված ձևը հանգի համար) Ընդուր վախ բաշեցի խե ու ալիբ թո—նրա համար վախեցա փորձանքից: Տե՛ս Մ. Հուրաթյան, Սալաթ-Նովա, խաղերի ժողովածու, 1959, էջ 25:

ՎԱՂ, վաղվան, ա ծ. մ. 1. Շուտ, կանուխ: Էլ վաղ միռնի Սայաթ-Նովեն՝ ճիտըտ գրցած չը տեսնէ (5): Նաև էջ 50: 2. Նախօրոք, առաջուց, առաջ: Յիս էլ ուրիշ լար չունիմ, էս գըլխեն վաղ իմացի (14): Ով վաղ գընաց, վարթըն քաղից (33): 3. Առաջվան, հին, նախկին, անցյալ: Չունիմ վաղվան քաղցըր փառքս (53):

ՎԱՂԸ, ՎԱՂՆ վաղվան (հոգն. բաց. հոգ. վաղերումեն), գ. Այսօր վան հաջորդող օրը, էգուց: Վաղըն գու քամ նըստիմ ու լամ (6): Վայ թե էլ չխոսիս վաղըն (6): Էջ 16, 16: ☉ Վաղերումեն—վաղվա՝ գալիք օրերից: Էրոգ լավ էր կանց վուր էսօր, վաղերումեն բեզարիլիմ (53):

ՎԱՅ, ծ. 1. Վշտի, կարեկցանքի, ցավի բացականշություն: Ով տեսնում է, էս է ասում. «վա՛յ բու դարին, Սայաթ-Նովա» (57): Ծընգան տալով վա՛յ ին ասում (40): Նաև էջ 49, 83: 2. Արտահայտում է փսոսանք՝ ցավակցություն: Թաք յիս մորես չեի ծնի, վա՛յ են օրին՝ յիս թիվ տեսիա (23): Ով կու գրթեն, ախ չի քաշի, վա՛յ բու կորցընողին ըլի (35): 3. Արտահայտում է չարիք, աղետ, թշվառություն: Շատըն աստանեն տանում է, վիրչըն մընում է վա՛յ տալու (44): 4. Ողբ, լաց, հառաչանք: Հա լաց էլա, վա՛յ կանչեցի անհաշիվ (63): ☉ Վայ թե—կասկածի՝ երկյուղի արտահայտություն: Վայ թե հաղաթետ միռնիմ, բըլբուվ լիզուս լալ անին (11): Վայ թե էլ չը խոսիս վաղըն. վաղըն գու քամ, Նըստիմ ու լամ (6): Նաև էջ 86:

ՎԱՅԻԼ, ա ծ. Պատշաճ, արժանի: Արածըտ ինձ չի լի վայիլ (65):

ՎԱՅԻԼԻԼ, լիցա, ն բ. Վայելել: Ճաշակել, անուշ անել: Միղըր վայրի վայիլհար (61):

ՎԱՅՐԻ, ա ծ. Առանց մարդու միջամտության, բնական: Միղըր վայրի վայիլիցար (61):

ՎԱՆԱՆՑ, տե՛ս Վանք: Աշտանակ իս ամեն վանանց (61):

ՎԱՆԸ, ի, (հոգն. սեռ. վանանց, գրաբ., բրբ. երանգով) (եկեղ.) Ուխտատեղի, մենաստան, ճգնարան: Կերթամ ու ման գու քամ վանքիըն մեմեկ (21): Վանք սիրե, անապատ սիրե, քար սիրե (16): Էջ նաև 43, 52:

ՎԱՇ, ծ. Հիացմունք արտահայտող բացականշություն: Բու տեսնողըն ասում է վա՛շ, վա՛շ, նազանի (35): Էջ 51, 51:

ՎԱՍ, ա ծ. մ. 1. Վառված, վառվող. բորբոքված: Հանած ծառ է, էշխով վառ է (6): Էշխըն վառ կըրակ է (18): 2. Լուսավորող: Մութը: Իդիղըն լուս իս տալի առանց կըրակ՝ վառ բացարած (39): 3. փ իս բ. Եռանդուն, ուժեղ, ոգևորիչ: Մե խոսկըտ կանց շաքար քաղցըր, մե խոսկըտ վառ՝ քուրա-քուրա (40): Վառ ըլի—վառվել, բորբոքվել. փ իս բ. մեծ փափագով տոչորվել: Կըրակ նընգած վառ իս էլի (13):

ՎԱՌԻԼ, եցի, ն բ. Կրակ տալով լուսավորել (լամպ, մոմ, ճրագ): Դուն հիշտ դիմիչ անելու չիս, ճրաք վառած, դըծվար ճարած (46):

ՎԱՌՎԻԼ, վեցի, չ բ. փ իս բ. Մեծ փափագով տոչորվել (սիրուց): Էշխեմեն էնպես վառվիլ իմ (28):

ՎԱՍՆ (գրաբ.), ն խ դ թ. Մասին, համար: Վասըն աշխարհին աղոթեցիր (61):

ՎԱՐ (թրք.) ի, գ. 1. Եղածը, ինչ որ կա, ինչք, հարստություն: 2. փ խ բ. Հարուստ: Յոխսուլին զըրգող, բեհնսափ, վարի ձեռնեմեն դադ կոնիմ (68): ☉ Վար անիլ—ստեղծել, կառուցել, շենացնել: Թե վուր բաղաբ տիղ հանդիբիս, կու բանդիս—վար չիս անի (4): (Ըստ Հովհ. Թումանյանի՝ ոչ թե վար անիլ, այլ վառ անիլ: Վառ չիս անի—չե՛ս պայծառացնի, չե՛ս շենացնի (իր սիրուհու անգթությունն է ակնարկում) (Տե՛ս Հ. Թումանյան, հատ. IV, 1951, էջ 324):

ՎԱՐԱԿ, տե՛ս Վարաղ: ☉ Սրտի վարակ—փ խ բ. սրտի ուրախություն: Էշխեմետ ջունուն իմ էլի, վեր էկավ սըրտիս վարակըն* (43):

ՎԱՐԱԿԻԼ, տե՛ս Վարաղնիլ: Իմ սիրում էրծաթ ախպեր՝ օսկեջրով վարակած (13, 73):

ՎԱՐԱՂ (արաբ.), ի, գ. Շատ նուրբ ոսկյա թերթ, որով պատում են առարկաների երեսը: Թրղթիրըտ օսկե վարաղով Ասմավուր իս (39):

ՎԱՐԱՂՆԻԼ (բրբ.), ն բ. Բարակ ոսկյա թերթով պատել, ոսկեղճով: Դուցըտ վարաղնած հուշրա է, հոտ ունե մուշկ ու ամբարի (30): Օսկե վարաղնով վարաղնած սուրաթ-մաքաղաթըն դուն իս (38): Նաև էջ 5:

ՎԱՐԱՋՈՒՐ (բրբ.), ի, գ. Վարագույր: Հընդու միշեմեն դուս էկած վարաբուրըտ՝ դալամբարով (62):

ՎԱՐԹ, ի, գ. 1. Վարդ ծաղիկը: Ամեն ըռանգի ծաղիկ մեշըն կարմիր վարթըն սիրեկան է (54): Թառամեցավ կարմիր վարթըն, բաղըն բըլբուլ չե գալի (22): Բաղ շինեցի, վարթըն բաղից վաղիրըն (21): Տե՛ս նաև էջ 7, 19, 19, 19, 19, 26, 32, 33, 34, 36, 37, 41, 42, 44, 49, 56, 57, 57, 62, 63, 64, 64, 90: 2. Վարդի թուփ, վարդենի: Նուր բաղ իս, նուր բաղչի մեշըն բուրբըտ վարթով չափարած (24): Վարթի մեշըն շուռ իս գալի (6): Էջ 14, 43, 44, 52, 65, 69 (4 անգամ), 70, 71, 72, 83: 3. ա ծ. փ խ բ. Վարդի նմանություն ունեցող, վարդագույն: Բացվիլ իս կարմիր վարթի պես, բըլբուլի հիդ հանգ իս Ենուլ (2): Թամաշա իս, վարթի անգ իս (6): Դու բըլբուլ իս իս՝ կարմիր վարթ (23): Էջ 7, 8, 13, 26, 26, 31, 33, 36, 36, 36, 38, 39: ☉ Վարթի դրախտ—վարդաստան բուրաստան. փ խ բ. Բարեմասնություններով լի գեղեցկություն: Բըլբուլին լիվու շինեցիր՝ դուն վարթի դըրախտ իս, գուլալ (34):

ՎԱՐԹԱՊԻՏ (թիբ.), ի, գ. (Եկեղ.): Վարդապետ, չամուսնացած կուսակրոն քահանայի բարձր աստիճան: Գըլուխ վարթապիտ ճըմարտության (61):

ՎԱՐԹԱՋՈՒՐ, ջրի, գ. Վարդից ստացվող անուշահոտ ջուր: Վարթաջրով թաց իս էլի (2): Էջ 8, 63:

ՎԱՐԻԼ, եցի, ն բ. Կառավարել, ղեկավարել: Բերնուըս դընիմ սան՝ կե-նամ. Սանձահարիմ, սիրտըս վարիմ (6): Էջ 15:

* Հանգի համար «վարաղ» բարբառային ձևը Սայաթ-Նովան ճիշտ գրել է վարակ, նույնը և վարակած, փոխանակ՝ վարաղնած:

ՎԱՐԻՐ (հոգն. «վար» բառի) Վարեր: *Էրանի ձիւ. ծաղկած վարիր* (33):

ՎԱՐՍԱՂ (արաբ.), ի. գ. Ոտանավորի ձև, որի հանգակապ տողերի հանգըն ընկնում է վերջին բառի վրա: *Յիս կանչում իմ յարանին, թեջնիս, վարսաղ, յարանին* (11): Էջ 21, 32:

ՎԱՐՔ, ի. գ. Կյանք վարելը, կյանքի ընթացքը, կենցաղավարություն: **⊙** *Հարանց վարք*—(կրոն. եկեղ.) սուրբ հայրերի կյանքը՝ վարքագրությունը նկարագրող և նրանց կենցաղավարությունը իբրև օրինակ ծառայող խրատների եկեղեցկան գիրք «Վարք սրբոց»: *Կարթա Հարանց վարքըն սիրուն* (37): *Խըրատնիրըն գրած Հարանց վարքումըն է* (16):

ՎԱՅՑՈՒՆ (բբբ.), թ վ. Վաթսուն: *Իրեք հարուր վացցուն ու վից ամեն անդամըտ դարարի** (30):

ՎԵՋԻՐ (արաբ.), ի. գ. Բարձրագույն քաղաքացիական աստիճան Օսմանյան կայսրության շրջանում, նախարար, մինիստր, եպարքոս: *Մարթ իր խոսկուն: Լիւ ճանանչվի, գուպե Շահի վեպիր շինին* (47): Էջ 64:

ՎԵՐ, առանձին, անգործածական: Գործ է ածվում հետևյալ կապակցություններում. *Վեր ածիլ*—1) թափել, հեղել, ժայթքել: *Կրակ իս վեր ածում բերնեմեն* (6): Էջ 12, 33: 2) Կտրել, թափել: *Չեռնեմես վեր կոծիմ չանգիրըն մեմեկ* (21): *Վեր գալ*—1) Ջնջվել: *Էշխեմետ ջունուն իմ էլի, վեր եկավ սըրտիս վարակըն* (43): 2) Ցած գալ, իջնել: *Յիփ վեր գու բաս մեջլիսումըն բաղըր պող ու սափա գուպիս* (1): *Վեր թողնիլ*—խոժոռվել, մռայլվել, խիստ կերպարանք ստանալ: *Աչկ ու ունըրտ վեր իս թողի. հուքմըտ մե ռուս ցարի բաբաթ* (47): Էջ 64:

ՎԵՐՋ, ի. գ. Ժամանակի մի հատվածի ավարտ: *Մարտի վերջին. քրոնիկոնի 447-ին* (2-ի ծանոթ.): Էջ 7, 9:

ՎԵՐՍՄԻՆ, մ. Նորից, դարձյալ, կրկին: *Հիմըրտ վերըստին նուրեցին, Մողնու սուրփ Գևուրք* (62):

ՎԵՐԻԼ (արաբ.), ի. գ. Փոխանորդ, տեղապահ: *Մինիստր: Շահի կարքած վեթիլ պես գեղի համա իմ լալի* (36): *Բեդասլըն աւըլ :ի դառնա՝ թեգուլ վեթիլ, նապիր շինին* (47):

ՎԻ (թհբ.) Վեր: Առանձին անգործածական: Գործ է ածվում վի կենալ կապակցությամբ: *Վի կենալ*—1) տեղից բարձրանալ, ասպարեպ մտնել: *Վի կացի. թե մարթ իս, արի* (13): 2) Ներկայանալ, գալ, այցելել: *Վի կենա լողման հեթիմըն, բալքամ դարդիս անե չարա* (36): Էջ 25, 52:

ՎԻՋ, վպի, գ. Պարանոց: *Վիպըտ նըման է դարդարի* (60): Էջ 78, 83: *Վիպը ծուռ—փ իս բ.* Գլխակիր, տխուր, ընկճված: *Դե վիպըտ ծուռ, գնա, տանեն դուս արած* (63):

* Մարմնի բոլոր մասերը, անդամները ներդաշնակ են, անթերի (համալուծված կառուցվածք ունեցող անձի մասին): *Մ. Հասարթյան.*

ՎԻԹԻԼ (բրբ.), եցի, ն բ. Թափել. վաթել Մի՛ վիթի արունըտ, մի՛ շանց տա մահըտ (26) :

ՎԻԿԱԼՆԻԼ, վիկալա, ն բ. Վերցնել: Կու վիկալնիմ ծիլ մութ տիղըն կոծիմ (59) :

ՎԻՐ (թբբ.) առանձին անգործածական, գործ է ածվում հետևյալ բառակապակցություններում: Վիր անիլ—բարձր ձայնով հնչեցնել: Յիփ քաղցըր ձայնըտ վիր կոնիս, բաց կուլի հիղըտ խաղողըն (1) : Էջ 6: Վիր թողնիլ—վեր քաշել, վեր բարձրացնել (դեմքին խիստ արտահայտություն տալ) : Աչկ ու ունքըտ վիր իս թողի (47) : Վիր կենալ—առողջանալ, անկողնուց ելնել: Էշխենետ հիվանդացիլ իմ... թաք դուն տիս գաս, վիր կու կենամ (40) :

ՎԻՐԱՆԱԼ (թբբ.), չ բ. Վերանալ, ալլես չլինել: Էհտիբարը վիրացիլ է, ասկ ու բարեկամ չը կա, չէ (67) :

ՎԻՐՆԱՏՈՒՆ (թբբ.), տան, գ. (եկեղ.) Եկեղեցու դռան վերևը շինված հարկ՝ կանանց դասի համար: Վիրնատունըտ սանդալե տախտակ, ռանգըն է տորոնի նման, Մողնու սուրփ Գևուրք (62) :

ՎԻՐՉ (թբբ.), ի, գ. Վերջը, հետո: Շատը սատանեն է տանում, վիրչըն մընում է վայ տալու (44) : Էջ 61: ☉ Վիրչում—ամենից վերջը, բոլորից հետո: Էլի վիրչումըն մեդանըն Րոստոմի Ջալուն մընում է (52) :

ՎԻՑ (թբբ.), թ վ. Վեց: Իրեք հարուր վացցուն ու վից ամեն անդամըտ դարարի (30) :

ՎԿԱ, վկի, գ. Մի բանի ականատես, իրապեկ, տեսնող: Գործ է ածվում երդման մեջ՝ հիշելով աստծու կամ մի այլ նվիրական անուն: Աստված վկա, աշխարումըս յիս քիզ ալել յար չունիմ (22) : Էջ 24: Աստված վկա, մարթ չը քաշե՛ դըծար է էշխի կըրակըն (43) : Էջ 34, 36, 46, 60:

ՎՆԱՍ, մ. Վնասակար, վտանգավոր: Խըմողին վընաս չի անի՝ ձեռիտ բըռնածըն շարբաթ է (33) :

ՎՌՎՌԱԼ, չ բ. 1. Փայլվելով՝ բոցկլտալով վառվել: Կու վըռվըռաս ճրաքի պես (14) : 2. Օղի ալիքներից տատանվելով տարածվել: Բամին դիբշի փոթլիտ մեշըն՝ հոտըտ գու քա վըռվըռալով (14) : 3. Փայլվել, շողշողալ՝ լուս արծակել: Յիփ խաղում իս՝ վըռվըռում իս օցի բերնի հուլի նըման (39) :

ՎՐԱ, յի, գ. 1. Մի բանի արտաքին՝ դրսի կողմը: Վրետ վարնըշան է քաշած (35) : Անգին ակըն վրետ շարած՝ անբան օսկու ռախտ իս, գուլալ (34) : 2. Արտաքին կողմում, մակերևույթին, երեսին: Միվ արաբի ճակտի վրա խալ անիլըն ինչին է շահ (44) : Յիս էն Մայաթ-Նովասին չիմ, վուր ալվի վրա հիմնանամ (35) : Տե՛ս նաև էջ 17, 29, 37, 50: 3. Մի բանի վերև: Մապիրըտ մընաց վրա մուհաջարին (29) : Պըտուտ գու քաս բաղչի վրա ճըկճըկալով (14) : Յիրգնուց լուսըն վրետ կամար—թաղ արին, Մողնու սուրփ Գևուրք (62) : Տե՛ս նաև էջ 26, 46: 4. Նկատմամբ, վերաբերմամբ: Հենց բան արա՛ մարթ վրետ չը ծիծաղի (16) : Յա՛ր, քիզ վրեն արք ունենամ... Առնում, տանիմ մեջլիսիիրըն օկեջրած սապի նըման (8) : 5. Համեմատությամբ, բաղդությունությամբ: Յա՛ր, քիզա-

հիս, հապար փըշրվիս (59) : 6. Անորոշ դերանունի հետ կցվելով ցույց է տալիս անհայտ՝ անորոշ լինելը : Սախաթ կուլի, ովոր խոսի հում (49) : 7. Հ ա ր ց ա - կ ա ն դ ե ր ա ն ու ն : Վո՛ւր մե դարդըս կու հասկանան (30) : 8. 2. Եթե : Կու տեսնիք մինձ պարար, վուր առիլ իք էս պտղի համ (84) : 9. մ. Երբ. երբ որ : Տերըն վուր եկավ խափեցին, թե օցըն էր արավ սիրամ (64) : Աթամ վուր էս շարթըն արավ, նաթիջում դժուխը գնաց ջամ (64) : Թե վուր—եթե : Թե վուր չըգամ ու չը տեսնիմ, հապար բաբաթ բան կոսիս (5) : Ի՛նչ կուլի մեկ հիղրս խոսիս, թե վուր Սայաթ-Նովու յար իս (24) : Զանի վուր—որ այդպես է, ոռովին-տև : Զանի վուր ջան իմ, յար բի դուրբան իմ, աբա ի՛նչ անիմ (29) : Էջ 44, 75 : ՎՈՒՐ² (թհբ.), անորոշ «վի» նշանակությամբ : Վուր տիղ—մի տեղ : Վուր տիղ հարսնիք, վուր տիղըն սուք, վուր տիղ սոյբաթ խաղ է ըլում (37) : Էջ 53, 53, 53, 53, 53, 53 :

ՎՈՒՐԹԻ (թհբ.), թու, գ. Որդի, պավակ : Յիս—մղղուս վուրթի Արութինս... գլուխ դրի ամենան խաղին (4) : Էջ 10 :

ՎՈՒՐՍԱԼ (թհբ.), ն բ. Որսալ, ցանցը գցել : Սատանեն մե դամբ է դըրի Աթամի պաթըն վուրսալու (44) :

ՎՈՒՐՄՆՈՒՐԹ (թհբ.), գ. Որսորդ : Վուրսնուրթի ձեռիցն փախած ջեյրան (46) : Տեսա արունուտ ջեյրանըն՝ վուրսնուրթի նիվնից բեղամաղ (43) : Էջ 60, 63 :

Տ

ՏԱԼ¹, տամ, տաս, տա, ա ն ց. կ ա տ. երիտ (գրաբարանման), տվի, տվեցի, տվից, հրմ. տո՛ւ կամ տո՛ւր, ա ր գ. մի՛ տա. ն բ. 1. Չեքից ձեռք փոխադրել, փոխանցել, ընծեռել : Չեռիտ ունիս թաս, լցնիս ու ինձ տաս (29) : Տե՛ս նաև էջ 47 (6 անգամ), 48 : 2. Ընծայել, նվիրել, պարգևել, շնորհել : Ուրիշ բաղեն վարթ չին տա քիզ (23) : Ով քիզ լիղի պարթիվե. դուն տու շաքար, Սայաթ-Նովա (37) : Տե՛ս նաև էջ 21, 53, 84, 85 : 3. Որևէ գնով առնել՝ գնել կամ փոխանակել, ծախել : Թեգուզ քու բաշըն մարքրիտ տան... չիմ հիռացնի քիզ քու յարեմեն (42) : Էջ 59 (3 անգամ) : Մարթ պիտի թանգ հախ տա, առնե խոսկիրըն փիր ուստադեմեն (44) : 4. Մի բանով օգնել, օժանդակել : Սասունեն ասաց—գուպիք ծիզ լուս կու տամ (64) : Ինչ որ ուզես, կու տամ ասաց (61) : 5. Հարվածել, խփել : Միղ ունենամ. գլխոքս սուր քար (54) : 6. Բարեմասնություն ունենալ, մի բանով աչքի վարնել : Ինչ տիղ կուլիս շուրք կու տաս (40) : 7. Մի բան այլ բանի տեղ ընդունել, նմանեցնել : Թե հոքուտ խաթիր շալ հաք-նիս՝ գար բաշած առլաւըն կու տան (37) : 8. Սեր՝ խանդաղատանք արտահայտել : Հոքիս տամ շիմաւտ կլոռանըն (28) : 9. Հանձնարարել : Զու տըվածըն ուրիշ դիղ է, ուրիշ դիղ (26) : Էջ 39 (6 անգամ) : 10. Ուշադիր լինել, չմոռանալ : Շափթենը մեկ մտիկ տու միզ (23) : 11. Ստեղծել : Աստված դիփուանց մին հուրթի երիտ (16) : (Աստված) Աթամի կուղեմեն բաշից Եվան տվից

նըրան համդամ (64) : 12. Իբրև օժանդակ բայ հայերեն և օտար բառերի հետ կապում է բավարարիչ բաղադրյալ բայեր: Անիլ տալ—ստիպել որ անի: Ինչ ասիս կոնիլ տա՝ սերն է անսկամ (18) : Արայիշ տալ (պարս., հայ) —հարդարել. վարդարել: Խուճուճ խուճուճ կավելուտ տուր արայիշ (11, 55) : Բարով տալ—բարևել: Յա՛ր, յիս քիզ բարով իմ տալիս,—շուռ իս գալի դալ իս անում (8) : Տե՛ս նաև էջ 14: Դիղ տալ—Բուժել: Յարալուն հեթիմն էնդուր գուլե՛ դիղ տալու է, ցավ տալու չէ (10) : Դովա տալ (պարսկ. հայ.)—1) աղոթել. 2) աղերսել: Համաշա իմ յարի ճամփին կանգնած իմ տալիս իմ դովա (13) : Դուս տալ—ափեղգիեղ՝ անմիտ բաներ ասել, բարբաջել: Զու մեչըն ի՛նչ դվաթ կա, ի՛նչ իս դուս տալի (59) : Լուս տալ—լուսավորել: Մութ տիղըն լուս իս տալի առանց կըրակ՝ վառ բացարած (39) : Կամ տալ—համածայնել. հոժարել, հաճել: Չարը զըթավ նըրան, տըվին իրար կամ (64) : Կրակ տալ—այրել, խորովել, փոթոթել: Ջիգարըս կըրակ իս տըվի, էրվում իմ բիրյան իս անում (8) : Նաև էջ 62: Չեն տալ—1) կանչել, ձայնել: Բըլըռլի պես պտուտ էկա վարթի վըրա ծեն տալով (14) : 2) խաղ կանչել: Բենուրվաթ, ծեն իմ տալի յանսյանա (27) : 3) Ղողանջել: Առավուտուց պանգալի պես բաղցր ծեն տալուն մընում է (52) : Չիք տալ—ձգել, քաշել: Չիք կու տա, տակընն կու հանն (54) : Մտիկ տալ—1) Նայել, հայել: Էրնեկ ըլի բու տիրուչըն՝ մըտիկ տալեն չի բեկարի (38) : Ով քիզ խային մըտիկ տա, սիրտըն դառնա քարի բաբաթ (64) : 2) Ուշադրություն դարձնել: Բարով տամ քիզ,—մըտիկ տու միզ (6) : Էջ 14: Մուլափ տալ—համբերել սպասել: Մուլափ կու տամ, վուր մըթնի (58) : Շաղ տալ—սփռել, ցանել: Մըփռե, շաղ տու ոտիտ տակըն, էշխետ դառա հավաջովա (13) : Էջ 25: Շանց տալ—1) ցույց տալ, իմացնել: Մի՛ վիթի արունըտ, մի՛ շանց տա մահըտ (26) : 2) սպառնալ: Առուտեհան քիզ թամաշան շանց կու տամ (58) : Շափաղաթ տալ, շովղ տալ—ցուլալ, փայլել, ծանանչել: Մե բիջըս փռանգի ատլաս է, տալիս է շովղ ու շափաղաթ (15) : Շնուք տալ—շնորհք տալ, գեղեցկացնել: Բաց կուլիս կարմիր վարթի պես՝ բաղչումըն շնուք կու տաս (14) : Էջ 26 (4 անգամ) : Շուղկ տալ—ծանանչափայլել: Վո՛ւնց արեգազըն շուղկը տա, վո՛ւնց լուսինը լուս անն (5) : Շուռ տալ—պտտացնել: Շուռ էրիտ չարիսի փալազըն, դովաթըն միզնից խըռով ա (44) : Ջան տալ—տանջվել, չարչարվել. առողջությունը կորցնել: Էլ ի՛նչ օգուտ, ջան տուր, կինըրտ հա՛ մաշե (63) : Թուխասթ տալ—թուլատրել: Թե ռուխասթ տան, սիրտըս բանամ, կու տեննիք դարդիրըս ծով ա (67) : Վա՛յ տալ—ափսոսալ, վրջալ: Շատըն աստանեն է տանում, վիրչըն մընում է վա՛յ տալուն (44) : Տալղա տալ—ալեկոծել: Տալղա տվիր՝ գեմիս տարար ծովի պես (26) : Ցավ տալ—հիվանդացնել: Յարալուն հեթիմըն էնդուր գուլե՛ դիղ տալու է, ցավ տալու չէ (10) : Ուրղան տալ—ալեկոծել: Ծովի պես ուրղան իմ տալիս, զըծվիլ իմ Արափի նըման (8) : ☉ Գըլուխը մահի տալ—տե՛ս Գլուխ: Դուն գըլուխըտ մահի կու տալ (5) :

ՏԱԼ² (թիբ.), ն բ. Կտրել: Թե էսանց էլ սուչ ունենամ գըլուխըս արս տալ, թարավուր (10) :

ՏԱԼՂԱ (աղբբ.), դի. գ. Ալիբ: Անբանար ջուրըն իս գըցի, բուրբըս տալղա, ջըրհիղիղ (65): ☉ Տալղա տալ—ալեկոծել, փոթորկել: Տալղա տըվիր՝ գեմիս տարար ծովի պես (26):

ՏԱՆՏ (պարսկ.), ի. գ. Գահ: ☉ Թովուպի տախտ—տե՛ս Թովուպ: Դուն Թովուպի տախտ իս, գոպալ (34):

ՏԱՆՏԱԿ, ի. գ. Տախտակ (առաստաղի): Տախտակնիրըն՝ էրձաթեմեն— միխիրը օսկե գուլիչով (34): Էջ 50, 82:

ՏԱԿ, ի. գ. Ցած, ներքև, ստորին մասը: Էրեսըս դի ոտիտ տակըն (8): Կոմբլիս տակին կընձկընձալը շանց կու տամ (58): Էջ 18, 25, 56, 76:

ՏԱԿՌԻ (ք) (հա յ ց. հ ու լ. տակոեն), ի. գ. Արմատ: Գուղ մարթըն ման- գաղով գու քա, ձիբ կու տա, տակոեն կու հանե, Մի թողնի ճուխկըտ քաղելու, դար, քու արիվը կու սիրիս (54):

ՏԱՂ, ի. գ. Երգվող ոտանավոր, երգ, խաղ: Մեջլիսներու խաղըն դուն իս, վանբերումըն տաղըն դուն իս (28): Էջ 43, 53: ☉ Տաղ անիլ—երգածայն կարգալ, երգել: Միաբանբըտ քաղցըր ծախով տաղ արին (62):

ՏԱՆԻԼ, տարա, հ ը մ. տա՛ր, ն բ. 1. Հետը վերցնել, կրել, հետն ունենալ: Աշ- խարբըս քունն ըլի՛ ի՛նչ պիտիս տանի (16): 2. Բաշել, տեղից շարժել, տեղափո- խել: Թարիփըտ դավթար իմ արի, փիլ պիտի վուր գիրբըն տանե (7): 3. Զրի կամ քամու հոսանքով քշել: Բանի գուպե քամին տանե՝ ծովեմեն ազազ չի պալսի (10): Զուրըն էկավ գերանըս տարավ (36): Տալղա տըվիր գեմիս տարար ծովի պես (26): 4. Վերցնել, սեփականել, յուրացնել: Շատըն սատա- նեն է տանում (44): 5. Խելակորույս անել: Ուշկ ու միտկըս դուն իս տարի (43): 6. Առաջնորդել մի տեղ: Ցար, քիվ վըրա արբ ունենամ... Առնում, տանիմ մեջլիսնիրըն օսկեջրած սապի նըման (8): Ուրոր գընաս ինձ էլ հիղըտ տար (54): Տանիլ ու բերիլ—տարուբերել, շարժել, ճոճել: Կավիրըտ օլոր տար ու բիր (65): ☉ Գըլուխը դուս տանիլ—տե՛ս Գլուխ: Խիլըը գըլխեն (կամ գլխենեն) տանիլ, Խիլըը տանիլ—տե՛ս Խիլը: Զրի տարած—տե՛ս Զուր: Զուրը տանիլ— տե՛ս Զուր:

ՏԱՆՈՒԼ, միայն Տանուլ տալ կապակցությամբ—մի բանով տարվել, ուշքն ու միտքը դռան տալ: Սապին խիլըտ չը տանուլ տաս էտ խիալով (25): Խիլըրս տանուլ տված լիղնուրթ իմ դաթի (63):

ՏԱՆՈՒՏԵՐ, ի. գ. 1. Գլուղի իշխանավոր, գլուղապետ: || Մելիք, իշխան: Գիղումըն մելիք—տանուտեր իս (36):

ՏԱՇ, ի. գ. ա ծ. Տաշված, հղկված: Պատիրըտ կարմիր ագուրով, սընիրըւ տաշ մարմար քարով... Մողնու սուրփ Գևուրք (62):

ՏԱՇԻԼ, եցի, ն բ. Տաշել, փայտը երկարությամբ հաստ կամ բարակ շեր- տով կտրել՝ կոկելու կամ բարակացնելու նպատակով: Շիմշատի ծառ բըհամ էկած, շենբըտ տաշիբըն ի՛նչ կոնե (46):

ՏԱՇՎԻԼ, շ բ. Տաշվել: Սալբի ասիմ՝ ախըր մին օր կալ տաշվի (19):

ՏԱՊԱՆԱԿ, գ. Փոքր տապան, արկղ: ☉ Տապանակ ուխտի (կրոն.)—եք- բաեցոց կամ հին իսրայելցիների մոտ՝ չքայքայվող փայտից շինած արկղ.

որի մեջ պահում էին իրենց հավատի սրբությունները՝ տասը պատվիրաններ գրած տախտակները, ոսկե սափորը և Ահարոնի նախշազարդ գավազանը: *Տապանակ ուխտի կըտակավ խորանրտ Ահարոնի նրման* (62):

ՏԱՌ. ի. գ. Գիր, նշանագիր: *Որըն գրոց հայերեն տառ է, որըն վրաց* (5-րդ խաղի տողատակի ծանոթ.):

ՏԱՍԸ. թ. Տասը թիվը: *Տաս տարի է ման իմ գալիս փաղիշահի շարիփի պես* (31): ☉ *Տասըն իս*—գերպացն ես (տա:սը նվագարանի փոխարինող ես)*: *Ամեն սապի մեչըն գոված դուն թամամ տասըն իս, քամանչա* (1): *Տասնեմեն մեկըն*—տասը հոգուց մեկը, շատ քիչ, հազվադեպ: *Տասնեմետ մեկըն չին ասի, թեգուլ աշխարըս քիլ գովին* (2):

ՏԱՄՆԵԿՎՈՒ, թ. Տասերկու: *Տարին տասներկու ամիս մապիրըտ հուսած կուլի* (14):

ՏԱՄՆՈՒՄԵԿ, թ. Տասնեկ: *Տասնումեկ ամիս մունչ իմ կացի* (48):

ՏԱՐ, ա ծ. Օտար, օտարական: *Աղկատ սիրե, դոնաղ սիրե, տար սիրե* (16):

ՏԱՐԵԿԱՆ, ա ծ. Մեկ տարվա կյանք ունեցող: *Չուրս տարեկան էրեխի պես՝ յարըս խըրատիլ է ուլում* (43):

ՏԱՐԵՆԸ, ա ծ. մ. Տարվա ընթացքում, մի տարում, տարեկան: *Տարենըն մե գամ բաց կուլի մաթահ շահրադել բապարի* (38):

ՏԱՐԻ, տարվան (բ ա գ. հ ո լ. տարեն) 1. Այն ժամանակի շրջան, որ սկսվում է մի տարվա օրից և տևում է մի տարի: *Յարսուն տարի գըլուխ դրի ամենան խաղին* (4): Տես նաև էջ 12, 34, 35, 45, 46, 46, 60, 68, 68: 2. Տարիք, հասակ: *Աջաք բանի ժամանակ է, թաք գիդենամ տարիտ էրենկ* (25): 3. Երկար ժամանակ, երկարատև: *Ղումաշ պարով գու լաս տարով, ով քիլի գու բա թամաշա* (6): էջ 13: ☉ *Տարին-տասներկու ամիս*—միշտ, շարունակ, հարատև: *Տարին տասներկու ամիս մապիրըտ հուսած կուլի* (14): *Տարեն*—տարուց, տարվանից: *Տասնումեկ ամիս մունչ իմ կացի՝ տարեն էրված իմ* (48): *Տարեմեն*—տարվա մասին, տարուց, տարվանից: *Թե վուր լուսին ասիմ տարեմեն կոսին, —արեգագի նրման փարա իս, գոպալ* (19):

ՏԱՐԸ (թեբ.), ի. գ. Տարիք: ☉ *Տարըր թամամիլ*—ծերանալ, այլևս անպետք լինել մի բանի: *Ասում ին*—տարբըտ թամամից, լաց ու ոխփա, *Սայաթ-Նովա* (67):

ՏԵՂ, ի. գ. Տեղ, վայր. *Լավ տեղ*—պատվավոր տեղ: *Էսպես դիվանի լավ տեղ ասած, որն հայերեն, որն վրաց* (5-րդ խաղի տողատակի ծանոթ.):

ՏԵՆԱԼ (բրբ.), տեհա, ն բ. Տեսնել: *Վա՛յ էն օրին՝ լիս քիլ տեհա* (23):

* Տե՛ս Մ. Հասրաթյան, Սայաթ-Նովայի խաղերի ժողովածու, 1959, բառարան: Գ. Ախվերդյանի Ա խաղի 1-ին տողում Տաս-ի փոխարեն գրած է Դաս և բացատրում է «միատեղ դասած պանապան նվագարաններու զուգալ՝չիո հնչումն» (orchestre):

ՏԵՍԱՆԻԼ, տե՛ս Տեսնիլ 3 նշան.: *Կու միռնիս, էլ ինձի պես չիս տեսա- նի* (11): Էջ 22, 28, 72:

ՏԵՄՆԻԼ, տեսա կամ տեհա, *հի ր մ.* տե՛ս կամ տի՛ս, *ն ք. 1.* Նայել, հայել: *Սիրտըս բանամ կու տեսնիք, դարդիրըս ծով ա* (67): *Ընդու համա քու տես- նողըն իր ճամփեսեն կու մոլորվի* (2): Էջ 7, 7, 17, 23, 27, 51, 54, 54, 55, 55, 56, 56, 63: 2. Ծանր՝ դժվար օրեր ապրել: *Նիղ օրիք տեսան շատ* (64): 3. Գտնել: *Կու միռնիս,—չիս տեսնի Սայաթ-Նովու պես* (26): *Թամամ աշխար պտուտ էկա... Չը տեսա քու դիդարի պես* (51): Էջ 36, 41, 79: 4. Հասկանալ, ըմբռնել: *Նաքազ մարթըն քիզ չի տեսնի, դուն նրա պասըն իս, քամանչա* (1): 5. Գիտենալ, ճանաչել: *Զանի սաղ է Սայաթ-Նովեն, շատ բան կու տեսնիս, քամանչա* (1): 6. Գնահատել: *Էրապումըն տեսածի հիդ միպի մե հեսար մի՛ անի* (10): Էջ 11, 22: 7. Նկատել, ուշադրություն դարձնել: *Զու դըբանըտ նընգած ըլիմ, ով տեսնե՛ ասե տուաղ իմ* (8): Էջ 18, 18: 8. Հանդիպել, պատահել: *Ըսոր իմ յարին տեսա բաղչի մեչըն ման գալով* (14): Էջ 25, 32 (3 անգամ), 38, 38: 9. Ճաշակել, վայելել: *Իմաստուննիրը չը տեսան էս աշ- խարիս հուտըն ու համըն* (44): 10. Պատկերացում ունենալ: *Անցկացած օրըն չիմ տեսնում, քանի գուպե, վուր դաստ անիմ* (31): 11. Ողջույնի բացականչու- թյուն: *Բարով տեհա, չոբան ախպեր* (58): *Բարով տեսա, իմ սիրեկան* (41): Էջ 57 (7 անգամ): 12. Ջայրուլթի արտահայտություն: *Չեթուղ թե մուրապին հասնին, տես ինչ արավ քավթար դարին* (52): Էջ 83, 83: 13. Տուլժի են- թարկվել, վնաս կրել: *Տերըն ասաց—չուտիք էս բար, թե չէ կու տեսնիք մինձ վարար* (54): 14. Ականատես լինել: *Ով տեսնում է էս է ասում. «վա՛յ քու դարին, Սա՛յաթ-Նովա»* (57): 15. Արտահայտվել, դրսևորվել, երևալ: *Մե բա- փա չը տեսա հում կաթնակիրի* (30): 16. Արժանանալ մի բանի: *Միր եղնեն թամամ աշխարըս սով քաշե—հաց չը տեսնե* (5): Էջ 11 (6 անգամ):

ՏԵՐ, տիրույ, գ. 1. Գույք ունեցող (շարժական կամ անշարժ), սեփական- նատեր: *Յիս բաղման չիմ բաղի տիրույըն ճանանչիմ* (28): 2. Այր, ամուսին: *Էրանի է քու տիրույըն, յադին յաշիլըն ինչ կոնե* (46): *Զու տերըն բաղըն ի՛նչ կոնե՛ քու հուտըն ռեհան իս շինի* (2): Նաև էջ 54: 3. Հովանավոր, պաշտպան: *Յիս քիզ ավել իլաջ չունիմ. դու դառի ինձ տեր, նապանի* (45): 4. Որոշ հատկություն ունեցող: *Մոդըտ նըստողըն կու երվի՛ էտ նապի տեր վուր իս, ջանըմ* (34): Նաև էջ 25: 5. (եկեղ.) Աստված: *Տերըն ասաց, չու- տիք էս բար, թե չէ կու տեսնիք մինձ վարար* (64): Նաև էջ 28, 69, 85, 85: 6. (կրոն.) Բրիստոս: *Գընացիր Կեստըն Հորդանան, տերըն ինքն մըկրտե- ցիր* (61):

ՏԵՐԵՎ, ի. գ. Սաղարթ: *Կանանչ տերևեն նամ չը կաթի վարթի մի- չումըն* (48):

ՏԵՐԻՎԱԿԱԼ, ա ծ. Տերևաշատ, տերևալից: *Գուլ իս կոկոր տերիվակալ* (6): Էջ 14: (Սայաթ-Նովայի նորաստեղծ բառ՝ հանգի համար):

ՏԻՂ (թիբ.), (բ ա ց. տիղեմեն, *հի գ ն.* տիղացեն), գ. 1. Տեղ, վայր: *Հեստի տիղ դուբան բաց անիմ՝ վարըս մունաթ չը քաշե* (15): Նաև էջ 39:

(13 անգամ), 53 (6 անգամ), 55, 56, 75, 80 2. Բնակավայր: *Քաղաք տիղ !ուլթան-խան իս* (36): *Թե վուր քաղաք տիղ հանդիբիս, կու քանդիս—վար չիս անի* (10): 3. Տուն-տեղ, օջախ: *Տանեն դուս արածի նրման տիղի համա իմ լալի* (36): 4. Տարածության որոշ մաս, որ պատկերված է: *Յիփ տիղմենտ ժած իս գալի, շըխշըխկում իս ջիղջիղի պես* (2): 4. Գրավված դիրքը, պաշտոնը: *Դովրանենեն դուս ին գըցի, իմ տիղըս բըռնողըն ով ա* (67): 5. Արգելարան: *Կու վիկալնիմ ձիկ մութ տիղըն կոծիմ, կողպեքըն կու դընիմ՝ ձիր ռապեն իս իմ* (59): 6. Մարմնի որևէ մաս: *Խփեցեք մե տիղըս, մե նըշան արեք, թեգուլ էստու համա քարասպան արեք* (20): 7. Գնահատություն, արժեք (ապրանքի): **⊙** *Տիղ ունենալ—գնահատվել, արժեք ունենալ: Մե բիռըն պար-դալամբարի, տիղ ունի վունցոր մաքաղաթ* (15): *Անմիղ տիղ—իսկուր, անտեղի, անիրավացի: Խըմցըրեցիր անմիղ տիղըն էս աղուի թասըն ինձի* (67): *Նահախ տիղ, նհախ տիղ—տե՛ս Անմիղ տիղ: Նահախ տիղ դապաք մի՛ անի* (10): *Ով ասավ, թե նըհախ տիղ Յարիտ մեչըն յար անին* (11): *Ամենան տիղ—ամենայն տեղ, ամեն տեղ, միշտ: Թե կամենաս, ամենան տիղ բու ասածըտ հապիր շինին, Սայաթ-Նովա, խոսկըտ ասա* (47): *Նաև էջ 85: Զընած տիղ—քնած ժամանակ: Զանի գուպե քընած տիղըն իր թըշնամին կուռըն կապե, էլի վիրշումըն մեյդանըն Բոստոմի Զալուն մընում է* (52): *Տիղացեն—տեղերից: Հիռու տիղացեն գալիս իմ* (15):

ՏԻՍ¹ (թիբ.) *հ ի մ.* Տեսնել բայի: Տես: *Գերեզմանըս վաղ տիս, գո՛վալ* (34): *Յիդ արա, տիս, թե թաբիբ իս* (6): էջ 14, 50, 52:

ՏԻՍ² (թիբ.), ու. գ. Այց, տեսություն, այցելություն: *Սայաթ-Նովեն իմ տիսըտ էկած* (32): *Գուպալի տիսուն կարոտ իմ* (28): *Նաև էջ 46, 54, 86, 87:*

